

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՂԱՐԱԲԱՂ-ՇԱՄԱԽԻԻ ԿԱՄ
ԾԱՅՐՀՅՈՒՄԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԻՋԲԱՐԲԱՌԱ-
ԽՈՒՄԲ.

ԱՐԴԻ ՎԻՃԱԿ, ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՎ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
(Երևան, 2022 թ., հոկտեմբերի 20-21)

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2022

ՀՏԴ 81(082)
ԳՄԴ 81գ43
Ղ 461

Հրատարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհուրդը:

Խմբագրական խորհուրդ՝

Վ.Լ. Կատվայան (նախագահ)
Լ.Շ. Հովհաննիսյան
Ա.Յու. Սարգսյան

Գ.Գ. Գևորգյան
Ա.Վ. Վարդանյան
Մ.Ս. Քումունց

Ղ 461 Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ.
արդի վիճակ, միտումներ եվ մարտահրավերներ (Միջազգային գիտա-
ժողովի նյութեր. Երևան, հոկտեմբերի 20-21, 2022թ.)- Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ
հրատ., 2022.- 314 էջ:

Ժողովածուն ընդգրկում է 2022 թ. հոկտեմբերի 20-21-ին Երևանում ՀՀ ԳԱԱ
Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և Արցախի պետական համալսարանի
կազմակերպած միջազգային գիտաժողովի զեկուցումները: Ներկայացվող
նյութերը վերաբերում են Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջ-
բարբառախումբի բարբառային միավորներին, դրանց հնչյունաքերականական ու
բառապաշարային իրողություններին:

Ժողովածուն օգտակար կլինի հայ բարբառագիտության, հայոց լեզվի
պատմության հարցերով հետաքրքրվողներին, ազգագրագետներին ու բանագետ-
ներին, ինչպես նաև ուսանողներին:

ՀՏԴ 81(082)
ԳՄԴ 81գ43

ISBN 978-9939-9298-3-5

© ՀՀ ԳԱԱ, լեզվի ինստիտուտ, 2022

**ԺԱՄԱՆԱԿԻ ԱՍՐԱԿԱՅՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ
ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ՝ ԸՍՏ ԱԶԳԱՅԻՆ
ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԻ**

Ալթունյան Էդիտա

ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության աշխատակազմի լեզվի տեսչություն
առաջին կարգի մասնագետ
edita_altunyan@mail.ru

Բանալի բառեր. Ղարաբաղի բարբառ, ժողովրդական լեզվա-
մտածողություն, ազգային տոներ, կրոնական ծիսակարգ, ժամա-
նակի ամրակայում:

Ժողովրդի լեզվամտածողության մեջ առկա ժամանակի ամ-
րակայման ձևերի ու միջոցների քննությունը հետաքրքիր իրողու-
թյուններ է ի հայտ բերում:

Ժամանակը ճշգրտելու համար մարդկային գիտակցության
մեջ կողմնորոշիչ դեր են կատարում ինչպես բնության մեջ պարբե-
րաբար կրկնվող երևույթները, այնպես էլ բնության այդ երևույթնե-
րի պաշտամունքին աղերսվող և ամեն տարվա նույն ժամանակա-
հատվածում նշվող տոներն ու ծիսակատարությունները: Վաղնջա-
կան ժամանակներից սկսած՝ տարվա նույն ժամանակահատվա-
ծում պարբերաբար նշվող ազգային ու կրոնական տոները ժամա-
նակաչափ են դարձել մարդկանց համար:

Ազգային ու հոգևոր կյանքի իրադարձություններն ու փուլերը
մտապահելը և այլ դեպքերի ու իրադարձությունների կատարման
ժամանակը դրանց հետ զուգորդելու ճանապարհով հիշելը ժո-
ղովրդի լեզվագիտակցության մեջ ժամանակն ամրակայելու փորձ-
ված միջոցներից են: Ժամանակի ընթացքայնության մեջ կողմն-
որոշվելիս ուղենիշ հանդիսացող միջոցները այսօր էլ չեն կորցրել
իրենց դերը բարբառախոս, հատկապես տարեց սերնդի ամենօրյա
ու առօրյա խոսքում:

Քրիստոնեության հռչակումից հետո սկսվեց հեթանոսական արժեքների մասսայական ոչնչացում, սակայն, «ժխտելով հանդերձ նախաքրիստոնեական հավատալիքները, քրիստոնեությունը դրանք ներառել է իր դավանանքի ոլորտը և ժողովրդի կողմից դարեր շարունակ սիրված ու փայփայված հեթանոսական տոների արտահայտած խորհուրդը վերաիմաստավորելով՝ նոր բովանդակություն է հաղորդել դրանց: Բայց իրականում տարվա նույն ժամանակահատվածում, նույն հաջորդականությամբ ժողովուրդը շարունակում էր կատարել դարերով արմատացած ծիսակարգերը»¹:

Ազգային տոներից ամենասիրվածը **Ամանորն** է: Այս հասկացությանը համապատասխանող բարբառային տարբերակներից են՝ **Նավասարդ**, **Կաղանդ**, **Նոր տարի** և այլն: Ղարաբաղի բարբառում գործածական են Նավասարդը և Նոր տարին:

Հր. Աճառյանի վկայությամբ՝ Նավասարդը իրանական փոխառություն է՝ *navasārd հոմանիշից: Կազմությամբ բարդ բառ է՝ բաղադրված *նաւ-նոր* և *սարդ-տարի* բաղադրիչներով: Այն տարվա առաջին ամիսն էր, որ անշարժ տոմարով տևում է օգոստոսի 11-ից մինչև սեպտեմբերի 9-ը²:

Մ. Գրիգորյան-Սպանդարյանի «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը» գրքում ներկայացված է մի ավանդություն, որում Նավասարդ բառի ծագումն ու նշանակությունը հետաքրքիր ձևով է բացատրվում՝ ժողովրդական մեկնաբանությամբ: Ըստ այդ ավանդության՝ շատ հին ժամանակներում Ղարաբաղում ջրհեղեղ է լինում: Մարդիկ, ովքեր ապրում էին բարձր սարերում ու լեռներում, փրկվում են ջրհեղեղից, իսկ նրանք, ովքեր ապրում էին լանջերում, ստորոտներում, ջրի տակ են անցնում ու մահանում: Երբ ջրհեղեղն ավարտվում է, բարձր լեռնային հատվածներից մեկում փրկված ժողովրդի գլխավորը մի մեծ ու երկար նավ է կառուցել տալիս և հարցնում, թե ով կարող է նավը քշել, ողջ մնացած ժողովրդին այս-

¹ **Բառնայան Ջ.**, Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում, Ե., 2009, էջ 85:

² **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Ե., 1926, էջ 435:

տեղից-այնտեղից հավաքել, որպեսզի ջրերը ցամաքելուց հետո միանան և կրկին բնակություն հաստատեն իրենց հողերում: Համարձակ երիտասարդներից մեկը հանձն է առնում կատարել այդ առաջադրանքը: Նահապետն ուրախանում է և հանձնարարում բռնորին հավաքելուց հետո իմաց տալ իրեն: Երիտասարդը նավով շրջում է, հավաքում ողջ մնացած ժողովրդին, նրանց երեխաներին ու անասուններին: Գործն ավարտելուց հետո երիտասարդն լուր է տալիս նահապետին՝ ասելով «**Նավ հաս արդ**», այսինքն՝ նավը հասել է ամենաբարձր կետերին: ««Նավ հաս արդ»-ը ետնան տրոնասսա Նավասարդ, վրեր մրեր թանգան տարին ա ինիս առաչներըմը, էն օրվանան վրեր ճրքիեղեղը պըրծընես ա»³:

Ամանորի ժամանակային ընդգրկման մասին հետաքրքիր կարծիք է հայտնում ազգագրագետ Օդաբաշյանը «Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում» աշխատության մեջ: Նա նշում է, որ հնագույն ժամանակներում Ամանորը կապվել է զարնանային օրահավասարի և դաշտավարական աշխատանքների սկզբի հետ, որով և նույնանում է հազարամյակներ շարունակ ժողովրդի կողմից ճոխ հանդիսություններով նշված **Բարեկենդանի** հետ: Հետագայում տարեմուտը տեղափոխվել է աշնանային օրահավասարի շրջանը՝ կապվելով դաշտավարական աշխատանքների բարեհաջող ավարտի և բերքահավաքի հետ: Հուլյան տոմարով օգոստոսի 11-ին համապատասխանող Նավասարդի 1-ը նշվել է իբրև Նոր տարի⁴:

Ղարաբաղի բարբառում ամսանուն լինելուց բացի՝ **Նավասարդ** բառը փոխանունությամբ գործածվել է *Ամանորի հանդես՝ տոնակատարություն՝ տոն* իմաստներով՝ **նըվըսարթ**// **նըվասարթ**// **նավասարթ**՝ հնչյունական-արտասանական տարբերակներով: Օրինակ՝ *Նըվըսարթին ճուղուպուր շատ ըն կուտրատում: [ՀԱԲ, 15, 103]*

³ Մ. Գրիգորյան-Սպանդարյան, Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, Ե., 1970, էջ 313:

⁴ Օդաբաշյան Ա., Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 9, Ե., 1987, էջ 49:

Ժամանակակից հայերենում և նրա տարածքային տարբերակներում, այդ թվում նաև Ղարաբաղի բարբառում, Նավասարդ բառն այլևս գործածական չէ: Այս բառի հասկացության ծավալն արդի հայերենում փոքրացել է, «տեղի է ունեցել բառիմաստի նեղացում և մասնավորում: Նախկին՝ «տարեմուտ, տարեսկիզր» իմաստը, քրիստոնեության հաստատման հետևանքով դարերի ընթացքում սահմանափակվելով, ներկայումս ունի միայն հեթանոսական կրոնական ըմբռնում»⁵:

Ամանոր իմաստով այսօր ընդհանրական կիրառություն ունի **Նոր տարի** կապակցությունը: «18-րդ դարում Սիմեոն Երևանցու տոմարով հայերը հունվարի 1-ը ընդունում են որպես տարվա սկիզբ՝ հիմնականում պահպանելով հեթանոսական երբեմնի ամանորի ծեսերը»⁶:

Ղարաբաղի բարբառում **Նոր տարին** ունի **թննգ(զ)ն տարե** բարբառային հնչյունական տարբերակը: *Թննգ(զ)ն* բառը, որ հոմանիշ է *նոր* ածականին, փոխառություն է պարսկերենից (taza): Բարբառում ժամանականշություն են արտահայտում երկրորդ բաղադրիչի հոլովմամբ կազմված **թննգ(զ)ն տըրնտուն** և **թննգ(զ)ն տըրնավը** ձևերը, իսկ անփոփոխ **թննգ(զ)ն տարե** կապակցությունը գուտ տոնի անվանումն է: Ինչպես՝ *Թննգ(զ)ն տըրնավնա յըէկալ հօրը, մօրը տըէսալ...*

Հ. Մեսրոպյանի կարծիքով **Թննգ(զ)ն տարե** տարբերակում *թննգ(զ)ն* ածականի կրկնակ *զ* բաղաձայնների արտաբերմամբ բարբառախոսները, թերևս, ընդգծում են տոնի հանդիսավոր լինելը⁷:

Ղարաբաղի բարբառում Ամանոր հասկացության բարբառային անվանումներից է **տըրըկըլծիս** բարդությունը: **Տարի** և **զլուխ** արմատների գուգորդությամբ բաղադրված այս բառամիավորը

⁵ Մեսրոպյան Հ, նշվ. աշխ., էջ 173:

⁶ Նույն տեղում, էջ 177:

⁷ Նույն տեղում, էջ 178:

տարվա սկիզբ նշանակությունն ունի: Ինչպես՝ *Տրբերը լինեն կրնանեք ջուռարա-ջուռարա պեներ ըն շինիս*:

Ազգային ամենաուրախ տոներից է **Բարեկենդանը**, որը հնում Ամանորի տոնն էր: Հնագույն ժամանակներում Ամանորը կապվել է գարնանային օրահավասարի և դաշտավարական աշխատանքների սկզբի հետ, որով և նույնացել է հազարամյակներ շարունակ ժողովրդի կողմից ճոխ հանդիսություններով նշվող Բարեկենդանի հետ: Այն նշվում է Սուրբ Սարգսի տոնից մինչև Մեծ պահքն ընկած ժամանակաշրջանը: Տոնն ավարտվում է Բուն Բարեկենդանով, որը նշվում է Մեծ պահքի նախընթաց կիրակի օրը:

Ըստ Հր. Աճառյանի՝ Բարեկենդան բառը բարդված է *բարի և կենդան, կենդանի, կենդանություն* բառերից: Բառի սկզբնական ձևը եղել է *բարի-ա-կենդան*, որը հնչյունափոխությամբ դարձել է բարեկենդան⁸: Ազգագրագետ Ա.Օդաբաշյանը տրամաբանական է համարում նաև հիշյալ բառի առաջին արմատին *բարիք, պտուղ, սերմ* իմաստները վերագրելը⁹:

Բարեկենդան տոնանունը, բոլորի համար հասկանալի ժամանակահատված մատնանշելով, ժամանականիշի արժեք է ձեռք բերել՝ օգնելով ժամանակի մեջ կողմնորոշվելուն:

Ղարաբաղի բարբառում քննվող բառը բարբառային-հնչյունական օրինաչափ փոփոխությունների է ենթարկվել՝ ներկայանալով **պարիկը՝նթան // պարըկենթան // պարիկենթան // փրրգինդան** արտասանական տարբերակներով:

Այսօր Բարեկենդանի տոնը ոչ միայն չի նշվում, այլև արդեն մոռացության է մատնվում. *Շուղօվուրթը պարիկը՝նթանը մըննան քըցնլ ա*:

Քրիստոնեական տոնացույցի **Տյառնընդատաջ** տոնանունը հայերենի բարբառներում հանդես է գալիս տարբեր տարածքների բնորոշ հնչյունական-արտասանական փոփոխություններով:

Ղարաբաղի բարբառում *Տյառնընդատաջ* գրաբարյան կազմությունը, արտակարգ հնչյունափոխության ենթարկվելով, բավա-

⁸ Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ հ. 1, էջ 422:

⁹ Օդաբաշյան Ա., նշված աշխատությունը, էջ 26:

կանին հեռացել է գրական տարբերակից՝ առկայանալով **դրողոսա(ն)՝/դուողոսա(ն)՝/դրրողոսա(ն)՝/դուրողոսա(ն)՝** հնչյունական զուգաձևություններով: Այն իր առաջնային՝ *տյառնընդառաջ* կրոնական իմաստը կորցրել է՝ ձեռք բերելով *մեծ խարույկ, բոցավառ կրակ աշխարհիկ* իմաստը: Գործածական է նաև **դրողոսա(ն)՝ սարքել//անել** հարադիր բայը՝ *մեծ, բարկ կրակ վառել* իմաստով: «Իմաստափոխության հիմքում ընկած է մասի (խարույկ) և ամբողջի (տոն) հարաբերակցությունը»¹⁰: Ինչպես՝ *Ժուղովուրթը հվաքվում ըն, ջիհիլնէն էլ դրողուտաչին կրլխավը լօք ըն տամ://Քըշէր չի անց կէնըս՝ խօտու տիգէր, տըրմանու մարաք, հըրըվանու կում չի կըրակ տան, դրողոսանչ անին: [ՁՏ, Ա, 179]*

Սովետական տարիներին մոռացության մատնված այս տոնը վերջին ժամանակներում կարծես թե նորից վերագտնում է իր խորհուրդը, նշվում երիտասարդության շրջանում: Տոնի խորհրդի վերականգնվելու հետ երիտասարդության առօրյա խոսքում կիրառություն է գտնում Տյառնընդառաջ տոնանվան առավել տարածված ու գործածական **Տրնդէգ** տարբերակը՝ բարբառին հատուկ **Տըրընդէգ** ձևով: Ինչպես՝ *Սավէտին վըխտէն ժուղովուրթը տըրընդէգըն էլ ա իլնլ մըննան քըցննծ:*

Պարբերաբար նշվելով նույն ժամանակահատվածում՝ փետրվար ամսին, տոնանունը ժամանականշություն կարող է արտահայտել՝ ստանալով հոլովական վերջավորություններ: Ժամանակահատվածի կոնկրետացման նպատակով քննվող բառի հետ կարող են գործածվել *օր, վախտ* ժամանականիշ բառերը, ինչպես՝ **Տըրընդէգին օրը ջըհիլնէն կըրակէն կրլխավը լօք ըն տամ:**

Հեթանոսական ժամանակներից եկող և մեր ժողովրդի մոտ հայտնի տոներից է **Օտակազարդը**, որը բարբառներից յուրաքանչյուրում օրինաչափ հնչյունափոխության է ենթարկվել: Ղարաբաղի բարբառում այն հանդիպում է տարբեր խոսվածքների բնորոշ հնչյունական օրինաչափություններով՝ **զըրզմնրթմնր//զըրզէրթէր // զըրզմնրթմնր // զըրզմնրթմնր // զըրզմնրթմնր // զիըրզմնրթմնր //**

¹⁰ Մեսրոպյան Հ., նշվ. աշխ., էջ 183:

զիրզմրթմնր // զմրթմնռ // զմրթմնր // ծըղկագարթ // ծըռըզմրթմնր և այլն: Ինչպես տեսնում ենք տոնի անվանումը կապվում է մի դեպքում **ծաղիկ**, մեկ այլ դեպքում **ծառ** բաղադրիչի հետ: Բնության զարթոնքի, ծառերի բողբոջման շրջանում կատարվող պարտադիր այս ծիսակարգը հազարամյակների հնություն ունի:

Ժողովրդական բանահյուսության մեջ առկա բազմաթիվ օրինակները վկայում են, որ այդ տոնի հիշատակությունը ժամանակի մեջ կողմնորոշվելու միջոց է եղել: Ինչպես՝ *Օրերը հրնցրնում ըն, կ'ամ ա զրրզմրթմնր ուրուզունը*: [ՆԼՂԺԲ, 47]

Քրիստոսի հարության տոնը, որ համաժողովրդական բնույթ ունի, հայտնի է **Ջատիկ** անունով: Ըստ Գ. Ջահուկյանի՝ *զատիկ* նշանակում է «*զոհ, զոհաբերում, զատիկ, հարության տոն, տոն*»¹¹: Կազմված է համարում *զատանել* բայի արմատից՝ -իկ ածանցով: «Հայերենի իրանական փոխառությունները» գրքում, ելնելով Ջատիկ բառի նախնական «*զենում, զոհ*» իմաստներից, Լ. Հովհաննիսյանը հաստատում է բառի ծագումը **zatan**-իրանական ձևից¹²: Հ. Մեսրոպյանը նշում է, որ *զատիկ* անունը ստեղծված է հրեական *պասեք* անվանման համաբանությամբ¹³:

Ջատիկը ամենասիրված, ամենահիշարժան տոներից մեկն է: Տոնի եկեղեցական անունը՝ Հարություն, լիարժեք արտահայտում է զարնանային այս տոնի թե՛ եկեղեցական, թե՛ ժողովրդական բովանդակությունը: Թեև տոնը շարժական է, նշվում է մարտի 22-ից հետո մինչև ապրիլի 26-ն ընկած ժամանակաշրջանում, այնուամենայնիվ ժողովրդի լեզվամտածողության մեջ այն ժամանակն ամրակայելու և մտապահելու փորձված միջոցներից է՝ բարբառային **զատեգ//զէտեգ** հնչատարբերակներով: Դա հաստատելի է օրինակով՝ *Մին քյնսիբ կյուղացու հրրևան զատկին խաշիլ ա իփրւմ, բոլ-բոլ յրան եղ ածըւմ, մին մրեծ կյնաթ էլ քյնսիբ հրրևանին տոնըր տանըւմ*: [ԼՂԲ, 353]

¹¹ **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 233:

¹² **Հովհաննիսյան Լ.**, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 240:

¹³ **Մեսրոպյան Հ.**, նշվ. աշխ., էջ 204:

Ղարաբաղի բարբառում ունենք **զրտեգու ծնւ** կապակցութ-
յունը՝ ուղիղ իմաստով՝ *զատկի տոնին ներկված ձու* և փոխաբերա-
կան իմաստով՝ *սիրուն, նախշուն, գույնզգույն*:

Զատեգ//զէտեգ տոնանունը մեր բարբառում ունի իր համա-
նունային գույզը՝ *կարմիր գույնով և սև խայտերով փոքր, կարծրա-
թև միջատ* նշանակությամբ:

Զատիկ հասկացության հետ սերտորեն առնչվում է տոնա-
խմբության նախընթաց երեկոն՝ *նախատոնակը* կամ *նավակա-
տիկը*, որով նշանավորվում են նաև եկեղեցական բոլոր կարևոր
տոները: Հ. Մեսրոպյանը նշում է, որ նավակատիկ բառը երբեմն
այս կամ այն բարբառում հանդես է գալիս բազմիմաստությամբ
կամ իմաստային անցումով: Ղարաբաղի բարբառում, ըստ նրա,
նավակատիկ բառը առկայանում է իմաստի կոնկրետացումով և
հատկանշում է եկեղեցական այնպիսի տոն, որի ժամանակ մսեղեն
ուտելն արգելվում է¹⁴:

Մեր բարբառում հիշյալ բառն ունի **նըվըկատեգ//նըվըկատեք**
հնչական տարբերակները՝ *ծննդյան և զատկի ճրագալույցների
երեկոն, երբ պասը լուծում են, բայց մսեղեն չեն ուտում* բացատ-
րությամբ: Օրինակ՝ **Նըվըկըտեգին մը՝ս օտելը կարլի չի**:

Ժողովրդական խաղիկներում հանդիպում ենք.

Լոխձին հետի վառ Զմտիկ,
Մեզ հետի **նըվըկատիկ**,
Զհաննամը թնն **նըվըկատիկ**,
Յարս ա վըսկըհատիկ: [ԼՂԲ, 158]

Հաջորդ տոնը **Համբարձումն** է, որն ուղեկցվում է աշխույժ
ծեսերով ու բախտագուշակությամբ: Տոնվում է Զատկի 40-րդ օրը՝
հինգշաբթի: Բանահյուսական նմուշներում հիշյալ տոնանվան
հաճախակի կիրառությունը հուշում է, որ մեր ժողովրդի համար
այն սիրելի ու սպասված էր:

¹⁴ Նույն տեղում, էջ 205:

Համբարձման գիշերը հրաշքների հետ է կապվել: Մարդիկ հավատացել են, թե այդ գիշերվա բոլոր երագները կատարվում են, ու անհնարին ամեն բան հնարավոր է դառնում. հանդիպում են երկնային մարմինները, համբուրվում են աստղերը: Այդ գիշեր, ըստ ժողովրդական բանասացների, բացվում էր անգամ աշխարհից խռոված Սասնա ղյուցագուն Մհերի քարայրի դուռը¹⁵:

Վիճակի ժամանակ երգվող քառյակներում Համբարձում տոնանունն անպակաս է և հասկանալի ժամանակահատված է ցույց տալիս, թեև ժողովրդի կողմից չի նշվում:

Ըստ մրեզ **Համբարցում** ա,
Աստրծուն փառքը բարցում ա,
Քրքիատոսը երգյինք հըմբնրցվից,
Լոխճիս բախտը պեցվրմ ա: [ԼՂԲ, 38]

Այս քառյակից էլ հասկանալի է, թե քրիստոնեական ինչ խորհուրդ ունի Համբարձման տոնը:

Ղարաբաղի բարբառում գործածական է **հըմբնրց(ը)վիլ// հիմբնրց(ը)վիլ** բայը՝ իմաստային ընդլայնմամբ՝ առնչակցության կամ կցորդության հիմունքով: Ունի *վերանալ*, *անհայտանալ*, *համբարձվել* իմաստները: Նրանով բաղադրվել է **յըհր հըմբնրցվիլ** կապակցությունը՝ *մեռնել*, *վախճանվել* իմաստներով: **Յըհր հըմբնրցվիս** ձևով կիրառվում է անեծքներում:

Հայկական տոնացույցի ամենասիրված տոներից մեկն էլ **Վարդավառն** է: Անժխտելի է, որ այն հեթանոսական ծագում ունի, սակայն 4-րդ դարից սկսած ստացել է բացառապես քրիստոնեական բովանդակություն՝ *պայծառակերպություն* կամ *այլակերպություն* անուններով:

Վարդավառ բառի ստուգաբանությանը Հր. Աճառյանն անդրադարձել է *վարդ* բառի տակ: Նա հիշատակում է տարբեր ժամանակներում տարբեր հեղինակների կողմից տրված մեկնաբանու-

¹⁵ **Բառնասյան Ջ.**, նշվ. աշխ., էջ 92:

թյուններ, սակայն վերջնական եզրահանգման չի գալիս¹⁶: Գ. Ջահուկյանը վարդավառ բառը համարում է բաղադրությունն՝ վարդ բառից¹⁷: Բառի ստուգաբանությանն անդրադարձել է նաև Գ. Ղափանցյանը՝ հայ-խեթական ընդհանուր բառամթերքի քննության մեջ: Նա գրում է.«խեթերեն *wāter*» հայոց *vard* (վարդ) «ջուր» ես տեսնում եմ *վարդ+աւ+առ* բառի մեջ, որ նշանակում է «ջրալուս», այսինքն՝ *ջրով լվանալը, ցնցղելը*»¹⁸: Հ. Մեսրոպյանը նշում է, որ բառի ստուգաբանությանն առանձին հոդվածով անդրադարձել է Ջ. Ռասսելը: Նա կարծում է, որ բառի առաջին բաղադրիչը *վարդ* ծաղկանունն է, և համեմատում է *Rosalia* տոնանվան *rosa*(վարդ) արմատի, նաև վրաց. *vardoba, vardis phenoba* բառերի հետ: Երկրորդ բաղադրիչը համարում է իրանական միջնորդությամբ հնդեվրոպական **bher(բերել)* արմատը, այսինքն՝ **vardV-barana-* > **vardV-warra-* > *վարդավառ*: Անդրադառնալով այս ստուգաբանությանը՝ Հ. Մարտիրոսյանը կարծում է, որ եթե այս տեսակետը ճիշտ է, ապա *վարդավառ* և *վարդենոր* տարբերակները լինում են ստուգաբանական կրկնակներ¹⁹:

Այսօր էլ համաժողովրդական ցնծությամբ ուղեկցվող Վարդավառը, որ տոնվում է հուլիսին, ժամանակի մեջ կողմնորոշվելու ուղենիշ է տարձել՝ շնորհիվ հասկանալի ժամանակահատված մատնանշելու հանգամանքի:

Ղարաբաղի բարբառում այն կիրառվում է **վըրթեվուր//վնւրթնւվնւր** հնչյունական փոփոխություններով: Շատ է հանդիպում մանավանդ ժողովրդական խաղիկներում.

Վըրթըվերիս վնդանն ա,
Մըեչին մարթին դադան ա,
Մըեչին մարթը հու՞նց անի,
Խնձորկեցի գյնդանն ա: [ԼՂԲ, 42]

¹⁶ Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 4, էջ 317-318:

¹⁷ Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 706:

¹⁸ Ղափանցյան Գ., նշվ. աշխ., էջ 152:

¹⁹ Մեսրոպյան Հ., նշված աշխատությունը, էջ 209:

Ինչպես տեսնում ենք հոգևոր կյանքի նշանակալից իրադարձություններն ու փուլերը, ազգային ու կրոնական տոները կարևորելն ու մտապահելը ժամանակն ամրակայելու փորձված միջոցներից են ժողովրդի լեզվագիտակցության մեջ և իբրև այդպիսին կմնան այնքան ժամանակ, քանի դեռ ժողովուրդը հիշում, արժևորում ու տոնում է դրանք:

РЕЗЮМЕ

Вербальная реализация временных форм в карабахском диалекте в соответствии с национальным и религиозным обрядом

Алтунян Эдита

Изучение форм и способов фиксации времени в языковом мышлении народа позволяет выявить интересные факты. С древних времен национальные и религиозные праздники, отмечаемые в одно и то же время года, стали для людей временными маркерами.

Запоминание событий и этапов национальной и духовной жизни и запоминание времени других событий и явлений путем их сочетания с ними являются одними из проверенных средств фиксации времени в языковом сознании народа. Даже сегодня единицы, являющиеся ориентирами в навигации по течению времени, не утратили своей роли в повседневной и повседневной речи носителей диалекта, особенно старшего поколения, и останутся таковыми до тех пор, пока о них помнят, ценят и прославляют.

Ключевые слова: Карабахский диалект, народное языковое мышление, народные праздники, религиозный обряд, хронометраж.

SUMMERY

Verbal realization of forms of time fixation in Karabakh dialect according to national and religious ritual Altunyan Edita

In the process of examining the forms and means of time fixation in the language thinking of the people interesting facts are revealed. Since ancient times, the national and religious holidays celebrated at the same time of the year have become time markers for people. Memorizing the events and stages of national and spiritual life and remembering them by combining with the time of other events and cases are among the proven means of time fixation in the language awareness of the people. Even today, the units that are landmarks in duration of time have not lost their role in the daily and everyday speech of dialect speakers, especially the older generation, and will remain so as long as they are remembered, valued and celebrated.

Key words: Karabakh dialect, language thinking, national holidays, religious ritual, time fixation.

ԱՆՁԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄԸ ԴԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ԿԱԶՄԱԽՈՍԱԿԱՆ ԴԱՐՉՎԱԾՆԵՐՈՒՄ

Արզումանյան Արմինե

Արցախի պետական համալսարան
դասախոս
arzumanyanarmine06@asu.am

Բանալի բառեր. դարձվածային միավոր, Ղարաբաղի բարբառ, լեզվամտածողություն, կազմախոսական դարձված, աշխարհի լեզվական պատկեր, բառապաշար, իմաստային դաշտ:

Լեզվի կազմախոսական դարձվածային միավորներն ամբողջացնում են տվյալ հանրության լեզվամտածողության, կենսակերպի, ազգային բնավորության պատկերը, որում արտացոլվում է մարդկանց վերաբերմունքը աշխարհի ու իրար հանդեպ: Կազմախոսական բառապաշարն այն բանալին է, որով մեկնաբանվում են ճանաչողական գործընթացները: Անձնային որակները մարմնի մասերի համեմատությամբ արտահայտելու փորձերը մարդկային պատկերացումների լեզվական արտացոլումն են եղել դեռևս վաղ ժամանակներից: Մարդու գիտելիքները վճռական նշանակություն ունեն նրա վարքագիծն ու գործունեությունը որոշելու հարցում, իսկ լեզվաիմացությամբ պայմանավորված է նրա լեզվական վարքականոնը¹: Աշխարհաճանաչողության ընթացքում մարդու մարմինը դարձել է ուսումնասիրության ու համեմատության լավագույն առանցքը, և մարմնամասերի անվանումները լեզվում դարձվածակազմության լայն հնարավորություններ են տվել:

Անձի հատկանիշ արտահայտող կազմախոսական դարձվածները բնութագրում են անհատին այս կամ այն կողմից, առանձնանշում որևէ առավելություն կամ թերություն՝ կազմելով իմաստային տարբեր դաշտեր: Նշված դարձվածների կազմավորմանը մասնակցում է մարմնամասերի անվանումների գերակշիռ մասը:

¹ Խաչատրյան Լ., Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2017, էջ 291:

Կազմախոսական բաղադրիչի հաճախական գործածությունը տարբեր լեզուներում, ինչպես նաև Ղարաբաղի բարբառում, ընդգծում է բառապաշարի այդ շերտի կարևորությունը անհատի գիտակցության մեջ աշխարհի լեզվական պատկերի ձևավորման ընթացքում: Լեզվական այս միավորներով դրսևորվում է նաև այն կրողներին ազգային մտածելակերպը, քանի որ լեզվի ազգային առանձնահատկությունները բացահայտում է հենց դարձվածաբանությունը²:

Աշխարհի լեզվական պատկերը մարդու մտավոր ու հոգևոր գործունեության արդյունքն է, որը բացահայտում է իրականության նկատմամբ մարդու պատկերացումները: Բարդ հոգեբանական գործընթացների միջոցով մարդը, արտաքին աշխարհից ստացած տեղեկությոը իր անհատականության շրջանակում մշակելով, ձևավորում է աշխարհի մասին իր պատկերացումները, որոնք արտահայտվում է հաղորդակցման ընթացքում³:

Հոդվածում առանձնացվել են անձի հատկանիշ ցույց տվող կազմախոսական դարձվածների իմաստային ենթադաշտերը: Որոշ դեպքերում այս կամ այն հատկանիշը արտահայտող դարձվածախումբը ունենում է միևնույն կազմախոսական բաղադրիչը: Մարմնամասերի անվանումների բազմիմաստությամբ պայմանավորված՝ միևնույն բաղադրիչը մասնակցում է տարբեր դարձվածախմբերի կազմավորմանը, այսինքն՝ դրանք կարող են դարձվածներ կազմել և՛ ներքին, և՛ արտաքին հատկանիշներ ցույց տվող խմբերում: Օրինակ՝ **աբուռը իրըհսեն** (ամոթի զգացում ունեցող) և **իրըհսը յղըրծու** (գեղեցիկ), **աշկը ծակ** (ազահ) և **աշկը սօր** (լավ տեսողություն ունեցող), **քրհթը յըրգինքումը** (գոռոզամիտ) և **քրհթը տափան կացած** (շատ ցածրահասակ), **չիւնիւն բօշ** (շատախոս) և **չիւնիւն ծօռ** (տգեղ դեմք ունեցող), **փօրը դաժավ լիգը** (չարակամ) և **փօրը կըլիսան պեցձը** (շատ գեր) և այլն: Մյուս կողմից՝ նույն կազմախոսական բաղադրիչով կազմվում են հականշային զույգեր,

² Назарян А. Г., Фразеология современного французского языка, М., 1967, стр. 34.

³ Апресян Ю. Д., Образ человека по данным языка: попытка системного описания, М., 1995, стр. 45.

ինչպես՝ **հավուոր պեց** (առատաձեռն) և **հավուոր կապ/պենդ** (ժլատ), **կըլծխը լիգը** (շատ խելոք) և **կըլծխը տերտակ** (անզետ), **ծըրքը պեց** (առատաձեռն) և **ծըրքը քարու պատառ** (զծուծ) և այլն:

Դարձվածի իմաստը կարող է բխել կազմախոսական բաղադրիչի խորհրդանշական իմաստից, որոշ դեպքերում էլ՝ կազմվել դարձվածի փոխաբերական այլ նշանակությամբ: Կան նաև կազմախոսական բաղադրիչի գործառույթից չբխող իմաստ ունեցող կառույցներ:

Ղարաբաղի բարբառի դարձվածապաշարից ընտրված խնդրո առարկա միավորները հոդվածում ներկայացվում են երկու առանձին խմբով՝ ա) *անձի ներքին հատկանիշներ արտահայտող դարձվածներ* և բ) *անձի արտաքին հատկանիշներ* արտահայտող դարձվածներ:

Ներքին հատկանիշների տարածքը ներկայացնում են անձնային որակները (արի, վախկոտ, փորձառու, հաջողակ, խելացի, տզետ և այլն), բարոյական առանձնահատկությունները (բարի, չար, նենգ, ազնիվ և այլն), խոսքի առանձնահատկությունները (շատախոս, սակավախոս, գաղտնապահ, բերանբաց և այլն), էթիկական նկարագիրը (աշխատանք, տարբեր արարքներ): Կազմախոսական դարձվածների միջոցով վերաիմաստավորված ներկայացվում են մարդկային բազմաբնույթ հատկանիշներ, որոնցով անհատը հաղորդակցվում ու դառնում է հանրության մասնիկը:

Մտավոր-ինտելեկտուալ ունակությունների իմաստային դաշտի դարձվածները Ղարաբաղի բարբառում բնորոշվում են դրական ու բացասական հարանշանակությամբ և կազմվում են հիմնականում *կըլօխ* կազմախոսական բաղադրիչով: Բարբառում խելքը, բանականությունը, մտավոր գործունեությունը ներկայացնող դարձվածներ կազմվում են *կըլծխ/զլուխ* և *խըհլք/խելք* բառույթներով⁴: Այսպես՝ **կըլծխը խըհլքավ լիգը**, **կըլծխը կօրծ անել**, **օխձեն խըհլքը կըլխումը**, **օխձու կըլխումը խըհլք տինձոյ**, **կյիրին տակըն էլ**

⁴ Մարմնամասերի անվանումների նշանակությունները տե՛ս **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976 և Մարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2019:

գիդայ, կրլօխըն է⁵ դարձվածներով բնութագրում են խելացի ու դատող մարդուն: Այդ հատկանիշի բացակայությունն են ակնարկում խըհլը դրբանումը/դրբանեն կապած, մագը երկան, խըհլը կարճ, բեյնը տերտակ, կրլօխը տիրմանավ լիգը, կրլօխը ցորտ տարած, կրլխան հափրած, կրլխեն թւնիչւկ տրված, կրլօխը տերտակ, երկուվըննանէ էշ, էշու կրլօխ, ընգուճնեն թակած էշ, կրլօխը ծակ, խըհլքան պակաս, կրլխումը ծեթ չինիլ, փօրումը այբու թիքա չինիլ դարձվածային միավորները: Բացասական երանգավորումով դարձվածային միավորներ գերակշռում են:

Մարդու խոսքային գործունեությունը գնահատող դարձվածները Ղարաբաղի բարբառում կազմվում են *պէրան, լնուգն, չննն* կազմախոսական բաղադրիչներով: *Պէրան/բէրան, լնուգն/չէգու* բառույթները մարդու խոսքային գործունեությունը, ունակությունն են խոհրդանշում, *չննն*/ճնոտ բառի համար այս իմաստները փոխաբերական են: Ղարաբաղի բարբառի օրինակներով դրսևորվող հատկանիշները հիմնականում բխում են այս բաղադրիչների գործառույթներից:

Գեղեցիկ ու հմուտ խոսքով օժտված մարդուն են բնութագրում *լնուգակօխ անէ, պէրանը վըսկըճիրած, պիրանավը հավք փըռնէ, քաղծըր լնուգն, բըրբնու լնուգն, օխծու լնուգն* ինիլ, *լնուգավը հավք փըռնէ, լնուգավը օխծը պննան տուս օնէ, լնուգում փնքոգնք, պէրանը թւննուգ, լուգու ինիլ, լնուգնն սօր, խուսկու հըէտէ ծըհքը ջուրը չըտանէ կառույցները:*

Չննն յըէր կապած, անլնուգն հէվան, *լնուգան խըհլճ, պիրանումը լնուգն չինիլ, չնննն կախ անէ/տալ* դարձվածները խոսելու հմտություն չունեցողին են մատնանշում:

Գաղտնապահությունը և լռակյացությունը ցույց են տալիս *պէրանը կապ, պէրանը հավաք պահէ, խուսկէն տակըն ա կրլօխը գիդայ, պիրանան պէն չի տնն կնն* և այլ դարձվածներ: Իսկ *պէրանը ճըղած//ճօթըռած, փօջիգը պիրանան մօտէ, առանց սօտնը պէրան, պէրանը յըհկածը ասէ, պիրանումը լօբի չի թըրչվի,*

⁵ Դարձվածային միավորների աղբյուրը տե՛ս Սարգսյան Ա. Յու., Մինասյան Շ. Մ., Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան, Ե., 2017:

պիրանումը տաք ճձը չի պահել, պիրանեն դափաղ չինիլ, պիրանեն ջրլձով չինիլ, լձզվեն տակեն վրճակե/փօջ չինիլ, բօջ բօղագ, դամարը բօջ, չսնսն բօջ, չսնսն չարխու տինիլ, չսնսն թակել, չսնսն հըպըրապում չի, խըրթըԾյ չինիլ դարձվածները հատկանշում են շատախոս կամ բերանբաց մարդուն:

Խոսքային տգեղ վարվելակերպը կաղապարվել է դուղան սօր, լալուջ անել, իրըսան կենալ, լակ ծուվու նման իրըսան կենալ, պերանը յըխտուտ, կ'եշ լձզնի, չար լձզնի, կ'եշ պերան, ճօթըռած պերան, բօնփ անել, իրըսան կենալ, ժանգ անել, իրըսան կենալ դարձվածներում:

Պերան բառով կազմված մի շարք դարձվածներ, որոնք իմաստային բացասական երանգավորում ունեն, տարբերակային ձևեր են կազմում ըռըէխ բառով՝ ըռըէխը չանթա, ըռըէխը հավաք պահել, ըռըէխը շան լրկաման և այլն, որոնք լրացնում են բացասական հատկանիշների շարքը:

Ազնիվ, մեծահոգի ու բարի մարդուն անվանելու համար Ղարաբաղի բարբառում գործածվում են սըհրտը թսնսնիզ, սըհրտ գիղոզ, իրըսը պարգ/պեց, ծըհրեն օխծ ինի՝ մարթու յըրա չի քըցել, ծըհրը թսնսնիզ, թսնսնիզ ծըրքատար, սըրտեն պերթ կըշինվի/կալ կըթակվել, սըրտեն տըհ վեր կըքըցվի, սըրտու փօջ տննու օնօղ, աշկը քախծըր, լեն սըհրտ ինիլ, պեց սըրտավ, պիրանումը չե չինիլ, սըհրտը լեն, սըրտու փօջ տննու օնօղ դարձվածային միավորները:

Նենգությունն ու չարակամությունը ներկայացված են ունքամաչը խային, փօրը դաժավ լիգը, աշկը չար, սըրնը պըրտօղ, իրըսըհան՝ հիլի, տըկըհան՝ ծիլի, սըհրտը քար, ծըհրը ծօռ, ծըհրը շօր դարձվածներում:

Ներքին հատկանիշ արտահայտող դարձվածների կազմությանը մասնակցում են բարբառի սըհրտ (խորհրդանշում է մարդկային ապրումները, զգացումները), ծըհր (աշխատանքային գործունեությունը, ուժը, հաղորդակցումը), իրըս (մարդու արժանիքները, հուզական աշխարհը, համարձակությունը), սըրն (մարմնի կենդանությունն ապահովող միջոցը), աշկ (տեսնելու կարողությունը, ներքին նկատառումները), փօր (ստամոքսը, իրանի առջևի մասը)

կազմախոսական բաղադրիչները՝ իրենց գործառույթներից բխող իմաստներով:

Մարդու ինքնահավանությունն ու մեծամտությունը նշող դարձվածները կազմվել են հիմնականում *քրթ* (կապվում է մարդկային արժանիքների հասկացության հետ՝ հաճախ բացասական իմաստով) և *իրրէս* (կապվում է մարդու արժանիքների, հուզական աշխարհի հետ), նաև այլ բառույթներով՝ *քրթը յըրգիւնքումը/ցրէց, քրթը Տըրըպըզօնավը քիւնիլ, քրթան վեր ըղնօղը հազգար թիքիւ կըտըռնա, մաննը տաս՝ կըտըրաքէ, կուռնըտակէն ծըմէրուկ չի տըղվարվում, իրրէսան լուն վեր ըղնէ, հազգար թիքա կըտըռնա, հըվումը վըհնը չի կէնվում:*

Հանդգնությունը անվանում են *աշկը/քրթը օնքան պիցըրանալ, աշկան դաղած, կըլծիը զըն/հաստ, ըշկըօնքան ընգընէլ դարձվածները:*

Զգալի են անպարկեշտությունը նկարագրելիս՝ *ճակատը//իրրէսը կոււմաշու կաշի, ճակատը թօքի, ճակատը պէնդ, շան իրրէս ինիլ, կաշին հաստ, կըլիէն լէչակ չինիլ, իրրէսէն մէտունը//ճոշը վեր կյալ, իրրէսէն կաշին տըրէխ շինիս, չըքէյնը Բաղդաղ քիւնիս, մաշիլ չի, իրրէսէն մին անգոնը զընդան շինիլ, մինը՝ կըրակ, իրրէսը մաշկան կարած, իրրէսը շան կաշի, իրրէսան պէնդ, իրրէսը սըվ, իրրէսը տէմ անէլ, արուըր վըննատակ տալ, իրրէսը ըստատան կարած, իրրէսը կըրկատած և այլն:*

Պարկեշտություն նշանակող դարձվածները ևս կազմվում են *իրրէս, ճակատ, կըլծի* բառույթներով՝ *ճակատը/իրրէսը մէտուն քըսած, մին կըլծի պէցուր ինիլ, իրրէսէն արու ինիլ, իրրէսէն մաղ օնէլ, իրրէսը մաղ կիւլիւծ, իրրէսը կիւրմիւրիլ, արուըր իրրէսէն յիրան, մարթու վըռա ինիլ, լիգը հասկէն կըլծիը կախ կիւնի:*

Ամաչկոտ ու ինքնամփոփ մարդուն բնութագրելու համար բարբառում հանդիպում են *քրթը կնիւն թնգն հարթըր, քըլլած սըհոս* դարձվածները:

Արիություն նշանակող դարձվածները Ղարաբաղի բարբառում կազմախոսական տարբեր բաղադրիչներով են ձևավորվել՝ *սըհոս, իրրէս, աշկ, կօնըր, կըռէք՝ կիւլիւ/օխծու սըհոս կէրած,*

իրբհսէն խանչալ խըղըցնիս, աշկը ճըպել չի, կըռէքը սօր, կօնը հըլժօղ չինի, ըսլանու սըհրտ ինի: Վախկոտի հատկանիշը արտահայտվում է հիմնականում *սըհրտ* բաղադրիչով՝ **ըլըբստըրակու սըհրտ ինի, ծըտու սըհրտ ինի, կըլիսէն լէչակ քըցիլ** (տղամարդու մասին):

Բարբառում ժլատությունն ու ազահությունը նշող դարձվածները աչքի են ընկնում քանակով ու բաղադրիչների զանազանությամբ՝ մազ (*արտաքին ծածկույթ, բարակ, քիչ* իմաստներով), աշկ, սըհրտ, հափուտ, ծըհրք, կըլժի, կըռէք: դրանց գործառույթը դարձվածներում որոշիչ է: Այսպես՝ տեզհա մազ խօզօղ, **աշկան նեղ, հափուտը կապ, աշկը ծակ, չօփ չի տալ, վեր աշկըտ կօխիս, սըհրտը նըռեղ, ճարումը ճար ինի, թըրթեվունքան մազ պուք կըտա, մազ պուք տալ**, մարթին աշկը մին հափուտ վըհըր կըքուշտըցընէ, **մըթէն սըհըր մազ մանէլ, մին կաթ ճնըր չի տալ, թէ տինիս պըռըշիտ, հափուտը կապ, ծըհրքէն թըխիս՝ կօրէկ չի վեր ըղնէ, ծըհրքը քարու պատառ, էրկուվըննանէ կնըղ** և այլն: Մինչդեռ սակավաթիվ են ինքնաբավ, առատաձեռն մարդուն անվանող դարձվածային միավորները՝ աշկը կօշտ, սըհրտը կօշտ, հափուտը պէց, կըլժիսը փէշկին տակէն, կըռքան կըտըրէլ:

Դարձվածապաշարում աչքի են ընկնում ուտելիքի հանդեպ անգուսպ լինելը հատկանշող դարձվածները, որոնք կազմվել են կերակրվելու գործառույթ ունեցող *պէրան, բօղազ, փօր* բառայիններով՝ **բուղազան խըհըճ, պիրանան թնը, փօրու յեսիր, մըծ պէրան, իրբհսը պիրանան հըմանչի, ծակ բօղազ** և այլն: Քչակերությունը բնութագրվում է **բուղազան չօր, պիրանան պէնը** դարձվածներով:

Շրջապատին անտեղյակ մարդուն անվանող դարձվածներ են՝ **օղտէն/էշին ընգուճումը քօն իլնն, աշկերը վըխաղնօյում, իսկ փորձառությունը՝ ըլխարքէն տակըն էլ գիղնը, կըլժիսըն էլ, քըհթը ծօռը քըմական ճընննչի, աշկը պէց, ծըհրքը սըվեր:**

Խորամանկությունը բնորոշվում է **ըշկերան շընէր վեր տըհուսալ, փօրումը օխտը աղվես ինի**, միամտությունը՝ **վըհնէրը ճիրնը**, իրըսլըվա հաց օսող կառույցներով:

Օրհրքը խնչալէն կօթէն դարձվածը նկատի ունի կովարարին, իսկ սրբաբար մերած մածուն, ներվը հանած, իրրհսան կակօղ, մագան մինըն էլ չի տննրնր կամ դարձվածային միավորները՝ բնավորութեամբ հանգիստ մարդուն:

Մարդու՝ արժանապատւությունից գուրկ լինելը նշող դարձվածներ են կազմվել *կըլծիս, ծըրք, բէր, դէն, իրրհս* բաղադրիչներով՝ բեղա վեր ընգած պըրինն, *շօնը ծըրքան հաց չի յօր օնէլ*, խօզին կըլծիսը խալիչին կէնալ չի, *կըտըրած դէնը չննի*, կըլխէն փափախ չինիլ, *իրրհսէն թըքում ըս, ասում ա՝ թօն ա կյամ*:

Անհավատարմությունը մատնանշվում է աշկը շօր, մագըր կակօղ, իրրհսան կակօղ, մագըր կըտըրած, կապը կըլխավը տըված, կապը վըննէրէն տակը քըցիլ, իրրհսը պըրթըճիւնն լըվացած, ջըլավը կըլխավը տալ, ջըլննը վըննէրէն տակը քըցիլ կապակցություններով:

Բազմաշնորհ, եռանդուն մարդուն տրվող բնորոշումներ են ծըրքան պէն չի պըրծընում, ճաքած հափուտ, մանները վըհսկէ, կուռնըտակէն ծնի կըլխննըվի, մըննէրավը շընէր յըր կնն, վըհսկէ ծըրքըր/մաններ ինիլ կառույցները՝ բնորոշ ծըրք և մաննը կազմախոսական բաղադրիչներով: Անգործունյա մարդու մասին է ասվում՝ *դիքճա դաբան, մաշկը շօր, մաշկան բօշ* և այլն:

Կազմախոսական դարձվածներով ներկայացվող ներքին հատկանիշների իմաստային դաշտը բավականին լայն է: Թվարկված հատկանիշներից բացի՝ լեզվական այդ կառույցներով վերաիմաստավորվում են մարդուն բնորոշ բծախնդրությունը (*քըթու մագ, ծուվէն մաչին մագ շօն կնն*), անհեռատեսությունը (*քըթան տէնը չըտըհնալ*) կամ շըջահայացությունը (*քըթու ծակ*), կոպտությունը (*մագըր կօշտ/չօր, իրրհսը ցօրտ*) կամ զգայունությունը (*սըրտան պէրակ, սրբաբար քամէ տարած*), երախտամոռությունը (*հացը վըննատակ տալ*), երախտագիտությունը (*վըհնէրը լըվանալ, ճննըրը խըմէլ*), համառությունը (*կօխկըր հաստ, կօխկըր կացնալ տննըվիլ չի, կօխկէն ըղնէլ, կօխկըր տէմ անէլ, խուսկէն/ըսածէն վըհնըր կէնալ, մաշկը տափըր չըտալ*) կամ փոփոխամտությունը (*օծխէն հալավըր ճիտավըր ըղնէլ, դամարըր կակօղ*), շողոքորթությունը

(օխտը իրըն ինի), անհամբերությունը (աղէնքը կարճ), հպարտությունը (կրլօխը պէցուր) և այլն:

Անձի արտաքին հատկանիշների շարքում թվարկվում են այն նշաններն ու որակները, որոնք կարող են ընկալվել զգայարանների, հատկապես տեսողության միջոցով: Դրանք առնչվում են մարդու ֆիզիկական կազմվածքին (ուժեղ, թույլ, երիտասարդ, ծեր, առողջ, տկար), արտաքին տեսքին (նիհար, գեր, կարճահասակ, ցածրահասակ), զգայարաններին (լսողություն, տեսողություն):

Այսպես՝ նիհարակազմ մարդուն և նիհարելը բնորոշող դարձվածներ են՝ *մին վընկըռ՝ մին կաշի զիրավ կւնւնծ, չոր վընկըռ, աղի ծընծ ծըծած, կաշվի քըշէռք, էրկու չաթած վընկըռ՝ մին կաշի զիրավ ածած, դէնու մըչանք*, մազէրը իրընէն չուրանալ, *մազ տըննալ*, մէսը հւնիլ, վընկըռը մընալ, *մէս-մօրթա ըղնէլ*, մին հափուտ տըննալ, *չւննւն բիզվիլ*, չոր վընկըռ տըննալ, *վէզը տւննձու կօթ տըննալ*, փօրը մաշկան կէնալ, *քըթը բիզվիլ*, կաշին ա վընկըռքնէն մընալ, *աշկէն յընը հւնիլ*, աշկէրը փօս ըղնէլ, *իրընք բիզվիլ*, լապէրը կախ-կախ ինիլ, *լապըռ տէննալ* և այլն: Այս խմբի դարձվածների կազմությանը մասնակցում են *փօր, վէզ, իրըն, մազ, վընկըռ, կաշի, աշկ, հափուտ, դէն* կազմախոսական բաղադրիչները:

Գիրությունն ու գիրանալը նկարագրվում են *փօրը կըլխան պէցնը, թափանը զըն/կախ, փօրը հաստ, վընկըռը մըսումը, իրընքը պըռօզու տէփ, մէս-մօրթէ փըռնէլ, պըկին տակին պօկ փըսնէլ, չընին տակէն չւննւն փըսնէլ*, պօրտ քըցիլ, վէզը հըստանալ, *փօրը տնու կւն*, *փօրը տափավը քաշ ինիլ*, *փօրը քըթէն տէմ ըղնէլ*, *փօր քըցիլ, կ'օտէն փօրավը պատ չըկւն*, *կուտկատընը հըստըցընէլ, իրընքը պնէլօրվէլ* և այլ դարձվածային միավորներով, որոնք բաղադրվել են *մօրթէ, պօկ, չւննւ, պօրտ, փօր, իրըն, վընկըռ* բառայիններով:

Իմաստային այս ենթախմբերը աչքի են ընկնում ձևավորված դարձվածային միավորների և նրանցում կազմախոսական բաղադրիչների առատությամբ: Մա պայմանավորվում է նրանով, որ ար-

տաքին այդ հատկանիշները տեսողականորեն հեշտ ընկալվում և մեկնաբանվում են:

Կարճահասակ մարդուն են բնորոշում **հիշկան տափեն իրըհսեն ա, էրկու էնքան էլ տափեն տակեն ա, քրէթը տափան կացած, վրռըկըլխան կրտըրած զըկըհռ, բարձրահասակին՝ կըլծխը՝ յըրգիհքումը, վըհնէրը՝ տափումը, վըհնէրը՝ տափեն, ինքը՝ յըրգիհքումը** դարձվածները:

Մարմնեղ կազմվածքը բնութագրող դարձվածները կազմվել են հիմնականում *ջան, դալու* բառույթներով՝ **ջանը մաչին, ջանը տըհըր//պէնդ, դալուն քըհրծ, վըհսկըրը հաստ, դալուն դըրբըգա յա, դըլվեն յուրդունդժակ վէր կըքըցվի, դալուն շօն ա, դըլվումը մարդ կօղըր կըկենա, թեգունքը լեն, բիլւնկը հաստ, մաշկը//դալուն պէնդ և այլն:**

Ֆիզիկապես առողջ լինելու հատկանիշը արտահայտվում է կուլըկատեգը *կ'սըրմ'սըր*, պէնդ վըհսկըռ, թօշան *սըր'սըն* կաթել, թօշերը խընձօր, իրըհսան ըշփիշկա թափ տաս՝ նի կըկենա, ծըհըքը՝պէն, վըհնըրէ կըրեգման, ծըհըքը՝ սաղ, վըհնըր՝ սաղ, վըհնան յըրա, մին կումաշը մին ծըհըքավն ա խըղըցընում դարձվածներով: Հակառակը արտահայտում են **մաշկան բօշ, դալուն բօշ** դարձվածները:

Կազմախոսական դարձվածներով բարբառում վերաիմաստավորվում է նաև մարդու ֆիզիկական տարիքը, ինչպես՝ **արունը տաք, բէղը նօր ծիլած, բիդատըէղը սըվանալ** (երիտասարդություն), **խընձօրը մաշկան սօ**, **վէր վէր չընգալ, փըսըկէլի վախտըն ա** (հասունացած աղջիկների մասին), **բէղավ-մըրքավ** (տղամարդու հասուն տարիք), **իրըհսեն կյարմուրը վէր կյալ, կըրվագանը մին վըենըր շինիլ, աշկէրը հանգիլ, մաշկան կըռանալ, մին վըենըր հինգիստին** (ծերություն) և այլն:

Գեղեցիկ արտաքին տեսքը Ղարաբաղի բարբառում նկարագրվում է **նախշը իրըհսան ծըլլալ, փօրը խէխտած բըրամա** (նրբակազմ), **ծըծաղը իրըհսեն, բ'սըլ'սընը պէրակ, ըշկըօնքը տըհըր, իրըհսան լճա կաթել, իրըհսան սըր'սըն կաթել, իրըհսեն յըղըծ'սը անիս՝**

կօտվե, իրըհսն փըլավ կօտվե, իրըհսը յուդուծու, իրըսկըհասը ըրըվհաստ ա դարձվածային միավորներով:

Արտաքին տգեղությունը անվանվում են *չինսն ծօռ*, իրըհսն մին հափուտ կօրեկ կըտըղվարվե, իրըհսն յեշվում չի, իրըհսը քաշ կըսկօտած, իրըսկըհաստա ըղնեղ դարձվածներով:

Բարբառում անձի մի շարք այլ արտաքին հատկանիշ ցույց տվող դարձվածային միավորներ են՝ *կըռքընեն պըրիենձ* (փոքր ատամներով), *մագերը շիթիլ ըրած* (նոսր մագերով), *աշկերը շնշնսքննդ ըրած* (ակնոց կրող), *աշկը շըլժր* (շեղաչք), *իրըհսը թըթըված* (խոժոռադեմ), *աշկերը փըյալա* (մեծ աչքերով), *պըռըշներան մին դագան քըլըրփաչա կիփվի* (հաստ շրթունքներով), *իրըհս պահել* (մորուք ունենալ) և այլն:

Հայտնի է, որ հայերենում զգայության անվանման փոխարեն գործածվում են մարմնի մասերի անվանումներ: Այսպես՝ լսողություն ասելու փոխարեն ժողովուրդը նախընտրում է *ախանջ* բառը, տեսողություն ասելու փոխարեն՝ *աչք* և այլն⁶: Կազմախոսական դարձվածներով Ղարաբաղի բարբառում գնահատվում են նաև զգայարանների հատկանիշները, ինչպես՝ լսողությունը լավ՝ *անգուճը պէնդ, անգուճը թիթըրվ/սօր*, վատ լսողությամբ՝ *անգուճը ծեթ ածած, ընգուճներան խըհճ, տեսողությունը լավ՝ սօր աշկ, աշկը սօր, աշկերը ճօկել*, վատ տեսողությամբ՝ *ըշկերան խըհճ, մաննըտ աշկը կօխիս՝ տըհսնալ չի, աշկեն լուսը պըկասել, աշկերը ծընդըրանալ, աշկերը քուռանալ, աշկը ծըհտ լակած, աշկը պըրտօղել* և այլն:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ Ղարաբաղի բարբառում անձի հատկանիշ ցույց տվող կազմախոսական դարձվածները արտացոլում են ներքին և արտաքին դրական ու բացասական առանձնահատկություններ: Անձի հատկանիշների իմաստային դաշտերում համեմատաբար մեծ թիվ են կազմում բացասականը հատկանշող դարձվածները, որը բացատրվում է բացասական երևույթների նկատմամբ մարդկանց քննադատական վերաբերմունքով: Դարձվածով ձևավորվող բացասական հատկանիշը համարվում է անձի

⁶ Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Ե., 1969, էջ 58:

բնութագրի խախտում: Յուրովի ընկալելով արտաքին աշխարհը՝ անհատը ձեռք է բերում մտածողության այն նորմերն ու գնահատման չափանիշները, որոնք հատուկ են տվյալ հասարակությանը:

Տարբեր են դարձվածի ամբողջական իմաստի և նրա կազմախոսական բաղադրիչի գործառույթի հարաբերությունները առանձնացված կառույցներում՝

ա) դարձվածի իմաստը բխում է նրա կազմախոսական բաղադրիչի գործառույթից. սա հիմնվում է մարդկանց անմիջական ընկալումների վրա, ինչպես՝ **կրոնքը սօր, կ'վազանը մին վրհնը շինիլ, լձզվին տակեն վրհակե չինիլ, պիրանեն դափաղ չինիլ, լիճը հասկեն կըլժիը կախ կինի** և այլն:

բ) դարձվածի իմաստը բխում է նրա կազմախոսական բաղադրիչի փոխաբերական իմաստից. ժամանակի ընթացքում շրջապատող աշխարհի բազմակողմանի ճանաչման արդյունքում մարդը համեմատության եզրեր է գտնում երևույթների և բառերի պատկերավոր իմաստների միջև: Ղարաբաղի բարբառի կազմախոսական դարձվածներում այդպիսի լեզվական կառույցները առավել հաճախադեպ են: Օրինակ՝ **լձզվալը հավք փրոնէլ, ժանգ անէլ, իրրհսան կենալ, սըրտէն պերթ կըշինվի, կըլխէն թ'նիչնկ տըված** և այլն:

գ) դարձվածի իմաստը չի բխում նրա կազմախոսական բաղադրիչի գործառույթից: Այս դեպքում, պայմանավորված մտածողության զարգացման աստիճանով, կարող են առաջանալ տարբեր մեկնաբանություններ: Մի դեպքում լեզվական երևույթների թյուր-ընկալման հետևանքով ոչ խորը դատողություններ են արվում՝ աշխատելով բացատրել մարդկային մարմնի հետ կատարվող իրողությունները, ինչպես **փօրումը այբու պատառ չինիլ, աշկեն յը'ղը հնիլ** դարձվածներում: Երկրորդ դեպքում, ընդհակառակը, այդ գործառույթների գերազանց իմացությունը և այլ երևույթների հետ զուգակցելու ունակությունը լեզվական խոր ընդհանրացումներ անելու օրինակներ է տվել: Օրինակ՝ **աշկը օնքան պիցըրանալ, իրրհսը մաշկան կենալ, ըշկերան շընէր վեր տը'ոնալ, ունքամաչը**

խային, խուսկու հրէտա ծըրքը ջուրը չըտանէ, վըհնէրը ճիրումը և այլն:

Այսպիսով՝ անձի հատկանիշ ցույց տվող դարձվածներում դրսևորվում է անհատի վերաբերմունքը աշխարհի և իր հանդեպ: Կազմախոսական բաղադրիչները լեզվում գործածելով՝ մարդը վերաձևակերպում է իր գիտակցության մեջ գծագրված աշխարհի պատկերը: Կազմախոսության լեզվական վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչպես է մարդն ընկալում իր մարմինն ու նրա գործառույթները՝ ձգտելով ինքնաճանաչման:

РЕЗЮМЕ

Проявление черт личности в соматических фразеологизмах карабахского диалекта Арзуманян Армине

В карабахском диалекте многочисленны фразеологизмы с компонентами- названиями частей тела. В статье рассматриваются фразеологические единицы со значением внутренней и внешней характеристики человека. В ряде случаев эти свойства обусловлены символическим значением соматического компонента фразеологизма. В других примерах значение фразеологизма не мотивировано функцией данного соматизма.

Во фразеологизмах карабахского диалекта, выражающих качественную характеристику человека, содержатся названия почти всех частей тела. Посредством этих языковых единиц выявляется ряд положительных и отрицательных черт, характеризующих умственные, поведенческие, личностные, а также внешние качества человека. В ходе познания мира человеческое тело стало основным объектом изучения и сравнения, а названия частей тела открыли широкие возможности для образования фразеологизмов в языке.

Ключевые слова: фразеологическая единица, карабахский диалект, языковое мышление, соматический фразеологизм, языковая картина мира, лексика, семантическое поле.

SUMMERY

Reflection of personal qualities in somatic phraseological units of the karabak dialect

Arzumanyan Armine

The article views body idioms, numerous in Karabakh dialect, namely body idioms pointing to internal and external characteristics of a person. In some cases these peculiarities stem from the symbolic meaning of somatisms. In other cases the meaning of phraseological unit isn't associated with the function of body part.

Almost all of the somatisms form phraseological units with in the Karabakh dialect. These linguistic units impart positive and negative intellectual, volitional, temperamental, physical and also appearance qualities.

Human body has become a primary means for research and comparison in our cognitive picture of the world. The somatisms provide wide opportunities for the formation of phraseological units.

Key words: phraseological unit, Karabakh dialect, verbal thinking, somatisms, linguistic picture of the world, vocabulary, semantic field.

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ԳՈՅԱՎԻՃԱԿԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆՈՒՄ. ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Արզումանյան Հերմինե

Արցախի պետական համալսարանի ասպիրանտ
hermine.arzumanyan1@gamil.com

Բանալի բառեր. Ղարաբաղի բարբառ, անկախության շրջան, լեզվավիճակ, լեզվաքաղաքականություն, ոչ նյութական մշակութային արժեք:

Լեզուն ազգի գոյության կարևորագույն կոմանն է: Արցախի ժողովուրդն իր հաղորդակցությունն իրականացնում է բարբառով: Ղարաբաղի բարբառը հարյուրամյակների պատմություն ունի: Այն իր կրած փոփոխություններով արտահայտում է ժողովրդի անցած պատմական ուղին և առ այսօր կատարում է իր կարևորագույն գործառույթը, այն է՝ ապահովում է արցախցու ազգային ինքնության պահպանումը:

Անկախության շրջանում Ղարաբաղի բարբառի դերն ավելի է կարևորվել, քանի որ այն պետականություն խորհրդանշող հիմնասյուններից մեկն էր: Այդ կարևորությունն ամրագրվել է ամենից առաջ լեզվի մասին օրենքով: Օրենքում սահմանվում է, որ Արցախի Հանրապետությունը «նպաստում է Ղարաբաղի (Արցախի) բարբառի պահպանմանը, օգտագործմանը, խրախուսում նրա գիտական ուսումնասիրումը և ազգագրական ու բանահյուսական ժողովածուների հրատարակումը»¹: Սա վկայում է, որ Արցախի Հանրապետությունում կարևորվում է պետական լեզվաքաղաքականության իրականացման անհրաժեշտությունը, որն արտահայտվում է գիտության, մշակույթի մեջ և հեռուստատեսային հաղորդումներում Ղարաբաղի բարբառի դերի արժևորմամբ:

¹ԼՂՀ Լեզվի մասին օրենք, հոդված 1 (1996թ. մարտի 20):

Օրենքի դրույթը կենսագործվել է բոլոր տարածքներում՝ գիտական, կրթական, մշակութային:

Անկախության շրջանում Արցախում կատարվել են բանահավաքչական ու բարբառային նյութերի հավաքագրման աշխատանքներ, հրատարակվել են բարբառագիր ստեղծագործություններ ու բարբառագիտական, բանագիտական մեծաթիվ ուսումնասիրություններ, գրվել են հոդվածներ ու ատենախոսություններ: Միայն 2002-2014 թվականներին Արցախի պետական համալսարանի ասպիրանտների և հայցորդների գիտական աշխատանքներից 18-ը նվիրված էին Արցախի բարբառի և ազգագրության ուսումնասիրությանը:

Կատարված ուսումնասիրությունների շարքում առանձնանշելի է բարբառի բառարանագրությունը: Յուրաքանչյուր լեզվի (լեզվավիճակի) գիտական ուսումնասիրության կարևոր բաղադրիչը այդ լեզվով բառարանների գոյությունն է: Ղարաբաղի բարբառին նվիրված առաջին բառարանային աշխատությունը Գուրգեն Բաղդասարյանի *Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան* երկհատորյակն է²: Իսկ Ղարաբաղի բարբառի ողջ բառազանձը (շուրջ 40 հազար բառային միավոր) գիտական և տառադարձված ամփոփված է Ա. Սարգսյանի հեղինակությամբ *Ղարաբաղի բարբառի բառարանը* աշխատության մեջ³: Այն մեծարժեք հուշարձան է, որը գալիք սերունդներին է փոխանցում Ղարաբաղի բարբառի բառապաշարային իրողությունները, ինչպես նաև ներառում է դարձվածապաշարը: Բառարանի հրատարակությանը հաջորդել է առանձնացված Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարանի հրատարակությունը՝ Արմեն Սարգսյանի և Շողեր Մինասյանի համահեղինակությամբ⁴:

² **Բաղդասարյան Գ.**, Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան, Ստեփանակերտ, հ. Ա, 2008, 426 էջ, հ. Բ, 2010, 462 էջ:

³ **Սարգսյան Ա.**, Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., «Էդիթ պրինտ», 2013, 846 էջ:

⁴ **Սարգսյան Ա., Մինասյան Շ.**, Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան, Ե., «Էդիթ պրինտ», 2017, 566 էջ:

Անկախության շրջանում հրատարակվել են նաև Արցախի բարբառին նվիրված բառարան-տեղեկատուներ՝ Ա. Սարգսյանի հեղինակությամբ. *Մատենագիտություն Ղարաբաղի բարբառի ուսումնասիրությանը*⁵, *Մատենագիտություն Արցախի ազգագրության ուսումնասիրությանը*⁶, *Մատենագիտություն Արցախի բանահյուսության գրառման և ուսումնասիրությանը*⁷:

Անկախության շրջանում լույս են տեսել բանահյուսական համահավաք ժողովածուներ և բանագիտական ուսումնասիրություններ, որոնք, կարևորագույն պատմական արժեք ունենալու հետ մեկտեղ մեծ նշանակություն ունեն նաև բարբառի ուսումնասիրության և պահպանման տեսակետից: Դրանք ընդգրկում են հատվածներ՝ գրառված Ղարաբաղի բարբառով: Օրինակ՝ Գուրգեն Գաբրիելյանի *Ղարաբաղի հորովել* ժողովածուի առաջին բաժինը՝ «Արցախական», ներառում է արցախյան բանահյուսական մոտիվներով և Ղարաբաղի բարբառով (տառադարձության մասնակի խախտումներով) գրված երգերի տեքստեր ու նոտագրություններ («Ղարաբաղի հորովել», «Կալին երգը», «Ճըղացեն երգը», «Ըրկանքեն երգը» և այլն):

Անկախության շրջանում Ղարաբաղի բարբառի զարգացմանը նպաստեց նաև նրա գործածությունը գեղարվեստական ստեղծագործություններում: Արցախցի գրողներն իրենց երկերում գրի են առել հատվածներ Ղարաբաղի բարբառով: Մաքսիմ Հովհաննիսյանը, Կոմիտաս Դանիելյանը, Մարտիրոս Ռբնը. նրանց երկերում իրենց հերոսների երկխոսությունները հաճախ ներկայացված են Ղարաբաղի բարբառով: Թեպետ այդ հատվածներում չեն պահպանվում գիտական տառադարձության կանոնները, սակայն դրանք արտացոլում են դարաբաղյան իրականությունը, ժողովրդի

⁵ Սարգսյան Ա., Մատենագիտություն Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության, Ե., 2019, 152 էջ:

⁶ Մատենագիտություն Արցախի ազգագրության ուսումնասիրության, Ե., 2020, 152 էջ:

⁷ Մատենագիտություն Արցախի բանահյուսության գրառման և ուսումնասիրության, Ե., 2019, 118 էջ:

մտածելակերպը և պատկերացում են տալիս բարբառի խոսվածքների մասին:

Անհնար է ապահովել որևէ լեզվի պահպանումը և զարգացումը, եթե այն ընդգրկված չէ կրթական համակարգում: Ղարաբաղի բարբառի՝ որպես ամբողջական դասընթացի ուսումնասիրությունը սկսվում է բուհում: Բուհական կրթական ծրագրերում բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի բակալավրիատի ուսումնական ծրագրում, *Բարբառագիտության հիմունքներ* դասընթացից բացի, ներառված է *Ղարաբաղի բարբառ*՝ 2 կրեդիտ, իսկ մագիստրատուրայի կրթական ծրագրում ներառված է *Բարբառների գործնական քերականություն* դասընթացը՝ 3 կրեդիտ: Առաջինի շրջանակներում ուսանողները տեսական գիելիքներ են ստանում Ղարաբաղի բարբառի և նրա խոսվածքների պատմական զարգացման ընթացքի, հնչյունական համակարգի, քերականական կառուցվածքի վերաբերյալ, իսկ երկրորդ դասընթացի շրջանակներում ձեռք բերված գիտելիքները կիրառելով՝ Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրում ներառված բառերը, բառաձևերը և նախադասությունները փոխադրում են մայրենի խոսվածքներով:

Անկախության շրջանում իրականացված պետական լեզվաքաղաքականության կարևոր ուղղություններից էր բարբառի՝ որպես ոչ նյութական մշակութային ժառանգություն պահպանությունը, պաշտպանությունն ու տարածումը: Եվ Կառավարության համապատասխան որոշումներով՝ նախ 2010թ. դեկտեմբերի 28-ի N 890 որոշմամբ ԼՂՀ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկում առանձնացվեց բարբառը, և նրա պահպանությունը դիտվեց որպես ազգային դիմագծի ու ինքնության պահպանում, ապա և 2013թ. դեկտեմբերի 28-ի N 974 որոշմամբ ստեղծվեց «Արցախի բարբառի և ազգագրության ուսումնասիրման կենտրոն» ոչ կառավարչական հիմնարկ՝ ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգում: Կենտրոնի

ստեղծման նպատակը բոլոր հարթություններում կատարվող աշխատանքների համակարգումն է:

Հասարակության լայն շրջանում բարբառախոսությունն ու բարբառաճանաչողությունը խթանող մշակութային ծրագրերից էր ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից կազմակերպվող ամենամյա *Մշակութային խաչմերուկ* մրցույթը ԼՂՀ գյուղական և քաղաքային համայնքների միջև: Մրցույթն ուներ հետևյալ անվանակարգերը. Արցախյան բռն ու բան, համայնքի բնապատկերի ներկայացում, բանահավաքչություն, բեմադրություն տեղի խոսվածքով, էպոսասացություն, Թումանյանական հանգով՝ «Մեր գյուղը»: Բոլոր անվանակարգերը ներկայացվում էին տեղի խոսվածքներով, ինչը հնարավորություն էր տալիս համաժամանակյա կտրվածքով վերհանելու այդ խոսվածքների հնչյունաբանական, բառապաշարային և քերականական առանձնահատկությունները:

Ռադիոհեռուստատեսությամբ ևս լեզվամշակութային քաղաքականության այդ գիծը տեսանելի էր: Հատկապես նշանակալի է «Մեր շենը» հաղորդաշարի դերը: Հաղորդման շրջանակներում նկարահանող խումբը այցելում է Արցախի տարբեր գյուղեր: Հաղորդավարը տեղի բնակիչներին հարցեր է տալիս գյուղի բարքերի, առկա խնդիրների և դրանց հնարավոր լուծումների, ինչպես նաև վերջին շրջանում կատարված փոփոխությունների վերաբերյալ: Բնակիչները հաճախ հարցերին պատասխանում էին իրենց մայրենի խոսվածքներով: Նրանց կենդանի խոսքը թույլ էր տալիս հեռուստադիտողին ճանաչել բարբառի տարբեր խոսվածքները, ինչպես նաև ուսումնասիրության հարուստ նյութ էր տալիս բարբառագետներին:

Անկախության շրջանում Ղարաբաղի բարբառի դերը պետականորեն արժևորված էր որպես պետականության խորհրդանիշ նաև: Դրան զուգահեռ ռազմավարական նշանակություն ուներ, և ապահովվում էր նրա համակողմանի գիտական ուսումնասիրությունը:

2020 թ. Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով թշնամու տիրապետության տակ են անցել Արցախի 193 բնակավայր (Ասկերանի շրջանի 8, Հադրութի շրջանի 42, Մարտակերտի շրջանի 13, Մարտունու շրջանի 7, Շահումյանի շրջանի 17, Շուշիի շրջանի 3 և Քաշաթաղի շրջանի 103): Բռնատեղահանված բնակչությունը հաստատվել է Արցախի տարբեր բնակավայրերում, Հայաստանում կամ արտերկրում: Ծննդավայրերի կորուստը մեծ վտանգի տակ է դրել նաև մայրենի խոսվածքները, քանի որ մարդկանց լեզուն մեծ ազդեցություն է կրում այն լեզվական միջավայրից, որտեղ նրանք ապրում են, ինչի հետևանքով գրեթե անհնարին է դառնում պահպանել խոսվածքն անփոփոխ: Հատկապես վտանգված է Ղարաբաղի բարբառի **ս** ճյուղը:

Նշենք նաև, որ եթե մինչ պատերազմը **ս** ճյուղին պատկանող խոսվածք ունեցողները **ուս** ճյուղին պատկանող խոսվածքով հադորդակցվող միջավայրում ձգտում էին փոխելու խոսվածքը՝ առանձին ուշադրություն չգրավելու նպատակով, ապա այժմ նկատվում է հակառակ միտումը: Նրանք պահպանում են իրենց մայրենի խոսվածքը, քանի որ այն հայրենիքից մնացած միակ հուշն է, որը կօգնի նույնիսկ հայրենիքից դուրս պահպանելու ազգային ինքնությունը:

Անկախության շրջանում որդեգրած լեզվաքաղաքականությունը՝ Ղարաբաղի բարբառի պահպանմանն ու ուսումնասիրությանն ուղղված, օրինակելիորեն կենսագործվել է, ու սա հաստատում է այն ճշմարտությունը, որ լեզվի՝ տվյալ դեպքում բարբառի պահպանումը, զարգացումը իրապես հնարավոր է, եթե լեզվակիր հանրությունը ունի պետականություն ու պետականորեն հովանավորվող և իրականացվող լեզվաքաղաքականություն:

Անկախության շրջանում Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության ուղղված գործողությունների համակարգային քննությամբ հնարավոր է դառնում վեր հանել իրականացված համալիր աշխատանքների արդյունքը: Օրենսդրական դաշտի համապատասխան կարգավորումներով թե՛ գիտական, թե՛ կրթական, թե՛ մշակութային տարածքներում բարբառի ուսումնասիրության, բարբառիմա-

ցության ու բարբառաճանաչողության մակարդակի բարձրացմանն ուղղված բոլոր աշխատանքները համակարգվում էին ու պետական ուղղվածություն ունեին:

Հետպատերազմական շրջանում բարբառի ուսումնասիրության հիմքերը երերուն են դարձել. Հաղորդի ենթաբարբառի, բարբառի մի շարք այլ խոսվածքների գոյության սպառնալիքի խնդիրն է առկա:

РЕЗЮМЕ

Положение карабахского диалекта в годы независимости: актуальные вопросы Арзумян Гермине

Карабахский диалект - важнейший исторический памятник, который подтверждает тезис о том, что территория Карабаха издревле была населена армянами, свидетельствует о древних корнях армяноязычного карабахского этноса, доказывает существование древнего народа с богатым культурным и духовным наследием.

В результате систематической деятельности, направленной на изучение диалекта Карабаха в период его независимости, становится возможным выявление результатов проведенных комплексных исследований. Все работы, направленные на изучение диалекта, повышение уровня диалектологии и диалектного познания как в научной, образовательной, так и в культурной сферах, координировались в соответствии с нормами законодательного поля и имели государственную направленность.

В послевоенный период основы изучения диалекта пошатнулись: появилась проблема сохранения гадрутского и ряда других субдиалектов.

Ключевые слова: Карабахский диалект, период независимости, состояние языка, языковая политика, нематериальная культурная ценность.

SUMMERY

The situation of the karabakh dialect in the years of independence. current issues **Arzumanyan Hermine**

The Karabakh dialect is the most important historical monument confirming Karabakh's argument that Karabakh has been an Armenian-populated territory since ancient times, testifies to the ancient roots of the Karabakh people - an Armenian-speaking ethnic group, testifies to the existence of an ancient people with a rich cultural and spiritual heritage.

A systematic study of the actions aimed at studying the dialect of Karabakh during the period of independence makes it possible to identify the results of the complex work carried out. All works aimed at studying the dialect in scientific, educational and cultural spheres, improving the level of dialectology and dialect cognition in accordance with the relevant regulations of the legislative field were coordinated and had a state orientation.

In the post-war period, the foundations of the study of the dialect became shaky. Nowadays, The Hadrut subdialect is especially under threat.

Key words: Karabakh dialect, the period of independence, the state of the language, language policy, intangible cultural value.

**ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԱՐՑԱԽԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ԵՂԱՆԱԿԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑԱՏՊԵՐԻ
ՁԵՎԱԿԱԶՄԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Գևորգյան Գայանե

Բրյուսովի անվան պետական համալսարան
Հայագիտության ամբիոնի վարիչ
gevgayane@gmail.com)

Բանալի բառեր. կառուցատիպ, ձևակազմական առանձնահատկություններ, անորոշ դերբայ, ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ, բարբառային գոտի, միջինհայերենյան շրջան:

Հայոց լեզվի բայական համակարգի ամբողջական նկարագիրը ներկայացնելու տեսանկյունից կարևորվում է նաև հայերենի բարբառների եղանակաժամանակային կազմությունների ուսումնասիրությունը: Դրանց՝ լեզվի պատմական զարգացման ընթացքում կրած փոփոխությունները, ձևաիմաստային առանձնահատկությունները հետաքրքրել են լեզվաբաններին, սակայն առանձին տարածքների եղանակաժամանակային կառուցատիպերի հետ կապված որոշ հարցադրումներ դուրս են մնացել նրանց ուշադրությունից կամ բավարար լուծում չեն ստացել: Սույն հոդվածում համաժամանակյա և տարժամանակյա հետազոտության եղանակների կիրառմամբ քննվում են Արցախի բարբառային միավորների եղանակաժամանակային կառուցատիպերի ձևակազմական և գործառական որոշ յուրահատկություններին առնչվող հարցեր:

Հայ բարբառագիտության մեջ ընդունված է շարունակական ժամանակներ կազմելու հատկությամբ առանձնացնել բարբառների դերբայակազմ խումբը: Դրանցում շարունակական ժամանակների բաղադրիչ համարվում է անորոշ դերբայի գործիական հոլովածնը, որը, օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակաձևերի հետ զուգորդվելով, ցույց է տալիս տևական գործողության հա-

րաբերությունը ներկա կամ անցյալ ժամանակակետի հետ: Լեզվաբանական գրականության մեջ նման կիրառություն է նշվել Ղարաբաղի և Հավարիկի բարբառներում¹:

Կ. Դավթյանը վերոնշյալ կազմությունները (*կիրեղավ էմ, կիրեղավ էս, կիրեղավ ի...*) Ղարաբաղ, Հադրութ, Շաղախ-Խծաբերդ տարածքում սահմանական ներկայի և անցյալ անկատարի ձևեր է նշում: Ի դեպ, անորոշի գործիական հոլովածը նա անվանում է ընթացակցական դերբայ²:

Վերոհիշյալ ձևերը Հ. Աճառյանը անվանել է անմիջական եղանակ և ցույց տվել, որ Ղարաբաղի բարբառի *հըսնեղավ ըմ* տիպի կազմությունները ոչ թե գործողության տևականությունն են շեշտում, այլ նշանակում են «հասնելու վրա եմ, քիչ մնաց, որ հասնեմ»³: Բացի այդ. «Անմիջական գործողություն ցույց տվող այս ձևերը գոյություն ունեն միայն մի քանի բայերի համար և քիչ են գործածական»⁴:

Համանման կարծիք են հայտնել նաև Գ. Ջահուկյանը և Ա. Խաչատրյանը: Ըստ Գ. Ջահուկյանի՝ «Շարունակականի դեպքում բացառվում են դերբայական «անմիջական ներկայի»... ձևերը, որոնք սովորաբար հատուկ են լինում սահմանափակ թվով բայերի»⁵:

Ա. Խաչատրյանը դրանք շարունակականի ձևեր չի համարում, քանի որ. «անորոշ դերբայի գործիական հոլովածնով և օժանդակ բայով բաղադրված այդ կազմությունները չունեն այն իմաստը, ինչ որ *կոր* մասնիկով ձևերը Կ. Պոլսի բարբառում և այլուր»⁶:

¹ Տե՛ս **Ղարիբյան Ա.**, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 181, **Աբրահամյան Ա.**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953, էջ 118-119:

² Տե՛ս **Դավթյան Կ.**, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966, էջ 167:

³ **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. 5, Ե., 1965, էջ 48:

⁴ **Աճառյան Հ.**, նույն տեղը:

⁵ **Ջահուկյան Գ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 106:

⁶ **Խաչատրյան Ա.**, Աճառյանը և հայ բարբառագիտությունը, Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 1, Ե., 1982, էջ 101:

Մեր կարծիքով ևս գիտականորեն հիմնավորված չէ վերոնշյալ կառուցատիպերը շարունակականի ձևեր համարել, քանի որ դրանցում բացակայում է շարունակականի մասնիկակազմ ձևերին բնորոշ իմաստը: Բացի այդ, հիշյալ կազմությամբ շարունակական ժամանակաձևեր նշված չեն Հայերենի բարբառագիտական ատլասի (այսուհետ՝ ՀԲԱ) ծրագրով լրացված այն նյութերում, որոնք գրանցվել են Արցախի տարածքում⁷:

Հաղորդում Ա. Ղարիբյանը շարունակականի հիշյալ ձևերին գուգահեռ նշում է նաև *նիս* մասնիկով բաղադրված կազմություններ, օրինակ՝ *խըմէս ըմ նիս, խըմէս ըս նիս, խըմէս ա նիս...*⁸: Սակայն *նիս* մասնիկով կազմությունները այս տարածքում երկրորդական բաղադրյալ ժամանակներ են կազմում. *նիս*-ը *լինել* բայի հնչյունափոխված ձևն է, և *խմէս ըմ նիս* նշանակում է *խմելիս եմ լինում*: Նշված ձևերը Ա. Պողոսյանը նույնպես շարունակականի ձևեր չի համարում: Նա այս տարածքում իբրև շարունակականի ձևեր անորոշ դերբայի գործիական հոլովաձևով բաղադրված կազմություններն է նշում⁹:

Վերոբերյալից պարզ է դառնում, որ անորոշ դերբայի գործիական հոլովաձևով և օժանդակ բայով կազմությունները Արցախի բարբառային միավորներում ունեն սահմանափակ կիրառություն և բովանդակության պլանում արտահայտում են ստորոգյալի գործողությանն անմիջապես նախորդող գործողություն, այսինքն՝ դրանց հատուկ չէ շարունակական ժամանակաձևերին բնորոշ, խոսելու պահին սկսված գործողության իմաստը: Հետևաբար գիտականորեն հիմնավորված չէ Արցախի բարբառային միավորներում շարունակականի հատուկ ձևերի առանձնացումը: Դերբայով և օժանդակ բայով կազմված այդ կաղապարները «ժամանա-

⁷ Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր (այսուհետ՝ ՀԲԱՆ), Հաթերք (210), Հաղրութ, Տումի և Հին Թաղլար (127), Մարտակերտ, Թալիշ (107), Մեյսուլան (167) և այլն:

⁸ Տե՛ս **Ղարիբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 182:

⁹ **Պողոսյան Ա.**, Հաղրութի բարբառը, Ե., 1965, էջ 334:

կային ձևեր չեն և պետք է ներկայացվեն խոնարհման հարացույցից առանձին»¹⁰:

Մարադայի և Մեհտիշենի բարբառային միավորներում անցյալ կատարյալի եզակի 1-ին դեմքում գործառում է ամ դիմանիշ թեքույթը՝ *լրսամ, լրսար, լրսավ, լրսանք, լրսաք, լրսան՛*¹¹: Այն բնորոշ է կրավորաձև վերջավորություններին: Ըստ Հ. Աճառյանի՝ անցյալ կատարյալի 1-ին դեմքում մ դիմանիշի առկայությունը ներկայի 1-ին դեմքի համաբանությամբ է բացատրվում¹²:

Ծայրիյուսիսարևելյան միջբարբառախմբի Ղարաբաղի բարբառի խոսվածքային որոշ միավորներ (Շաղախ, Մարտակերտ /Ջանյաթաղ/, Խծաբերդ, Խանազահ) հատկանշվում են անցյալ կատարյալի բաղադրյալ ժամանակաձևերի կազմությամբ¹³: Այս գուգաբանությունը ընդգրկում է նաև Ագուլիս-Մեղրիի կամ արևելյան բարբառախումբը: Սրանցում անցյալ կատարյալի ժամանակաիմաստը դրսևորվում է վաղակատար դերբայի¹⁴ և օժանդակ բայի հարադրությամբ, այսպես՝ *կյըրալ ըմ «խմեցի», կյըրալ ըս, կյըրալ ա՛*¹⁵:

Հ. Աճառյանը համանման կազմություն է նկատել Սուչավայի բարբառում, սակայն նա դժվարացել է որևէ կապ տեսնել Սուչավայի և անցյալ կատարյալի բաղադրյալ կազմություն ունեցող բարբառների միջև. «Որևէ կապ Սուչավայի բարբառի և Ագուլիսի ու Մեղրու բարբառների միջև անհնարին է երևակայել: Ավելորդ է մտածել նաև շրջակա որևէ լեզվի ազդեցության մասին, որովհետև թե՛ թուրքերենի և թե՛ պարսկերենի մեջ կատարյալը այնպես կա-

¹⁰ **Խաչատրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 101:

¹¹ **Դավթյան Գ.**, նշվ. աշխ., էջ 163:

¹² Տե՛ս **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հտ. 4, մաս Ա, Ե., 1959, էջ 574:

¹³ **Դավթյան Գ.**, նշվ. աշխ., էջ 151:

¹⁴ Է. Աղայանը և Հ. Մուրադյանը անցյալ կատարյալի կազմությանը մասնակցող վաղակատար դերբայը անվանում են կատարյալ դերբայ (տե՛ս **Աղայան Է.**, Մեղրու բարբառը, Ե., 1954, էջ 193, **Մուրադյան Հ.**, Կաքավաբերդի բարբառը, Ե., 1967, էջ 9):

¹⁵ **Դավթյան Գ.**, նշվ. աշխ., էջ 164:

նունավոր, պարզ ու մաքուր ձև ունի, որ կարիք չի զգացվել հարակատարի օգնության: Ուստի երևույթը բացատրում են այն դժվարությամբ, որի մեջ ընկել են Ագուլիսի և Մեղրու բարբառները, այնքան՝ որ կարիք են զգացել ջնջելու կատարյալի եզակի գ դեմքը և նրա տեղ դրել են բաղադրյալ ձևը»¹⁶:

Վերոնշյալ տարածքում անցյալ կատարյալի բաղադրյալ կազմության գործառությունը, անշուշտ, պայմանավորված է մի շարք գործոններով և պատմական երկարատև գործընթացի արդյունք է: Հավանաբար նախապես, երբ բարբառների հնչյունական և ձևաբանական հատկանիշները դեռ նոր էին սկսում զծագրվել, գրաբարյան անցյալ կատարյալն ընդգրկել է հայերենի ողջ տարածքը: Հետագայում, հին շրջանում գոյություն ունեցող բարբառային տարբերությունների խորացմանը զուգընթաց, հայերենի տարածքային տարբերակները անցյալ կատարյալի իմաստն արտահայտել են ձևաբանական տարբեր միջոցներով: Դրանց մեծ մասում շարունակել է գործածվել գրաբարյան անցյալ կատարյալը: Սակավաթիվ բարբառային միավորներ միայն, շեղվելով գրաբարյան անցյալ կատարյալի կազմության օրինաչափություններից և հավանորեն կրելով հինհայերենյան խոնարհման համակարգի գործառական և իմաստային փոփոխության ազդեցությունը, որպես անցյալ կատարյալի կազմության հիմնական ձև կիրառել են անցյալի իմաստն արտահայտող մեկ այլ կառուցատիպ՝ վաղակատար դերբայով և օժանդակ բայով հարադրված: Հավելենք, որ անցյալ կատարյալի բաղադրյալ կազմությամբ հատկանշվող տարածքային տարբերակներում գործում է մի ընդհանուր միտում. դրանցում բացակայում են վաղակատար դերբայով ժամանակաձևերը: Այն հավանորեն կապվում է դրանց՝ անցյալ կատարյալի հարացույցում գործածության հետ: Վաղակատար ժամանակների իմաստով հիշյալ բարբառային գոտում գործածվում են հարակատար դերբայով կազմությունները՝ արտահայտելով վաղակատար և հարակատար ներկա ու անցյալ ժամանակաձևերի իմաստ-

¹⁶ Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 576:

ներ, այսպես՝ *խըմած ըմ* «խմել եմ և խմած եմ», *խըմած ըմ լալ* «խմել էի և խմած էի»:

Բարբառային հիշյալ միավորները հատկանշվում են նաև ենթադրական եղանակի ապառնիի և անցյալի ապառնիի դերբայակազմ ժամանակաձևերով: Այս տարածքում դերբայակազմ են ինչպես սահմանական ներկայի և անցյալ անկատարի կազմությունները, այնպես էլ ենթադրական ապառնիինը և անցյալի ապառնիինը: Ենթադրական եղանակի ժամանակաձևերին բնորոշ է *անորոշ դերբայ+օժանդակ բայ* կաղապարային կառույցը, այսպես՝ *խըմիլ իմ* «կլիմել», *խըմիլ իս*, *խըմիլ ա*, *խըմիլ ինք*, *խըմիլ իք*, *խըմիլ ին*: Սրանք առանձնանում են ինչպես անցյալ կատարյալի կառուցվածքով (այն կազմում են վաղակատար դերբայի և օժանդակ բայի հարադրությամբ՝ *խըմալ ըմ* «խմել եմ», *խըմալ ըս*, *խըմալ ա*, *խըմալ ըք*, *խըմալ ըք*, *խըմալ ըն*), այնպես էլ անցյալ ժամանակախմաստն արտահայտող բառ-մասնիկի գործածությամբ, այսպես՝ *խըմալ ըմ լալ* «խմել էի», *խըմալ ըս լալ* «խմել էիր», *խըմալ ա լալ* «խմել էր»¹⁷: Շաղախի խոսվածքում ենթադրականի՝ անորոշ դերբայով կազմությունը գործածվում է միայն անցյալի ապառնի ժամանակախմաստն արտահայտելու համար, այսպես՝ *հասնիլ ըմ լալ* «կասնեի», *հասնիլ ըս լալ*, *հասնիլ ը լալ*, *հասնիլ ըք լալ*, *հասնիլ էք լալ*, *հասնիլ ըն լալ*, իսկ ենթադրական ապառնիի իմաստը դրսևորվում է *կը* եղանականիշ մասնիկով բաղադրված կազմություններով՝ *կը հըսնըմ* «կհասնեմ», *կը հըսնըս*, *կը հըսնը*, *կը հըսնըք*, *կը հըսնէք*, *կը հըսնըն*¹⁸: Սրանից հետևում է, որ այս խոսվածքում ենթադրական ապառնիի՝ անորոշ դերբայով կազմված ժամանակաձևերը վերապրուկային ձևով պահպանվել են միայն անցյալի ապառնիի ժամանակախմաստն արտահայտող կազմություններում:

Բարբառային հիշյալ տարածքում ապառնի ժամանակի՝ անորոշ դերբայով բաղադրված կազմությունների առկայությունը,

¹⁷ Դավթյան Գ., նշվ. աշխ., էջ 164, 165:

¹⁸ Սարգսյան Ա., Շաղախի ենթաբարբառը Հաղրութի ենթաբարբառի միջավայրում, Ստեփանակերտ, 2009, էջ 69:

ըստ Մ. Մուրադյանի, ներկայի և ապառնիի ժամանակաձևերը միմյանցից տարբերակելու միտումն է: Անորոշ դերբայով կազմությունները միջինհայերենյան շրջանում արտահայտել են ներկայի, անցյալ անկատարի և ապառնիի, անցյալի ապառնիի ժամանակային իմաստներ: Հավանաբար բարբառային այս տարածքում նախապես գործածվել են ներկայի և անցյալ անկատարի՝ անորոշ դերբայով կազմված ժամանակաձևերը, որոնք ունեցել են երկակի արժեք՝ արտահայտելով նաև ապառնիի և անցյալի ապառնիի ժամանակաձևերի իմաստներ: Հետագայում, վերոհիշյալ ժամանակաձևերի ձևային տարբերակման անհրաժեշտությամբ պայմանավորված, կազմվել են ներկայի և անցյալ անկատարի իմաստների արտահայտման նոր ձևեր, իսկ անորոշ դերբայով հարադրությունները պահպանվել են միայն ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի հարացույցներում¹⁹:

Ղարաբաղի բարբառի որոշ խոսվածքներ (Թալիշ, Հաթերք, Տուսի) հատկանշվում են *պիտի* եղանականիշ մասնիկի և *պիտիմ* բայի գուգահեռ գործածությամբ. *պիտի*-ն գուգադրվում է դիմավոր բայաձևերին, իսկ *պիտիմ*-ը հարկադրականի իմաստը դրսևորում է անորոշ դերբայի հարադրությամբ, այսպես՝ *պիտի կիրէմ* «*պիտի գրեն*», *պիտի կիրէս*, *պիտի կիրի*, *պիտի կիրէնք*, *պիտի կիրէք*, *պիտի կիրէն/կիրիլ պիտէմ* «*պիտի գրեն*», *կիրիլ պիտէս*, *կիրիլ պիտի*, *կիրիլ պիտէնք*, *կիրիլ պիտէք*, *կիրիլ պիտէն*²⁰ :

Ըստ Հ. Աճառյանի՝ *պիտիմ* բայը Ղարաբաղի բարբառում ունի *պէտըմ* ձևը (*պէտըմ ա սիրիմ* «պիտի սիրեն», *պէտըմ ա սիրիս*, *պէտըմ ա սիրի...*)²¹: Մակայն, ըստ ՀԲԱ-ի ծրագրով հավաքված նյութերի, Ղարաբաղի բարբառի խոսվածքներում *պիտիմ* բայը գործածվում է *պիտէմ*, *պիտէս*, *պիտի*, *պիտէնք*, *պիտէք*, *պիտէն* հնչյունական տարբերակներով:

¹⁹ Տե՛ս **Մուրադյան Մ.**, Գրական միջին հայերենի տերիտորիալ տարբերակների հարցի շուրջը (12-14-րդ դարեր), Լեզվի և ոճի հարցեր, մաս 3, էջ 249-250:

²⁰ ՀԲԱ, Ղարաբաղ, Թալիշ, 107:

²¹ Տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 134:

Օժանդակ բայի անցյալ ժամանակը բարբառային միավորներում դրսևորվում է պարզ և բաղադրյալ ձևերով: Արևևտյան և արևելյան խմբակցության բարբառների մեծ մասին բնորոշ են օժանդակ բայի պարզ ձևերը: Վերջիններս գործառում են հնչյունական տարբերակներով և հիմնականում նույնանում են անցյալ ժամանակաձևեր կազմող դիմաթվային վերջավորությունների հետ: Օժանդակ բայի բաղադրյալ ձևերը, զուգադրվելով ներկայի ժամանակաձևերին, դրսևորում են անցյալ ժամանակի իմաստ՝ գործառելով որպես ժամանականիշ մասնիկներ: Դրանք ընդգրկում են արևելյան խմբակցության հարավարևելյան բարբառախմբի Խոյ-Մարադայի, ծայրհյուսիսարևելյան միջբարբառախմբի Ղարաբադի, Բուրդուրի, Ագուլիս-Մեղրիի բարբառները: Տարածքային տարբերակների արևելյան խմբակցության Խոյ-Մարադայի բարբառում օժանդակ բայի անցյալի ձևերը կազմվում են *չ* բառ-մասնիկով²² (տալրմ էր, տալրս էր, տալ էր, տալընք էր, տալըք էր, տալըն էր²³:

Օժանդակ բայի բաղադրյալ ձևերի առաջացումը, ըստ Հ. Աճառյանի, պայմանավորված է ներկա և անցյալ անկատար ժամանակների համանուն ձևերը (ես իմ (ես եմ) և ես իմ (ես էի) միմյանցից տարբերակելու միտմամբ²⁴: Հիշյալ վարկածը հիմնավորվում է բարբառային փաստերով: Օժանդակ բայի բաղադրյալ կազմությանը հատկանշվող բարբառային միավորների մեծ մասում նկատելի է մեկ այլ օրինաչափություն ևս. օժանդակ բայի ներկա ժամանակի հոգնակի թվի 1-ին և 2-րդ դեմքերի ձևերը ևս կազմում են համանուն գույգեր, որոնք էլ ամենայն հավանականությամբ բառ-մասնիկների գործածության պատճառ են դարձել:

Այսպիսով, Արցախի բարբառային միավորների եղանակա-ժամանակային կառուցատիպերը հատկանշվում են ձևակազմա-

²² Ա. Ղարիբյանի կարծիքով էր-ը օժանդակ բայի անցյալի անկատարի եզակի 3-րդ դեմքն է: Եզակի 3-րդ դեմքում ներկայի օժանդակ բայի բացակայությունը նա բացատրում է այն փաստով, որ էր-ը այդ դեպքում վերականգնում է 3-րդ դեմք ցույց տալու իր նշանակությունը (տե՛ս Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 180):

²³ Տե՛ս Կ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 159:

²⁴ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 196:

կան և գործառական յուրահատկություններով, որոնցով նրանք ընդհանրություն են ձեռք բերում Ագուլիս-Մեղրիի բարբառախմբի հետ:

РЕЗЮМЕ

Соображения о формальных и функциональных характеристиках типы временной структуры диалектные единицы Арцаха Геворгян Гаяне

В данной статье, используя методы синхронного и межвременного исследования, рассматривая некоторые структурно-функциональные реалии временных структурных типов арцахских диалектных единиц, можно констатировать, что им свойственны особенности, благодаря которым они обретают общность с диалектной группой Агулис-Мегри.

Ключевые слова: структурный тип, структурные особенности, неопределенный глагол, крайне северо-восточная междиалектная группа, диалектная зона, среднеармянский регион.

SUMMARY

Concepts of formal and functional characteristics of types of temporal structure dialect units Artsaha Gevorgyan Gayane

In this article, using the methods of synchronous and intertemporal research, considering some structural-functional realities of temporal-temporal structural types of Artsakh dialect units, it is possible to ascertain that they have special features, thanks to which they find a community with the Agulis-Megri dialect group.

Key words: structural type, structural features, indefinite verb, extreme north-eastern interdialect group, dialect zone, Middle Armenian region.

**ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԻ ՇԱՐՔ
ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ**

Գրիգորյան Սուսաննա

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
բանասիրական գիտությունների թեկնածու
ավագ գիտաշխատակից
susanna7494@gmail.com

Բանալի բառեր. արդարանալ, դատ, կոնդակ, կարգ, սովորություն, օրենք:

Նախաբան

Հայերենի բառազանձի տարժամանակյա ուսումնասիրությունները քննում են բառերն ըստ լեզվի պատմության ժամանակաշրջանների: Հոդվածում նպատակ ենք հետապնդել վերլուծել իրավական հասկացությունների կիրառությունները հայերենի բարբառներում, այդ թվում՝ Ղարաբաղի (Արցախի) բարբառում, իմաստային կիրառությունների տարբերությունները հին հայերենյան բառաձևերի համեմատությամբ, բառիմաստի նեղացումները և ընդլայնումը: Հիմնականում օգտվել ենք ուսումնասիրության տարժամանակյա մեթոդից: Փորձել ենք հատկապես ուշադրություն դարձնել այն բառագործածություններին, որոնք այս կամ այն բարբառում հանդես են եկել բառիմաստի նեղացմամբ կամ ընդլայնմամբ, կամ ունեն ինքնատիպ կիրառություն:

Քննության են ենթարկվել *արդարանալ, հափշտակել, սպանել, պատիժ, դատ, դատախազ, դատաստան, դատավոր, խոստովանություն, կարգ, կոնդակ, սովորություն, օրենք, օրինավոր, օժիտ* գործածական հիմնական և այլ իրավական հասկացություններ՝ ըստ **քրեական իրավունքի և սովորությանի իրավունքի** իմաստային խմբերի:

1. **Քրեական իրավունք** - Քանի որ հանցագործության բուն գործիքներից մեկը **ձեռքն է, ասիք, բուռը**, ուստի գողության, հափշտակություն նշանակող հինհայերենյան և բարբառային բազմաթիվ բառաձևեր ձևավորվել են «ափ», «բուռն», «ձեռն» արմատներով:

«**Հափշտակել**» բառը «Հայերեն արմատական բառարան»-ում ըստ Հր.Աճառյանի հայ քերական մեկնիչները նույնպես կապել են «ափ» բառի հետ: Հայագետն այն բերում է իբրև չստուգաբանված բառ: «Ափ» բացատրությունն է տվել նաև Հիւնքերյանը՝ համարելով այն բաղադրյալ բառ՝ կազմված «հյ. **ափ** և պրս. **šitay** «գող, աւազակ» արմատներից¹:

Ղարաբաղի բարբառում կա «**հափռել**», որ նշանակում է «ափով ամբողջը հափշտակել»: Աճառյանը բերում է «Միսեռը հափռեց, փախավ» օրինակը և ստուգաբանում է, որ այն «կազմուած է ափ՝ բուռն» և «ուռ» մասնիկ»-ից²: **Հափռել** բառի պարագայում ունենք բառիմաստի նեղացում, որովհետև սա ընդհանրապես հափշտակելու համեմատությամբ՝ «ափով հափշտակելն է»:

Ձեռնաքաշ - Երև., Մն., Չն. բարբառներում³ ձեռն/քաշ, ձեռնաքաշութիւն նշանակում են գող, գողութիւն⁴:

Բոնաստուն - Մի շարք բարբառներում ունենք **բոնաստուն** բառաձևը՝ բանտ իմաստով. («բոն/ա/տուն Մկ.Սր.Վն.), որ կազմված է «բոն» և «տուն» արմատներից⁵: Նույն բարբառներում կա նաև «**բոնաւոր**» բառը՝ «ձերբակալված» իմաստով:

Օրէնք - Հավանաբար, հաշվի առնելով օրէնքի մի կողմից պարտադիր լինելու լինելու հանգամանքը, մյուս կողմից գրաբարում «**օրէնք**» բառի եկեղեցական կանոնների իմաստով կիրա-

¹ **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 3, Ե. 1977, էջ 392-393:

² **Աճառեան Հ.**, Հայերեն գաւառական բառարան, Էմիւնեան ազգագարական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 653:

³ Բարբառների անվանումների հապավումները բերում ենք ըստ Հր.Աճառյանի աշխատասիրությունների:

⁴ **Աճառեան Հ.**, Հայերեն գաւառական բառարան, էջ 687:

⁵ Նույնը, էջ 208:

ռումները, որոշ բարբառներում այդ բառը գործածվել է կրոնական արարողություն կատարելու իմաստով: Օրինակ՝ Բիթլիսի վիլա-յեթի Խիան գյուղում բառը գրանցված է «*մկրտություն*» նշանակությամբ, Երևանի խոսվածքում՝ *Սուրբ հաղորդություն* (օրէնք առնել - հաղորդություն առնել), իսկ Ալաշկերտում՝ *օրէնքել* նշանակել է «հաղորդել» (հաղորդություն տալ)⁶:

Ղարաբաղի բարբառում բառը կիրառվում է տարբեր իմաստներով. հանգուցյալի թաղման՝ քահանայի հետ կապված արարողություն⁷.

- ընդհանուրի կողմից ընդունված կարգ ու կանոն, սովորույթ. «Օրէնք ա, հու քյինում ա եդ սորփը, բիդի մի քանի կապել տինի քարէն յըրա»⁸:

- օրէնք տը ռնալ – սովորական երևույթ դառնալ. «Անդեր անիւմ ըստի թիվը, առանց փըսըկվելի խօխա պիրիլըն էլ ա օրէնք տը ռալ»⁹:

«**Օրինավոր**» բառը Թիֆլիսի (Տփիսիսի) բարբառում շատ ավելի է հեռացել իր նախնական իմաստից և կիրառվել «լավ, շատ, առատ» իմաստներով. «Օրինաւոր ուսում եմ տուել», «Օրինաւոր կերանք, խմեցինք»¹⁰:

Հատուկ - Հետաքրքիր է **հատուկ** բառի Թիֆլիսի (Տփիսիսի) բարբառում՝ «վճռել» իմաստով գործածելը¹¹. **հատուկ**՝ «վճռուած», **հատուկ անել**՝ «վճռել»՝ նկատի ունենալով, որ քրեական օրենսգրքերը սովորաբար ունենում են «հատուկ մաս», այսինքն առանձին վճիռներ պարունակող մաս:

Ազատ - Բառը հիմնականում բարբառներում օգտագործվում է իր առաջնային իմաստով, իսկ **Ղարաբաղի բարբառում** բացի իր հիմնական իմաստից կիրառվում է նաև «օրէնքով չարգելված կամ

⁶ **Աճառեան Հ.**, Հայերէն գաւառական բառարան, էջ 1137:

⁷ **Մարգարյան Ա. Յու.**, Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013, էջ 832:

⁸ Նույն տեղը:

⁹ Նույն տեղը:

¹⁰ **Աճառեան Հ.**, Հայերէն գաւառական բառարան, էջ 1138:

¹¹ Նույնը, էջ 641:

թույլատրված» իմաստով. «Միհենգ սավետ չի կա, ազադ առըսօր ենք անըմ»¹²:

Դատ, դատախազ, դատաստան, դատավոր – Հր. Աճառյանը «դատ» բառը համարում է պահլավական փոխառություն¹³: Տարբեր բառաձևերով տարածված է բազմաթիվ բարբառներում: Ունենք բարբառային զարգացումներ՝ դատուկ, դատանք, դատումաւոր և այլն: Բառն ունի նաև «աշխատել», «չարչարվել» իմաստները¹⁴:

Երևանի, Վանի բարբառներն ունեն «դատումով», «դատք» ձևերը՝ «շահաւէտ», «շահ» իմաստներով¹⁵: Վանի բարբառում՝ դատական – ուխտաւոր. «Աստուած տանը դատականներուն ո՛ յժ տայ». հունգարահայք՝ դատանք – աշխատութիւն: «Դատանքէ փախչող մարդ չէ»¹⁶:

Դատախազ – նշանակում է «դատ պահանջող, դատի մէջ ամբաստանող»: Խարբերդի բարբառը հետաքրքիր անցում է կատարել՝ «դատախազ կայնիլ» բառակապակցությունը օգտագործելով «պահանջկոտ լինել, առանց ձգձգելու միշտ պահանջել» իմաստով¹⁷:

Դատաստան – ունեն գրեթե բոլոր բարբառները: Աճառյանը հարցականով Ատ.-ի բարբառի համար բերում է «**դատաստան/ա/-գիր եղբայր, դատաստան/եղբայր**» ձևերը, որտեղ «դատաստան» բառը հանդես է եկել բառիմաստի ընդլայնմամբ՝ «երևակայական ոգի մըն. գրող, որ մարդոց չար ու բարի գործերը կ'արձանագրէ»¹⁸: Պոլսի բարբառն ունի նաև «դժոխք». «դատաստանին մէջը պիտի այրիս», իսկ Երևանի խոսվածքը՝ «դատաստան կտրել» դատը վճռել իմաստը:

¹² Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, էջ 29:

¹³ Աճառյան Հ., ՀԱԲ, հ.1, Ե., 1971, էջ 629:

¹⁴ Նույն տեղը:

¹⁵ Աճառյան Հ., Հայերեն գաւառական բառարան, էջ 268:

¹⁶ Նույնը տեղը:

¹⁷ Աճառյան Հ., ՀԱԲ, հ.1, էջ 630:

¹⁸ Աճառյան Հ., Հայերեն գաւառական բառարան, էջ 267:

Գործածական է նաև «**դատավոր**» բառը՝ ներբարբառային հնչյունափոխության կանոններով դառնալով՝ դադաօր, թադավօր, դադօօր, դադավեր, տադավըիր և այլն:

Պատիժ - «ՀԱԲ»-ում չստուգաբանված բառերի շարքում է¹⁹: Գրեթե բոլոր բարբառներում պահպանվել է՝ հնչյունափոխված բազմաթիվ տարբերակներով. պաղիժ, բաղիժ, բաղիջ, պատիշք, պատիձ, բաղինջ և այլն:

Բառիմաստի նեղացում ունենք Ատն.-ի բարբառում՝ *պատիժ* բառը իբրև *տզեղ-տձև* մարդ, Ղզ. Պլ. Ղբբ. բարբառներում՝ *Աստծոյ պատիժ*՝ «խիստ չարագործ մարդ» իմաստով. պատիժ ու կրակ՝ Փփ. «խիստ չար». (պատիժ ու կրակ եղավ գլխիս): Աճառյանը հայերենից վրացերենին փոխառնված է համարում **պատիժի**՝ «պատիժ», **սապատիժ**՝ «պատիժ, տուգանք», **պատիժեբա**՝ «պատժել, տուգանել», իսկ «Մղերդի արաբախօս քրիստոնեաները փոխ են առած **badij** «պատիժ»²⁰:

Պատճառական «-ոտ» միջածանցով բառաձևի փոփոխություն է գրանցել Շուլավերի խոսվածքը **սպանանել** բառի դեպքում՝ **սպանոտել** բառը գործածելով «այս ու այն սպանել» իմաստով և սրա կրավորական «սպանոտիլ» ձևը՝ «կոտորուիլ, ջարդ կրել» իմաստով:

Արդարանալ – Աճառյանը համարում է բնիկ հայերեն բառ՝ կազմված «արդ» արմատից և -ար մասնիկից: Գործածվում է գրեթե բոլոր բարբառներում: Հայագետը նոր բառ է համարում «**արդարեղ**»-ը²¹ և «Հայերեն գաւառական բառարան»-ում բացատրում է՝ «Ասլ. Արբ. Զր. Մշ. Ննխ. Սվ. Վն. Տփ., նաև Ղարաբաղի բարբառում՝ «հալեցուցած կարագ կերակուրի մէջ գործածելու համար (հումը կարագ կը կոչուի)»²²:

«Արդար»-ի անցումը տնտեսության մեջ որպես հատկանիշ պատահական չէ, որ լրացնում է հանրության համար շատ կարե-

¹⁹ **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հ.4, Ե. 1979, էջ 41:

²⁰ Նույնը:

²¹ **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հ.1, էջ 309:

²² **Աճառեան Հ.**, Հայերեն գաւառական բառարան, էջ 145:

վոր, կենսականորեն առաջնային նշանակություն ունեցող առարկայի:

Ապաշխարել - Ղարաբաղի բարբառում բառն օգտագործվում է նույն «ապաշխարել» իմաստով. Դէրը ասմա. - Էտ մը՝ ծ մեխկ ա, ք՝ ինի՛, արաշխարե»²³:

Խոստովանություն - Աճառյանը համարում է պահլավական փոխառություն: Էնկիւրիի թրքախօս հայոց բարբառով գրանցվել է **խոսդանքայր**՝ «խոստովանահայր» իմաստով: Նույն իմաստով *խոստովանություն, խոստովանանք* ձևերով պահպանվել է Երև. Ղգ. Ղրբ.Ննխ. Պլ. Տպ.-ի բարբառներում²⁴:

Կամք – Որոշ բարբառներում բառիմաստի փոփոխությամբ է գործածվել «կամք» բառը՝ **կամ/աւոր/ուիլ** – Երև. Տփիւ. հաւնիլ, համաձայմիլ, հաճիլ:

Կարգ - «Օրէնք» բառի նման (գուցե և նրա գործածության համաբանությամբ) «կարգ»-ը մի շարք բարբառներում օգտագործվում է «գործողություն կատարել» իմաստով. «Պլ. կրօնական արարողութիւն: Մեռելի վրա կարգ կատարել»: Իսկ «կարգել»-ը ամուսնացնել իմաստով այնքան տարածված է եղել բարբառներում, որ կարելի է ասել այն տարածված է եղել ողջ Հայաստանով. «Կարգել – Ախց. Արբ. Խլ. Ծրբ. Կս. Կր. Ննխ. Պլ. Չարսանձագ. Տս. Տփ. ամուսնացնել»²⁵: Կարգաւոր – Երև.Ղրբ.Մշ.Նր.Պլ.Տփ.-կրօնաւոր: Կարգ/ին – Երև. լաւ: Կարգին մարդ. Կարգուկ (կարգմուն) – Պլ. Սվ. Խրբ. - ամուսնացեալ»²⁶:

Կոնդակ - Նոր Նախիջևանի բարբառում գործածվում է ծաղրական «երկար նամակ» իմաստով՝ «Կոնդակ մը գրեցի»²⁷:

Մեղք – Ղարաբաղի բարբառն ունի՝ «Հոգուն մեղք անել»՝ «գրպարտել» իմաստով գործածությունը: «Մեղքը առնել-Ախք. Ակն Պլ. Մեղքը վեր ունել Երև. **ի գուր տեղը մեղադրել, գրպարտել, վրան**

²³ **Սարգսյան Ա.Յու.**, Ղարաբաղի բարբառի բառարան, էջ 1:

²⁴ **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հ.2, Ե. 1973, էջ 401:

²⁵ **Աճառեան,** Հայերէն գաւառական բառարան, էջ 556:

²⁶ Նույն տեղը Հ.:

²⁷ Նույնը, էջ 592:

կասկածել. Պարապ տեղը մարդուն մեղքը առնել: Մեղքը շլինքն առնել Երև. **յանցանք գործած ըլլալն ընդունիլ** Մեղքի տակ ընկնել Դգ.Պլ. **մեղանչել:** Մեղաց տոպրակ Պլ. շատ մեղաւոր: Մեղօք պսակ. մեղաց ամուսնութիւն Ատն.Հմշ.Չն. մեղաց Սվ. չհասութեան պատճառաւ մեղաւոր կամ յանցաւոր համարելի»²⁸:

Փաստ բառը հայերէնում նշանակում է «եղած, կատարված իրողություն»: Ունենք նաև՝ **փաստաբանել**՝ «պատճառաբանել, մի բան ապացուցանել կամ հերքել փաստերով» իմաստը²⁹:

Դարաբաղի բարբառում գործածական է ածականական կիրառությամբ՝ «փաստի»՝ գոռոզ, գոռոզամիտ» իմաստով. «Փաստի մարթի անա զահլաս տանում ա»³⁰: Կարծում ենք բառի այս կիրառության համար հիմք է ծառայել փաստաբանի կեցվածքի լրջությունը. «փաստի մարթ», այսինքն իրեն փաստաբանի նման պահող մեկը: Նման կիրառություն ունենք Գորիսի բարբառում այդ բառի ծաղրական իմաստով. «փաստաբա՛ն ես կաղնալ կըլխիս», այսինքն ակնարկը դարձյալ պահվածքին է վերաբերում, այս անգամ «հսկողի, վերհսկողի» իմաստով: Նույն բարբառում օրէնքից շատ խոսացող մարդուն բարբառախոսները անվանում են «փաստօ»:

Պետք է նշել նաև, որ կան անցումներ համագործածական բառերից՝ նոր իմաստային կիրառությունների՝ իմաստային նեղացման ճանապարհով: Օրինակ՝ «բերդ» բառը, որ իբրև համագործածական բառ նշանակում է «ամբոց», մի շարք բարբառներում կամ խոսվածքներում (Դրբ. բարբառ, Գորիսի, Երև. խոսվածք) կիրառվում է «բանտ» իմաստով. «բերդի տըռներըն ինգա՛ծ»:

Նույն Դրբ. բարբառը, Գորիսի, Երևանի խոսվածքները իրավական հասկացությունների մեջ օգտագործում են փոխառյալ բառեր. մըսլըհաթ՝ «խորհրդատվություն, խորհրդակցել» իմաստով (փոխառություն է իրաներէնից). պրիստավ (վերակացու), զակոն

²⁸ Աճառեան Հ., Հայերէն գաւառական բառարան, էջ 770:

²⁹ Մալխասեանց Մու., Հայերէն բացատրական բառարան, Ե.1944, հ.4. էջ 489:

³⁰ Սարգսյան Ա.Յու., Դարաբաղի բարբառի բառարան, էջ 764:

(օրենք), բանդա (ավագակախումբ)՝ բոլորն էլ փոխառությունն ռուսերենից. «Էտ բանդան մեր կրթիւնը հալա օյիննիյա պիրիլական»³¹:

2. Սովորութային իրավունք - Սովորութային իրավունքի մասին խոսելիս պետք է արձանագրել, որ դրանք ոչ պակաս, քան սահմանված օրենքները, կարգավորել են հասարակական հարաբերությունները: Օրինակ, նույն այս բառը Ղարաբաղի բարբառում շրջանառվում է «**ադաթ**» բառաձևով: Եվ, ահա թե ինչ է արձանագրում բարբառը սովորույթի մասին. «Ադաթը վրնատակ տըվօղէն Աստուծ վրննատակ կըտա»³²:

Սովորութային իրավունքի հետ է կապվում Ղրբ.-ի բարբառում պահպանված **աթա(դան)-բաբադան** բառակապակցությունը, որ նշանակում է «հնուց, պապական ժամանակներից»-«Աթա(դան)-բաբադան հըսալ ա մըէգ»:

Հարկ - էջ 643 Աճառյանը այն համարում է բնիկ հայերեն բառ՝ հարկ աճական. «Այս արմատից ունինք 1.Երև. հարկ «տուրք». Էնկիւրիի թրքախօս հայոց բարբառով՝ **harg** «կնունքի առթիւ կինէրու հրաւեր». 2.Երև. Մշ. Ննխ. հարգինք, Պլ. հարգինք կամ կրկնութեամբ հարգ-հարգինք, բոլորն էլ՝ «խնջոյք» նշանակութեամբ. 3.հարգավոր, Ախց. հարկավոր, որոնք նշանակում են «պիտանի»:

Հետաքրքիր են *հարկ* բառի «հարսանիք» կամ հացկերոյթ իմաստների (**հավանաբար, հաշվի առնելով այդ գործողությունները կատարելու պարտադիր կամ անհրաժեշտ լինելու հանգամանքը**) դրսևորումները Երևանի, Նոր Նախիջևանի, Սվեդիայի, Վանի բարբառներում, իսկ Ատանայի բարբառում նաև՝ հոգեհանգստյան համար տրվող հացկերոյթ. «Երև. խնջոյք, հացկերոյթ, մանաւանդ հարսանեկան հանդէս, որ և կրկնաբար կ'ըսուի հարկ-հարսանիք Ննխ, Սվ. Վն. հարկ-հարկինք. Պլ. 2.Ատն. ննջեցեալներուն հոգուն համար տրուած ճաշ՝ կերակուր»³³:

³¹ Նույնը, էջ 85:

³² Նույնը, էջ 28:

³³ Աճառյան Հ., ՀԱԲ, հ.3, էջ 60:

Աճառյանը նաև հայերենից փոխառնված է համարում վրաց. **խարկի** «տուրք», **խարկվա**, **խարկոբա** «հարկել, ստիպել, աճապարել» **մեխարկե** «հարկահաւար» բառերը³⁴:

«**Սովորույթ**» բառի պահպանված լինելը բարբառներում խոսուն փաստ է, որ հասարակական հարաբերություններում առաջնային դերակատարում է ունեցել նաև սովորութային իրավունքը: Երև. Ղրբ. Պլ. Տփ. - **սորվույթ** (հոգնակերտով), Պլ. Սչ. - սովորութիւն³⁵:

Եվ իսկապես, հասարակական կյանքում պահպանված այս կամ այն սովորությունը, եթե անգամ պահպանված չէ այն արտահայտող բառը կամ հասկացությունը, ենթադրել է տալիս, որ դրանք ինչ-որ մի ժամանակ պետք է որ եղած լինեն:

Հետաքրքիր տվյալներ են տալիս մեր բարբառները **բաժինք**, **օժիտք** բառերի վերաբերյալ: Սրանք քննության նյութ ենք դարձրել, քանի որ սրանք էլ կապվում են **ժառանգական իրավունքի** հետ:

Գրիգոր Տաթևացին «Գիրք քարոզութեան» Ամարան հատորում գրում է. «Հարսին տուեալ լինին երեք իրք. այսինքն **բաժինք**, **օժիտք** և **պարգևք**. բաժինքն տուեալ լինլ ի հօրէ հարսինն վասն պիտոյից պսակին, և **օժիտքն ի փեսայէն** լինի տուեալ, իսկ պարգևքն ի բարեկամացն լինին տուեալ»³⁶. այսինքն՝ ա. օժիտը բերվել է փեսայի կողմից. աղջկա հայրական տնից բերվածը կոչվել է բաժինք, որը ծավալով և կշռով գիջել է օժիտին, որովհետև նախատեսված է եղել հարսանեկան ծախսերը հոգալու համար. բ. երեք նվերներն էլ հասցեագրվել են հարսնացուին, այսինքն ապագա տանտիկնոջը³⁷:

Որքանով է հավաստի այս վկայությունը, և կա՞ն արդյոք վերոհասվածը հաստատող այլ փաստեր:

Ժամանակին անվանի հայագետներից մեկը՝ Նիկողայոս Ադոնցը իր «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատության մեջ³⁷ մանրամասնորեն քննել է ամուսնական հարա-

³⁴ Աճառյան Ն., ՀԱԲ, հ.3, էջ 60:

³⁵ Աճառյան Ն., Հայերեն գաւառական բառարան, էջ 978:

³⁶ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 203:

³⁷ Նիկողայոս Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987:

բերությունների պետական, իրավական կարգավորման խնդիրը միջնադարյան Հայաստանում և կատարել հետաքրքրական դիտողություններ՝ մասնավորապես խնդրո առարկա բառերի վերաբերյալ: Նա, մեջ բերելով «Հայերի ժառանգական իրավունքի մասին» Հուստինիանոսի հրապարակած նովելլները³⁸, որոնցից մեկում հայտարարվում է, որ հայ կինը գրկված է ժառանգական իրավունքից, գրում է. «Հարսնացուի բաժինքի իմաստով գրաբարում օժիտ բառի առկայությունը չափազանց կասկածելի է դարձնում Հուստինիանոսի այն պնդումները, թե հայ կանայք ամուսնանում էին առանց օժիտի: Հիշյալ բառը պատկանում է հայոց լեզվի ոչ արիական տարրերի թվին (ըստ հեղինակի՝ ասորական փոխառություն է - Ս.Գ.), այդ պատճառով էլ նրա հնությունը կասկածից վեր է»³⁹, ապա տողատակում ավելացնում է. «Հնարավոր է, որ **օժիտ բառը հայերենում ևս գործ է անվել այն նվերի իմաստով, որ փեսացուն տալիս է հարսնացուին**, ինչպես ասորերենում» (ընդգծումը մերն է - Ս.Գ.)⁴⁰:

Ինչպես տեսնում ենք, Ադոնցի ոչ այնքան համոզվածությամբ արված եզրահանգումը հաստատվում է Գրիգոր Տաթևացու վկայությամբ: Համենայն դեպս, կասկածից վեր է, որ 14-15-րդ դարերում, երբ ապրել է Տաթևացին, *օժիտը* դեռ շարունակել է գոյություն ունենալ իբրև փեսայի կողմից հարսին տրված նվեր: Ի դեպ, ասենք, որ Սուրբ Գրքում քանիցս հենց այս իմաստով էլ բառը գործածված ենք գտնում⁴¹:

³⁸ Նովելլայում գրված է. «Մենք միաժամանակ անհրաժեշտ համարեցինք սույն օրենսդրությամբ ուղղել նրանց կյանքի կոպիտ թերությունը, որպեսզի բռի սովորության համաձայն ծնողների, եղբայրների և մյուս ազգականների թողած ժառանգությունը չպատկանի միայն տղամարդկանց և երբեք՝ կանանց, ինչպես նաև այն պատճառով, որպեսզի կանայք առանց օժիտի չամուսնանան և չգնվեն իրենց փեսացուների կողմից»։ **Նիկողայոս Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987, էջ 208:

³⁹ Նույն տեղում, էջ 216:

⁴⁰ Նույն տեղում, էջ 217:

⁴¹ Տե՛ս **Աստուածաշունչ**, Սանկտ Պետերբուրգ, 1817, Ա թագաւորաց, ԺԸ գլուխ:

Ի լրումն բերված փաստերի, ասենք, որ *օժիտ* բառի պահպանված լինելը Սվեդիայի բարբառում՝ ուժեղք, ուժղիլ ձևերով. «ուժեղք». խոսքկապի ժամանակ հարսնացուին տրուած նուէրը», «ուժղիլ». փեսի ազգականների նուէր տալը հարսնացուին»⁴²: Այսպիսով, Սվեդիայի բարբառը ոչ միայն հարազատ է մնացել վաղնջական իմաստին, այլ նա նույնպէս երկու դեպքում էլ իբրև ստացող նշում է հարսնացուին, մի բան, որ իր հերթին հաստատում է Գրիգոր Տաթևացու վկայության արժանահավատությունը:

Գալով «օժիտ» բառի ստուգաբանությանը, ապա ինչպէս տեսանք, Ադոնցն այն համարում է փոխառությունն ասորերենից՝ *zabhdā* «նուէր» բառից, մինչդեռ հայ միջնադարյան հեղինակները այն կապել են *ոյժ*, *ուժ* արմատի հետ՝ *ոյժտել*, *օժտել*՝ «գորացնել, օժանդակել» իմաստով: Կոստանդին Երզնկացին վկայում է «ուժիտ» ձևը: Սվեդիայի բարբառը նույնպէս այս իմաստով էր պահպանել:

Հյուրջմանը ևս այն դնում է բնիկ բառերի շարքում. դրանք *օզնել*, *օզուտ*, *օժանդակ* բառերն են, որոնց համար հայագետը ընդհանրացնում է «օզնել» իմաստը: Հօզուտ «օժիտ»-ի բնիկ հայկական լինելուն թերևս կարելի է բերել նաև այն փաստը, որ **Հր. Աճառյանը** այն չստուգաբանված բառերի շարքին է դասում, այսինքն **նա գոնէ չի պնդում, որ բառը փոխառյալ է:**

Ըստ էության, փաստերի համադրումով կարելի է խոսել «օժիտ» բառի բնիկ հայերեն լինելու մասին: Դրանով սկզբում կոչվել է այն նվերը, որ փեսան տվել է հարսնացուին: Դա, ամենայն հավանականությամբ, շատ ավելի ծանրակշիռ է եղել, քան աղջկա հոր կողմից տրված բաժինքը, որովհետև նախ՝ բաժինքը տրվել է հարսանիքի հոգսերը հոգալու համար և երկրորդ՝ հետագայում, երբ արդեն դադարել է փեսայի կողմից պաշտոնապէս օժիտ տալը, այն իբրև անվանում գրավել է բաժինքի տեղը՝ վերջինիս գրեթէ դուրս մղելով գործածությունից: Արդի հայերենում «բաժինք»-ը իր նախնական իմաստով, այսինքն աղջկա հոր կողմից տրվող ստացվածքի առումով, պահպանվել է Ղարաբաղ-Գորիս բարբառում՝

⁴² Աճառյան Հ., ՀԱԲ, հ. Դ, Ե., 1979, էջ 611:

պեժինք, պաժինք ձևերով: «Ղարաբաղի բարբառի բառարան»-ում կարդում ենք. «ծնողների ազգականների կողմից ամուսնացող աղջկան տրվող ունեցվածք, օժիտ»⁴³:

Եզրակացություն

Այսպիսով, իրավական հասկացությունները հայերենի բարբառներում հիմնականում պահպանել են հին հայերենյան կիրառությունները, սակայն միաժամանակ հանդես են եկել բառիմաստի նեղացմամբ կամ ընդլայնմամբ, հաճախ նաև հեռացել են նախնական իմաստից, իսկ որ ընդհանրական տարածված երևույթ է, այդ հասկացությունները բոլոր բարբառներում ենթարկվել են տվյալ բարբառին հատուկ հնչյունափոխությունների:

Օգտագործված գրականության ցանկ

Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. Ա-Դ Ե., 1971-1979:

Աճառյան Հր., Հայերեն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913:

Աստուածաշունչ, Սանկտ Պետերբուրգ, 1817.

Տաթևացի Գրիգոր, Գիրք քարոզութեան, Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741:

Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, Ե., 1944, հ. 4.

Սարգսյան Ա.Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013:

⁴³ Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, էջ 611:

РЕЗЮМЕ

Применения юридических понятий в некоторых армянских диалектах Григорян Сусанна

Юридические понятия в диалектах армянского языка в основном сохранили свои старые армянские словоупотребления, но в то же время они сужали или расширяли значение слова, часто также отходили от первоначального значения, и как общее явление, эти понятия претерпели характерные для данного диалекта фонетические изменения во всех диалектах.

Ключевые слова: Оправдать, суд, кондак, приказ, привычка, закон.

SUMMARY

Applications of legal concepts in series of Armenian dialects Grigoryan Susanna

Legal concepts in the dialects of Armenian have mostly preserved their old Armenian usages, but at the same time they have narrowed or expanded the meaning of the word, often they have also moved away from the original meaning, and as a general phenomenon, these concepts have undergone phonetic changes specific to the given dialect in all dialects.

Key words: Justify, court, kontakion, order, habit, law.

ԿՈՋԵՆԻ ԲԱՐԲԱՌԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խաչատրյան Հասմիկ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
բանասիրական գիտությունների թեկնածու
ավագ գիտաշխատող.
khachhasmik@yahoo.com

Բանալի բառեր. բարբառ, հնչյունափոխություն, բարբառա-
խումբ, գրաբար, հոգնակի թիվ, անկատար ներկա, ժխտական խո-
նարհում:

Կոդենը պատմական Արցախ նահանգի հյուսիսային բնակա-
վայրերից է, ներկայումս գտնվում է Ադրբեջանի Թովուզի շրջա-
նում (պատմ. Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառ)՝ Կուր
գետի աջ ափին: Հայկական գյուղերից կտրված՝ ադրբեջանական
մի շարք գյուղերի (Մանսուրլի, Կարախանլի, Խաթունլի, Ալիմար-
դանլի, Սամադքայլի, Բոզադալի) մեջ կղզիացած միակ հայկական
գյուղն է եղել: Կոդենն ունեցել է Ս. Հովհաննես եկեղեցի, գերեզմա-
նոց, որտեղ եղել են 600-ամյա հնության տապանաքարեր¹: Ըստ
Ռ. Բադրամյանի՝ 1961 թ. գյուղն ունեցել է 50 տուն հայ: Շատ կըռ-
զենցիներ գաղթել են Թբիլիսի (1906 թ.), Երևան, Խարկով, Մոսկվա,
Շամշադինի շրջանի Ղրղի, Այգեձոր (14 ընտանիք) գյուղեր և
Բերդ²:

Բնակչության թվաքանակի շարունակական ելևէջներով
հանդերձ՝ մինչև 1960-ական թվականները Կոդենը զուտ հայա-
բնակ էր: Գյուղի ադրբեջանացուրը սկսվել է այդ տարիներից:
1961 թ. տվյալներով Կոդենում հայերի հետ արդեն ապրում էր 30
ադրբեջանցի ընտանիք:

¹Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից
շրջանների տեղանունների բառարան, Ե., 1991, հ. 3, էջ 242:

²Բադրամյան Ռ., Կոդենի բարբառը, 1961, էջ 1:

1988 թ. գաղթի նախօրյակին աղբբեջանցիների թիվը կրկնապատկվել է՝ հասնելով 60 տան:

Ըստ տարբեր հեղինակների՝ գյուղը նախկինում ունեցել է 700 տուն հայ բնակիչ, իսկ հետո բնակչությունը աստիճանաբար պակասել է:

Բնակավայրի անվան (*Կրզեն, Կոզեն*) ծագումը ստույգ հայտնի չէ: Ըստ ժողովրդական ստուգաբանության՝ Կոզեն անվանումը ծագում է հայերեն «կրի՛ր» և «զենք» բառերից: Բացի հայաբնակ գյուղերից՝ այդ տարածքում կային բազմաթիվ թաթարաբնակ թշնամական գյուղեր, որոնց բնակիչները հաճախակի հարձակվում էին հայերի վրա, և կոզենցիները պաշտպանվելու համար պետք է միշտ զինված լինեին: Սակայն երբ 19-րդ դարի 30-ականներից սկսած այս տարածքն անցավ ռուսական գերիշխանության տակ, տեղացիների վկայությամբ ռուսները՝ հայերին արգելեցին բացահայտորեն զենք կրել, և կոզենցիների՝ թուրք-թաթարական հարևանությամբ ապրելն ավելի դժվարացավ: Բնակիչների մեծ մասը ժամանակի ընթացքում հարկադրված եղավ լքել հայրենի գյուղը: Նրանց ցրվելու, նվազելու պատճառը, ինչպես նշեցինք, նախ թյուրքական տարրի ճնշումն էր, քանի որ փոքրիկ հայկական գյուղը շրջապատված էր շուրջ 30 հազար թուրք բնակիչներով, ապա և դրան նպաստում էր Կուրի ափամերձ դժվարին կլիման: Բնակավայրի սկզբնական անվանումը՝ «Կրզեն», թյուրքերն աղավաղել ու դարձրել են «Գիրզան» կամ «Կիրզան»:

Կոզենի բարբառի մասին առաջին տեղեկությունները հանդիպում են՝ սկսած 1850-ական թվականներից: Որոշ հետազոտողներ կարծել են, որ կոզենցիները «ուտիացոց մնացորդներ են, բայց հայադավան և հայախոս», և համարել են, որ Կոզենի բարբառը աղերսներ ունի ուտիերենի հետ կամ Ագուլխի բարբառի ժառանգորդն է: 1934 թ. Դ. Կարբելաշվիլին և Վ. Ղուկասովը գյուղում կատարած ուսումնասիրություններից հետո փաստել են, որ Կոզենի բարբառն իրականում որևէ կապ չունի ուղիերենի հետ, և այն

Խոյի, Ղարաբաղի, Ագուլիսի բարբառների ու թուրքերենի մի յուրօրինակ խառնուրդ է³:

Ըստ որոշ տեղեկությունների՝ կոզեցիները գաղթել են Անիից կամ Գողթն գավառից:

Կոզենի բարբառի հանգամանակից ուսումնասիրություն է կատարել Ռուբեն Բաղրամյանը՝ 1961 թ. հրատարակելով «Կոզենի բարբառը» մենագրությունը:

Հայերենի բարբառագիտական ասլասի նյութերի հավաքման ծրագրի շրջանակում 1998 թ. կատարած հարցումներով Կոզենի բարբառը մենք գրանցել ենք կոզենցիներ Ենգիբար Դավիթի Հովհաննիսյանից (ծնվ. 1923 թ.), Թազագյուլ Սարգսի Ոսկանյանից (ծնվ. 1925 թ.) և նրանց դուստր Սեդա Դավթյանից (ծնվ. 1958 թ.): Տողերիս հեղինակը 1984 թ. եղել է Կոզենում: Գյուղն ուներ հիասքանչ բնություն: Եկեղեցին գտնվում էր գյուղից մոտ մեկուկես կիլոմետր հեռու: Եկեղեցու բակում կար մի «փռչնու» (բռինչենու) ծառ, որ տեղացիները սրբազան ծառ էին համարում:

1988 թ. Արցախյան շարժումը սկսվելուն պես Դաշտային Ղարաբաղում և Ադրբեջանի այլ վայրերում ապրող հայության հետ տեղահանվեցին նաև կոզենցիները՝ դառնալով փախստականներ: Կոզեն գյուղի բնակչության մի մասը բնակություն հաստատեց Մասիսի շրջանի Միս գյուղում:

Սույն աշխատանքում ներկայացվում է Կոզենի բարբառի լեզվական բնութագիրը համաժամանակյա քննությամբ:

Կոզենի բարբառին մեր այս անդրադարձով ցանկանում ենք ներկայացնել, թե Ռ. Բաղրամյանի ուսումնասիրությունից (1961 թ.) հետո բարբառը ինչ փոփոխություններ է կրել, մանավանդ որ 1990 թ. կոզենցիները ստիպված են եղել բռնագաղթել հայրենի գյուղից: Բռնագաղթած կոզենցիները պահպանել են արդյոք իրենց բարբառը, և գործածվո՞ւմ է այն ներկայումս:

³ **Карбелашвили Д.**, Кирзан и кирзанцы, Известия Азерб. филиала АН СССР, N 2, 1937:

Հուրախություն մեզ՝ Արարատի մարզի Միս գյուղում բնակվող կոզենցիների ավագ և միջին սերունդը հիմա էլ խոսում է Կոզենի բարբառով, և մենք հնարավորություն ունենք համեմատելու բարբառի ժամակագրական տարբեր վիճակները: Ռ. Բաղրամյանի և մեր ուսումնասիրության համեմատությամբ նկատելի են բարբառային որոշակի տարբերություններ և առանձնահատկություններ:

Գ. Ջահուկյանը, ըստ բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման, *Կոզենի* բարբառն ընդգրկել է հայերենի բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի կազմում որպես առանձին բարբառ:

Հնչյունական առանձնահատկություններ

Կոզենի բարբառում բացի գրական հայերենի *ա, է, ը, ի, ու, օ* ձայնավոր հնչյուններից՝ գործառում են նաև *ւի, ու, օ* հնչյունները: Վերջիններս հանդիպում են *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղ և *գ, կ, ք* քմային հնչյուններից, մասամբ նաև *զ, ժ, Լ, չ, հ, վ* բաղաձայններից հետո (*բւց լւր՝ բացել, բւնչել՝ բառնալ, կւնգւտ, գւրունք, դւնսկ, գւնքւց, բուրդ, գ ութան, դու, ձու, ջուր, չու, չրգու, գ օրտ, խնձօր, հօջլօտ, կօվել, քօրել*):

Բարբառում բացի սովորական *է, ի* հնչյուններից, առկա են նաև *՞ի, ՞է* հնչյունները: Ըստ Ռ. Բաղրամյանի՝ *՞ի-ն ը* հնչյունի տարբերակ է (կոշտ հնչման) և նման է Բայազետի ենթաբարբառի և Շամախիի բարբառի համապատասխան ձայնավորին (սըրտ)⁴, մեր քննությունը, սակայն, ցույց է տվել, որ նշված հնչյունը կապ չունի Բայազետի բարբառի *ը* հնչյունի հետ: Այն ձայնավորների փակության (վերին բարձրացման) հնչյուն է⁵ և արտասանվում է *՞ի*:

Կոզենի բարբառի բաղաձայններն իրենց հնչյունական բնութագրով համապատասխանում են հինհայերենյան բաղաձայններին, որոնց հավելվում են քմային *գ, կ, ք, չ* հնչյունները: Լ-ն

⁴ Բաղրամյան Ռ., Կոզենի բարբառը (այկտուհետև՝ ԿԲ), Ե., 1961, էջ 19:

⁵ Աղաբեկյան Մ., Հանեյան Ա., Ուռուտյան Ռ., Հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգ, Հայերենի բարբառագիտական ստղաս, պրակ 3, Ե., 2010, էջ 16:

Ղարաբաղի բարբառին բնորոշ փափուկ չ' հնչյունն է՝ ըսիվ, ընի և այլն:

Ե՛վ բառասկզբում, և՛ բառամիջում, և՛ բառավերջում *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղները մնում են ձայնեղ հնչյուններ (*բսց լսր՝* բացել, *բսնչել՝* բառնալ, *բէրել, բէրիկ, դրմսկ, դրնել, ձրմօրիգ, թագ, խարել, հօջիլ, սրըջիս, նւրբսթ, սրբբել, վսրդ, աղբըհար, աղբեր, խեղդել, օրձսի, օրրդնել, չղջիկ, հսջել, ջնւր* են):

Այս բարբառի կարևոր առանձնահատկություններից է արտասանության ժամանակ բառամիջի և բառավերջի ձայնեղների պահպանումը, որը բնորոշ էր գրաբարին:

Պ, կ, ք հնչյունները նույն Ղարաբաղի քմային հնչյուններն են: *Պ*-ն հանդիպում է *սի, նւ, օ* քմային և *է, ի* ձայնավորներից առաջ (*Պօւէշ, Պնիթան, Պերան*): *Կ*-ն դրսևորվում է *է, ի* ձայնավորներից առաջ (*հէրկէն, կէսկի*), *իսկ ք*-ն *է, ի* և *սի, նւ, օ* քմային ձայնավորներից առաջ (*քօրել, քսնի, քէնի*): *Լ*'-ն Ղարաբաղի բարբառին բնորոշ փափուկ չ' հնչյունն է (*ըսիվ, ընի* են):

Ընդհանուր օրինակափությունից շեղվող մասնավոր դեպքեր էլ կան, որոնք հավանաբար այլ ազդեցությունների հետևանք են (*բագուկ>փսգըր, ջոկ>ձօկ, ջօրի>ձօրի, ջնջել>ձրնջել, կ'օվել, կ'սնգստ, փսնջսր, գիշեր>քրշեր, արձակ>հսրգսկ*):

Բառասկզբի խուլ *պ, կ, տ, ծ, ճ*-ի դիմաց Կոզենի բարբառում առկա են նույն խուլ հնչյունները (*պպպ, պակաս, պառավ, է պըրսօն (պդտոր-ը դրափոխությամբ դարձել է պըրսօն), կըրակ, կախ արել, կաքահավ (կաքավ), տարէկան, տաք, տանել, ծաղիկ, ծալել, ճըրաք, ձօձ, ձօց, ձուխ*): Բառամիջի միջձայնավորային և բառավերջի հետձայնավորային դիրքերում, ինչպես նաև խուլ շփականներից հետո գտնվող *պ, կ, տ, ծ, ճ*-ի դիմաց բարբառում առկա են *պ, կ, տ, ծ, ճ* հնչյունները (*շապէէկ, կպպ, ծակբել, կուտ, պատ, ծրծաղ, մօծակ, արուձ արել՝ որոձալ, աստըդ, աստված, նըստել*): Կան մասնավոր դեպքեր, երբ տեղի է ունենում *պ>բ, պ>փ*

հնչյունափոխություն: Հատկապես ուշագրավ են *ապսպրել> քրսպարել, պահրեգ>փնհրիգ* (դիետա)⁶ բառերը:

Բարբառում թե՛ բառասկզբում, թե՛ բառամիջում և թե՛ բառավերջում շնչեղ խուլերը մնում են անփոփոխ (*փակել, փռռել, հեփել, թըթու, խընէցի, հաց, աղանչել, կաթ, շնքնթ, քամի, քուն, կաթ, կանեփ, ութ, լնփել* ևն): Ինչպես արդեն նշել ենք, է, ի և *սի, ու, օ* քմային ձայնավորներից առաջ ք-ն քմայնանում է (*թըթել, քննի, թաքնն, քօրել*):

Շփական խուլ և ձայնեղ բաղաձայնները, ինչպես նաև ձայնորդները բարբառում փոփոխության չեն ենթարկվում (*շապրկ, խօզ, սըխալ, բնի, մէղիք* (մէղր), *լըղանալ, նըստել, լիտիք* (լիտր), *հնլել*): Ինչպես արդեն նշել ենք, քմային *սի, ու, օ* ձայնավորներից առաջ լ-ն դառնում է *լ' (լնփել, լնլ լնրել, լնց)*:

Որոշ բառերում բառասկզբի *խ*-ի դիմաց Կոզենի բարբառում առկա է տարնմանական *հ*, ինչպես, օրինակ, *հաղ, հաղ արել, հաղաղ, հաղացնել, հաղուղ, հաչակ'*:

Բառասկզբի սկ, սպ, ստ, զգ, զբ... հնչյունակապակցություններով սկսվող բառերից *սպիտակ, սպիտակել, սատանա* բառերում գաղտնավանկի ք-ն դրվում է առաջին բաղաձայնից հետո՝ *սըպտսնկ, սըպտսնկել, սըտանա*: Մնացած դեպքերում ք-ն դրվում է բառասկզբում՝ *ըսպանել, ըսկըսնր, ըսկըսել, ըստակել (սատակել)* և այլն:

Օտար բառերի *ֆ* հնչյունին որոշ բառերում համապատասխանում է շնչեղ-խուլ պայթական *փ*, որոշ բառերում էլ՝ խուլ շփական *ֆ* (*փննղ, փայտօն, փէրմա, ֆասօն, ֆինջան, ֆնննր, ֆըլան, ֆրանգ, ֆիտբոլ*), *դ*-ին՝ խուլ շփական *դ*, ինչպես գրական լեզվում (*դագ, դնսնր, դափաղ, դավուրմա, դնրիք, դոնաղ* ևն):

⁶ Բաղրամյան Ռ., ԿԲ, էջ 66-67, ՀԲԱ նյութեր, Կոզենի բարբառը, կետ 727:

⁷ Բաղրամյան Ռ., ԿԲ, էջ 74, ՀԲԱ նյութեր, Կոզենի բարբառը, կետ 745:

Բարբառում առկա են բաղաձայնների անկման մի շարք դեպքեր: Հինհայերենյան *ն* վերջնահնչյունով միավանկ բառերը, ինչպես գրական հայերենում, այնպես էլ Կոզենում, գործառում են առանց վերջնահնչյուն *ն*-ի (*դաղձ, հարս, թօռ, ծունգ, մութ, դուփ, Էօրդ, Էօրդում* են): Միայն *սունկ* բառն է, որ պահպանել է գրաբարյան *ն*-ն՝ *սօկրն: Ինն (ինը)* և *ինքն (ինքը)* բառերում *ն*-ի անկումը ուղեկցվել է գաղտնավանկի *ք*-ի պահպանմամբ:

Նկատելի է նաև *ր* ձայնորդի անկում որոշ բառերի բաղաձայնական կապակցություններում (*բարձր>բւձրր, խարշել>խաշէլ, սերկնիլ>սկօվիլ, ջրաղաց>ջաղաց* են): Բարբառը հատկանշվում է նաև հնչյունների հավելման դեպքերով: Պայթականներից ու կիսաշփականներից առաջ որոշ բառերում առկա է *ն*-ի հավելում (*հրմանչէլ, աղինջ, ճրնանչէլ, կանանչէլ, կարմունջ* են):

Կոզենի բարբառում ձայնավոր հնչյունները իրենց որակական հատկանիշներով չեն տարբերվում հինհայերենյան ձայնավորներից, պարզապես դրանք համալրվել են *ւի, ուի, օ* հնչյուններով: Միավանկ, երկվանկ, եռավանկ և ավելի վանկեր ունեցող բառերի սկզբում *ա* ձայնավորը մնում է անփոփոխ: Օրինակ՝ *ահ, աղ, ամպ, անձրով, աղինջ, ակառ* (ատամ), *ածէլ* (նվագել), *աղբբհար* (աղբ), *արախա, արմանալ* և այլն:

Բառամիջում շեշտակիր, շեշտանախորդ կամ շեշտահաջորդ վանկերում *ա*-ն մնում է *ա*, եթե չի հաջորդում ձայնեղ բաղաձայնների: Օրինակ՝ *աղաջոր, թաթախէլ, փէցախ, գօղանալ, կարկատան* և այլն: Ինչպես արդեն փաստել ենք, բառամիջում ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո *ա*-ն դառնում է *ւի (բւի, բւմբւի, բւռչէլ, գւրունք, դւննիկ, դւրդւիկ, դւրման, բւձրր, շւբւթ, Էօրձւիկ* են): Որոշ դեպքերում, ըստ Աճառյանի օրենքի, եթե *բ, դ, ղ, ձ, ջ*-ն փոխվում է *պ, կ, տ, ծ, ճ*-ի, ապա դա չի ազդում *ա>ւի* հնչյունափոխության վրա: Օրինակ՝ *ճւնդէլ, կւնգւտ, փէնջւր, ծւվւր* և այլն:

Ինչպես փաստում է Ռ. Բաղրամյանը, «Կոզենի բարբառը ցույց է տալիս ձայնավորի քմայնացման ավելի լայն մասշտաբներ, քան այն, ինչ հայտնի է Աճառյանի օրենքով: Այստեղ *w>ü* հնչյունափոխությունը տեղի է ունենում ոչ միայն ձայնեղ պայթականներից ու ձայնեղ կիսաշփականներից անմիջապես հետո, այլև՝ *q, ɟ, ʃ* ձայնեղ շփականներից հետո»⁸: Օրինակ՝ *գւնտիկ, գւնրթուն, հւնրգւնկ (ազատ իմաստով՝ «Շերթի մըջին ինձ հւնրգւնկ ըմ ըզգալի»՝ Շորի մեջ ինձ ազատ եմ զգում), էժւն, հուծւնր (հոժար), գյնգւնր, վնննիկ, վնրդ, վնրնւզ են:*

Հարկ է նշել, որ Կոզենի բարբառում *w>ü* հնչյունափոխություն տեղի է ունենում նաև մասամբ *h, ʎ* բաղաձայններից և խուլ, շնչեղ խուլ բաղաձայններից հետո, օրինակ՝ *հւնլէլ, հւնրիր, հւնրվան, ըւնրէլ, ըւնց ըլւննէլ, թիլւննալ, սըլւնրէլ՝ թուլանալ, ճապադէլ, կւնրմիր, սըպտնկ, մնտննուկ (մատանի), սնփւնրթնէլ, աշկւնրա* և այլն: Ինչպես նշել ենք, բառակզբում *w*-ն չի քմայնանում, սակայն բացառություններ են *ւնրիր, ւնրէվ, ւննիծկը, ւնսէլ* և *h*-ի հավելմամբ՝ *հւնգի, հւննիծ, հւնրփէլ* բառերը:

Շեշտանախորդ վանկերի *w* ձայնավորը կարող է թուլանալ՝ որոշ բառերում փոխարինվելով *ը*-ի, իսկ երբեմն էլ սղվելով: Օրինակ՝ *w>ը՝ հըմանչկօտ, ըոչընակ, հըվաքվէլ, ընգւննէլ, բըլւննիք, կըճղակ, հըրսանիք, հըմըւնրէլ, սըտանա, w*-ի սղումով՝ *դաչանք, քացի, բըսպարէլ (ապսպրել), ըշտափէլ (ուշաթափվել), բստակէլ (սատակել):* Այս երևույթը Ռ. Բաղրամյանը բացատրում է Շամշադինի ենթաբարբառի ազդեցությամբ:

Մասնակի հնչյունափոխության երևույթներ են՝ *w>է աճէլի> էճէլի, գավաթ>գէվաթ, արյուն>յէրին, կածան > կէճան:* Ուշագրավ է նաև՝ *w>օ, օ* հնչյունափոխությունը՝ *ականջ>անգօջ, գալ>գ'օլ, գարի>գ'օրի, գդալ>գդ'օլ:*

⁸ Բաղրամյան Ռ., ԿԲ, էջ 24:

Կռզենի բարբառում միավանկ և երկվանկ բառերի սկզբում հինհայերենյան *ե*-ի դիմաց գործածվում է *յէ* հնչյունակապակցությունը, օրինակ՝ *յէգ, յէ՛ (ե՛կ), յէրվալ, յէղցի (եկեղեցի), յէրկինք, յէրկիք* և այլն: Ե-ով սկսվող որոշ բառերի դեպքում *հ* հազագ ստանալով՝ *ե*-ն արտասանվում է *է՛ հէփ, հէբ, հէրկէն, հէրթ, հէրինջ* և այլն:

Գրական լեզվի բառասկզբի *ե*-ի դիմաց *ը* և *ղ* ձայնորդներից առաջ առկա է *ա* ձայնավոր *աղբէր, աղինջ, արագ, արկաթ, արկանք, արախա* բառերում: Հ. Մուրադյանը, անդրադառնալով հիշյալ բառանուններին, գրում է. «Բոլոր այն դեպքերում, երբ հին *ե*-ի դիմաց հանդիպում է *ա*, մենք գործ ունենք կա՛մ փոխազդեցական հնչյունափոխության, կա՛մ բարբառային մի հին երևույթի հետ: Այդ համապատասխանությունը, ճիշտ է, առկա է միայն մի խումբ բառերում, ինչպես՝ *եղբայր>ախպէր, ախպար, եղինջ>աղինջ, հաղէնջ, երագ>արագ, երաշտ >արաշտ, երկաթ>արկաթ, երկան(ք)>արկան(ք)* և այլն, բայց այդ բոլորը, ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները⁹, իրենց *ե>ա* համապատասխանությամբ բարբառային հին գոյացություններ են՝ առաջացած դեռևս նախապատմական շրջանում»¹⁰: Գ. Ջահուկյանը ևս բարբառների հնչյունաքերականական հնաբանությունները քննելիս դիտարկել է հիշյալ բառերը¹¹:

Բարբառում եթե երկու հաջորդական *ե*-եր կան, առաջինը դառնում է *ի* կամ *ը՝ երեք>յիրէք, երեքնուկ>յիրէքնուկ, տերև>տրրէվ, շերեփ>շրրէփ, երես>ըրէս, թեթև>թըթէվ*:

Բառամիջում և՛ բազմավանկ, և՛ միավանկ բառերում *ե*-ն արտասանվում է *է՛ հանէր, տաշէղ, դէղին* և այլն: Մի քանի բառում, ըստ երևույթին, արագախոսության պատճառով, *ե*-ն դառնում է *ը*

⁹ Այս հարցին անդրադարձել են նաև **Հ. Աճառյանը**, Հայոց լեզվի պատմության, հ. 2, Ե., 1951, էջ 414-415, **Է. Աղայանը**, «Բարբառային հնագույն տարբերությունները հայերենում», Լեզվաբանական հետազոտություններ, Ե., 2003, էջ 72-73:

¹⁰ **Մուրադյան Հ.**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Ե., 1982, էջ 126-127:

¹¹ **Ջահուկյան Գ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 275:

կամ աղվում է՝ *բըրան* կամ *բրան*, *լըգու* կամ *լգու*, *լըղի* կամ *լղի*, *լղակ* կամ *լըղակ*։

Բարբառում առկա են նաև մասնավոր հնչյունափոխության դեպքեր. *ե>ա՝ տենդ>տանդ*, *ե>ի ալել>յելիլ*, *ե>օ՝ ձմերուկ>ձըմօրիկ*, *սիբեխ>սիբօխ*, *երդում>օրդու*։

Ձայնավորների ներդաշնակությամբ պայմանավորված՝ գաղտնավանկի լիաձայնություն են դրսևորում *լիտր* և *մեղր* բառերը՝ արտասանվելով *լիտիր*, *մեղիր*։

Կոզենի բարբառում բառասկզբի *ի*-ին համապատասխանում է *ի՝ իննասուն*, *ինն*, *ինքն* և այլն։ Շեշտակիր *ի*-ի դիմաց առկա է *ըի՝ ծըիծ*, *ծըիտ*, *կըծըիկ*, *սըիրտ*, *սըիզ*, *թըրըիթ*, *քիթ>քըիթ* և այլն։

Կոզենի բարբառի ուշագրավ առանձնահատկություններից է առաջին վանկի ձայնավորների անկումը՝ իմանալ՝ *մննննլ*, իմաց՝ *մնց*, ունենալ՝ *նոլ*, առնել՝ *համ նոլ*, ուզել՝ *զոլ*, ուտել՝ *տոլ*, լինել՝ *նիմ* («Յէս կարա չըմ *նիմ* տերզիկ»՝ Ես չեմ կարող դերձակ լինել)։ Երբեմն տեղի է ունենում նաև ամբողջ վանկի անկում՝ հասանել՝ *նի սանէլ*, տեսանել՝ *սանէլ*, լաց լինել՝ *լնց նէլ*։ Շեշտանախորդ վանկի *ի*-ն դառնում է *ը՝ դըմանալ*, *ցըցէնակ*, *սըպտննկէլ*, *քըշէր*, *սըրնու* (սիրուն), *կըսատ* (կիսատ)։ Բառավերջի բաց վանկի *ի*-ն մնում է *ի* կամ դառնում է *ըի՝ գյօրի* (*գարի*), *յէղցի*, *խընէցի*, *խընամըի*, *տարըի*։

Միավանկ և բազմավանկ բառերի սկզբում Կոզենի բարբառում հինհայերենյան *ն*-ի դիմաց առա է *օ*, *օ՝* որոնցից առաջ երբեմն *հ* հազագն է ավելանում, օրինակ՝ *հօ՞վ*, *հօ՞ր*, *տօրդ*, *տօրձու*, *օխչար*, *հօջիլ*, *տօրդնէլ*, *հօրս արէլ*։

Բացառություն են *նսկի* և *նսկոր* բառերը, որոնցում *ն>վէ* կամ *վէ՝ վըսկի*, *վէէսկոււ*։ Բառամիջի շեշտակիր և նախաշեշտ *ն*-ի դիմաց առկա է *օ* կամ *օ՝ թօք*, *խօզ*, *մատնանօց*, *խըմօր*, *շընօք*, *կօվէլ*, *հօջլօտ*, *խընձ օր*, *գօմէշ*, *թօրօն* և այլն։

Բարբառում առկա են *n*-ի մասնավոր հնչյունափոխության ուղագրավ դեպքեր. *շոր>շէրթ, ցորեն>ցէրէն, խնոցի>խընէցի, բորիկ>բէրիկ, յիշոց>շոնց*.

Բառասկզբում *ու*-ն մնում է *ու*: Շեշտակիր *ու*-ի դիմաց ունենք դարձյալ *ու՝ թուխս, թուր, խունկ, կուզնիկ, տուն* և այլն: Բացառություններ են *թուք>թէք, սուգ, սունկ>սոկըն* բառերը: Ինչպես այլ ձայնավորների դեպքում, այստեղ ևս հին հայերենի *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղ պայթականներից հետո *ու*-ն քմայնանում է՝ *ու*: Օրինակ՝ *բուրդ, գուրթան, դու, ջուր* և այլն:

Այսպիսով՝ Կոզենի բարբառում քմայնանում են *ա, ու, օ* ձայնավորները: Ըստ Ռ. Բաղրամյանի՝ «Ձայնավորների քմայնացմամբ Կոզենի բարբառը կարծես ավելի հին վիճակ է ներկայացնում, քան Վանի ու Ղարաբաղի բարբառները: Լիովին կտրվելով իր ճյուղակից բարբառներից և դառնալով հայերենի սահմանապահ բարբառներից մեկը՝ Կոզենի բարբառը զարգացել է իր ձևով, իր ներքին օրինաչափություններով»¹²:

Կոզենի բարբառին հատուկ է *այ* երկբարբառի դիմաց է (*կամ է*) ձայնավորի առկայությունը, ինչպես, օրինակ, *էծ, լէն, կէձակ, հէր, տէգրր, հէգուց, փէցախ, աղբէր* և այլն: *Այ* երկբարբառը դառնում է *ի՝ գայլ>գիլ, վայրի>վիրի (կամ վնշի)*:

Ա երկբարբառը բաղաձայնից առաջ դառնում է *օ՝ օր, օխտ, օձ>օղձ*: Հինհայերենյան *աւ* երկբարբառի դիմաց, բացի *օխտ (օխտանասուն)* բառից, *օխ (օղ)* հնչյունախումբը առկա է նաև վերը հիշատակված *օղձ* բառում: Ինչպես նկատելի է, գրաբարյան *եաւթն, աւձ* ձևերի դիմաց բարբառն ունի *օխտ, օղձ* տարբերակները, որոնք ևս բարբառային հնարանություններ են: Ըստ Մելեի՝ այս բառերը հնում ունեցել են *ւ*, որը, շնչեղ բաղաձայնից առաջ առնմանական փոփոխության ենթարկվելով, պիտի դառնար *ֆ*, սակայն, քանի որ հայերենը *ֆ* չի ունեցել, *ֆ*-ն փոխվել է *խ*-ի (հմմտ. *ft>խտ* անցումը իրանական փոխառություններում), իսկ *ւ>ղ*

¹² Բաղրամյան Ռ., ԿԲ, էջ 47:

փոփոխությունը տեղի է ունենում հաջորդ բաղաձայնի ձայնեղության պատճառով¹³: Հարկ է արձանագրել, որ *օղձ* հնչատարբերակով հնաբանությունը առկա է նաև Արեշի (*օղձ*), Ագուլիսի (*աղձ, օղձ*), Մեղրու (*օղձ*) բարբառներում և Շամախիի Մադրասայի (*օխձ*) ու Մայսարիի (*օխց*) խոսվածքներում¹⁴:

Հինհայերենյան *եա* երկբարբառի դիմաց բարբառում առկա է *է՝ ցորեան>ցերեն, լեարդ>լերդ, քարեր, օղձեր*: Որոշ բառերում *եա-ն դարձել է ա* կամ *ւն* (*հեռնակ, վնննիկ* (վառեկ), *գւննք*): *Եա-ն* դարձել է *ու՝ իրեար>ըրուր, իրեար տալ>ըրուր տալ* բառերում:

Իւ երկբարբառը բառամիջում դրսևորված է *ի-ով՝ ւնլիր, հւնրիր, յերին, սին*: Հնչյունական ուշագրավ երևույթ է դրսևորում *ձին* բառը, որը բարբառում դարձել է *ձիվ*: Այսինքն՝ *ձյուն* բառում պահպանվել է գրաբարյան *իւ* երկբարբառը վերջին *ն* հանգի կորստով: *Չյուն* բառի *ձիվ* յուրահատուկ տարբերակը առկա է նաև Արեշի բարբառում¹⁵:

Ութին ածանցի *իւ-ի* դիմաց *ու* ձայնավոր է՝ *գողըթուն, ըրխըթուն, հերկենութուն, նեղըթուն, աչօղակութուն* և այլն:

Հին հայերենի *ոյ* երկբարբառի դիմաց Կոզենի բարբառում ունենք *ի, րի* կամ *ու, ու*: Օրինակ՝ *թոյլ>թիլ, լոյս>լիս, պատրոյգ>պատրիք, պտոյտ>պըտիտ, քոյր>քիր, շոյտ>չուշտ, բոյն>բուն, ոյժ>ուժ*: Բացառություն են *անոյշ>անօշ, բոյթ(իկ)>պըտիկ* բառերը:

Այսպիսով՝ գրաբարի երկբարբառները բարբառում դրսևորված են հիմնականում պարզ ձայնավորներով:

¹³ Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հ. 2, էջ 403: Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 275:

¹⁴ Լուսենց Ա., Արեշի բարբառը, 1982, էջ 243: Բաղրամյան Ռ., Շամախիի բարբառը, Ե., 1964, էջ 232, Աճառեան Հ., Քննութիւն Ագուլիսի բարբառը, Ե., 1935, էջ 398, Աղայան Է., Մեղրու բարբառը, Ե., 1954, էջ 291:

¹⁵ Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 373, Լուսենց Ա., Արեշի բարբառը, էջ 32:

Ձևաբանական առանձնահատկություններ

Կոզենի բարբառում գործառում են թվաձևային *-էր, -նէր - (ա)նի, -(ն)իք, -տի(ն)ք* վերջավորությունները, որոնք, որպես նույն քերականական իմաստն արտահայտող ձևույթներ, միմյանց նկատմամբ գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ: Դրանց ընտրությունը պայմանավորված է թվանիշ հիմքերի վանկաքանակությամբ և իմաստային առանձնահատկություններով: *-էր* հոգնակերտ վերջավորությունը բարբառում գործառում է *-էր* հնչյունական տարբերակով: *-էր* թվանիշ թեքույթ են ստանում միավանկ բառերը (*ջուր-ջրրէր, տուն-տընէր, միս-մըսէր, բնիք-բնիքէր, ձու-ձուէր, թէլ-թէլէր* ևն): Ինչպես երևում է օրինակներից, *ու, ի* ձայնավորներով միավանկ բառերի հոգնակի թվաձևերի հիմքը հնչյունափոխվում է: *-էր* հոգնակերտով են կազմվում նաև կենդանիների՝ միավանկ հիմքով անունների հոգնակի թվի ձևերը (*առջ>առջէր, գիլ>գրլէր, սիիրտ>սըրտէր էծ>էծէր, ուլ-ուլէր, բուրդ>բըրդէր, բուն>բընէր* ևն): Գրաբարյան *-ն* վերջնահնչյունով միավանկ բառերի հոգնակին բարբառի որոշ բառերում կազմվում է *-էր* հոգնակերտ վերջավորությամբ՝ *ն-ի* պահպանմամբ, մի մասում էլ՝ *-էր* հոգնակերտով՝ *ն-ի* անկմամբ (*գննէր, հարսնէր, մատնէր, թոննէր, բայց՝ բէնէր, հաքէր (ոտքէր), ձէքէր, սէրմէր, օրդէր*): Բազմավանկ բառերի հոգնակի թվաձևերը կազմվում են *-(ա)նի* հոգնակերտ վերջավորությամբ (*անըմ-անըմանի, դանակ> դանականի, կացին>կացնանի, մօծակ>մօծականի, տարի (տարի)>տարնանի, հրլի (հայելի)>հըլիանի, փէսա>փէսիանի, ծաղրգ>ծախկանի, կէծակ>կըծականի* ևն): Ձայնավորով վերջացող բազմավանկ և մեկուկեսականի բառերը ևս ստանում են *-(ա)նի* հոգնակերտը (*հնիգ>հնիգանի, գընի>գընիյանի, քէնի (քէնի)>քէնիանի, հօգի>հօգիանի, կուրվա (կրիա)>կուրվիանի, կնիք>կնիքիանի, սըրմացու>սըրմացույանի, յէխցի>յէխցիանի, տէգրանի, աստըղանի, սանդըրանի* ևն): Մորաբույր բառը համառոտվելով՝ բարբառում դարձել է *մաքիր*, որի հոգնակին *մաքրանի* է, իսկ *կաքավ* բառանունը, որ բարբառում դրսևորված է ուշագրավ

կաքահալ տարբերակով, հոգնակիում ստանում է *-էր* վերջավորություն՝ կաքահալ>կաքահալէր: Շատ քիչ բառերում բարբառում գործառում են նաև *-(ն)ինք, -տի(ն)ք* հոգնակերտները (*աղբէրտինք, քրվօրտինք, կրնանինք, մարդնէինք, տէգրակրնանինք, ամաննէինք, հրնգէրտինք*): Մեզ հանդիպել են նաև *-ք* հոգնանիշ թեքույթով *ախչիկ>ախչրկէք, քրշէր>քրշէրէրք, արախա>արախէք, կրոզնէցիք, շամշադնէցիք, հարսննէինք, հրդկէրք* (ճանապարհներ) բառերը (օրինակ՝ էս այամի *հարսննէինքը* յօլլա գրնօղ չըն՝ էս թվի հարսները յօլլա գնացող չեն):

Անվանական հոլովման համակարգում ձևային արտահայտությամբ հատկանշվում են ուղղական, սեռական-տրական, բացառական, գործիական, ներգոյական հոլովաձևերը: Եզակի սեռական հոլովաձևը բարբառում դրսևորվում է *ի, ա, օ* հոլովակերտներով, որոնք կազմվում են հոլովանիշ թեքույթներով և հնչյունական հերթագայություններով: Դրանք ընդգրկում են գործառության հետևյալ ոլորտները:

Ի-ն ամենատարածված և ընդհանրական արժեք ունեցող հոլովանիշ թեքույթն է եզակի թվի ձևերում: Այս հոլովման են ենթարկվում նախկին *-ք* հոգնակերտով բառերը (*աչք-աչքի, ձէք>ձէքի, խէք-խըլքի, միտք-մըտքի, հըրսանիք-հըրսանքի* նն), կենդանիների և թռչունների անունները (*էծ-էծի, ուլ-ուլի, վննիկ-վննիկի, գիլ-գըլի, փըշիգ (կատու)-փըշիգի, կօվի, հավի, հօրթի, առջի* նն), անձնանունները (*Անուշ-Անուշի, Կարապէտ-Կարապէտը, Հարություն-Հարությունի, Նըշան-Նըշանի, Տիգրան-Տիգրանի, Կարօ-Կարօյի, Մարօ-Մարօյի* նն): Տեղանունների սեռական հոլովը ևս կազմվում է *-ի* հոլովանիշ թեքույթով (*Յէրէվանի, Կըրզէնի, Պէրթի, Մասունը, Մուշի, Մասիսի, Միսի* նն): *Ի* հոլովանիշ թեքույթն ընդգրկում է նաև փոխանվանաբար գործածվող մյուս խոսքի մասերը (*մէէծ-մէէծի, սէվ-սըվի, լննվ-լննվի, ըծօք (ուժեղ)-ըծօքի, վախկօտ-վախկօտի, էփօղ-էփօղի, գրնօղ-գրնօղի, վազ տըվօղ- վազ տըվօղի, խըմաձ-խըմաձի* նն): Հարկ է փաստել, որ բարբառում սեռական հոլովի *-ի* թեքույթը երբեմն բարբառա-

խոսների կողմից արտաբերվում է ոչ լիարժեք *ի*, այլ *՞ի* (ռուսերեն *и* հնչյունի նման), կամ էլ պարզապես *ը*:

Հետաքրքրական է, որ գրաբարյան *ն* վերջնահնչյունով որոշ բառեր, որոնք գրական հայերենում ենթարկվում են *-ան* արտաքին հոլովման, Կոզենի բարբառում ենթարկվում են *-ա* արտաքին հոլովման (*գ՛ւնն* «գառն»- *գ՛ւննա*, *կայթ-կայթնա*, *մուկ-մրկնա* (*մրկնա հօտ*), *նուռ-նրոնա* (*նրոնա գինի*), *հարսա շէրթ* (հարսի շոր). նույն կերպ է հոլովվում նաև բարբառում գործատող *ձուկ* հասկացության *տապ՞իկ* բառանունը՝ *տապ՞իկ (ձուկ)-տապկա (Տապկա հօտ ի գ՛օլի)*¹⁶: Ի դեպ, Ռ. Բաղրամյանի աշխատանքում վերոբերյալ բառերը ներկայացվում են իբրև *-ի* հոլովման բառեր (*գ՛ւննի*, *մրկնի*, *նրոնի*)¹⁷: Մնացածը սովորաբար ենթարկվում են *-ի* հոլովման (*բէռի*, *դրոնի* (*դրոնի ըղաքն*), *յէգի* (*յէգի հնգին*), *ամանի*, *ձէքի* (*ձէքի մրջին*), *հաք՞ի* *իրակ՞ին* (ոտքի արանքը), *մատնի* մատնանուկը (մատի մատանին) են):

Ազգակցական հարաբերությունն ցույց տվող բառերի մի մասը ենթարկվում է *ո* ներքին հոլովման (*քրիր* «քույր»-*քրվօր*, *ըսկըսւոր* «սկեսուր»-*ըսկըսօր*, *հանէր-հանօր*, *հրնգէր-հրնգօր*, *քալէր-քալօր*, *տէգրր-տէգօր*), ոչ հոլովանիշ թեքույթն ունի միայն *տէր-տըրօ՛չ* բառը: Յուրահատուկ ձևով է դրսևորված *կին* բառի *կընիկ* տարբերակի սեռականը՝ *կընկան* ձևը, որը կրճատվելով բարբառում դարձել է *կան* (էս *կան* գրվածքը խելք չկա, տէգօրս *կան* ագառը ցավիս ի, մէր տան *կան* հետ յօլա գընալը դըժար ի, մէր տան *կան* ըսած խօսքը խօսք ի)¹⁸: Հիշյալ իմաստային խմբից *-ի* հոլովական վերջավորություն է ստանում մի քանի բառ (*տալ* «տալ»-*տալըի*, *մաքըր* «մորաքույր»-*մաքըրի*, *տէրտէր-տէրտէրի* են):

Ժամանականիշ բառերի մի մասը *-ի* հոլովանիշ թեքույթով է ձևավորված (*ամատնի*, *աշունքի*, *գ՛ւնրունքի*, *ձըմէտնի*, *քըշէրի*,

¹⁶ ՀԲԱ նյութեր, Կոզենի բարբառը:

¹⁷ Բաղրամյան Ռ., ԿԲ, էջ 96:

¹⁸ ՀԲԱ նյութեր, Կոզենի բարբառը:

հըրկընի, ցըրէկի, կօսօրի, առտնի), մի մասն էլ՝ -ա արտաքին հոլովանիշ թեքույթով (վախտա, սրհաթա, շննպտնն, օրա, տարնա):

Ա ներքին հոլովման պատկանող տուն, շուն, ձյուն, սյուն, անուն բառերից առաջին երկուսը ենթարկվում են ա հոլովման՝ տան, շան, իսկ սյուն, ձյուն և անուն բառերը՝ ի հոլովման՝ սյուն > սընի, ձիվ (ձյուն) > ձըվնի, անըմ > անըմի:

Չոգնակի թվաձևերի սեռական հոլովը կազմվում է ի հոլովանիշ թեքույթով (բնրձէրի, գողէրի, շընէրի, կօվէրի, դնննկնննի, մըղընգանի (եղունգների), ծախկանի, հնրվննննի, վըէսկօռանի, օխչարանի, շըհնրանի (քաղաքների), թէփուգանի, բըլբոլանի (փետուրների) նն): Հարկ է նշել, որ -անի հոգնակերտ ունեցող բառերում սեռականը ձևավորվում է առանց ի սեռական հոլովակերտի հավելման (մըղընգանի կէղտը, հնրվննննի հարսը, օխչարանի սըրոն (հոտը) նն):

Բացառական հոլովի կազմիչը -էն վերջավորությունն է (թօնէն-թօնէրէն, թօնրէն-թօնրանէն, հացէն-հացէրէն, տընէն-տընէրէն, ձէքէն-ձէքէրէն, աղբօրէն - աղբօրտունցէն, մարդէն-մարդընթօնցէն, ըշէն (էշից)-ըշէրէն, լըգույէն-լըգույանէն, գինիյէն-գինիյանէն, ըրիսէն-ըրիսէխքէն-ըրիսանէն, քըվօրէն-քըվօրտունցէն, Կըռղէնէն, Յէրէվանէն նն), գործիական հոլովինը՝ -ով-ը (աղբօրով-ախբօրտունցով, քըվօրով-քըվօրտունցով, տարնով-տարնանով, գըլիսով-գըլիսանով, լիգոնյով-լըգիսննով, կարմընջով-կարմընջանով, յէվըլով (ավելով)- յէվննով, ամսով-ամսանով նն): Ներգոյական հոլովի իմաստը դրսևորվում է ներգոյականի -ում վերջավորության ըմհնչատարբերակով և անպայման որոշյալ հոդով (բաղըմը-բաղէրըմը, բըրննըմը, ըրիսըմը-ըրիսանըմը, շընըմը-շընէրըմը, փօրըմը-փօրանըմը, հօղըմը-հօղէրըմը, ամանըմը, պըլկըմը (պուլկիում)-պըլկանըմը): Ներգոյական հոլովի իմաստը երբեմն դրսևորվում է վերլուծական կազմությամբ՝ բաղադրված սեռական հոլովաձևով և մըջին (մէջ) հետադրությամբ (ջըրի մըջին, գէտի մըջին, ամանի մըջին, ձէքի մըջին նն):

Այսպիսով՝ Կոզենի բարբառի անվանական հոլովման համակարգը հատկանշվում է հիմնականում արտաքին թեքմամբ հոլովանիշ վերջավորություններով և՛ եզակի, և՛ հոգնակի թվի ձևերում, ինչպես նաև եզակի թվի հարացույցում՝ *ի, ա*, իսկ հոգնակի թվում՝ *ի* հոլովանիշներով:

Ածականի համեմատական աստիճանը, ըստ մեր բարբառախոսների, ձևավորվում է *ղըհա* բառի միջոցով՝ նա՛ *ղըհա* էի սըրոն, էս տարն էի մըշմըշոկը *ղըհա* ի անօշ, քան թե հերունինը (Այս տարվա ծիրանը ավելի է քաղցր, քան անցյալ տարվանը), իսկ գերադրական աստիճանը կազմվում է *հընչկըիյէն* բառ-մասնիկով և *ամենա* գերադրականի *ամանա* տարբերակով (*Հընչկըիյէն* լնվ արախըն նա՛ էի, *ամանալնվ* արախէն էի): *Հընչկըիյէն* բառը, որ բարբառում նշանակում է «բոլորից», ձևավորված է *ինչ+կա* բաղադրիչներից՝ հավելած բացառականի *-էն* հոլովակերտը: Մեր բարբառախոսներին ծանոթ չեն Ռ. Բաղրամյանի նշած *լափ, մըռըիս, շատ* բառերով գերադրականները:

Թվականի բաշխականության յուրահատուկ դրսևորումներ ունի Կոզենի բարբառը: Հատկապես ավագ սերնդի խոսքում հաճախական գործածություն ունեն *յերկու- մին՝* երկուական, *յիրէք-մին՝* երեքական, *չօք-մին՝* չորսական, *հինգ-մին՝* հինգական ձևերը¹⁹, որոնց մասին վկայել են նաև մեր բարբառախոսները: Բաշխականության իմաստը դրսևորվում է նաև քանակական թվականի կրկնությամբ՝ *յերկու-յերկու, յիրէք-յիրէք, չօք-չօք, օխտ-օխտ* ևն:

Դասական թվականները կազմվում են *-որդ (-օրթ)* ածանցով՝ *յերօրթ, օխտերօրթ* ևն: «Երկրորդ կին» բառակապակցության մեջ երկրորդի փոխարեն գործածում են *հետի* բառը՝ *հետի* կըն էիկ: Թե՛ Ռ. Բաղրամյանի և թե՛ մեր բարբառախոսների վկայությամբ *առաջին* բառի փոխարեն մեծահասակները գործառում են *ծըրքի* բառը, որը, ըստ Ռ. Բաղրամյանի, *ծայր(ք)>ծէրք* ձևից է

¹⁹ Բաղրամյան Ռ., ԿԲ, էջ 109-110:

առաջացել²⁰ (էս մի արախըն *ծրրքի* կընիըկէն ՞ի): Յոթանասուն, ութսուն, իննսուն թվականների դիմաց գործածվում են *օխտնասուն, ութասուն, ըննասուն* հնչատարբերակները:

Ես, դու, մենք, դուք անձնական դերանունների տրական հոլովը կազմվում է գրաբարյան հոլովաձևերով (մօտկացավ *ինձ, մէզ, քէ, քեզ, ձեզ*): Հայցական հոլովի իմաստը դրսևորվում է տրականաձև կազմությամբ (նսն *ինձ* սիրես ՞ի, նսն *քէ* ՞ի սիրելի, սիրես ՞ի *մէզ*, սիրես ՞ի *ձեզ*, յես *քէ* բնն ըմ ասելի): Հարկ է փաստել, որ *դու* դերանունը տրական և հայցական հոլովաձևերում *քեզ*-ի փոխարեն ավելի հաճախ գործածվում է *քէ* կրճատ տարբերակով, որը դրսևորվում է նաև բացառական և գործիական հոլովաձևերում:

Անձնական դերանունների բացառական հոլովաձևը կազմվում է տրականի հիմքից -*նսն* (*ընձննա, քրզննա, քիյանա, մրզննա, ձրզննս, նրրննս, նրհննցս, քրննա (իրենից), քրննցա (իրենցից)*), գործիականը՝ -*օվ* հոլովանիշ թեքությունների զուգադրությամբ (*ընձննօվ, քրզննօվ, քիյանօվ, մրզննօվ, ձրզննօվ, քրննօվ, քրննցօվ*): Եզակի 3-րդ դեմքի իմաստը արտահայտվում է *նա>նսն* (*Նսն* գընաց), հոգնակի 3-րդ դեմքինը՝ *նրհննք* (*նրհննք* գընացին «Նրանք գնացին») ձևերով: Ցուցական *այս, այդ, այն, սա, դա, նա* դերանունները դրսևորվում են *էս, էտ, էն, սսն, տսն, նսն* հնչյունափոխական տարբերակների միջոցով (*էս տունը, էտ ծառը, սսն ծառ ՞ի, տսն տուն ՞ի, նսն սիրէս* ՞ի էտ): Վերոնշյալ դերանունների հոգնակի թվի ձևերում միջձայնավորային *ը*-ի դիմաց բարբառում առկա է *հ՝* *սրհննք, տրհննք, նրհննք, սրհննց, նրհննց*:

Կոզենի բարբառում պահպանված է *այս, այդ, այն* (սա, դա, նա) ցուցական դերանունների եռանդամությունը՝ *էս մարդը, էտ մարդը, էն մարդը*: Սրանց սեռական-տրական հոլովաձևերը

²⁰ Բաղրամյան Ռ., ԿԲ, էջ 109:

կազմվում են *տրա, դրա, նրա* տիպի հիմքով, այսպես՝ *սրբւս, տրբւս, նրբւս* տունը: Մօտկացավ *սրբւսն, տրբւսն, նրբւսն*:

Ուղերանվան եզակի սեռականը և հայցականը արտահայտվում են *ու՛մ* հիմքով՝ հավելելով *հ* հագագը՝ Սն̂ *հու՛մ* տունն էի: Նս̂ *հո՛ւմ* տըսավ: Ուղերանվան հոգնակի ուղղականը ձևավորվում է եզակի ուղղականով՝ *Հօ՛ւյ* էլիին:

Կոզենի բարբառում անորոշ դերբայը հատկանշվում է 2 լծորդությամբ. գրաբարյան 4 լծորդությունից բարբառում պահպանվել են 2-ը՝ *ա, է* (*աղալ, անց կանալ, մրնալ, արմանալ, ընգ՛սնլ, լըվսնլ, յերվալ, թըլսնսնլ, հաղ արել, գըղել* (*գիղսնց՝ իմացավ*), *դսնշել* (*դառնալ*), *կալել, սանել* (*տեսնել*) են): *Տալ, գալ* անկանոն բայերի անորոշ դերբայը դրսևորվում է հնչյունափոխված տարբերակով՝ *գալ>գ՛օյ, երդում տալ>է՛օրդում տօլ*:

Բարբառն ունի վեց դերբայ՝ անորոշ, անկատար, ապառնի, հարակատար, ենթակայական և համընթացական: Ուշագրավ է հատկապես անկատար դերբայի կազմությունը: Բարբառում *ս* ճյուղի բարբառների նման այն դրսևորվում է երկու ձևով. անորոշ դերբայի չ վերջավորությունը փոխվում է *ս*-ի (սիրէս ըմ, ըս, էի), իսկ երկրորդ ձևը կազմվում է անորոշ դերբայի չ-ին ավելացնելով *ի* (յես ըմ *սիրէլի*, դիմ ըս *սիրէլի*): Ըստ Ռ. Բաղրամյանի՝ «Ս» և «լի» տանէս, տանելի(ս) ձևերը ցույց են տալիս, որ բարբառս ներկայացնում է մի վիճակ, երբ սկզբնական ձևը զուգադրաբար պահպանվում է զարգացման հետագա, անջատված ձևի հետ, այլ խոսքով՝ անկատար դերբայի հիշյալ ձևերի կազմությունը, որ այժմ շատ սովորական է, ներկայացնում է մի վիճակ, երբ -ալիս, -ելիս դերբայով կազմվող ձևից բարբառս անցում է կրճատ՝ *ս*-ով ձևին: Սակայն այս պրոցեսը, ինչպես երևում է, զարգացել է երկու ուղղությամբ. մի դեպքում –ալիս, -ելիս վերջացող դերբայի ս-ն կրճատվելով, մյուս դեպքում՝ բայահիմքի վրա ս-ն պահելով»²¹:

²¹ Բաղրամյան Ռ., ԿԲ, էջ 118-119:

Ապառնի դերբայը ձևավորվում է անորոշ դերբայից առանց վերջավորության, գրական հայերենի ժխտական դերբայի նման (*ասսէ դրմ, ասսէ դրս, ասսէ դի*):

Հարակատար դերբայը դրսևորվում է *-ած* վերջամասնիկն ունեցող ձևով. այսպես՝ «*Քուն տած արախա՝ քնած երեխա, արախեն քուն էի տած՝ երեխան քնած է*», *թըխած հաց, հացը թըխած էի*, Էս նամակը յէս ըմ *գըրսնծ*, Էս հըրկոն արագ *ըմ տըսած*:

Ինչպես *ս* ճյուղի այլ բարբառներում, այնպես էլ այստեղ վաղակատար և հարակատար դերբայները տարբերակված չեն. դրանք բոլորը դրսևորվում են միայն հարակատար դերբայով: Ուշագրավ է Կոզենի բարբառում *Ս* խոնարհման բայերի ենթակայական դերբայի կազմությունը. այն ձևավորվում է անորոշի հիմքով և *օղ* վերջավորության զուգորդմամբ (*քսնձրսնօղ, զօղանօղ, մօտկանօղ, աղօղ, ուրխանօղ* ևն): *Գալ, տալ, լալ* բայերի ենթակայական դերբայը արտահայտվում է *գՕղօղ, լսնց ընգսնօղ, տըվօղ* ձևերով: Բարբառում համընթացական դերբայի իմաստը դրսևորվում է անորոշ դերբայի գործիական հոլովածևով՝ *տօլօլ* գընէր՝ ուտելով գնում էր, վագ *տալօլ* ըրեգ՝ վագելով եկավ: Ըստ Ռ. Բաղրամյանի՝ բարբառում սույն դերբայը դրսևորված է նաև բացառական հոլովածևով, որը, սակայն, մեր բարբառախոսները չեն հիշատակել:

Ներկա ժամանակի եզակի 3-րդ դեմքի օժանդակ բայը բարբառում արտահայտվում է *ի* կամ *ի* տարբերակներով, օրինակ՝ *Նսն լսնվ մարդ էի, Արախեն ազառի էի*՝ «Երեխան հիվանդ է», *Կսնթեն յէրված ի*՝ «Գաթան վառվել է», *Արշակի ձին ստակած ի*՝ «Արշակի ձին սատկել է»: Ըստ Ռ. Բաղրամյանի՝ բարբառում ներկա ժամանակի 3-րդ դեմքի օժանդակ բայը միայն *ի*-ն է, սակայն մեր բարբառախոսների խոսքում արձանագրել ենք նաև *ի*-ով տարբերակը:

Օժանդակ բայի անցյալ ժամանակը դրսևորվում է պարզ ձևերով՝ յէս *էի*, դոն *էիր*, նսն *էր*, մենք *էիրնք*, դոնք *էիրք*, նհսնք *էիրն*:

Ուսումնասիրվող բարբառում բայն ունի 5 եղանակ՝ սահմանական, ըղձական, ենթադրական, հարկադրական և հրամայական:

Ձևաբանական հատկանիշներով Ս ճյուղի բարբառ է:

Սահմանական եղանակը ունի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևեր: Անկատար դերբայը քննելիս արդեն նշել ենք, որ ներկա ժամանակը արտահայտվում է երկու ձևով: Առաջինը *ս* ճյուղի բարբառների նման ներկան կազմում է անկատար դերբայի՝ լիս-ի *ս* վերջավորությամբ և օժանդակ բայի ներկայի ձևերով (*Միրէս* ըմ, *սիրէս* ըս, *սիրէս* օի), երկրորդը՝ անկատար դերբայի երկրորդ ձևով (սիրելի) և օժանդակ բայի ներկայի ձևերով: Նկատել ենք, որ եթե օժանդակ բայը դերբայից հետո է, գործածում են *ս*-ով տարբերակը՝ *սիրէս* ըմ, իսկ եթե դերբայից առաջ է, այսինքն՝ օժանդակ բայի շրջուն շարադասության դեպքում՝ չ-ով տարբերակը՝ յէս ըմ *սիրէլի*, դո՛ւ ըս *սիրէլի*, նա՛ է *սիրէլի*:

Անցյալ անկատար ժամանակաձևը բարբառում անկատար դերբայով չի ձևավորվում: Կոզենի բարբառը այն ինքնատիպ բարբառներից է, որ պահպանել է գրաբարաձև անցյալ անկատարը (*մընէլի*, *մընէլիր*, *մընէր*, *խօսէլի*, *խօսէլիր*, *խօսէր*): Օրինակ՝ Մի ջանհիլ ախճիկ ըստաքանանին *լըվէր* ու չայ *շընէր*՝ «Մի ջահել աղջիկ բաժակները լվանում էր ու թեյ էր պատրաստում»:

Սահմանական եղանակի ապառնին դրսևորվում է ապառնի դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով, որոնք բաղադրվում են հարկադրական եղանակի *պիտի* եղանակիչից ձևավորված *դի* մասնիկով (*տօ դըմ*, *տօ դըս*, *տօ դի*՝ ուտելու եմ, ուտելու ես, ուտելու է, *մընա դըմ*, *մընա դըս*, *մընա դի*՝ մնալու եմ, մնալու ես, մնալու է, *ապրի դըմ*, *ապրի դըս*, *ապրի դի*՝ ապրելու եմ, ապրելու ես ապրելու է): Անցյալի ապառնին դրսևորվում է անորոշ դերբայի և դարձյալ հարկադրական եղանակի *պիտի*-ի հնչյունական տարբերակ համարվող *դ*-ի և օժանդակ բայի անցյալի ձևերի հարադրությամբ՝ *գընալ դէլի*, *յէս դէլի բէրէլ*, «*նա՛ դէր վէր նօլ*» նա էր վերցնելու: Սահմանականի անցյալ ապառնու այս ձևերը, ըստ Ռ. Բաղրամյանի, խորթ են *ս* ճյուղի բարբառներին, դրանք բնորոշ

են *ու՛մ* ճյուղի՝ Շամշադինի, Լոռու, Գանձակի խոսվածքներին և արդյունք են վերջիններիս ազդեցության, որոնց հետ բարբառը շփումներ ունի:

Վաղակատար ժամանակաձևը բարբառում հստակ տարբերակված չէ: Հատկապես հին կոզենցիները և՛ վաղակատար, և՛ հարակատար ժամանակաձևերի համար գործածում են մեկ ձև: Դա դրսևորվում է հարակատար դերբայի և օժանդակ բայի խոնարհված ձևերի զուգորդմամբ (*գրրած ըմ, գրրած ըս, գրրած ըի, տուն ըի շինած, մրնացած ըի շընըմը, հաց ըի կէրած*): Մեր բարբառախոսների վկայությամբ՝ նոր սերունդը հարակատար անցյալ և վաղակատար անցյալ ժամանակաձևերի համար գործածում է վաղակատար անցյալի ձևերը (հարակատար ներկա և վաղակատար ներկա՝ *սիրած ըընք, սիրած ըք, սիրած ըն*, իսկ վաղակատար անցյալը՝ *սիրել էյինք, սիրել էյիք, սիրել էյին, արմացած ըմ, արմացել էյի* են):

Անցյալ կատարյալը կազմվում է պարզ ձևերով (*խըմ՞էցի, խըմ՞էցիր, խըմ՞էց, խըմ՞էցինք, խըմ՞էցիք, խըմ՞էցին, նիսս, նիսար, նիսավ, նիսանք, նիսաք, նիսան՝* հասս, հասար, հասավ, հասանք, հասաք, հասան): Կոզենի բարբառում որպես քերականական հնաբանություններ պահպանվել են *բերել, տալ, գալ, անել* բայերի եզակի երրորդ դեմքերը արմատական հիմքով և նախահավելվածով (ե աճականով), որը, բարբառում հնչյունափոխվելով, դարձել է *ը* (*ըրեզ՝* եկավ, *ըբեր՝* բերեց, *ըբէտ՝* տվեց: Օրինակ՝ *Կարկուտն ըրեզ, բախչէն բըթոն սըրբ՞էց տարավ՝* Կարկուտ եկավ, այգին ամբողջությամբ սրբեց տարավ): Երբեմն դրանք հանդիպում են նաև առանց նախահավելվածի (*բէր՝* բերեց, *դիր՝* դրեց, *բէտ՝* տվեց, *լւնր՝* արեց: Օրինակ՝ *Բաբըս մի ջըվալ պօպօկ բէր՝* Հայրս մի պարկ ընկույզ բերեց: *Ախըրկանը մարդի բէր հու լւնվ ջըհէզ ըի տըված՝* Աղջկան ամուսնացրեց ու լավ օժիտ տվեց, *Պէլի կըն՞էզը արախի ջէրթէրը գէց բէր՝* Կնքամայրը հագրեց

երեխայի շորերը: *Զսնքյսչը փեսէյի մըհար յէղըձու լսր՝* Չոքանչը փեսայի համար ձվածեղ արեց)²²:

Ըղձական եղանակի ձևերը ինչպես գրական հայերենում, այնպես էլ Կոզենի բարբառում պարզ կազմություն ունեն: Ըղձական ապառնին գրաբարյան ներկան է, ըղձականի անցյալը գրաբարի անցյալ անկատարն է՝ երկուսն էլ վերաիմաստավորված (*ապրիմ, ապր՞իս, ապրի, յէրէմ, յէրէս, յէրի*):

Ենթադրական եղանակի ձևերում էլ Կոզենի բարբառը դրսևորում է ինքնատիպություն: Բարբառը չունի *կը* եղանակիչ: Ենթադրական եղանակի ապառնին կազմվում է անորոշ դերբայի և օժանդակ բայի ներկայի ձևերով՝ *ասէլ ըմ, ասէլ ըս, ասէլ ղի*, այսինքն՝ կասեմ, կասես, կասի, «*դու վէր ասէս, բէրէլ ըմ*»՝ դու որ ասես, կբերեմ: Երբեմն, սակայն, ենթադրական եղանակի ապառնին դրսևորվում է նաև սահմանական եղանակի ապառնիի ժամանակաձևերով՝ *գըրէ դըմ, գըրէ դըս, գըրէ դի*՝ կգրեմ, կգրես, կգրի: Ենթադրական եղանակի անցյալը նույնանում է սահմանական եղանակի անցյալ անկատարի կամ ըղձական անցյալի ձևերի հետ՝ «*Տօյի, վէր թօղէյին*» կամ «*տօլ դէյ, վըրթ թօղէյին*» կուտեի, որ թողէին:

Հարկադրական եղանակի իմաստը բարբառում, ըստ Ռ. Բադրամյանի, արտահայտվում է երկու ձևով. Մեկը՝ *պիտի* մասնիկով, մյուսը՝ ադրբեջաներենից փոխառված գւրսագ (*kəɾək*)՝ «պիտի» բառ-մասնիկով: Գիտնականը նկատում է նաև, որ *պիտի* եղանակիչով ձևերը աստիճանաբար իրենց տեղը զիջում են *գւրսագ* մասնիկով ձևերին: Հարկադրական ապառնու *գւրսագ* եղանակիչով ձևերում այն դրվում է խոնարհվող բայի ըղձական եղանակի բայաձևից առաջ, իսկ մյուսը արտահայտվում է անորոշ դերբայով և *պիտիլ* բայի խոնարհված ձևերով (օրինակ՝ *գւրսագ ապրէմ, գւրսագ ապրէս, գւրսագ ապրի, յէրիլ բըղէմ, յէրիլ բըղէս, յէրիլ բըղի*)²³: ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերում, ինչպես նաև

²² Օրինակները ՀԲԱ նյութեր, Կոզենի բարբառը տեսրից են վերցված:

²³ Բադրամյան Ռ., ԿԲ, էջ 130-131, 134-135:

մեր բարբառախոսների վկայություններում հարկադրական եղանակը դրսևորված է միայն *զսնրսնգ* փոխառյալ եղանակիչով²⁴: Հնարավոր է՝ ժամանակի ընթացքում կոզենցիները կորցրել են *սխտի*-ով բաղադրված ձևերը:

Հրամայական եղանակի եզակի թվի ձևերը կազմվում են *ա, իր* դիմաթվանիշ վերջավորություններով: *Ա* վերջավորություն ստանում են *ա* խոնարհման պարզ բայերը (*աղա՛, մընա՛, խընդա՛, կարդա՛, հավատա՛* նն): *Ե* խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականը կազմվում է հրամայականի *իր*-ի բարբառային *ի*, (երբեմն *ի*-ի փոխարեն՝ *ե*), ինչպես նաև է վերջավորություններով՝ *ապրի՛, գրրի՛, հեփե՛, խաշե՛, խըմե՛, ծամե՛, կապե՛, կարե՛, պահե՛, պատմե՛, սիրի՛, քամե՛, յէրե՛* ն այլն:

Ե խոնարհման ածանցավոր բայերի հրամայականը եզակի թվում ձևավորվում է արմատական հիմքով *իր*-ի *ի* վերջավորությամբ՝ *կըտի՛ (զըտի՛ր), նիսի՛ (հասի՛ր), նի՛ մըտի՛ (մտի՛ր), գեցի՛ (հագի՛ր)*: *Ա* խոնարհման ածանցավոր բայերը *իր* վերջամասնիկը հավելում են անցյալի ցոյական հիմքին *վըրսնցի // րսնսնցի՛, դըրսնցի՛, գըրդե՛ (զիտեցի՛ր), հասկաջի՛, մեձաջի՛, մօտիկ յե՛ // մօտացի՛ (մոտեցի՛ր)* նն): Հրամայականի հոգնակի թվի ձևերին հատուկ է *էք* վերջավորությունը, որը համադրվում է պարզ բայերի դեպքում հիմնականում անցյալի ցոյական հիմքին, մասնավոր դեպքերում՝ ներկայի հիմքին (*գրեցե՛ք, պըճղեցե՛ք (զզե՛ք) // գըզեցե՛ք, հեփեցե՛ք, հանեցե՛ք, խըմեցե՛ք, փակեցե՛ք, փա՛յ լսրեք (բաժանեցե՛ք), կալե՛ք (բռնե՛ք)* նն): *Գալ* բայի հրամայականը կազմվում է *եկ* հիմքով՝ *յե՛յեկե՛ք*:

Կոզենի բարբառում ևս Ղարաբաղի բարբառի նման *ինձ* և *քեզ* դերանուններով գործառում են *ինձե՛ք՝* տվե՛ք ինձ, և *քեզե՛ք՝* վերցրե՛ք *ձեզ*, հրամայականի ինքնատիպ ձևերը, որոնք նոր սերունդը արդեն չի հիշում²⁵:

²⁴ ՀԲԱ նյութեր, Կոզենի բարբառը:

²⁵ Բաղրամյան Ռ., ԿԲ, էջ 127-128:

Պատճառական բայերի անորոշի հիմքի կազմությունը դրսևորվում է *-ցուն (ցն)* ածանցով (*արևացնէլ, լսնցնցնէլ, նիսացնէլ* (հասցնէլ), *թռքցնէլ և այլն*): Պատճառական բայերի անցյալ կատարյալը ձևավորվում է *ա(ցր)* ածանցավոր հիմքով (*լրդացրի, լրդացրիիր, լրդացրոց, լրդացրինք, լրդացրիք, լրդացրին նն*): Հիշյալ բայերի եզակի հրամայականը կազմվում է *ցրու* (*ր-ի* դրափոխությամբ) վերջավորությամբ (*բնձրսցրու՛, հաղացրու՛, մօտացրու՛, նըստացրու՛* ն այլն):

Ժխտական խոնարհում

Կռզենի բարբառում ժխտական խոնարհումը ձևավորվում է դրական խոնարհման ձևերի վրա *չ* և *վուօջ* ժխտական մասնիկների հավելումով: Ըստ Ռ. Բաղրամյանի՝ սահմանական ներկայի ժխտական խոնարհումը դրսևորվում է 3 տարբերակով՝ անկատար դերբայի *ս* ճյուղի բարբառների նման, այսինքն՝ անորոշ դերբայի *լ*-ն փոխվում է *ս*-ի (*նըստէս չըմ, բէրէս չըմ, գյօս չըմ*), կամ էլ օժանդակ բայը ժխտումով գալիս է դերբայից առաջ՝ Յէս *չըմ նըստէլի, դոն չըս նըստէլի, նսն չի նըստէլի*, 3-րդ տարբերակը *նըստիլը// նըստէլը չըմ, չըս, չի* ձևերն են²⁶: Ըստ մեր բարբառախոսների և մեր գրանցումների, սակայն, Կռզենի բարբառում ներկայի ժխտական խոնարհումը դրսևորվում է *լիս*-ով անկատար դերբայի *լ*-ով տարբերակով, որին հաջորդում է օժանդակ բայը ժխտումով (*սիրէլը չըմ, սիրէլը չըս, սիրէլը չի մընայը չըմ, մընայը չըս, մընայը չի*), այսինքն՝ Ռ. Բաղրամյանի հիշատակած 3-րդ տարբերակով:

Անցյալ անկատարը ձևավորվում է *ոչ* (*վ՞էչ*) ժխտական մասնիկով՝ յէս *գընէլի վ՞էչ, դոն գընէլիր վ՞էչ, նսն գընէր վ՞էչ, յէս գյօլի վ՞էչ, դու գյօլիր վ՞էչ, նսն գյօր վ՞էչ*:

Ռ. Բաղրամյանը բերում է նաև անցյալ անկատարի ժխտական *չի նըստէլի, չի նըստէլիր, չի նըստէր* տարբերակները, որոնք

²⁶ Բաղրամյան Ռ., ԿԲ, էջ 142, 143:

դարձյալ մեր բարբառախոսներին անձանոթ էին, նույնիսկ հերքում էին՝ դա իրենց բարբառը չէ:

Կոզենի բարբառում անցյալ կատարյալի պարզ ձևերի և ըղձականի ժխտական խոնարհման հարացույցը դրսևորվում է հաստատական խոնարհման և և *ոչ* ժխտական խոնարհման բառմասնիկի հետադաս գործածությամբ՝ *գըրէցի վ՞էչ, գրէցիր վ՞էչ, գըրէց վ՞ վ՞էչ, խըմէյի վ՞էչ, խըմէյիր վ՞էչ, խըմէր վ՞էչ*:

Ենթադրական եղանակը ձևավորվում է ժխտական դերբայով և օժանդակ բայի ժխտական ձևերով. օժանդակ բայը դերբայից հետո է դրվում (*գըրէ չըմ, չըս, չի, մընա չըմ, չըս, չի*):

Հարկադրական եղանակը, ըստ Ռ. Բաղրամյանի, ունի 2 ձև՝ *նըստի չըբըղէմ, նըստի չըբըղէս, նըստի չըբիղի*, իսկ երկրորդ ձևը *գ'ւնրս'ս'գ* հարկադրականի եղանակիչով է կազմվում²⁷: Մեր գրանցումներում և հարցումներում առաջին տարբերակը ո՛չ դրական խոնարհման և ո՛չ էլ ժխտական խոնարհման հարացույցներում վկայված չէ, և բարբառախոսները հերքում են նման ձևերի գոյությունը իրենց բարբառում: Ըստ մեր բարբառախոսների՝ Կոզենի բարբառում գործառվել է *գ'ւնրս'ս'գ*-ով և *ոչ* ժխտական մասնիկով հարկադրական եղանակաձևը, ինչպես նաև՝ *պիտի* եղանակիչի *դը* հնչյունական տարբերակը չ-ի ժխտումով: Հարկադրական ապառնու ձևերն են՝ *գըրէ չըղըմ, գըրէ չըղըս, գըրէ չըղի*, հարկադրական անցյալինը՝ *գ'ւնրս'ս'գ գըրէյի վ՞էչ, գ'ւնրս'ս'գ գըրէյիր վ՞էչ, գ'ւնրս'ս'գ գըրէր վ՞էչ*: Հարկադրական ապառնին ևս կարող է ձևավորվել *գ'ւնրս'ս'գ* եղանակիչով՝ *յէս գ'ւնրս'ս'գ ասսէմ վ՞էչ, դիւ գ'ւնրս'ս'գ ասսէս վ՞էչ, նս' գ'ւնրս'ս'գ ասսէ վ՞էչ*:

Արգելական հրամայականը դրսևորված է *մի* արգելական մասնիկի հետադաս կիրառությամբ՝ *մընա մի՛, տա մի՛, խօսսէ մի՛, գ'օ մի՛*: Մի-ով կազմվող արգելականի հոգնակին բարբառում դրսևորված է *մի* մասնիկի հոգնակիությամբ՝ *գընա մէ՛ք, գըրէ մէ՛ք, նօ մէ՛ք* (մի՛ բռնեք), *մընա մէ՛ք* և այլն: Կոզենի բարբառում

²⁷ Բաղրամյան Ռ., ԿԲ, էջ 148:

գործառուս են նաև ոչ-ով արգելականի ձևեր՝ *զընա՛ վ՞էչ, զընա՛ք վ՞էչ, զըրէ՛ք վ՞էչ* ևն:

Ուշագրավ յուրահատկությամբ է դրսևորված *դառնալ* և սուկածանցով բայը, որը հանդես է գալիս *դառնալ>դանչել* տարբերակով, այսինքն՝ *ն* սուկածանցի փոխարեն վերջինս Կոզենի բարբառում չ սուկածանցով են գործառուս²⁸ (Յերնի սրմբուլը վեր էի *դանչելի*՝ «Յորենի հասկը թափվել է», Ձիյի ըոխեն փրպինք վեր *դանչեր*՝ «Ձիու բերանից փալինք էր թափվում»)՝²⁹ Բարբառում այն փոխաբերացմամբ *թափվել* իմաստով է գործածվում:

Ուսումնասիրվող բարբառի քերականական առանձնահատկություններից է նաև պարզ բայերի դիմաց հարադիր բայերի առկայությունը, ինչպես՝ *աղօթք արել, բաց արել, Կ՛օրդում տօլ, Գ՛նսփ արել* (զրուցել), *հաղ արել, պար Գ՛օլ, փուլ Գ՛օլ, սննգ տալ* (ձայնել), *կախ արել, հրդ՞իք գրձել* (ճանապարհել), *հըլ՛օր տալ* (ոլորել), *հան կալել* (առնել, վերցնել), *տապ արել* (թաքնվել) և այլն:

Կոզենի բարբառում որոշյալությունը դրսևորվում է *ը* և *ն* որոշիչ հոդերով, օրինակ՝ *Ծառը ծախկ՞էց: Պատը, տունը քանդըվ՞էց: Հարսը վագ ըրէդ դրբա տուն* (Հարսը վագեց դեպի տուն): *Կըռզենը հընա շէն էի* (Կոզենը հին գյուղ է): *Լըզուն յերկէն էի: Արախէն ամանը փըշրէց: Ն* որոշիչ հոդը գործառուս է ձայնավորահանգ բառերի դեպքում (*Ձին ըստակ՞էց, Կարօն տուն ըրէզ* (Կարոն տուն եկավ), *Խընամին յերթած ի շէնը: Քէռին խօտ ի հընձէլի*):

Բարբառը հատկանշվում է անորոշ հոդի նախադաս գործածությամբ (*Մի մարդ ու մի կընըիզ ըն նիլի*՝ «Մի մարդ ու մի կին են լինում»: *Մի օր էս մարդը ազառմիշ էի նիլի*՝ «Մի օր այս մարդը հիվանդանում է»):

Հատկացուցչի և հատկացյալի համաձայնությունը արտահայտվում է որոշյալ հատկացյալի հետ անորոշ հատկացուցչի

²⁸ ՀԲԱ նյութեր, Կոզենի բարբառը:

²⁹ ՀԲԱ նյութեր, Կոզենի բարբառը:

կապակցությամբ (*Ժառի տըրեվը, փըչյաննագի խօտը (արտի խոտը), ձիի հնագին, օխչարի դըմակը, պառափի ուլերը* են):

Անձի և իրի անունների դեպքում ուղիղ խնդիրը դրվում է հայցական հոլովով (*Գըրիքօրը զօս ըի Աըշագկին՝ «Գրիգորը սիրում է Աըշակին»: Հակօփը տուն ըի շինէլի՝ «Հակօրը տուն է շինում»: Մինասը քար ըի տաշէլի, հող ըի բէրէլի՝ «Մինասը քար է տաշում, հող է բերում»: Նըհննք հարսըն տարան՝ «Նրանք հարսին տարան» են):*

Անորոշ դերբայով արտահայտված նպատակի պարագան դրվում է անորոշ դերբայի ուղիղ ձևով (*Գընացինք մօշ քաղէլ՝ «Գնացինք մոշ քաղելու», Ըրէգ հաց տօլ՝ «Եկավ հաց ուտելու», Յէկին ախչիկ զօլ՝ «Եկան աղջիկ ուզելու», Գընաց փըչյաննագը ջըրէլ՝ «Գնաց արտը ջրելու» են):*

Տեղի պարագայի իմաստը դրսևորվում է ներգոյական հոլովով, որը պարտադիր ը որոշյալ հոդով է գործառում (*Բաղըմը բնն ըի արէլի՝ «Բաղում բանում է», Ապըիս ըի շընըմը, Ամանըմը ջոնր կար: Տաշտըմը հաց չկա*)³⁰:

Բարբառը հատկանշվում է *հետ, կըշտին* (մոտ), *մըջին, վրա, աղաք* (առջև) կապերի հետադաս կիրառությամբ (*քարի կըշտին՝ «քարի մոտ», աղբօր կըշտին՝ «եղբոր մոտ», հընգէրտունց հետ՝ «ընկերների հետ», տան աղաքին՝ «տան առաջ», գէտի մըջին՝ «գետի մեջ», հըղկի վըրսն՝ «ճանապարհի վրա», գէտի վըրսնկի կարմունջը՝ «գետի վրայի կամուրջը» են):*

Այսպիսով՝ քննության ենթարկելով Կոզենի բարբառը՝ մեկ անգամ ևս համոզվում ենք, որ հօդս են ցնդում այն թյուր կարծիքները, թե կոզենցիները «ուտիացոց մնացորդներ են», որովհետև բարբառում անադարտորեն պահպանվել են հինհայերենյան բազմաթիվ հնչյունական, քերականական հատկանիշներ: Դրանցից են գրաբարյան անցյալ անկատարի գործածությունը, անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի արմատական հիմքով և նախահա-

³⁰ ՀԲԱ նյութեր, Կոզենի բարբառը:

վելվածով (ե աճականով, որը դարձել է ը) կազմությունները (ըրեգ՝ եկավ, ըբեր՝ բերեց, ըրետ՝ տվեց), *ը* և *ղ* ձայնորդներից առաջ գրական լեզվի բառասկզբի *ե*-ի դիմաց *ա* ձայնավորի առկայությունը *աղբեր, աղինջ, արագ, արկայթ, արկանք, արախսա* բառերում, որոնք հին բարբառայնության արտահայտություններ են: Գրաբարյան *եաւթն, աւձ* ձևերի դիմաց բարբառում գործառում են *օխտ, օղձ* բարբառային հնաբանությունները: *Չյուն* բառում, որ բարբառում դրսևորված է *ձիւլ* հնչատարբերակով, պահպանվել է գրաբարյան *իւ* երկբարբառը վերջին *ն* հանգի կորստով:

Կոզենի բարբառի հնչունական, քերականական հատկանիշների քննությունը կարևորվում է նաև ծայրիյուսիսարևելյան միջբարբառախմբի՝ կորստյան վտանգի առջև կանգնած բարբառային միավորի պահպանված վիճակի ամրագրմամբ և բարբառային նյութը անդառնալի կորստից փրկելու փաստով:

Ստորև ներկայացնում ենք Հ. Թումանյանի «Սուտասանը» Կոզենի բարբառով:

ՄըտլասԷիկը³¹

Նիս ըի, նի լը չի մի թաքավԷր: Էս թաքավԷրը ըրան աշխարըմը ասէս Էի: «Հօվ մի հէնց սուտ ասէ, վԷր յէս ասէմ սուտ Էի, իմ թաքավըրի կէսը ըրան դըմ տա»:

Գ՛օս Էի մի չօբան: ԱսԷս Էի.

-Թաքավըրը ասպրած կանա, իմ բաբը մի հէնց փէտ ընօր, վԷր ստիյէն դըվիբ մէգներ, յերկընքի աստեղանԷին խառներ:

- Նի լի տըհէ բան,- ասԷս Էի թաքավԷրը: - Իմ պապն էլ մի չօմաղ ընօր, մի ծԷրը ըրիսըմը դըներ, մի ծերն էլ անգանկէն յերեր:

ՄըտլասԷիկը գըլօխը ք՛օրէլօվ դիւս ըրեգ:

Գ՛օս Էի մի տերգիկ: ԱսԷս Էի.

³¹ ՀԲԱ նյութեր, Կոզենի բարբառը:

-Բաղըշտամիշ արե, թաքավե՛ր, յես գանրագ չուշտ գո՛յի, ըն էլ հէտ ընգա՛ւ: Հէրէկ շատ անձրով ըրեգ, կե՛ծականին տըրաքէցըն, յէրկինքը ճըղվե՛ց, յէրթէլ էյի կարկատան արել:

-Հա լանվ ըս լանանձ,- ասեւ էի թաքավե՛րը,- համա լանվ չէյիր կարկատե՛լ, էս առտնա մը քիչ անձրով ըրեգ:

Սն էլ դոնս ըրեգ:

Նի միտանի մի քանսիր շընանցի, չանաղն էլ կըռնի տակե՛ին:

- Ա՛յ մառթ, դոն հի՞նչ ըս գոլի,- հարցընեւ էի թաքավե՛րը:

- Ինձ մեի չանաղ վե՛սկի ըս պառոք, յէկած ըմ տանե՛ւ:

- Մի չանաղ վե՛սկի՞՛,- արմանաս էի թաքավըրը,- սուտ ըս խօսէլի, յես քե՛ վե՛սկի չըմ պառոք:

-Դէ վե՛ր սուտ ըմ ասէլի հա, թաքավօրիդ կե՛սն ինձ տո՛ւր:

- Չե՛, չե՛, դո՛գ ըս ասէլի,- խօսքը փոխէս էի թաքավե՛րը:

-Դէ վե՛ր դօրդ ըմ ասէլի, մի չանաղ վե՛սկին տո՛ւ՛:

РЕЗЮМЕ

Особенности крзенского диалекта Хачатрян Асмик

В данной статье мы исследовали крзенский диалект — один из междиалектных говоров Карабаха и Шамахи, ныне стоящих на грани исчезновения. Анализируя фонетические, грамматические признаков диалекта, мы преследовали следующую цель: зафиксировать сохранившееся состояние диалекта Крзена, стоящего перед угрозой потери, а также спасти имеющийся диалектный материал от необратимой потери.

Ключевые слова: диалект, чередование звуков, множественное число, несовершенное настоящее время глагола, отрицательное спряжение.

SUMMARY
Features of the Krzen Dialect.
Khachatryan Hasmik

In this article, we examined the Krzen dialect, which is one of the dialects at the risk of extinction in the Karabakh-Shamakhi interdialect group. By examining the phonetic and grammatical characteristics of the dialect, we wanted to record the preserved state of the Krzen dialect, which is facing the risk of extinction, and also trying to save the existing dialect material from a non-recoverable disappearance.

Key words. dialect, phonetic change, dialect group, ancient Armnian, plural, present imperfect, negative conjugation.

ՇԱՄԱՆԻԻ ԲԱՐԲԱՌԻ ՄԱՍԻՆ

Կատվայան Վիկտոր

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ
առաջատար գիտաշխատող
բանասիրական գիտ. դոկտոր
viktorkatvalyan@mail.ru

Մկրտումյան Անահիտ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ
ավագ լաբորանտ
mkrtyumyananahit@mail.ru

Խառատյան Մելանյա

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ
ավագ լաբորանտ
kharatyanmelanya@gmail.com

Սահակյան Նինա

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ
ավագ լաբորանտ
ninsahakyan@mail.ru

Բանալի բառեր. Շամախիի բարբառ, Ղարաբաղի բարբառ, Ում ճյուղ, հնչյունական հատկանիշներ, քերականական հատկանիշներ, բարբառների ընդհանրություններ, դերանուններ, դերբայ:

Ըստ Գ.Զահուկյանի բազմահատկանիշ դասակարգման՝ Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախմբի մեջ է ընդգրկված նաև Շամախիի բարբառը¹: Շամախի քաղաքը գտնվում է Կովկասյան լեռնապարի հարավարևելյան ճյուղերի ստորոտում՝ Սբ.Սահակ և Զագալավա գետերի խառնվելու տեղում: Հայերը Շամախիում բնակվել են վաղ ժամանակներից՝ 10-11-րդ

¹ Տե՛ս Զահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Ե., 1972:

դարերից, գուցե և ավելի վաղ ժամանակներից²: Համաձայն պատմաբան Գ.Ստեփանյանի՝ կովկասագետ Ն.Ջեդլիցը 19-րդ դարի վերջին քառորդի ընթացքում հրապարակված իր աշխատանքում վկայել է, որ Շամախի քաղաքի շրջակայքում սփռված հայկական բնակավայրերը ամենայն հավանականությամբ կազմում են միջին դարերում առավել մեծ քանակությամբ եղած բնակավայրերի մնացորդները³: Պատմաբանը հիշատակում է նաև եվրոպացի ճանապարհորդների մի շարք տեղեկություններ Շամախիի հայ բնակչության մասին: Այսպես, 1471-1473 թթ. Իրանի արքունիքում Վենետիկի դեսպան Ջոզեֆո Բարբարոն գրել է, որ Շամախին ունի չորս հազարից հինգ հազար տուն, գտնվում է Մեծ Հայաստանում, և բնակիչների մեծ մասը հայեր են⁴: Անգլիացի ճանապարհորդ և վաճառական Էնթոնի Ջենքինսոնը, որ Շամախիում եղել է 1563 թ., գրել է, որ քաղաքը բնակեցված է գլխավորապես հայերով⁵: 1780-ականներին Շամախի այցելած ֆրանսիացի մի ուղեգիր վկայել է, որ քաղաքում բնակվում են շատ հայեր⁶: Գ.Ստեփանյանը հայտնում է, որ հնաբնակ հայերից բացի՝ Շամախիում հայեր հաստատվել են սելջուկ-թուրքերի և մոնղոլ-թաթարների արշավանքների ժամանակ գաղթելով Անիից, Հայաստանի այլ գավառներից⁷: 19-րդ դարի սկզբներին Շամախիում բնակչություն է հաստատել նաև Ջոյուռնիայից գաղթած հայության մի հատված⁸, նաև՝ խոյեցի հայեր⁹:

Ըստ Գ.Ստեփանյանի՝ 19-րդ դարի առաջին կեսին քաղաքի կրթական, մշակութային, հասարակական-քաղաքական կյանքի և

² Տե՛ս **Ստեփանյան Գ.**, Շամախի քաղաքի հայկական դպրոցների պատմությունից (19-րդ դ.), Հայագիտական ուսումնասիրություններ, 7, 2016, էջ 43:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ 43-44:

⁷ Տե՛ս **Գ.Ստեփանյան**, Շամախին և շամախահայերը (հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարի վերջերը), Վեմ, թիվ 3 (28), 2009, էջ 76:

⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 81:

⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 82:

վաճառականության բնագավառներում հայ բնակչության դերի հետագա բարձրացման շնորհիվ Շամախին համարվել է հայկական քաղաք¹⁰: Սակայն ժամանակի ընթացքում ավերիչ երկրաշարժերի, տնտեսական անկման պատճառով շամախահայերը զանգվածաբար տեղափոխվում են Բաքու, այլ վայրեր, և եթե 1873 թ. Շամախիում ապրում էին 5177 հայեր, ապա 1897 թ. նրանց թիվը արդեն 2515 էր¹¹: 1914 թ. Շամախիում ապրում էին արդեն 4460 հայեր¹²: 20-րդ դարի սկզբներին հայկական այլ բնակավայրերի պես Շամախին ևս ենթարկվում է թաթար հրոսակների հարձակումներին, 1918 թ. գարնանը քաղաքը ավերվում և հրկիզվում է, հայերը լքում են քաղաքը, սակայն օրեր անց հայկական զորախմբին հաջողվում է Շամախին հետ գրավել, և շամախահայերը վերադառնում են քաղաք: Շուտով Բաքվի նահանգը, ինչպես նաև Շամախին գրավվում է Այսրկովկաս ներխուժած թուրքերի կողմից, որոնք և կազմակերպում են հայկական կոտորած նաև այս քաղաքում¹³: Շամախահայերի բնաջնջման, տեղահանության քաղաքականությունը շարունակվում է 1919-1920 թթ., երբ Ադրբեջանի իշխանությունները կազմակերպում են նոր հարձակումներ ու կոտորածներ¹⁴: Այդ քաղաքականությունը շարունակվում է նաև Խորհրդային Ադրբեջանում, որի հետևանքով մասնավորապես 1959-ից 1979 թթ. Ադրբեջանի հայ բնակչությունը նվազում է երկու անգամ, իսկ Շամախի-Շաքի գոտում վերանում կամ խիստ սակավամարդ են դառնում 160 հայկական գյուղական բնակավայրեր¹⁵: Շամախու շրջանում 1970 թ. հայ բնակչության քանակը կազմում էր 5166 մարդ, 1986 թ. դրությամբ Շամախի քաղաքն ուներ 200 հայ բնակիչ, իսկ 1989 թ. վերջին՝ բռնագաղթի նախօրեին, քաղաքն ու-

¹⁰ Տե՛ս **Ստեփանյան Գ.**, Շամախի քաղաքի հայկական դպրոցների պատմությունից (19-րդ դ.), Հայագիտական ուսումնասիրություններ, 7, 2016, էջ 44:

¹¹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 45-46:

¹² Տե՛ս **Ստեփանյան Գ.**, Շամախի և շամախահայերը (հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարի վերջերը), Վեմ, թիվ 3 (28), 2009, էջ 89:

¹³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 90:

¹⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 92:

¹⁵ Նույն տեղում:

ներ 110-120 հայ բնակիչ¹⁶: Այսպես տասնյակ դարեր հայերով բնակեցված շրջանը գրկվում է իր հայ բնակիչներից, իսկ թուրք-թաթարական բռնություններին զոհ է դառնում հայ բարբառներից ևս մեկը:

Շամախիի բարբառի մասին տեղեկություններ հաղորդում է նախ Ն. Աճառյանը: 1911թ. հրապարակված «Հայ բարբառագիտություն» աշխատանքում նա գրել է, որ այս բարբառը գլխավորապես խոսվում է Շամախի քաղաքում և նրա մերձակա մի քանի գյուղերում՝ մինչև Ղուբա: Բաքվում էլ կա շամախեցիների մի գաղութ, սակայն դարաբաղցիների խոշոր մեծամասնության մեջ ձուլվելու վրա է: Լեզվաբանը հայտնում է, որ Բաքվի մոտ գտնվող էրմենի քեանդ գյուղի բնակիչները մեծ մասամբ շամախեցիներ են և խոսում են Շամախիի բարբառով¹⁷: Այս բարբառը միջին օղակ է Ղարաբաղի և Ջուղայի բարբառների: Հնչյունական համակարգի հիմնական իրողությունները, նաև քերականական շատ ձևեր լիովին նույնական են Ղարաբաղի բարբառի հետ, սակայն նկատի ունենալով դերանունների այլազան ձևերը, ներկայի կազմությունը, որ բոլորովին տարբեր է Ղարաբաղի բարբառից՝ Ն.Աճառյանը այն համարել է բոլորովին անկախ բարբառ: Լեզվաբանը նկատել է, որ ի տարբերություն Ղարաբաղի բարբառի՝ Շամախիին չունի երկբարբառներ և *ըէ, հ'* հնչյուններ, փոխառյալ բառերում առատորեն գործածվում է *Ֆ*, շեշտը վերջնավանկային է: Շամախիի բարբառին հատուկ փոփոխություն է *աւ>օ* անցումը *ո,օ*-ից առաջ (հարկաւոր > հարկօօր, կնքաւոր > կնքօօր, առաւօտ > առօօտ, դանակաւոր > տանաքէօօր): Բերում է շեշտից առաջ ձայնավորների անկման քիչ օրինակներ՝ *ճըճէխէլ* (ջախջախէլ), *ստանա* (սատանա), *փթաթէլ* (փաթաթէլ) և այլն: Ձայնեղների դիմաց կան խուլեր (կլօխ, պերիլ, օժ, ճաղաց, կինի, պան): Առկա են դերանվանական *մէք, ինձ//ինձի, տիւք* ձևեր, բերվում են նաև *իկ*-ով բաղադրված ձևեր, ընդ որում՝

¹⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ 94:

¹⁷ Տե՛ս **Աճառյան Ն.**, Հայ բարբառագիտություն, Մոսկվա-Նոր-Նախիջևան, 1911, էջ 76:

իկ-ը կարող է մինչև երեք անգամ կրկնվել (տիւիգիգիգիթ)¹⁸: Դերանվանական նորություններից մեկն էլ *քէգտի* (քէգ հէտի), *մէգտի*, *ծէգտի* ձևերն են՝ *քէգ համար*, *մէգ համար*, *ծէգ համար* նշանակություններով¹⁹: Հիշատակելի են էական բայի ձևերը՝ *ամ*, *էս*, *ա*, *անք*, *էք*, *ան* (է>ա՝ ոնգայիններից առաջ. այդպես է նաև Ի խոնարհման բայերի ըղձականը՝ *կիրամ*, *կիրէս*, *կիրի*, *կիրանք*, *կիրէք*, *կիրան*):

1953 թ. լույս տեսած «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ Ա.Ղարիբյանը նշում է, որ այս բարբառով խոսում են միայն Շամախի քաղաքում, չնայած այս բարբառով խոսողներ կան Բաքվում և այլուր: Ըստ լեզվաբանի՝ Շամախիի բարբառը ընդհանուր առմամբ Ղարաբաղին նման է, սակայն որոշ առանձնահատկություններ որոշակիորեն տարբերակում են Ղարաբաղից: Մասնավորապես, Ղարաբաղի համեմատությամբ ձայնավորների քմայնացումը մի քիչ ավելի ուժեղ է: Շամախին ունի *սս*, *տտ*, *նն* դերանուններ, որ Ղարաբաղը չունի, և *սս*, *տտ*, *ան*, որոնց հոլովումը նույնն է նախորդների հետ²⁰: Շամախիի բարբառի խոնարհումը զգալի տարբերություն ունի Ղարաբաղի բարբառից, և հիմնականը օժանդակ բայի ձևերի և ըղձական եղանակի վերջավորությունների մեջ է: Շամախին նաև *ական*-ով ապամնի դերբայ չունի²¹:

1964 թ. լույս տեսած «Շամախիի բարբառը»²² աշխատության հեղինակ Ռ. Բաղդամյանը գրում է, որ Շամախիի բարբառը ամբողջովին կղզիացած է ոչ հայախոս շրջապատում: Այդ բարբառը խոսվում է Շամախի քաղաքում, Շամախիի շրջանի հայկական գյուղերում, Բաքու քաղաքի Արմենիքենդ թաղամասում և Շամախիի շրջանին հարևան Ադսուի շրջանի Զարգարան, Հնդար և Գիրկ գյուղերում²³: Սակայն գրքում դիտարկվում են Շամախի քաղաքի և շրջանի Մեյսարի, Քյալախանի, Մաղրասա, Սաղյան գյուղերի

¹⁸ Նշվ. աշխ., էջ 78:

¹⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 79:

²⁰ Տե՛ս **Ղարիբյան Ա.**, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 260:

²¹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 260-261:

²² **Բաղդամյան Ռ.**, Շամախիի բարբառը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1964:

²³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 6:

խոսվածքները: Ընդ որում՝ նշվում է, որ Սաղյան գյուղի խոսվածքը, հիմնականում Շամախիի բարբառի տարբերակ լինելով, ենթարկված է Դարաբաղի բարբառի ազդեցությանը²⁴: Հիշյալ աշխատանքը բարբառի առավել հանգամանալի հետազոտությունն ու նկարագրությունն է, որում հեղինակը Շամախիի բարբառի իրողությունները ներկայացնում է շրջանի տարբեր բնակավայրերի՝ այլ բարբառների խոսվածքների հետ համեմատությամբ: Շամախիի բարբառի վերաբերյալ կարևոր տեղեկություններ են պարունակում Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով²⁵ լրացված թիվ 148²⁶ և թիվ 417²⁷ տետրերը:

Ինչպես վերևում տեսանք, Շամախիի տարածաշրջանում հայեր չկան 1989 թվից սկսած, և տեղեկություններ չունենք Հայաստանի և Արցախի Հանրապետություններում շամախեցիներով բնակեցված բնակավայրերի մասին, չկան նաև վկայություններ բարբառը իբրև հաղորդակցման միջոց գործածվելու վերաբերյալ:

Այս աշխատանքում նպատակ ունենք ներկայացնելու Շամախիի բարբառի հետաքրքրական մի շարք իրողություններ, ինչպես նաև որոշ դիտարկումներ դրանց վերաբերյալ:

Ընդհանուր հայերենյան վեց ձայնավորներից բացի՝ Շամախիի բարբառն ունի քմայնացած *ա*, *ո*, *ու* հնչյուններ, *ը*-ի կոշտ ու թեթև տարբերակներ: Ռ.Բաղրամյանը բարբառում ընդունում է

²⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 6-7:

²⁵ Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1977: Այսուհետ՝ ՀԲԱ ծրագիր:

²⁶ Մադրասա գյուղի խոսվածք. 1981 թ. խոսվածքի հատկանիշները գրանցել է լեզվի ինստիտուտի ավագ լաբորանտ Ա.Սկրտումյանը, որը բերում է բարբառախոսի վկայությունն այն մասին, որ 20-րդ դարի 70-ական թվականներին գյուղն ունեցել է մոտ 1800 տնտեսություն:

²⁷ Սաղյան գյուղի խոսվածք. 1988 թ. խոսվածքի հատկանիշները գրանցել է լեզվի ինստիտուտի աշխատակից Ե.Թադևոսյանը, որի վկայությամբ՝ 20-րդ դարի կեսերին Շամախիի շրջանի գուտ հայաբնակ Սաղյան գյուղն ունեցել է մոտ 380 ընտանիք, իսկ 1988 թ. սկզբին՝ մոտ 280 տնտեսություն: 1988 թ. աշնանը գյուղը, ինչպես և Շամախու շրջանի մյուս բոլոր հայաբնակ գյուղերը, բռնագաղթի հետևանքով ամայացել է: Ե.Թադևոսյանը տեղեկացնում է, որ Սաղյան գյուղի տարեց բնակիչների վկայությամբ՝ իրենց պապերը եկել են Սյունիքից:

տևական կամ երկար հնչման **ա, ի, օ, զ** հնչյունների առկայություն և գրում, որ երկար ձայնավորների առաջացման պատճառը Նիկոմեդիայի բարբառի առիթով բացատրել է Հ.Աճառյանը, համաձայն որի՝ Նիկոմեդիայի շրջանում խոսակցությունը առհասարակ շատ երկար շեշտով է. ամեն բառի կամ խոսքի ծայրը շամախեցիների նման երկարացնում են երգելու եղանակով²⁸: Ռ.Բաղրամյանը բերում է օրինակներ, ինչպես՝ *հաղհան>ճահան> ծաան>ծան, վահր> վահար> վաառ >վառ*²⁹ և այլն, որոնք, մեր կարծիքով, վկայում են, որ իրականում առկա է երկու ձայնավորների միջև եղած հազագի անկում, և երկու ձայնավորների արտասանությունը մեկտեղվել է՝ առաջացնելով երկար ձայնավորի տպավորություն: Այդ առումով տեղին է հիշատակել Նոր-Ջուղայի բարբառի վերաբերյալ Աճառյանի մի դիտարկումը: «Երկու *ա* միանալով տալիս են *ա*,- գրում է Աճառյանը.- այս կանոնը գտնում ենք գրականից փոխառյալ *պահարան* «նամակի ծրար» բառի մեջ, որ բարբառիս մեջ թույլ *հ* ձայնի անկումով տվել է նախ **պաարան*, որից առաջացել է հետո *պարան*. նույնպես *ինչ ա ասում > ինչ ասում*, ծառա յեմ>ծառա ամ>ծառամ»³⁰: Կարծում ենք՝ այս մեկնաբանությունը ավելի հարմար է Շամախիի բարբառում վերը նկարագրվածին: Բարբառում լայնորեն տարածված է ձայնավորների ներդաշնակության օրենքը (ինչպես՝ *լուզու, գուրուց, լի սիլ, պի՝րինձ, սուրուն*): Այդ օրենքով են պայմանավորվում նաև անկատար դերբայի վերջավորությունները (ըստ բայարմատի ձայնավորի՝ ուտում, կարթըմ, ասամ, կիրիմ), ներգոյականի վերջավորությունները՝ ում (վերջնավանկում ու ունեցող բառերի դեպքում), իմ (վերջնավանկում թեթև ձայնավոր ունեցող բառերի դեպքում), ըմ (վերջնավանկում ծանր ձայնավոր ունեցող բառերի դեպքում) և այլն: Բարբառում մեծ տարածում ունի *ե* ձայնավորի դիմաց *ա//ա-*ի արտահայտությունը: Բարբառային հայերենում *ե-ա* համապատասխանության մասին խոսելով՝ Հ.Աճառյանը բերում է 17 բառի օրինակ (աղանի-եղունիկ, եկն-

²⁸ Տե՛ս **Բաղրամյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 13-14:

²⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 13:

³⁰ Տե՛ս **Աճառյան Հ.**, Քննություն Նոր Ջուղայի բարբառի, Ե., 1940, էջ 51:

ակալ, եղբայր-աղբայր, եղիճ-աղիճ, եղունգ-աղունգ, եղջիր-աղջիր, երագ-արագ, երախայ-արախայ, երաշտ-արաշտ, երէկ-արակ, երեկոյ-յարակու, երկաթ-արկաթ, երկու-արկու և այլն³¹: Ըստ Հ.Մուրադյանի՝ այդ համապատասխանությունը թէև առկա է միայն մի խումբ բառերում, բայց այդ բոլորը իրենց *է-ա* համապատասխանությամբ բարբառային հին գոյացություններ են՝ առաջացած դեռևս նախապատմական շրջանում³²: Դիտարկումները ցույց են տալիս, որ հիշյալ համապատասխանությունը Շամախիի բարբառում շատ ավելի ընդարձակ տարածում ունի: Այն դիտվում է բազմաթիվ այլ բառերում (պաշրան > բերան, մաշրան > մերան, պարակամ > բարեկամ, մառնիլ > մեռնել, տազ > դեզ, մած > մեծ, ուրամը > ուրեմն, անօրան > անօրէն, մարքարա > մարգարե, տաք > տէր, կռումաշ > գումեշ), դերանվանական համակարգում (յաս/յէս > ես), բացառական հոլովի և վաղակատար դերբայի վերջավորություններում (պանջարան /բանջարից/, քարան /քարից/, լավացալ /լավացել/, քիթալ /գտել/), օժանդակ բայի ձևերում՝ աւ, էս, ա, անք, էք, ան և այլն: Միաժամանակ, այ>է, էա>ե հնչյունափոխությունների դիմաց հաճախ առկա են այ>ա, էա>ա փոփոխություններ (աս, առ, ան, առքան, առպէս, փաղ, լան, էրզան, հաք, շամբ /սեամ/, կօրակ /կորեակ/) և այլն: Կարծում ենք՝ տվյալ դեպքում բարբառում առկա է ավելի բաց արտասանության միտում, որը կարող է ինչպես հնից եկող իրողություն լինել, այնպես էլ հետագա զարգացման արդյունք: Հնչյունական ուշագրավ երևույթ է *n* (օ)-ից առաջ *աւ* կապակցության դիմաց *օ*-ի դրսևորումը՝ *առօօտ* (առաւօտ), *բախտօօր* (բախտաւոր), *տաղօօր* (դատաւոր), *թագօօր* (թագաւոր), *կընքօօր* (կնքաւոր), *հարկօօր* (հարկաւոր): Աճառյանը, նրան հետևելով՝ Բաղրամյանը այս իրողությունը համարում են *աւ>օ* փոփոխություն ³³: Կարծում ենք՝ իրականում նախ տեղի է

³¹ Տե՛ս Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 415:

³² Տե՛ս Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Ե., 1982, էջ 127:

³³ Տե՛ս Աճառյան Հ., Հայ բարբառագիտություն, էջ 77. Բաղրամյան Ռ., նշվ. աշխ., էջ 35:

ունեցել *ւ*-ի անկում, ինչպես որ այդ տեղի է ունեցել *հ*-ի պարագայում (ծահան>ծաան), ապա ձայնավորների ներդաշնակության միտումով՝ *ա>օ* անցում, և ստացվել է *օ*-ի կրկնակ կամ երկար արտասանություն: Ի դեպ, համանման իրողություն նկատվել է նաև Բուրդուրի բարբառում, որում Ն.Մկրտչյանը արձանագրել է *ինքնօօվան* (ինքնահավան) ձև³⁴: Այդ բարբառում *հաւան*-ի դիմաց կա *հօվան* ձև, որի *հ*-ի անկումով, ապա և ներդաշնակության օրենքով, կարծում ենք, տեղի է ունեցել **ինքնահօվան> *ինքնաօվան >ինքնօօվան* զարգացում:

Շամախիի բարբառի բաղաձայնական համակարգը աչքի է ընկնում ձայնեղների դիմաց խուլերի դրսևորմամբ (կըլօխ, տանակ, ճուր), օտար բառերում *ֆ*-ի առկայությամբ, առանձին դեպքերում *ռ>ր* անցմամբ (լէրներ, արաջ, տուրնը): Ինչպես Ղարաբաղի բարբառում, այստեղ ևս բառավերջի *ն*-ն հաճախ պահպանվել է (ակնը, ամառնը, պէռնը, կ'առնը, ծմէռնը, թօռնը) և այլն: Ի տարբերություն Ղարաբաղի բարբառի՝ Շամախիի բարբառում շեշտը վերջնավանկային է:

Հետաքրքրական մի շարք իրողություններ կան քերականական համակարգում: Այսպես, Սաղյան գյուղի խոսվածքը չունի հոգնակերտ *ներ* մասնիկ, փոխարենը գործածվում է *էնի* մասնիկը (անգօճէնի, խընամէնի): Բարբառում հոգնակիի կազմության ժամանակ շեշտափոխական հնչյունափոխություն տեղի չի ունենում (ճուրէր, տունէր, կուժէր, աղաճուրէնի, միսէր)³⁵: Անձ ցույց տվող գոյականների բացառականը կազմվում է *անա* անջատ մասնիկով (հօր անա), մյուսներինը՝ *ան* մասնիկով (տունան, պռնան): Գործիականը անձի անունների դեպքում ունի *օվ*, *օ*, *անօվ*, իրի անունների դեպքում՝ *օվ*, *օ* վերջավորություններ (քարօ, տախտաօ): Ավանդաբար Ա ներքին հոլովման բառերը ենթարկվում են Ի հոլովման (տունի, շունի, նուռնի): Շամախիի բարբառում կան

³⁴ Տե՛ս Մկրտչյան Ն., Բուրդուրի բարբառը, Ե., 1971, ՀՄՍՀ ԳԱ հրատ., էջ 63:

³⁵ Նման իրողություն հանդիպում է նաև բառակազմության (սուրփազան, թուխարկան, շունաստակ), բայակազմության ժամանակ՝ փափուգիլ, գիժվիլ, փուչանիլ:

անձներական թվականներ (երկուանք, հինգիանք, չորսանք), *ես* դերանվան հոգնակին է *մէք*: Բարբառի առավել հետաքրքրական իրողություններից է *ես*, *դու*, *նա*, *նրանք* դերանունների վրա բոլոր հոլովներում -իկ մասնիկի հավելումը, որ կարող է մինչև երեք անգամ կրկնվել, ինչպես՝ *յէս*, *յէսիգ*, *յէսիգիգիս*, *յէսիգիգիգիս* (իմիգիս, ինձիգիս), *տիւ*, *տիւիգ*, *տիւիգիգիթ*, *տիւիգիգիգիթ*, *նրանքիգիգիգի* և այլն³⁶: Հետաքրքրական է, որ -իկ մասնիկը այնքան սովորական է բարբառում, որ կարող է դրվել նաև որոշ գոյականների վրա (տունիգի, վիգիգիս և այլն)³⁷: Հ.Աճառյանը այս -իկ մասնիկը համարում է դերանվանական գորացուցիչ մասնիկ³⁸, որի կրկնությունը, ըստ Բաղրամյանի, իմաստի ավելի գորացում չի բերում³⁹: Բաղրամյանը նկատում է նաև, որ նոր սերունդը մասնիկի եռակի կրկնությամբ ձևեր չի գործածում⁴⁰: Շամախիի բարբառում հինհայերենյան *ն*, *նվ* հարցական դերանվան երկու ձևերի արձագանքն էլ կա՝ *օվ//հօվ*, *հոն*: Հոգնակի ուղղականում Մաղրասա գյուղի խոսվածքն ունի այս դերանվան *հօվքէր* ձևը, Սաղյանի խոսվածքը՝ *հօվէր* ձևը: Ուշագրավ են նաև Աճառյանի կողմից *հետադրական դերանուն* անվանված ձևերը (մեգ, քեգ, ձեգ + հետի /համար/ < մեգտի /մեգ համար/, ծեգտի, քեգտի⁴¹):

Շամախիի բարբառում բայն ունի Ա և Ի խոնարհումներ (տալ, քինալ, կ'ալ, խօստանալ, պաղմիլ, պի՝ժանիլ, պերիլ, սիրիլ): Բարբառում կան չ ածանցով բայեր՝ *թըռչիլ*, *կօրչիլ*, *փախչիլ*, *ուռչիլ*, *սառչիլ* և այլն: Ապառնի դերբայն ունի *ու* վերջավորություն և անո-

³⁶ Հ. Աճառյանը նկատել է, որ այս հատկանիշը հատուկ է միայն Շամախիի բարբառին (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայ բարբառագիտություն, էջ 78):

³⁷ Այս դեպքում այն չի կրկնվում (տե՛ս **Բաղրամյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 97):

³⁸ Տե՛ս **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, ՀՄՄՆ ԳՍ հրատ., Ե., 1954, էջ 74:

³⁹ Տե՛ս **Բաղրամյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 109:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում: 20-րդ դարավերջին Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով կատարված՝ Սաղյան գյուղի խոսվածքի հատկանիշների գրանցումներում (թիվ 417 տետր) -իկ մասնիկով դերանվանական ձևեր արձանագրված չեն:

⁴¹ Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայ բարբառագիտություն, էջ 79:

րոշի սեռականից ձևով տարբերվում է, որովհետև անորոշը ենթարկվում է Ի հոլովման: Վաղակատարի վերջավորությունն է *ալ*, օժանդակ բայի ներկայի ձևերն են *ամ*, *էս//աս*, *ա*, *անք*, *էք//աք*, *ան*: Ի խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ցոյական հիմքից (կիրեցի, կիրեցիր): Անցյալ կատարյալում արձանագրվել է *տալ* բայի հավելական ձայնավորով ձև՝ տուրի, տուրիր, ուտուր (\approx էտուր): Հոգնակի հրամայականի հետաքրքրական ձևերից են՝ *յեկեցէք*, *արեցէք*, *տուրեցէք*, *իլեցէք*, Սաղյան գյուղի խոսվածքում՝ *լիսեցաք*, *խօսեցաք*, *ածեցաք*, *յեկաք*, *տեսաք*: Արգելական հրամայականը կազմվում է *մի*, *միք* ձևերով, որոնք ավելանում են անորոշի վրա (*մի՛ խօսալ*, *մի՛ ըսպանիլ*, *մի՛ քիցիլ*, հոգն. *միք՛ կիրիլ*, *միք՛ կարթիլ*): Սաղյան գյուղում առկա են այլ ձևեր՝ *կիրիլ միք*, *կարթիլ միք*, *կիրաք վեչ*, *կարթաք վեչ*:

Շատ են նաև բառապաշարի հետաքրքրական իրողությունները: Կան գրաբարից տարբեր հին ձևեր (գե՛նալ//կե՛նալ /հագնել/, գեցկը//կեցկը /հագուստ/), հին իմաստների դրսևորումներ (գեխճը կիալ /խղճալ, գթալ/, լուսնահակ /լուսնյակին *հակ*՝ ընկեր, կից, հավասար. *հակակ*՝ հավասար, նման/), գրաբարում չհանդիպած արմատներ («թեժ» իմաստով Սաղյան գյուղի խոսվածքում գործածվում է *գուր* բառը⁴², Մադրասայի խոսվածքում՝ *գուրգուր* կրկնավորը), բարբառային կազմություններ (հրդէ անիլ /1. ուղարկել, 2. աղջկան ամուսնացնել/, վօտնահեղի /գուգարան, փորլուծ/, ճըրմըտանդ /ջերմուտենդ՝ դողերոցք, յեղածու /ձվածեղ/, պըսակաթուխթ /ամուսնության վկայական/, բնութագրող բառեր (թուրքանալ /հավատը փոխել, 2. անգութ դառնալ/, խօյեցի /բթամիտ, անհասկացող/) և այլն: Հետաքրքրական են խոսվածքներում դրսևորվող բառապաշարային տարբերությունները: Այսպես, եթե Շամախի քաղաքում *գառն* բառի դիմաց առկա է «կիսունը» հնչատարբերակը, ապա Սաղյանի խոսվածքում գործածական է *դուզի* փոխառյալ բառը, իսկ Մադրասայում՝ *վօխճարի բալա*

⁴² Հ.Աճառյանը արձանագրել է Մշո բարբառի գուռեցնել բառը՝ «հրահրել, բորբոքել, լավ վառել իմաստներով» (տե՛ս Աճառյան Հ., Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 255):

կապակցությունը: Այդպես նաև՝ *անտառ* բառի դիմաց Մադրասան ունի *ծրմաք* կամ *մէշա*, իսկ Սադյանը՝ *քոլ. շեմ* բառի դիմաց Մադրասան ունի *տուռնի պէրան*, Սադյանը՝ *շեմք*: Մադրասայում վայրի տանձն ունի *ճրրտանձ* անվանումը, Սադյանում՝ *Վոխրատանձ* անվանումը, *հաղհան* (ակիշ) բառի դիմաց Մադրասան ունի *ծաան*, իսկ Սադյանը՝ *ծրհան* և այլն:

Այսպիսով, Շամախիի բարբառը թե՛ հնից եկող իր յուրահատկություններով, թե՛ ժամանակի ընթացքում ձեռք բերած հատկանիշներով հայոց լեզվի մի ուրույն դրսևորում է, լեզվական յուրօրինակ համակարգ, որը և՛ բարբառային հայերենի, և ընդհանրապես հայոց լեզվի ուսումնասիրության համար գիտական մեծ արժեք ունի:

РЕЗЮМЕ

О шамахинском диалекте

Катвалян В., Мкртумян А., Харатьян М., Саакян Н.

На Шамахинском диалекте говорили в городе Шамахи и в армянских селах района. Армяне жили здесь с 10-11 веков, может быть, даже раньше. Однако в результате антиармянской политики Советского Азербайджана армяне постоянно покидали Шамаху. Все армянонаселенные села района были опустошены в 1988 году в результате депортации, в городе Шамахи также не осталось ни одного армянина. У нас нет сведений о поселениях бывших шамахинцев в республиках Армения и Арцах, нет фактов использования диалекта как средства общения. В статье представлен ряд интересных фактов о шамахинском диалекте, а также некоторые наблюдения о них. Шамахинский диалект является уникальным проявлением армянского языка, имеющим большую научную ценность для изучения диалектного армянского языка и армянского языка в целом.

Ключевые слова: Шамахинский диалект, Карабахский диалект, Ում ветвь, фонетические признаки, грамматические особенности, местоимения, глагол.

SUMMARY

About the Shamakhi dialect

Katvalyan V., Mkrtumyan A., Kharatyan M., Sahakyan N.

The Shamakhi dialect was spoken in the city of Shamakhi and in the Armenian villages of the region. Armenians have lived here since the 10th-11th centuries, maybe even earlier. However, as a result of the anti-Armenian policy of Soviet Azerbaijan, Armenians continuously left Shamakhi. All the Armenian-inhabited villages of the region were emptied in 1988 as a result of deportation, not a single Armenian remained in the city of Shamakhi either. We have no information about the settlements inhabited by former Shamakhi people in the Republics of Armenia and Artsakh, and there are no facts about the use of the dialect as a means of communication. The article presents a number of interesting facts about the Shamakhi dialect, as well as some observations about them. The Shamakhi dialect is a unique manifestation of the Armenian language, which has great scientific value for the study of dialectal Armenian and the Armenian language in general.

Key words: Shamakhi dialect, Karabakh dialect, Ուժ branch, phonetic features, grammatical features, pronouns, verb.

**ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԸ Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ
(ՏՄԲԼԱԶԻ ԽԱԶԱՆ) ՖԵԼԻԵՏՈՆՆԵՐՈՒՄ**

Հայրապետյան Թամար

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
բանահյուսության տեքստաբանության բաժնի վարիչ
բանասիրական գիտությունների դոկտոր
tamar.hayrapetyan@gmail.com

Բանալի բառեր. Տմբլաչի Խաչան, Զուռնա-Տմբլա, Ղարաբաղ,
Շուշի, բարբառային քարտեզ, ֆելիետոն, բանահյուսություն:

Ներածություն

Հոդվածի նպատակն է Կոստանդին Կարապետի Մելիք-Շահ-
նազարյանի (գրական ծածկանունը՝ Տմբլաչի Խաչան) Ղարաբաղի
բարբառով գրած «Զուռնա-Տմբլա» ֆելիետոնների երկհատորյակի
միջոցով քննության առնել Արցախի պատմաազգագրական շրջանի,
մասնավորապես Շուշիի հայտնի «Թոփխանա» հրապարակում ար-
ծարձվող քաղաքական, սոցիալ-կենցաղային թեմաների արտացոլ-
ման գեղարվեստական եղանակները, Զուռնա-Տմբլաչի էթնոմշակու-
թային գործառույթն ու այլաբանությունը և ֆելիետոնների լեզվի
հնչյունաբանական ու ձևաբանական առանձնահատկությունները:

Տմբլաչի Խաչանի ֆելիետոնների լեզուն ոչ թե Ղարաբաղի
որևէ առանձին գավառի բարբառն է, այլ գավառաբարբառների
հավաքական հղկվածքը, որը XIX դարի 70-80-ական թվականներին
գործադրվում էր Շուշի քաղաքում¹:

Քննության առարկա հիմնախնդիրների բացահայտման հա-
մար հիմք են ծառայել արդիի հայ բանագիտության և լեզվաբանութ-
յան մեջ ընդունված տեսական-մեթոդաբանական սկզբունքները:

¹ **Դավթյան Կ.**, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966,
ՀՍՍՌ ԳԱ հրատ., էջ 8-9:

Թեմայի նպատակից բխող խնդիրները կարևորվել են հանրային հիշողության և ժամանակի աշխարհաքաղաքական առաջնահերթությունների տեսանկյունից:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նկարագրվող և ներկայացվող դեպքերի, իրադարձությունների՝ մեր ժամանակների հետ ունեցած աղերսներով և մասնագիտական շրջանակների հետաքրքրության աճով:

Բնիկ շուշեցի երգիծաբան, Կոստանդին Մելիք Շահնագարյանին մեծ ճանաչում է բերել Ղարաբաղի բարբառով հրատարակած «Ղըլըցե կնանոց պընը-փեշակը»² (1882), «Շուշուա դալին խերն ու շառը»³ (1887), 1900-1901 թթ. Բաքվում հրատարակած «Զուռնա-Տմբլա» վերնագրով ֆելիետոնների (երգիծապատումներ) եռամսա ժողովածուն⁴, որը 1907-1908 թթ. լրացվել և վերահրատարակվել է Վաղարշապատում (այժմ՝ Էջմիածին)՝ երկու գրքով⁵:

Ֆելիետոնը ակնարկային գրականության տեսակ է, գեղարվեստահրապարակախոսական ժանր, որին հատուկ է քննադատական, հաճախ կատակերգական, երգիծական բնույթը, նյութի այժմեականությունը, թեթևությունը, գեղարվեստական և ոչ գեղարվեստական ժանրերի և ոճերի պարողիական կիրառումը:

Ժանրի ծնունդը համարվում է 1800 թ. հունվարի 28-ը, երբ փարիզյան «[Journal des débats](#)» պարբերականի մեջ դրվել է հավելյալ թերթիկ (feuilleton)՝ հրատապ հայտարարությունների,

² **Մելիք-Շահնագարեանց Կ.**, Ղըլըցե կնանոց պընը-փեշակը, Շուշի, 1882, տպ. Մովս. Վարդանեանց, 24 էջ:

³ **Մելիք-Շահնագարեանց Կ.**, Շուշուա դալին խերն ու շառը, Թիֆլիս, 1887, տպ. Մովս. Վարդանեանց և ընկ. 56 էջ:

⁴ **Մելիք-Շահնագարեանց Կ.**, Զուռնա-Տմբլա, հ. 1, Բագու, 1900, տպ. «Արօր», 140 էջ, Զուռնա-Տմբլա, հ. 2, Բագու, 1900, , տպ. «Արօր», 119 էջ, , Զուռնա-Տմբլա, հ. 3, Բագու, 1901, տպ. «Արօր», 130 էջ:

⁵ **Մելիք-Շահնագարեանց Կ.** (Տմբլաչի Խաչան), Զուռնա-Տմբլա, գիրք Ա, Վաղարշապատ, 1907, Էլեքտրաշարժ տպ. Սրբոյ Էջմիածնի, 234 էջ; Մելիք-Շահնագարեանց Կ. (Տմբլաչի Խաչան), Զուռնա-Տմբլա, գիրք Բ, Վաղարշապատ, 1908, Էլեքտրաշարժ տպ. Սրբոյ Էջմիածնի, 268 էջ:

թատերական, երաժշտական գրախոսությունների, նորաձևությանը վերաբերող հաղորդումների համար:

Ի սկզբանե ֆելիետոն բառը պարզապես խորագրի անվանում էր և ժանրի իմաստ չէր պարունակում իր մեջ: Հասարակական կյանքի և լրատվամիջոցների պատմական զարգացման ընթացքում, ձգտելով առավել ամբողջությամբ արտացոլել կյանքի նոր երևույթները, ֆելիետոն խորագիրը աստիճանաբար ժանրի իմաստ է ձեռք բերում: Հետագայում այդ խորագրի տակ տպագրվել են անգամ վեպեր՝ Է. Սյուի «Փարիզի գաղտնիքները», Ա. Դյումայի «Երեք հրացանակիրները»⁶:

Հայ գրողներից ֆելիետոններ են գրել Հ. Պարոնյանը, Ե. Օսյանը, Դ. Դեմիրճյանը, Լեո Կամսարը, Ս. Վահունին: Չափածո ֆելիետոններ է գրել Հովհ. Թումանյանը⁷:

Ժամանակի բոլոր հասարակական ինստիտուտները՝ Պետական դոմա, հոգևոր Սինոդ ու արդարադատություն, մերկացվում են Տմբլաչի Խաչանի «Ձուռնա-Տմբլայի» սոցիալական ու քաղաքական ֆելիետոններում:

«Ձուռնա-Տմբլան» հրովարտակ է՝ ընդդեմ դասային արտոնությունների, ի պաշտպանություն խեղճերի, անիրավության զոհերի: Նրա սուր, ճչացող ձայնով երգիծաբանը անխտիր մտրակում է շուշեցի օրինազանցներին ու կեղծ բարեգործներին, ինքնակոչ սրբերին, ժողովրդի անունից շաղակրատող երեսփոխաններին, իշխանավորներին ու կեղեքիչներին՝ որպես ազգի ընդհանրության շահերի դավաճանների, ի դեմաց գործած բազում անիրավությունների:

«Ձուռնա-Տմբլայի» լեզուն և ոճը

Երկար ժամանակ Լեռնային Ղարաբաղը դիտվում էր որպես մեկ միասնական բարբառի հայրենիք, սակայն ուսումնասիրու-

⁶ Краткая литературная энциклопедия, т. 7, Москва, 1972, Сов. Энциклопедия, с. 624-625.

⁷ **Զբբաշյան Է.**, Գրականության տեսություն, Ե., 1980, Երևանի համալս. հրատ., էջ 360:

թյունները ցույց տվեցին, որ այնտեղ խոսվում են երեք տարբեր ճյուղերի պատկանող վեց բարբառներ, մի շարք ենթաբարբառներ ու խոսվածքներ⁸:

Առաջ քաշելով հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման սկզբունքը՝ Գևորգ Ջահուկյանը հանգում է այն մտքին, որ «հարկավոր է հայերենի նկատմամբ կիրառել լեզվաբանական աշխարհագրության սկզբունքները, բարբառային միավորներն առանձնացնելիս ելնել ոչ թե մեկ կամ երկու հատկանիշից, այլ հատկանիշների ամբողջությունից»⁹:

Ղարաբաղի բարբառը հայերենի «ուս» ճյուղի կենդանի բարբառներից ամենամեծն է, որը լեզվական ընդհանրություններ ունի «ս» ճյուղի Հաղրուրի, Շաղախ-Խծաբերդի, Ուրմիայի և «լ» ճյուղի Մարաղայի բարբառների, ինչպես նաև Գորիսի, Կապանի, Ղազախի, Գանձակի, Հավարիկի և այլն ենթաբարբառների հետ: Ըստ բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ Ղարաբաղի բարբառը պատկանում է արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիս-արևելյան միջբարբառախմբին:

Անցյալ դարի վերջին Ղարաբաղի բարբառի սահմանները ձգվում էին մինչև Բաքու, Մումգայիթ, Գանձակ, Գետաշեն, Դաշտային Ղարաբաղի տարածքով մեկ, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի և Միջին Ասիայի հայաբնակ վայրեր: Այժմ այն հիմնականում խոսվում է Արցախի հանրապետությունում:

Ղարաբաղի բարբառի՝ գիտական հետաքրքրություն ներկայացնող տարբեր հարցերի ուսումնասիրությամբ զբաղվել են անվանի լեզվաբաններ Հր. Աճառյանը, Ա. Ղարիբյանը, Գ. Ջահուկյանը, Կ. Դավթյանը և այլք:

Խոսելով հայ բարբառների լիակատար քարտեզ կազմելու իր մտադրության մասին՝ Հր. Աճառյանը Ասլանբեգի և Մուչավայի բարբառներին նվիրված իր ուսումնասիրություններից հետո տե-

⁸ **Դավթյան Կ.**, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966, էջ 5:

⁹ **Ջահուկյան Գ.**, Հայ բարբառագիտության ներածություն (վիճակագրական բարբառագիտություն), Ե., 1972, ՀՄՍՀ ԳԱ հրատ., էջ 25:

ղեկացնում է. «Երրորդ քննությունս եղաւ Ղարաբաղի բարբառը՝ որ պատրաստեցի Արժ. Խաչիկ Վրդ. Դադեանի, Շնորհ. Եսայի սարկ. Մ. Բաբայեանի (այժմ՝ Ջաւէն վրդ.) և Պր. Աւետիս Տէր Յարությունեանի աշխատակցութեամբ»¹⁰:

«Ուսումնասիրություններ հայկական բարբառախոսության» աշխատության մեջ¹¹ Հրայր Աճառյանը Ղարաբաղի բարբառով գրված աշխատությունների շարքում կարևորում է Տմբլաչի Խաչանի «Ղըլըցե կնանոց պընը-փեշակը» (Շուշի, 1882) և «Շուշուա դալին խերն ու շառը» (Թիֆլիս, 1887) գրքերը:

«Զուռնա-Տմբլա» գրքի առաջաբանում Տմբլաչի Խաչանը գլխավորապես մտահոգվում է Ղարաբաղի լեզվի որոշ դարձվածքների, ընտիր ու ճոխ բառերի» արտաքին հանգամանքների պատճառով հետզհետե մոռացության տրվելու, աղավաղվելու, նախնական ոճից հեռանալու վտանգով և գրքի տիտղոսաթերթում երկը ձոնում է հայրենակիցներին. «Իմ աչքի լույս դարաբաղցոց, մեծին ու պուճուրին փեշքեշ¹²»:

Տմբլաչի Խաչանի ասելիքը հրամցվում է առակի, առած-ասացվածքի, դարձվածքի, հանելուկի ձևով, որն արտահայտվում է ոչ միայն իմաստաբանական, լեզվաոճական, այլև հնչյունաբանական ու ձևաբանական առանձնահատկություններով:

Ղարաբաղի բարբառում հարկադրական եղանակն արտահայտվում է երկու ձևով՝ ա. պիտի, բիդի, բեդմա եղանակիչներով (բեդմա խօսիմ), բ. խոնարհվող պիտիմ բայով ու անորոշ դերբայով (թակել պիտիմ, թակել պիտիս), ինչն էլ իր արտահայտությունն է գտել նաև Խաչանի ֆելիետոններում:

¹⁰ **Աճառեան Հ.**, Հայ բարբառագիտություն. Ուրուագիծ եւ դասավորություն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով)//Էմինեան ազգագրական ժողովածու, հատոր Ը, Մոսկուա-Նոր Նախիջեան, 1911, էջ 13-14:

¹¹ **Աճառեան Հ.**, Ուսումնասիրություններ հայկական բարբառախոսութեան (Գ. Քնություն Ղարաբաղի բարբառին)//Արարատ, Վաղարշապատ, 1899, էջ ա, բ:

¹² **Մելիք-Շահնազարեանց Կ.** (Տմբլաչի Խաչան), Զուռնա-Տմբլա, գ. Ա, 1907, էջ 3:

«-Հի բ **պեղում ա** Թիֆլիզի Հայոց թիատրը մին կարգի ընգնի:
- Հիբ վեր օղտին հյաքուն տափին նի կյա»¹³:

«Ղորթ ա, ես էլ շիլ ընգած ընգալ ըմ էս անհամ ընալի տեղը
(տրախտը- Թ.Հ.), ամմա ճարըս հինչ, **բեղմա** տանիմ»¹⁴:

Ժխտական խոնարհման դեպքում օժանդակ բայը և (h) ունչ, (վ) ունչ, վըէչ ժխտական, մըէր, մըէլ, մըէք, միք արգելական մասնիկները դրվում են ետադաս՝ եկիք-կնք վոնչ, քինացե-քինացե վոնչ, մուտա՛ց-մուտա՛նու մըէր (օր.՝ Խաչանի հեռագիրը՝ Բեռլին. Բիսմարկին. «Դինջ կաց, **մուտանալ մըէլ**, ես քու հընգեր չըմ»¹⁵:

Գոյականի հոգնակիակերտ մասնիկներն են՝ էր, նէ, ք՝ (հընգերնէր, հընգերնէ, հընգերունք՝): Հոլովները հինգն են. անորոշ սեռականը կազմվում է ու (սարու), որոշյալը՝ էն, ին (սարէն, սարին) թեքությունով, բացառական, գործիական հոլովներն ունեն համադրական ու վերլուծական կազմություններ (մա րթան, մարթին անա, մարթին նըէստա), օր.՝ «Հանց լանթ ա անում, մարթին **նըէստա** կենում, վըէր մարթին սյասը փորն ա ընգնում»¹⁶:

Ղարաբաղի բարբառում պահպանվել են հին հայերենի անձներական թվականները (երկոքեան-ըրկօքան): Խաչանը ծաղրի է ենթարկում լիբերալ մամուլի, մասնավորապես «Մշակի» հայհոյախոս լեզուն. «Կազեթ կիրողնեն էլ, կըրթըցնողնեն էլ, լիհա **ըրկօքան** էլ մին պենու պետքը չըն, մհենգ հունց վըէր ասըմ ըն, փողին սյասը տմբլիս ծենան շատ զիլ ա»¹⁷:

Տմբլաչի Խաչանի շարադրանքին բնորոշ է հարադիր և կրկնավոր բառերի գործածությունը, օրինակ՝ «ղյաստա-ղյաստա», «ջուռա- ջուռա», «ղինար- ղինար», «ավլան-ավլան», «զիրթը-զիրիլ»,

¹³ Նույն տեղում, գ. Ա, էջ 204:

¹⁴ **Մեղիք-Շահնագարեանց Կ.** (Տմբլաչի Խաչան), Զուռնա-Տմբլա, գ. Բ, 1908, էջ 11:

¹⁵ Նույն տեղում, գ. Ա, 1907, էջ 66:

¹⁶ Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 78:

¹⁷ Նույն տեղում, գ. Ա, 1907, էջ 134:

«սաղ-սալամաթ», «քյասիբ-քյուսուբ», «դուլի-բուլի», «ծիռտի-պիռտի», շոտու -շոտու և այլն:

Ժողովրդական բառաբանի լայնորեն օգտագործումը, դիպուկ դարձվածքները նպաստում են ֆելիետոնների գաղափարական հագեցվածությանը: Ջորջինակ՝ «Էն վաղե կյուշը, էն վաղե փրթուշը»¹⁸, «Աշխարքս տմակ, ուրանք տենակ»¹⁹, «Թան ընգած մօկնը»²⁰, Տիլեր աստուծ, տվեր տու»²¹, «Ճյուրը կակուղ»²², «Ա՛ կոժ, քեզ ասիմ, ա՛ կոլա տու լսի»²³, «Սն եզնը վեր վերընգնի, տնրկավերը կըշըտանա»²⁴ և այլն:

Ղարաբաղի բարբառն ունի երկաստիճան ձայնեղագուրկ բաղաձայնական համակարգ, բառասկզբի դիրքում գրաբարի ձայնեղ պայթականների և կիսաշփականների դիմաց խուլեր են՝ բան-պեն, գործ-կործ, դանակ-տանակ, Գաբրիել- Կափրել (օր.՝ «Հինչ պեն օնիմ կարմունջըմը, վեր պտատվիմ յափընջըմը»)²⁵:

Ղարաբաղի բարբառում բացակայում է ֆ հնչյունը՝ ֆուրգոն-**փուրգոն**: Լեզվաբանները դա բացատրում են Ղարաբաղ-Շամախու միջբարբառախմբի հնչյունական համակարգերին բնորոշ *վ / ի / ու* ենթահնչյութային հարաբերությամբ, որը խիստ փոքրացնում է ձայնեղ *վ* բաղաձայնի խուլ տարբերակի՝ *ֆ* հնչյութի առաջանալու հնարավորությունը. «Այսօր էլ Ղարաբաղի բարբառում նորագույն փոխառությունների *ֆ*-ն հիմնականում փոխարինվում է *վ*-ով՝ կօ՛փե, փըտբօ՛լ, փի՛նանս, ափե՛րիստ»²⁶:

¹⁸ Նույն տեղում, գ. Ա, 1907, էջ 61:

¹⁹ Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 89:

²⁰ Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 113:

²¹ Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 92:

²² Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 169:

²³ Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 141:

²⁴ Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 130:

²⁵ Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 113:

²⁶ Հայերենի բարբառագիտական ատլաս (ուսումնասիրություններ և նյութեր), Պատասխանատու խմբ. բ.գ.թ. Ա. Գալստյան, պրակ 3, Ե., 2010, «Նաիրի», էջ 143:

Արևելահայ գրականում և բարբառներում *վ-ն հաճախ խլանում է՝ ավտոտ-աֆտոտ, հարավ-հարաֆ*, ինչը Ղարաբաղի բարբառների ու խոսվածքների հնչյունաբանության ու ձևաբանության քարտեզագրման հեղինակ Կարո Դավթյանի դիտարկմամբ՝ Ղարաբաղի բարբառում արտահայտվում է ախտօ / ախտա- ձևով՝ ախտօնօ՛բիլ, ախտօ՛բուգ, ախտանօ՛մյա²⁷:

Նույնը կարող ենք ասել Ղարաբաղի բարբառի խոսվածքներում գործածվող օղձ, օխձ (օխց), օխտը, օխտար (օտար) և այլ բառերի մասին, որտեղ բարբառային գուգաբանությունների համար հիմք է ծառայել *աւձ* ձևը, ինչպես *էաւթե*-ի դիմաց *օխտը ձնը*:

«Շարժական կայքս իմ օխտը հսած-փսած ըխճըկերքս ըն»²⁸:

Ղարաբաղի բարբառը հարուստ է քմային գ՛, կ՛, ք՛, հ՛, դ՛, ք՛ բաղաձայն հնչյուններով (օր. գող < կ՛օղ, գա<կ՛ալ, արեգակն< իրիք՛նակ, հայելի < հ՛իլի, անդ<հանդ՛, լու< լ՛ ու, ձու<ծ՛ու, ածելի <ծիլ՛ի) և այլն (օր. «Իրսրհան **հ՛իլի**, տկրհան **ծիլ՛ի**»)²⁹:

Երբեմն երգիծաբանի խոսքը խճողվում է օտար կամ գրաբարյան բառերի և արտահայտությունների ծանրաբեռնումից, օրինակ «Ձոր ինչ փրթեցես և զայն կերիցես»³⁰, «Բոնժուղ, բոնժուղ, մեսմիս, բատոնո, մեսմիս»³¹ և այլն, հանգամանք, որ ժամանակին նկատել է Լեոն՝ խորհուրդ տալով Խաչանին, որ Շուշիից շատ չհեռանա. «Քո աշխարհդ այս է, այստեղ միայն տմբլատ եղած կը լինի...բայց լաի՛ր, տես ինչ եմ ասում: Այն ի՛նչ ֆրանսերեն է, որ դու ես շարում: Թող, ի սեր Աստուծո, այդպիսի բաները: Գրիր իբրև Տմբլաչի Խաչան, իբրև անհասկացող, իբրև անզարգացած մարդ և տե՛ս այն ժամանակ, թե ձայնդ ուր կհասնե»³²:

²⁷ Դավթյան Կ., նշվ. աշխ., էջ 47:

²⁸ Մելիք-Շահնազարեանց Կ. (Տմբլաչի Խաչան), Ձուռնա-Տմբլա, գ. Ա, 1907, էջ 98:

²⁹ Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 211:

³⁰ Նույն տեղում, գ. Բ 1908, էջ 130:

³¹ Նույն տեղում, գ. Բ 1908, էջ 166:

³² Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան, Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, գործ 119:

Ղարաբաղի բարբառը հարուստ է զգալիորեն միմյանցից տարբերվող ենթաբարբառներով ու խոսվածքներով, իսկ ՀՀ օրենքների ու ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային կոնվենցիաների համաձայն՝ բանահյուսությունը, լեզուն, բարբառները, խոսվածքները և այդ ամենի մասին իրավաբանական և ֆիզիկական անձանց մոտ պահվող ողջ տեղեկույթը համարվում է ոչ նյութական մշակութային ժառանգություն և ենթակա է պահպանության³³:

Տմբալի Խաչանի կենցաղային, սոցիալ-քաղաքական երգիծանքը «Զուռնա-Տմբալ» ժողովածուներում

Կ. Մելիք Շահնագարյանի ֆելիետոններում, որոնք թեմատիկ առումով բազմազան են՝ ընտանեկան-կենցաղային, սոցիալական, քաղաքական, Շուշիի կյանքը հրապարակային քննարկման է ենթարկվում արցախահայերի մտավոր ու տնտեսական կյանքի կենտրոն համարվող «Թոփխանա» հրապարակում, որտեղ Ղարաբաղի հնչեղ բարբառով արծարծվում են XIX դարի վերջին քառորդի և XX դարի առաջին տասնամյակների Արցախ պատմագագրական շրջանին և մասնավորապես Շուշիի կյանք ու կենցաղին, ժողովրդի ազգային իդեերին վերաբերող կարևորագույն խնդիրները: Ֆելիետոնները նպատակ ունեն ծիծաղի միջոցով վեր հանել արցախահայերի կյանքում տեղ գտած թերությունները և մատնացույց անել դրանք հաղթահարելու ուղիները:

Այս առումով ուշագրավ է Շուշիի Խանդամիրյան թատրոնը, որտեղ «Օթելլո» են խաղացել Ստեփանոս Սաֆրազյանը, Հովհաննես Աբելյանը, Գևորգ Պետրոսյանը, Կարապետ Գալֆայանը, Վահրամ Փափագյանը:

Կոստանդին Մելիք-Շահնագարյանը Շուշիի սոցիալ-մշակութային կյանքի մասին պատմող իր ֆելիետոններից մեկում բացառիկ սրամտությամբ և դիպաշարային անցումների նրբությամբ է նկարագրում շուշեցի կանանց մեջ Օթելլոյի բեմադրության շուրջը

³³ Հայաստանի Հանրապետության օրենքը ոչ նյութական մշակութային ժառանգության մասին՝ ընդունված 2009 թվականի հոկտեմբերի 7-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից, համարը՝ ՀՕ-187-Ն:

ծագած մեկնաբանությունը³⁴: Ֆելիետոնում շուշեցի Մարյան բաջին «Օթելլոն» դիտելուց հետո հարևանուհու հետ կիսում է իր տպավորությունները. պարզվում է, որ ներկայացման ընթացքում Մարյան բաջին թատրոնից գլխապատահաբար փախուստի է դիմել, որպեսզի ոստիկանությունը հանկարծ իրեն չկանչի վկայություն տալու՝ բեմում տեղի ունեցած մարդասպանության մասին:

« - Մարյան բաջ, ասում ըն երեգ տու էլ ըս քեցալ ծյատր, Օթելլան տըսնալի, դո րթա:

- Վեչ պիտի քեցած, աբուռըս վեր եկավ, բա քանդվի ծեր ծյատրն էլ, կլուբն էլ, ցիրկն էլ: Ախճի մին սյուրու հայասրզեր նի ըն մննրմ ութըղնեն տյուս կյամ, տղըմարթոց նհետ էնքան խալխին ըռաջին սիլի-բիլի անրմ, պոռշտի անրմ, չոքրմ, պցրանրմ, կլվրկոլ անրմ - «տու ինձ կսիրի՞ս Օթելլա»: «Հա՛, կսիրիմ, ինչ չը՛մ սիրելի»: Միրոդն էլ հու՛ ա, մին կիշը կիրող արաբստանցի, բա տու իմ ցավս քաղիս, տու իր մնացալ ըրամակ ընգնիս: Ախրը վերջը սերը էրկուսին կլոխն էլ կերավ, արաբստանցին գիղըմ չըմ հինչու մհար խանչալը կոխից սիրեկանին սերտը, սյաքիթ ըրավ, ուրան վեգն էլ տնակով դիշ-դիշ ըրավ կտրից, եգնու մչանք ջյամդաքը տափին եկավ, խոխոցրավ:

- Ետնա՞ն:

- Ետնան էլ հի՞նչ, պոլիցան եկավ, վեր պրատակոլ շինի, մունք անսես տյուս եկինք, վեր մեզ շհադ (վկա) չի կիրին, տոն եկինք. չրու մհեգ էլ վեր էտ գյոռբագյոռը մետս ա ընգնրմ, սերտս թմփթմփրմ ա:

- Մարյան բաջ, վիսեցած կինիս է՛:

³⁴ Հայրապետյան Թ., Կոստանդին Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան) կյանքն ու գործը, պատասխանատու խմբ. Ա. Ս. Ղազիյան // Հայ ազգագրություն և բանահյուսություն, Ե., 2007, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., հ. 24, էջ 44:

-Բա հինչ ա, արաբստանցուն աչքը տյուս տրաքի, գիդալ պիտի հշտեղ ըն գյոռբագյոռ ընելու, քինի կիրըզմանին երա վննրծեռքիս ճյուր քցի»³⁵:

Տմբլաչի Խաչանը պատկերում է Շուշիի իրական կյանքը, սովորույթներն ու ծիսակակատարությունները բացահայտող բազում հնարանքներ, միննույն երևույթը ամենատարբեր տեսանկյունով մեկնաբանող դիտակետեր: Մի կողմից՝ պարսավանքի են արժանի տգետ տղամարդիկ, որ անպատվում են կնոջը թատրոն գնալու համար, մյուս կողմից՝ ծայրաստիճան զավեշտական է ներկայացում դիտող կնոջ վիճակը, որը տեսածից ոչինչ չի հասկանում³⁶:

1902 թ. հայ բեմի թագուհի Սիրանույշը (Մերովբե Քանթարճյան), դերասան և ռեժիսոր Գևորգ Պետրոսյանի և ամբողջ խմբի մասնակցությամբ, զմայլում է շուշեցի հանդիսատեսին՝ մարմնավորելով վառ հուզականությամբ և կրքով լեցուն այնպիսի հերոսներ, որ շուշեցի հանդիսատեսը իրական է համարում նրա մահը բեմի վրա: «Հայոց թիատրրան» ֆելիետոնում, երբ Հուռին իր սանամորից իմանում է, որ բեմի վրա մահանալուց հետո Սիրանույշը հաջորդ օրը հայտնվել է «կյուրբի հայոց վեչերում», իր ականջներին չի հավատում և երկար գլուխ կտտրելուց հետո եզրակացնում է, որ Սիրանույշը «ստո տեղան ա խօխան քվորը թափշուր ըրալ», բեմում դիտավորյալ հիվանդ ձևացել, նույնիսկ մահացել ու բարեգործների հանգանակած գումարները, նվերները յուրացնելուց հետո փախել: Սիրանույշի մտքին ուրիշ բան կար. Ահա թե ինչու է «աֆիշկաներում» տպած իր անունը բեմի վրա փոխել, որ հենց ժողովուրդը թատրոնից հեռանա, «փողերը տինի ջուբումը, փայտոն նստի, մին պուրի...»³⁷:

³⁵ Մելիք-Շահնազարեանց Կ. (Տմբլաչի Խաչան), Զուռնա-Տմբլա, գ. Բ, 1908, էջ 222:

³⁶ Հայրապետյան Թ., նշվ. աշխ., էջ 44:

³⁷ Մելիք-Շահնազարեանց Կ. (Տմբլաչի Խաչան), Զուռնա-Տմբլա, գ. Բ, 1908, էջ 124-125:

Սիրանուշի փախուստից պակաս զավեշտական չէ տղամարդկանց ու կանանց բարոյականության մասին Հուռու վերջնական եզրահանգումը.

-Վու՛յ, քու աշկերը քուռանայ, ախճի ժընակիս կնանէքն էլ ըն ալլամ-դալլամ տեռալ, լիա էդ խեղճ տղըմարթոց անըմն ա բեդնամ»³⁸:

Իսկ շուշեցի Ջավահիրը Փարիզի ցուցահանդեսից մորը նամակ է ուղարկում հետևյալ բովանդակությամբ. «Ա՛յա, էս Պարիզը շատ զարգացած և լուսավեր քաղաք ա, դե էս արդեն իմ կոխս փոխալ ըմ՝ շլաբա յըմ տինըմ, մինակ մին պեն չըմ հավան կենում, վեր մարդ կարալ չի ուրան սրտեն օգած մի խորագ իփի, մըրթըվարի օտի: Սաղ օրը խաշած ծու ըմ օտում, մին էլ կըրտոփի, վախըմ ըմ թա կերթնուկ, կոխաա, մօկնը, մին էլ անախաթուն տպակին, պիրին տինին ըռաջիս»³⁹:

Շուշեցի քաղթենուհու Փարիզից ստացած տպավորությունները ամբողջանում են նամակի եզրափակիչ տողերում. «Ղորթ ա ըստեղի բազարներըմը մես էլ ըն ծախըմ, ամմա հու՛ ա գիղըմ ստակած էշու մես ա, թա ծիու, աշկընես երա մնաց մեր Շուշվա մին կուլուլակի յա խաղողի տիրևավ դոլմի»⁴⁰:

Տմբլաչի Խաչանի սոցիալական ընկալումների տեսանկյունից ուշագրավ է հարուստների և աղքատների ճաշացուցակը: Շաբաթվա բոլոր օրերին հարուստների համար բժիշկները խորհուրդ են տալիս խիստ հագեցած, անմարս ուտելիքներ, մինչդեռ աղքատների համար՝

«Էրկուշեթի - ցամաք հաց.

Իրեքշեթի - թրջած հաց.

Չուրքշեթի - փիրփեթ.

Հինգըշեթի - փիրփըտաճյուր.

Օրփաթ - հրըվանա փոխ առած հաց.

³⁸ Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 125:

³⁹ Նույն տեղում, գ. Ա, 1907, էջ 155:

⁴⁰ Նույն տեղում, գ. Ա, 1907, էջ 155:

Գլխաբանություն - պաներ հաց՝ թա վեր ինի:

Գլխակի - Ասծու տվածան:

Պրիստավներին ու քյոխվոցը հետի՝ սաղ շափաթը քյուֆթա ու լյուլաքյաբաբ: Շուշըվցուց հետե՝ սաղ տարին վրչխարու թափան»⁴¹:

Արտագուլելով տվյալ ժամանակաշրջանում Շուշիում բնակվող վերնախավի կանանց դատարկ հետաքրքրությունները՝ Տմբլաչի Խաչանը ցավալի փաստի առաջ է կանգնում: Այդ դամանները, որոնց շարքում են Աննա Պետրովիչնան, Ելենա Նիկիտիչնան, Մաղաթելանց պրեկաշիգին կնեգը, ամբողջ օրը զբաղված են փող վատնելով և իրենց շատ առաջադեմ համարելով: Ահա թե ինչ է պատմում Աննա Պետրովիչնան այն պրոֆեսորի մասին, որը ախտորոշել է իր հիվանդությունը. «Էդ դոխտուրը հալալ կես սհաթ շոտու-շոտու ըրավ, սրտաս, մեչքաս անգուճ տիրավ, հրցրփորձ ըրավ, ասից վասպալեննի յախչնիցա ա, մին էլ ներվեննի ազար»⁴²:

Ընտանեկան-կենցաղային ֆելիետոնների այս շարքը ամբողջանում է Տմբլաչի Խաչանի դեպի երկինք հղած հեռագրով՝ լուսնին ու արեգակին. «Նհախ տեղան ըք լյուս տամ, մեր ըխճկերքն էլ ըն լյուսավեր, մեր կրնանեքն էլ, մեզ լյուս չի պետք»⁴³:

Տմբլաչի Խաչանի քաղաքական սատիրան անխնա մերկացնում է ցարական Ռուսաստանի անփառունակ խաղերը, որն իր դիվային ուժերը նորից գործի է դնում՝ բորբոքելու հայ-ադրբեջանական ընդհարումներ. «Բյուրոկրատ դային մեր կրոքընեն լյավ հրմբրբելան ետը դազախներին ան թուրքերին մեր ջանին ըրավ... սաղ Կավկազը ուրուրոցավ ընգավ, ըրնավ, ըրտըսունքավ շղաղվից ու չրու սօր էտ շնրհաչուցը, էտ արյուն-ըրտասունքը կտրվրմ չի, վրչանըմ չի»⁴⁴:

Տմբլաչի Խաչանի «Մեր ցավերան» ֆելիետոնից տեղեկանում ենք, որ Շուշին շրջափակման մեջ է. «Չյուն տյուս եկողը յա

⁴¹ Նույն տեղում, գ. Ա, 1907, էջ 66 :

⁴² Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 75:

⁴³ Նույն տեղում, գ. Ա, 1907, էջ 66 :

⁴⁴ Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 225:

վեննավ-ծեռքավ ա կորչում, յա ճնրպարին պլոկվում, յարավամիշ ինում, յա չէ սպանվում ու եսիր ընգնում մեր քիրվաներին ծերքը, վրեր քանե հարուր տարի կողք կողքի ըպրելավ, կյոդութունա, մարթասպանութունա գատ՝ մրեգ օրիշ մարիփաթ չի նշանց տվալ»⁴⁵:

Խաչանի աչքից չէր կարող վրիպել այն հանգամանքը, որ Եվրոպայի մեծ տերությունները Հայկական հարցը ծառայեցնում են իրենց շահերին. «Վեշ մին Եվրոպու լյուսավեր սոցիալիստ հային դարդին դարման չիլավ»⁴⁶, իսկ ցարական Ռուսաստանն էլ երկդեմի քաղաքականություն է վարում. «Թորքերը հային կտորում ին, շեները կրակ տամ, էս ռուսնեն էլ հայերին ասում ըն, թուրքերի նրհետ կեցցե՜ պարիկամօթուն կընչեցիք: Բոլա, հերիք ա, հինչքան աբուռնես չոլը ընկավ, Աստծու սերին, մեր խաչն ու խաչվառին պատիվը վննատակ մեք տալ...»⁴⁷:

Ուշագրավ է Կ. Մելիք Շահնագարյանի՝ Ղարաբաղի բարբառով հղած կոչ-պատգամը իր հայրենակիցներին, որի բովանդակությունն այսօր ավելի քան արդիական է.

«Թորքը վեր կա, իրսըհան հիլի ա, տկըհան ծիլի: Էլ օգում չըմ ըրգընցնիմ, իմ աշկի լյուս, ըշխարքավս մին փոված, նամուս-ղեյրաթավ դարաբաղցիք: Իմ հույսս ծեգ երա ա, ծեր աբուռը օլմիա թա չոլը քցիք, դուդի-բուդի պեներու հետա կենաք, ծեր վաթանը մուռանաք, ծեր վառ ուջաղին երա ճյուր ածիք, Ղարաբաղին անումը կոտրիք:

Ծեր պարի կուրծերին երա աշկը թիքմիշ ըրած՝ Տմբլաչի Խաչան»⁴⁸:

⁴⁵ Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 215:

⁴⁶ Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 240:

⁴⁷ Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 220:

⁴⁸ Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 241:

«Զուռնա-Տմբլայի» գաղափարագեղագիտական միասնությունը

Տմբլայի Խաչանը Կ. Մելիք-Շահնագարյանի խոսակող-հերոսն է:

Խաչանի՝ Տմբլայի մականունը նախ նրա զբաղմունքն է մատնանշում, ապա բանահյուսական բնավորությունը:

Ֆելիետոններում Զուռնա-Տմբլայի ընտրությունը բացատրվում է ոչ թե պատահական շարժառիթներով, այլ մեր ժողովրդի երաժշտակատարողական մտածողության յուրահատկությամբ, այդ նվագարանների ավանդական գործառույթներով և խորհրդանշական ընկալումներով:

«Ինչպես Հայաստանի այլ ազգագրական շրջաններում, Արցախում ևս ժողովրդական նվագողներին վերագրվում է արտակարգ խելք, խորաթափանցություն, գուշակելու ունակություն և իրենց «փեշակը», վարպետությունն ու երկացանկը սերնդեսերունդ և ժառանգաբար փոխանցելու պարտավորություն: Խաչանի մտահոգությունը խոր արմատներ ունի և արժեքավորվում է ավանդույթների պահպանման տեսանկյունից: Ավանդույթը ժողովրդական նվագողների մտավոր հասունությունն ու խորամտությունը ստուգում է հանելուկներ առաջադրելով, նրանց վերագրում է անսպառ հումոր, ազատախոհություն, տարամիտվող կարծիքների բախման ոլորտներում, վեճ-մրցույթներում՝ մշտական հաղթանակ»⁴⁹:

Տմբլայի Խաչանը ընթերցողին հաճախ է հանելուկ առաջարկում (Ղարաբաղի բարբառով՝ պընգըլ) որը կազմված է երկու բաղադրիչից՝ բանաձևից և լուծման առարկայից: Խաչանը հանելուկը գուշակողին խոստանում է նվիրել իր համար ամենաթանկ բանը՝ տմբլայի փայտիկները:

Մին պընգըլը. - Էն հու՞ ա մեչտեղ օտըմ ա, դրաղ շոռ կյամ, դրաղ օտըմ, մեչտեղ շոռ կյամ:

⁴⁹ Հայրապետյան Թ., նշվ. աշխ., էջ 59:

(Հու վեր քթնի, տմբլիս կուպլնեն ուրան փեշքեշ)⁵⁰:

Այնքան մեծ է Խաչանի ակնածանքը Ջուռնա-Տմբլայի նկատմամբ, որ բազում սրբություններ մի կողմ թողած, Խաչանը երդվում է նրանց անունով. «Ջուռնա-Տմբլիս արևավը ուրթումնըմ օտրմ...»⁵¹:

Խաչանը գուսան է, գուռնաչի, տմբլաչի, մունետիկ, ազդարար: Ըստ այդմ՝ Ջուռնան ու Տմբլան Խաչանի ստեղծագործությունների պատկերավորման հիմնական միջոցներն են: Ամեն ինչ երգիծվում կամ արժեքավորվում է Խաչանի տեսանկյունից: Հենց այս մեկնակետից է կարևորվում մարդկային առօրեական թվացող կապերն ու բախումները բարոյական մեծ հիմնախնդիրների ելակետից դիտելու հեղինակի համարձակությունը:

Եզրակացություն

Գևորգյան հոգևոր ճեմարանը շուրջ հինգ տասնյակ գրող ու գրականագետ է տվել հայ գրականությանը, որոնց շարքում իր ուրույն տեղն ունի XIX դարավերջի և XX դարի առաջին տասնամյակների հայ մշակույթի աչքի ընկնող գործիչներից մեկը՝ Կոստանդին Մելիք-Շահնազարյանը:

Ֆրանսիայում մասնագիտական կրթություն ստացած, հայտնի գյուղատնտես Կ. Մելիք Շահնազարյանը քառասուն տարիների ընթացքում լույս է ընծայել բազմաթիվ տեսական-մասնագիտական գրքեր՝ «Ուղեցույց գործնական գինեգործության»⁵², «Բուսական աշխարհից. մշակված և անմշակ ծառի կյանքը, տարրական այգեգործություն»⁵³, «Օխախոտը և իր վնասները»⁵⁴, «Վազի մշակու-

⁵⁰ **Մելիք-Շահնազարեանց Կ.** (Տմբլաչի Խաչան), Ջուռնա-Տմբլա, գ. Ա, 1907, էջ 48 :

⁵¹ Նույն տեղում, գ. Բ, 1908, էջ 111:

⁵² **Մելիք-Շահնազարեանց Կ.**, Ուղեցույց գործնական գինեգործութեան, Թիֆլիս, 1885, տպ. Մովսես Վարդանեանց, 91 էջ:

⁵³ **Մելիք-Շահնազարեանց Կ.** Բուսական աշխարհից. մշակուած և անմշակ ծառի կեանքը, տարրական այգեգործութիւն, Թիֆլիս 1885, «Արիւր» ամսագրի հրատ., 49 էջ:

թյունը»⁵⁵, «Գործնական ձեռնարկ արևի տակ պտուղներ չորացնելու»⁵⁶ և այլն, մշակել է հայերեն լեզվով գյուղատնտեսական տերմինների, տեխնիկական հասկացությունների հարուստ բառապաշար, կազմել բարբառային բառերի բացատրական բառարան:

Հրաշալի տիրապետելով գրական արևելահայերենին, գրաբարին, ֆրանսերեն, գերմաներեն լեզուներին՝ նա իր գյուղատնտեսական աշխատանքներին զուգահեռ ֆելիետոններ է գրել Ղարաբաղի բարբառով՝ ժողովրդական խոսքի ողջ հմայքն ու լեզվառճական առանձնահատկությունները փոխանցելով սերունդներին:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունը, պաշտպանությունն ու հանրահռչակումը Հայաստանի Հանրապետության մշակութային պետական քաղաքականության հիմնական ուղղություններից է, որի համաձայն՝ հանրության, խմբերի, որոշ դեպքերում առանձին անձանց կողմից որպես իրենց մշակութային ժառանգության մաս ճանաչված, կենցաղում հաստատուն տեղ զբաղեցնող բանահյուսության, լեզվի, բարբառների, ավանդույթների պահպանությունն ու հանրահռչակումը խիստ կարևոր է այդ մշակույթը կրողների կյանքում, մանավանդ երբ այդ ամենին վտանգ է սպառնում պատերազմների և անընդհատ փոփոխվող աշխարհի մարտահրավերներում:

⁵⁴ **Մելիք-Շահնազարեանց Կ.** Ծխախոտը և իր վնասները, Շուշի, 1888, տպ. Հայոց հոգևոր տեսչութեան, 50 էջ:

⁵⁵ **Մելիք-Շահնազարեանց Կ.** Վազի մշակութիւնը, Թիֆլիս, 1902, տպ. Մ. Արամեանցի, 206 էջ:

⁵⁶ **Մելիք-Շահնազարեանց Կ.** Գործնական ձեռնարկ արևի տակ պտուղներ չորացնելու, Երևան, 1929, «Այգիս կոոպի» հրատ., 22 էջ:

РЕЗЮМЕ
Карабахский диалект в фельетонах К. Мелик-Шахназаряна
(Тмблаци Хачан)
Айрапетян Тамар

Целью статьи является исследование двухтомной серии фельетонов «Зурна-Тмбла», написанных Меликом Шахназаряном (литературное прозвище Тмблаци Хачан) на карабахском диалекте для изучения художественных способов отражения политических, социальных и бытовых тем арцахского историко-этнографического региона, в частности, знаменитой Шушинской площади «Топхана». Аллегии Зурна-Тмбла, а также фонологические и морфологические особенности языка фельетонов исследованы в рамках статьи

Язык фельетонов Тмблаци Хачана это не диалект какой-либо отдельной провинции Карабаха, а коллективный перемалывание провинциальных говоров, который использовался в 70-80-х годах XIX века в городе Шуши.

Язык фельетонов Тмблаци Хачана – это не диалект какой-либо отдельной провинции Карабаха, а полировка провинциальных слов, которая практиковалась в 70-х и 80-х годах XIX века в городе Шуши.

Теоретико-методологические принципы, принятые в современной армянской фольклористике и языкознании, послужили основой для выявления рассматриваемых проблем. Были выделены задачи, вытекающие из цели статьи, с точки зрения общественной памяти и геополитических приоритетов времени.

Актуальность темы обусловлена актуальностью описываемых и представленных материалов, событий связанных с современной действительностью и возрастающим интересом профессиональных кругов к теме исследования.

Ключевые слова: Тмблаци Хачан, Зурна-Тмбла, Карабах, Шуши, диалектная карта, фельетон, фольклор.

SUMMARY

Karabagh dialect in K. Melik-Shahnazaryan's (Tmblachi Khachan) feuilletons Hayrapetyan Tamar

The aim of the article is to research the two-volume series of "Zurna-Tmbla" feuilletons written by Melik Shahnazaryan (literary nickname Tmblachi Khachan) in the Karabakh dialect for the examination of the artistic modes of reflecting the political, social and everyday topics of the Artsakh historical-ethnographic region, particularly of Shushi's famous "Topkhana" square. The allegory of Zurna-Tmbla, as well as phonological and morphological features of the language of the feuilletons have been examined.

The language of Tmblachi Khachan's feuilletons is not the dialect of any individual province of Karabakh, but the collective grinding of provincial dialects, which was used in the 70-80s of the XIX century in the city of Shushi.

The theoretical-methodological principles accepted in modern Armenian Folkloristics and Linguistics served as the basis for the identification of the problems under examination.

Objectives arising from the aim of the topic were highlighted in terms of public memory and the geopolitical priorities of the time.

The topicality of the research is connected with the relevance of the described and presented material, the connection of events to our times and the growing interest of professional circles towards the topic of the research.

Key words: Tmblachi Khachan, Zurna-Tmbla, Karabakh, Shushi, dialect map, feuilleton, folklore.

ԱՐՑԱԽՆ ՏԵՂԱՆՎԱՆ ՇՈՒՐՁ

Հովհաննիսյան Լավրենտի
ԳԱԱ լեզվի ինստիտուտ
գլխավոր գիտաշխատող

Բանալի բառեր. Արցախ, բարբառ, բառատարբերակ, գրաբար, ժողովուրդ, ցեղ, բառաքնություն, ստուգաբանություն:

Տեղանվան գործածության հաճախականության շուրջ

Արցախ//Արձախ տեղանունը վկայված է 5-րդ դարից: Փավստոս Բուզանդի «Պատմություն»-ում միայն Արձախ բառագրությունն է. « ապաստմբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արձախայ»: «Յաղագս Արձխեայ»¹:

Եղիշեի գրքում վկայված է **Արցախ** և **Արձախ**. «Սոյնպէս առնէր... ի Տնորիսն և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանն», «... ոմանք յայնլոյս երկիրն Խաղտեաց... և կէսքն ի թանձրախիտ մայրիսն Արձախոյ»²:

«Աշխարհացոյց»-ում միայն **Արցախ** գրությունն է: «Արցախ նահանգ – Մեծ Հայքի տասներորդ նահանգը. 11.528 քառ.կմ տարածքով»³:

Ս. Կաղանկատվացու աշխատության տեղանունների ցանկում դարձյալ **Արցախ** է (17 վկայություն):

Եզրակացություն. հայ մատենագրության, պատմա-աշխարհագրական աղբյուրներում հաճախադեպ է **Արցախ** բառագրությունը, այլ հարց է, թե նախապես որն է գործառել:

¹ Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ե, 1987, 246, 278:

² Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ե, 1957, 94,125:

³ **Երեմյան Ս.** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե, 1963, 41:

Արցախ//Արձախ տեղանվան ստուգաբանության շուրջ

Տեղանունները սովորաբար ծագում են պատմական որևէ իրադարձության, անձի, ժողովուրդի, տվյալ վայրի բնորոշ առանձնահատկությունների, որևէ իրողության յուրովի ընկալման և այլ գործոնների շնորհիվ: Հին տեղանունների իսկությունը բացահայտելուն խոչընդոտում են մի շարք հանգամանքներ.

ա) տեղանվան բաղադրիչների կամ որևէ բաղադրիչի ծագման կամ իմաստի անհաստատություն.

բ) տարբեր վայրերում նույն տեղանվան առկայություն

գ) նույն տեղանվան տարբեր բառազրություն

դ) հայերեն կամ օտար լեզվի հնչյունդարձություն, տառադարձություն

Արցախ//Արձախ տեղանվան ծագման և ստուգաբանության վերաբերյալ կան մի շարք դիտարկումներ, ստուգաբանական փորձեր:⁴ Հիմնականում ենթադրվում է ուրարտական ծագում:

Գ. Ղափանցյանը, նկատելով, որ Հայաստանի մի շարք տեղանուններ՝ Արցախ//Արձախ, Արդախ, Էրախ, Կամախ... բառավերջում ունեն -ախ ձևույթը, ենթադրում է, որ հիշյալ տեղանունները ծագել են սուբարտ-ուրարտական լեզվաշխարհից⁵:

Հ. Կարազյոզյանը **Արձախ** տեղանունը առնչում է ուրարտական **Արդախու** տեղանվան հետ. «Արդախ հիշատակվում է Սարդուր Բ.-ի կողմից: Արդախու ցեղը բնակվել է Սևանա լճի հարավարևելյան ափերի մոտակայքում, իսկ Արդախ բնակավայրը գտնվել է Արցախի Խաչեն գավառում... կատարվել է *բնական տեղափոխություն կամ վերաբնակեցում*, հենց Բիաինելիի արքաների ձեռքով (ընդգծումը մերն է-Լ.Հ.):⁶»

⁴ Տես **Մարգարյան Լ.**, «Արցախ» և «Ղարաբաղ» տեղանունների ստուգաբանության շուրջ.- Բանբեր Մատենադարանի, 2020, 349-361:

⁵ **Капанцян Гр.**, Историко-лингвистические работы, Е. 1956, 435-436.

⁶ **Կարազյոզյան Հ.**, Մեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), Ե., 1998, 160: Առարկելի ենք համարում ուրարտական ցեղերի վերաբնակեցման դրույթը: Ռումինիայում հայտնաբերվել է հին

Կա նաև **Արձախ** բառի ստուգաբանության այլ վարկած: Ս.Երեմյանը գրում է, որ մեր թվարկությունից առաջ Կովկասի և Դաղստանի նախորդները դեռ գտնվում էին Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասերում, նրանց մի մասը ձուլվեց հայ ժողովրդի հետ, մյուս մասը շարժվեց դեպի նրանց այժմյան բնակության վայրը: Կովկասի ավարները իրենց կոչում են **խունձք**: «Բոլորովին պատահական չպետք է թվա, որ այժմյան ավարների կենտրոնի **Խունձախ** անվանումը իր զուգահեռն է գտնում (Արցախ Արձախ Արծախ) անվան մեջ և պատահական չէ, որ Արցախի տերիտորիայում այժմ էլ գոյություն ունի բնակավայր, որը կոչվում է **Խանսաձախ**, որ **Խունձախի** զուգահեռությունը պիտի լինի»⁷:

Հայերի ու ավարների ազգակցական կապի, **Խունձախ** տեղանվան մասին գրում է նաև Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը. «Դաղստանում աւանդութիւն կա, որպէս թէ իրենց առաջին նահապետ Կովկասն եղած է Հաբեթի ցեղից և Հայկ նահապետի եղբայրն է»: Ավարների **Ճոխ** գյուղի մոտակայքում նա տեսնում է քրիստոնյա եկեղեցու ավերակ և քրիստոնեական ձևով ամփոփված հանգստարաններ, գյուղի կերակուրները նման են հայոց կերակուրներին»: Ճորոխցի մի գյուղացի ասում է. « մեր նախնի պապերն աւանդած են որդւոց որդի, թէ հայ եղած են, արիւնիցս է Ձեր արիւնն»⁸:

Կարծում ենք՝ հայերի և Դաղստանի ազգակցական, լեզվական առնչությունները առասպելներ չեն: Հայաստանի և Դաղստանի (հատկապես ավարների) ազգագրության, պատմության, լեզվի նաև մարդաբանական տվյալների զուգադրական քննությամբ կրահայտվեն նոր իրողություններ:

պարսկերենով արձանագրություն, սակայն այդ տարածքի բնակիչները պարսիկներ կամ պարսկախոսներ չէին:

⁷ **Երեմյան Ս.**, Մառը և 7-րդ դարի հայոց «Աշխարհացոյց»-ը.- Մառը եվ հայագիտության հարցերը, Ե. 1968,80:

⁸ **Մակար եպ. Բարխուդարեանց**, Աղունից երկիր եւ դրացիք. Արցախ, Ե., 1999, էջ 22,29:

THE DIALECT OF THE ARMENIAN VILLAGE OF KARABAGLY IN DAGESTAN

Katherine Hodgson
University of Cambridge
keh64@cam.ac.uk

Հոջսոն Քեթրին, Դաղստանի Ղարաբաղլի գյուղի խոսվածքը.–

Ղարաբաղլի գյուղը Դաղստանի միակ բնակավայրն է, որտեղ հայերը դեռևս կազմում են բնակչության զգալի մասը: Ղարաբաղլիի հայերը դեռևս խոսում են հայերեն: Մինչ այժմ տեղեկություններ չկային այս գյուղում գործառվող հայերենի մասին, սակայն Verhees-ի (2021) հավաքած կարճատև ձայնագրությունների շնորհիվ հնարավոր է նախնական եզրակացություններ անել այս խոսվածքի վերաբերյալ: Այն բազմաթիվ ընդհանրություններ ունի Ղարաբաղլի և հատկապես Շամախիի բարբառների հետ, բայց ունի նաև այդ երկու բարբառներից տարբերվող հատկանիշներ, որոնց զգալի մասը բնորոշ է պարսկահայ բարբառներին: Ղարաբաղլիի խոսվածքը ցույց է տալիս նաև ռուսերենի խիստ ազդեցությունը, որը տարածվում է նույնիսկ գործառույթային տարրերի փոխառության վրա (*և* շաղկապի փոխարեն ռուսերենի *и* շաղկապ): Բարբառի հատկանիշները համապատասխանում են պատմական վավերագրերին, որոնք վկայում են, որ հայերը Դաղստան են եկել Ղարաբաղից, Դերբենդից, Մուշկուրից և Պարսկաստանից:

Karabagly (Russian Карабаглы, Armenian Ղարաբաղլի) is the only settlement in Dagestan where Armenians still make up a significant portion of the population. The Armenians of Karabagly still speak Armenian. Until now, no information has been available about the form of Armenian spoken in this village, but thanks to some short recordings collected by Verhees (2021), it is possible to draw some preliminary conclusions about this dialect, namely that it has many features in common with Karabagh and especially Shamakhi dialects, but is not identical to either, also containing dialect features found in Iran. It also

shows strong Russian influence that even extends to borrowing of functional elements (the conjunction *i* ‘and’). The form of the dialect is consistent with historical records showing multiple migrations of Armenians to the area from Karabagh, Derbent, Mushkur, and Persia.

The name of the village has been said to reflect the fact that it was founded by Armenians from Karabagh (Artsakh), though Verhees (2021: 7) was informed by some of the current inhabitants that the name (meaning ‘black garden’) in fact refers to the village’s vineyards. Officially, the village was founded in 1797 by Armenians from Mushkur and Derbent provinces. In this year, Derbent had been conquered from the Persians by General Zubov’s Russian forces, but Tsar Pavel I had ordered that these forces be withdrawn (Derbent was not finally taken by the Russians until 1813). The local Armenians had provided help to the Russians, and, fearing revenge from the local Muslim population, asked the Russians to provide them with a safe place to live on Russian territory. They were brought to Dagestan and settled there, near the fortress of Kizlyar, in what is now the village of Karabagly. However, in the area around this fortress there were already settlements of refugees from the Russo-Persian conflict, including the Armentir settlement of Armenians from Karabagh. In the 1780s, the Russian government had granted the Armenians of Armentir land to settle in, which became the village of Karabagly. Verhees (2021) also cites Volkova (1974: 193-211), who states that these Armenians from Karabagh followed prior migrations to the North Caucasus from Persia. Thus it appears that the village was founded in several phases, by Armenians from different areas (Karabagh, Derbent, Mushkur, possibly also Persia).

The Armenians of Muskhur and Derbent were Armeno-Tats, speaking an Iranian language similar to Persian (CaucasianTat). These Armenians had switched languages to Persian in the medieval period, but continued to be members of the Armenian Apostolic Church. Their ancestors were Armenian military settlers sent by the Sassanids in the VIth century, together with Persian settlers, to north-eastern Transcaucasia and southern Dagestan (Derbent, Muskhur etc.) to protect

their northern borders (see e.g. Hakobyan 2009). According to Hakobyan (2009), the Armenians of Karabagly originated from this community, and would have been Tat-speaking rather than Armenian-speaking when they arrived in Dagestan. However, note that although the Armeno-Tats of Mushkur (Khachmaz) had apparently switched to Azerbaijani by the time they were expelled in 1918 (Wikipedia *Armeno-Tats*), the Mushkur area is included in the Shamakhi dialect-speaking area on Acharyan's Armenian dialect map of 1909, so it is possible that at the time of migration, this dialect was still spoken there (Baghramyan 1964 notes that some Armeno-Tats spoke Shamakhi dialect as well as Tat, although by the time of his writing, the dialect area was much smaller than that shown on Acharyan's map, and did not include Muskhur).

Hakobyan (2009) notes that the Armeno-Tats of Karabagly quickly became assimilated into the Armenian world, i.e. they lost their Tat language and became Armenian-speaking. This would make sense if they already spoke Armenian when they arrived and/or if there was already an Armenian-speaking population living there. A school was opened in the village in 1929, and the teaching was conducted in Armenian until 1937, with Russian as a subject. From 1988-1990, there were what Hakobyan (2006) describes as tendencies towards a national revival. The Armenian language was taught in school again, with books sent from Armenia, and some families emigrated from Armenia and settled there. However, Armenian language lessons were later discontinued due to the small number of Armenian-speaking students (only 2 or 3 in the primary classes at the time of Hakobyan's visit); Hakobyan (2006) states that many Armenians had recently left the village for economic reasons, and also due to demographic changes: in 1926 the population consisted of 628 Armenians and 4 Russians, but in 2010 there were 304 Armenians, 275 Dargis, 59 Russians, and 64 Other (Verhees 2021: 5). According to Verhees (2021: 10), most now cannot read or write Armenian, though some write in Armenian using the Cyrillic alphabet on social media. Some can understand literary

Armenian, but some have difficulty understanding it. Everyone seemed to understand the village dialect, even people who came from other parts of Russia for a festival, but not all the latter spoke it (when these people came, they mostly communicated in Russian). Everyone in the village (even non-Armenians) can speak some Armenian. At least some Armenians speak Daghestani languages such as Dargwa with their neighbours (Verhees 2021).

Neither Hakobyan (2006, 2009) nor Verhees (2021) give details of the form of Armenian spoken by the Armenians of Karabagly. Verhees (2021: 11), who does not speak Armenian, was informed that a linguist had stated that the dialect was closer to literary Armenian than the dialect of Karabagh or other dialects spoken in Russia, and Hakobyan implies that the population speak literary Eastern Armenian, which is what we would expect if they were originally Tat-speakers who had learnt Armenian at school. However, Verhees, who visited the village in 2021, recorded three short anecdotes recounted in Armenian and Russian by a woman born in 1960 (total length approximately 5 minutes), which are available online at https://github.com/sverhees/site/tree/master/talks/202105_Karabagly. These recordings are clearly not literary Eastern Armenian, and show various dialect features that allow us to make some proposals about the probable origin of the Armenians of Karabagly.

Devoicing of voiced stops and affricates in initial position:

- (1) *unnıu pı'lyıul*
tus ən kam
 out be.3PL.PRES come.IPT
 'they come out'
 Compare SEA *durs en galis*.
- (2) *ıyulı sh lıu*

¹ The vowel of the 3PL auxiliary is noted here as ə(əɛ, as in Karabagh dialect), but in other instances in the texts, we find en (as in SEA).

pan č'i ka

thing NEG exist.3SG.PRS

'there's nothing'

Compare SEA *ban* 'thing'

(3) *δnii l-rii*

cuk-u

'fish-DEF'

Compare SEA *dzuk-ə*

(4) *δniŋ-rii*

čür-ü

'water-GEN'

Compare SEA *jur* 'water'

Presence of *ü* (see example (4)).

Form of imperfective participle with ending *-əm* (*-am* for *a*-conjugation verbs):

(5) *wu-pu' w*

as-ə m a

say-IPT be.3SG.PRS

'(s)he says'

(6) *unnu pu' l-uu'*

tus ən k-am

out be.3PL.PRES come-IPT

'they come out'

3SG present auxiliary *a*

See example (5) etc.

Definite article on locative case:

(7) *pouunwü-pu'-ŋ*

bostan-ə m-ə
vegetable.garden-LOC-DEF
'in the vegetable garden'

Conjunction *na* 'and':²

(8) Մլավիկի նա Լյուդիկ-ը
Slavik na Lyudik-ə
Slavik and Lyudik-DEF
'Slavik and Lyudik'

Some other dialect word forms:

ճօր čür 'water' (SEA *jur*)
սէջի մե՛՛ն meč'in (SEA *mej*)
կռնել կա՛րե՛ն fight' (SEA *kəřiv*)
սիր- տիր- 'put (verb stem)' (SEA *dən-, dər-*)

All these characteristics are found in both Karabagh and Shamakhi dialects.

These texts also show vowel harmony:

Definite article:

(9) *ծուկ-ն*
cuk-u
'fish-DEF'
(10) *կուկուռուկ-ն*
kukuřuz-u

² It is possible that what we actually have is Slavik-n = Slavik-DEF with conjunction a, but there is a tendency in these texts to omit the definite article (see example 21), and a conjunction *na* 'and' is attested in several Armenian dialects, including Karabagh and Shamakhi, while, as far as we are aware, a with the meaning 'and' is not.

- (11) 'maize-DEF'
hwg-ɹ
Hac'ə
 bread-DEF

Imperfective participle:

- (12) *ʉɹuun-ɹʉʉ w ɥ ɭwɔ w ɥɭ-ɥ' ɹ'*
nəst-ə m a i lac' a ɪl-ɪm
 sit-IPT be.3SG.PRS and cry-PV be.3SG.PRS be.IPT
 'he sits and cries'

- (13) *ɥwɥʉ-ɥʉʉ w ɥ wu-ɹʉʉ w*
kayn-ɪm a i as-ə m a
 stand-IPT be.3SG.PRS and say.IPT be.3SG.PRS
 'she stands and says'

Unfortunately, there are not enough examples in the short texts to give a full picture of the system, but it appears that the epenthetic vowel is realised as ə following a (or ə), as u after u, and as i or i (the quality is variable) after i or a diphthong ending in y.

It also appears that the genitive ending -u has an alternative -ü after front vowels (at least after ü):

- (14) *ɹniɹ-ni ʉɭɥɥʉ*
čür-ü meč'in
 water-GEN in
 'in the water'

Vowel harmony is found in Shamakhi and Hadrut dialects, but not in most forms of Karabagh dialect. The fact that the imperfective participle ends in -m, rather than -s (as well as some other features), however, shows that we are not dealing with Hadrut dialect.

These texts also show some other features that are found in Shamakhi dialect, but are not typical of Karabagh:

The verb ‘to be’ has the form *hɫɫ ilel* (Karabagh *in-/ən-*, SEA *line*).

Adjective/adverb *ηηη dip* ‘whole/wholly’ (Karabagh generally uses *lox*).

Δnip čür ‘water’ gen. *Δnip-ni čür-ü* (Karabagh generally has *čü rgen. čir-i*).

The features that follow are shared with SEA as well as Shamakhi, but produce distinctive dialect forms not found in SEA:

Stress on final syllable, as opposed to penultimate in Karabagh, and total absence of pre-stress vowel neutralization characteristic of Karabagh dialect, as seen in the dialect form *unnounuúu arótana* ‘(early) in the morning’ as opposed to Karabagh *arút’ána*.

Instrumental in *-ov* (vs. Karabagh *-av*):

- (15) *ɫug hɫɫ-ol*
Lac’ ilel-ov
cry.PV be.INF-ins
‘(while) crying’

However, we also find a few features characteristic of Karabagh dialect that are not found in Shamakhi dialect as described by Baghramyan (1964):

P replacing *f* in loanwords: *pɫɫ k’ep* vs. Shamakhi, SEA *k’ef*

Present auxiliary (except 3sg.) appears with vowel *ə*, e.g. 3pl. *ɫú ən* (vs. Shamakhi *an*, SEA *en*):

- (16) *unnu ɫú ɫuul*

tus ən kam

out be.3PL.PRES come.IPT

'they come out'

Imperative in *-e*: *կըտր-է կətr-e* 'cut (imp. sg.)' vs. Shamakhi, colloquial EA *kətr-i* (literary *ktr-ir*).

The latter characteristic is also found in some Armenian dialects spoken in Iran, including villages in the area of Shamakhi settled from Iran (Baghramyan 1964: 129-130).

Other characteristics shared with dialects spoken in Iran, but which are apparently not attested in Karabagh or Shamakhi, are the following:

Indefinite article *մէ me*, including with Persian 'classifier' *մէ դանա me dana* 'one (piece)':

- (17) *մէ դանա պան չի կա*
me dana pan č'i ka
one piece thing NEG exist.3SG.PRS
'there's nothing'

Past participle ending *-el* (vs. Karabagh and Shamakhi *-al*), which has the form *-e* when it follows the auxiliary:

- (18) *Լազան-ը տիր-ել ա արջեղ-ի-ն*
Lagan-ə tir-el a arč'ev-i-n
basin-DEF put-PPT be.3SG.PRS in.front-DAT-DEF
'She put the basin in front of him'

- (19) *Ի՞նչ ա իլ-ե?*
Inč' a il-e?

What be.3SG.PRS be.PPT

'What's happened?'

Ending *-en* of words ending in *-a* + definite article:

բախչաւ ԲԱՃ՛Ա՛ ‘garden’ + DEF = *բախչաւ-ԷՆ ԲԱՃ՛Ա՛-ԵՆ*

մամա մԱՄԱ՛ ‘mum’ + DEF = *մամա-ԷՆ մԱՄԱ՛-ԵՆ*

These last two characteristics are also found in colloquial Eastern Armenian spoken in Armenia, but since contact with Armenia and Armenian media is apparently limited (Verhees 2021), it seems unlikely that we would find influence strong enough to affect such grammatical phenomena. Since we know that there was emigration of Armenians from Iran to the Northern Caucasus, it is more probable that the dialects spoken by these individuals are the source of these features.

There is some evidence of influence from SEA, perhaps through the medium of education, although, as stated above, there is no Armenian education in Karabagly at the present time: the form *kalis* ‘come.IPT’ (SEA *galis*) is sometimes used instead of dialect *kam*, and the lack of palatalization in the latter (compare Karabagh and Shamakhi *k’äm*) may also be due to SEA influence, although apparently such forms are found in some Karabagh subdialects (A. Sargsyan, p.c.).

There is also influence from Russian, mainly on vocabulary, most strikingly including the use of *i* as a conjunction meaning ‘and’, to our knowledge otherwise unknown in Armenian:

- (20) *նստ-ըմ ա ի լաց ա իլ-ի՛ւմ*
nəst-əmə a i lac’ a il-īm
sit-IPT be.3SG.PRS and cry-PV be.3SG.PRS be.IPT
‘he sits and cries’

There are also examples where the definite article seems to be omitted (see also example 8):

- (21) *Կամ ա Սէրգէյ թէփ-ից տունն*
Kam a Sergey k'ep'-ic'tun
 Come-IPT be.3SG.PRS Sergey party-ABL home
 'Sergey comes home from a party'

In Karabagh, Shamakhi, and SEA, we would expect the definite article on the proper name *Sergey*. Its absence is possibly due to Russian influence (Russian does not have articles), although there are some Armenian dialects, e.g. Agulis and Meghri, where proper names do not take the article.

Thus it can be seen that the Armenian dialect of Karabagly has many features in common with Karabagh dialect, but cannot straightforwardly be considered a Karabaghsubdialect. The dialect with which it seems to share the most features is that of Shamakhi, which supports the possibility that the Armenians of Mushkur who migrated to Karabagly spoke Shamakhi dialect, as implied by Acharyan's 1909 map, rather than speaking only Tat (or Azerbaijani) as Hakobyan (2009) suggests. However, there are also differences from Shamakhi dialect, and, especially given the lack of data on all Karabagh and Iranian subdialects, it is possible that we are dealing with a mixed dialect combining Karabagh and Iranian features, reflecting the presence of individuals from both these areas, which was subsequently also adopted by the Tat-speakers from Mushkur and Derbent and/or their descendants. Intermittent education in Armenian has led to some SEA influence. There is also strong influence from Russian, including the borrowing of a conjunction. Although some of the Armenians of Karabagly now also speak Dagestani languages such as Dargwa, significant Dagestani presence in the area seems to be a recent phenomenon, so is unlikely to have had a strong influence on the dialect, although this may change in future. All these factors combine to make the Armenian dialect of Karabagly unique, and certainly worthy of further study.

Bibliography

- Աճառյան Հ., 1911, *Հայ բարբառագիտություն*, Մոսկվա-Նոր Նախիջևան:
- Աճառյան Հ., 1940. *Քննություն Նոր-Ջուղայի բարբառի*, Երևան:
- Բաղդասյան Ռ.Հ. 1964, *Շամախիի բարբառը*, Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
- Волкова Н. Г., 1974. *Этнический состав населения Северного Кавказа в XVIII-начале XX века*. Москва: Наука.
- Հակոբյան Ա., 2006, Հյուսիսային Կովկասում հայության ներկայիս դրության շուրջ. «21-րդ դար», թիվ 2(12).
- Накобыан А., 2009. Татоязычные Армяне: 15 Веков от «Армянства» к «Армянству». Tbilisi: Heinrich Böll Stiftung
- Պողոսյան Ա.Մ., 1965. *Հաղորդի բարբառը*, Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
- Սարգսյան Ա. Յ., 2013, *Ղարաբաղի բարբառի բառարան*. Երևան: Արցախի պետական համալսարան:
- Verhees, Samira. 2021. Karabagly: an Armenian village in Dagestan. https://github.com/sverhees/site/blob/master/talks/202105_Karabagly/202105_Labseminar_Karabagly_V3.pdf.

ՂԱՐՄԱՍՂԻ ԲԱՐԲԱՌԻ ՀԱՍԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՉՎԱԾՍՅՈՒՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

Մինասյան Շողեր

ԱրՊՀ ակ. Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի
ամբիոնի դոցենտ
minasyanshogher06@asu.am

Հայրապետյան Լիանա

ԱրՊՀ ակ. Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի ավագ
դասախոս
Liana.1968@list.ru

Բանալի բառեր. դարձվածային միավոր, համեմատություն, փոխաբերություն, դարձվածային արտահայտություն, ածականական դարձվածային միավոր, բայական դարձվածային միավոր, մակբայական դարձվածային միավոր:

Հայ լեզվաբանության մեջ դարձվածաբանությունը համեմատաբար երիտասարդ գիտաճյուղ է: Հայերենի դարձվածները ուսումնասիրվել են ամենատարբեր հայեցակետերով, իրականացվել են բանաձևային այլ արտահայտություններից նրանց տարբերության քննություն, կառուցվածքային ուսումնասիրություն, իմաստային նկարագրություն, կազմվել են տարաբնույթ դարձվածաբանական բառարաններ: Հայերենի դարձվածների ուսումնասիրության բնագավառում ներդրում ունեն Վ. Քոսյանը¹, Ա. Սուքիասյանը², Ե.Գևորգյանը³, Խ.Բաղիկյանը⁴, Պ.Բեդիրյանը⁵ Լ. Խաչատրյանը⁶ և

¹ Քոսյան Վ., Դարձվածաբանություն, Ջահուկյան Գ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քոսյան Վ., «Հայոց լեզու» գրքում, 1 մաս, Ա պրակ, Ե., 1980:

² Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1982:

³ Գևորգյան Ե., Հայերենի դարձվածները, Ե., 1969:

⁴ Բաղիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986:

այլք: Արվել են նաև հայերենի բարբառների դարձվածների ուսումնասիրության փորձեր:

Հայերենի բարբառներից մեկի՝ Ղարաբաղի բարբառի դարձվածների ուսումնասիրությանն է վերաբերում Շ.Մ. Մինասյանի «Ղարաբաղի բարբառի դարձվածները»⁷ գիրքը:

Դարձվածները մարդկային պատկերավոր մտածողության արդյունք են, դարձվածների հիմքում ընկած են պատկերավորության ամենատարբեր միջոցներ, որոնցից մեկն էլ համեմատությունն է: Դարձվածային իմաստային խմբերի մեջ յուրահատուկ շերտ են կազմում համեմատության իմաստ ունեցող դարձվածային միավորները: Դրանց վերաբերյալ հայագիտության մեջ կան մասնակի դիտարկումներ, ամբողջական քննությունը, որ ընդգրկում է 5-16-րդ դարերը, կատարվել է Լ. Խաչատրյանի և Լ. Ավետիսյանի կողմից: Նրանք ներկայացրել են համեմատություն դարձվածային արտահայտությունների ձևակազմական - քերականական հատկանիշները, իմաստաբանությունը: Հեղինակները գործածում են ՀԴԱ տերմինը՝ դրանք համարելով փոխաբերություն մի տեսակ, որն արտահայտում է համեմատելի հատկանիշ՝ երկու տարասեռ առարկաների և նրանց ընդհանուր հատկանիշի հարաբերության միջոցով⁸:

Սույն հոդվածում նպատակ ունենք քննելու Ղարաբաղի բարբառի համեմատության հիմքի վրա ձևավորված դարձվածները: Դրանք մեր կողմից կանվանվեն համեմատություն դարձվածային միավորներ (ՀԴՄ): Համակարծիք լինելով Պ. Բեդիրյանին՝ համե-

⁵ Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973:

⁶ Խաչատրյան Լ., Ավետիսյան Լ., Համեմատություն դարձվածային միավորները հայերենում (5-16-րդ դարեր), Ե., 2015:

⁷ Մինասյան Շ., Ղարաբաղի բարբառի դարձվածները, Ստեփանակերտ, 2007:

⁸ Խաչատրյան Լ., Ավետիսյան Լ., նույնը:

մատուցությունը դարձված դիտելու ամենակարևոր հատկանիշներն ենք համարում ողջ կապակցության վերափոխման ստավորումը, կայունությունը և պատրաստի վերարտադրելիությունը:

Հայերենի դարձվածների հիմնական դասակարգումներից մեկը վերաբերում է դարձվածների հաղորդակցական դերին, ըստ որի էլ առանձնացվում են անվանողական ու հաղորդակցական տեսակներ: Հաղորդակցական արժեք ունեցող դարձվածքները ունեն նախադասության կառուցվածք և միտք են արտահայտում: Անվանողական արժեք ունեցող դարձվածքները դասակարգվում են ըստ դարձվածի արտահայտած խոսքի մասային իմաստի: Հենվելով այս դասակարգման վրա՝ ներկայացնում ենք Ղարաբաղի բարբառի համեմատություն դարձվածային միավորների տեսակները:

Բարբառում տարբերակվում են ՀԴՄ-ների տեսակներ, որոնք պայմանավորված են նման կապակցությունների գործառական դերով, այսինքն՝ անվանողական և հաղորդակցական: Անվանողական բնույթի ՀԴՄ-ները արտահայտության պլանում համընկնում են բառակապակցության կառուցատիպերին, իսկ հաղորդակցական ՀԴՄ-ները՝ նախադասության:

Կառուցվածքային տեսանկյունից ՀԴՄ-ները ունեն միագագաթ ու երկգագաթ տեսակներ, որոնց կանդրադառնանք անվանողական ՀԴՄ-ների ձևաբանական դասակարգման հետևանքով առանձնացրած տեսակների քննության ժամանակ:

Ինչպես ազատ, այնպես էլ կայուն կապակցություններին հատուկ է խոսքի մասային արժեքը: Հասկանալի է, որ երբ խոսվում է դարձվածի (նաև ՀԴՄ-ների) ձևաբանական արժեքի մասին, նկատի է առնվում կապակցության միջոցով ձևավորված հասկացությունը: Ըստ այդմ էլ Ղարաբաղի բարբառի ՀԴՄ-ները ներկայանում են ածականական, բայական, մակբայական տեսակներով: Տեղին ենք համարում նշել, որ Ղարաբաղի բարբառում ՀԴՄ-ների կազմությանը ակտիվ մասնակցում է **նըման/ մընան** կապը:

Ածականական ՀԴՄ-ները իրենց արտահայտած հասկացությանը հարաբերակից են ածականին, արտահայտում են հասկա-

ցություն, ունեն անվանողական արժեք և զուրկ են հաղորդակցական դերից: Ածականական ՀԴՄ-ների մեջ յուրահատուկ տեղ են գրավում միագագաթ կառույցները:

Եթե դարձվածը համարվում է հիմնականում բառակապակցության կառուցվածք ունեցող միավոր, ուրեմն նրա կազմության մեջ պարտադիր պետք է համարվի նյութական իմաստ ունեցող առնվազն երկու բառերի առկայությունը: Այս առումով միագագաթ կառույցները իրենց գոյությամբ հակասում են բառակապակցության վերոնշյալ պայմանին, քանի որ միագագաթ կառույցներում առկա է նյութական իմաստ ունեցող միայն մեկ բառ ու կապ, սրանով էլ պայմանավորված է կառույցի անվանումը:

Ածականական միագագաթ ՀԴՄ-ներում(և ոչ միայն) որպես կապ հանդես է գալիս **նրման/մընան** կապը, որը որպես կանոն հարադրվում է տրական հոլովով դրված գոյականի, ինչպես՝ **Լ ՌԱՆԻՆՔԻՆ նրման** (գեղեցիկ), **դուշու նրման** (անհոգ), **ըրիքնակու նրման** (փայլուն), **կառնու նրման** (հլու-հնազանդ), **կէտու նրման** (առատ, վարար), **պէխկու նրման** (քաջատողջ, պնդակազմ, առույգ) և այլն: Ինչպես նկատելի է, այս տիպի կապակցություններում բացակայում է ածական բաղադրիչը, որը համեմատության եզրերից մեկն է (**լրանինքին նրման դաշմնք**, **դուշու նրման անհօք**, **ըրիքնակու նրման փրլըստորարտէ**, **կառնու նրման խեղճ**, **կէտու նրման վարար**, **պէխկու նրման առօխճ**):

Ածականական մյուս ՀԴՄ-ները, ի հակադրություն միագագաթների, պայմանականորեն անվանվում են երկգագաթ, չնայած նրան, որ այս կապակցություններում կարող են լինել նաև նյութական իմաստ ունեցող երկուսից ավելի բաղադրիչ: Ածականական բազմաբաղադրիչ ՀԴՄ-ներ բարբառում քիչ են՝ ածական+գոյական+կապ՝ **լակ ծովու նրման** (թեթևատլիկ), գոյական+գոյական+կապ՝ **աշկու լիւտու նրման** (լավ), դերբայ+գոյական+կապ՝ **հնլանձ յեղու նրման** (հեշտ) և այլն:

Ածականական ՀԴՄ-ների շարահյուսական գործառույթը պայմանավորված է ամբողջ կապակցության արտահայտած իմաստ-

տով. նրանք նախադասության մեջ ունենում են հիմնականում որոշչային գործառույթ: Բերենք օրինակներ:

Ըստրեղ վրէղը քարու նրման վրեղ ա: Մին մագու նրման չաթու վա յօր օնում, էտ փմնդը կապում, շըլակում: Պէխկու նրման հըլիվուր ա Մըրքըրա դային: Գծգմլ աքէրը ծոննոն. նրման հացեր ա թըխում:

Կարող են կատարել նաև ստորոգելիի պաշտոն: Օրինակ՝ **Ըզէն սկի մարթու նրման չի: Ախճիգ հինչ ախճիգ, ծոննոն. նրման ա:**

Ածականական ՀԴՄ-ների մի մասը կարող է ունենալ նաև մակբայական ՀԴՄ-ի արժեք և նախադասության մեջ կատարել պարագայի պաշտոն: Բերենք օրինակներ՝ **ընմզոն նրման** (աննկատ), **ըրեվու նրման** (փայլուն), **թաքավերու նրման** (արքայավայել), **մարթու նրման** (կարգին), **մըղըրձմննջոն նրման** (ժրաջան) և այլն: Նկատելի է, որ շատ քիչ են այն ածականական ՀԴՄ-ները, որոնք չեն կարող հանդես գալ պարագայական կիրառությամբ (օրինակ՝ **պէխկու նրման, մագու նրման, ընդիննոն նրման**), ինչը նշանակում է, որ դրանց մեծ մասը համատեղում է մակբայական ՀԴՄ-ի իմաստ: **Նրման** կապով ձևավորված և հատկանիշի իմաստ արտահայտող ՀԴՄ-ների մեծ մասը կամ միայն մակբայական է, կամ համատեղում է ածականականի ու մակբայականի իմաստները:

Սովորական պետք է համարել այն իրողությունը, որ ածականականի ու մակբայականի իմաստներ համատեղող ՀԴՄ-ները ունենան համարյա նույն իմաստը: Այսպես, **կէտու նրման** ՀԴՄ-ն որպես ածականական, նշանակում է «առատ, հորդ», որպես մակբայական՝ «առատորեն», **կրտու նրման** ՀԴՄ-ն ունի «հլու-հնագանդ» և «խոնարհաբար» իմաստները: Այս հանգամանքն էլ պատճառ է դառնում, որ դրանք ներկայանան որպես ածականական ու մակբայական: Հետաքրքիր իրողություն է այն, որ ածականական ու մակբայական ՀԴՄ-ների իմաստներ համատեղող մի շարք ՀԴՄ-ներ ունենում են տարբեր նշանակություններ՝ կախված գոյականին կամ բային լրացնելուց: Բերենք օրինակներ: **Ծոննոն նրման** ՀԴՄ-ն որպես ածականական, ունի «շատ սպիտակ» նշանակությունը, որպես մակբայական՝ նշանակում է «արագ» (հմմտ. **ծոննոն նրման**

իբէս և ծնունդն նրման հնկվիլի); Գրիլիո նրման անականական ՀԴՄ-ն նշանակում է «գեղեցիկ», **Գրիլիո նրման** մակբայական ՀԴՄ-ն՝ «լավ» (հմմտ. **Գրիլիո նրման ախճիցյ և Գրիլիո նրման պահէլ**), **յէզնու նրման** անականական ՀԴՄ-ն ունի «հիմար, տգետ» իմաստը, իսկ մակբայականը՝ «ջանասիրաբար» ու նաև «հիմարաբար» իմաստները: Այս իրողությունը բացատրվում է նրանով, որ, երբ կազմվում է որևէ ՀԴՄ, ապա հիմքում դրվում է համեմատյալի որևէ հատկանիշ, բնականաբար, եթե հատկանիշները մեկից ավելի են, ապա ՀԴՄ-ն կարող է ունենալ տարբեր իմաստներ: Դրանով է բացատրվում նաև անականականի կամ մակբայականի շրջանակներում միննույն ՀԴՄ-ի՝ մեկից ավելի իմաստ ունենալը: Օրինակ՝ բերված **յէզնու նրման** մակբայական ՀԴՄ-ն ունի մեկից ավելի իմաստներ:

Անականական ՀԴՄ-ներում բաղադրիչների շարադասությունը կայուն է. միագագաթ դարձվածներում կապը միշտ հաջորդում է գոյականին, իսկ մյուս կառույցներում՝ միջադասվում:

Բայական ՀԴՄ-ների գերադաս բաղադրիչը բայ խոսքի մասն է, որը պարտադիր է ոչ միայն բոլոր բայական դարձվածքների, այլև բոլոր բայական բառակապակցությունների համար: Գերադաս անդամի՝ պարտադիր բայ բաղադրիչ լինելու առումով բայական դարձվածները ունեն յուրահատկություն, քանի որ մյուս դարձվածների համար գերադաս անդամի խոսքիմասային պատկանելությունը կարևոր չէ: Այսպես, անականական դարձվածներ կարող են կազմվել նաև առանց անականի, եղանակավորող դարձվածների մեջ բոլորովին էլ վերաբերականի առկայությունը պարտադիր չէ և այլն:

Բայական ՀԴՄ-ների գերադաս անդամը կարող է լինել տարբեր խոնարհումների և կազմությունների: Նախ ներկայացնենք ըստ խոնարհումների.

1.Ե խոնարհման բայ գերադաս անդամ ունեցող ՀԴՄ-ները գերակշռում են՝ **Գրիլիո նրման պահէլ, թութակու նրման կըրկընէլ, կատվու նրման մաշկէն չըղնէլ, աշկու լիւսնո նրման պահէլ, Գրիլիո նրման պըրծընէլ, էշո նրման պինըցընէլ, թորու նրման կըտըրէլ, ճըղպորու մաչու նրման պըրծընէլ, ճըղպորու մաչու նրման պահէլ,**

կօտրած քրթօլիւ նրման մաչ ըղնէլ, կատվու նրման մաշկէն չըղնէլ, շան նրման սրտկըցընէլ, դուշու նրման ապրէլ և այլն:

2. Ի խոնարհման բայ գերադաս անդամ ունեցող ՀԴՄ-ները համեմատաբար քիչ են՝ սեմուշկու նրման չըրթիլ, հմլմնծ ըէդու նրման քինիլ, ծիւնի նրման հմլ(վ)իլ, աղու նրման հալ(վ)իլ, մօմու նրման հալ(վ)իլ, յէդու նրման հալ(վ)իլ, կի՛ղլիւ նրման ձւրձւր աշկու յէշիլ, հավու նրման թառ/հավաք ինիլ, շան նրման հաչիլ և այլն:

3. Ա խոնարհման բայ գերադաս անդամ ունեցող ՀԴՄ-ները ամենաքիչն են՝ արիսու նրման փըրըխկալ/քըլթըլալ, կըլէյու նրման նըստա կէնալ, լակ ծիւվու նրման իրէսան կէնալ, գի՛ղլիւ նրման պէնվալ, աղու նրման լիւզ տալ,թէփու նրման վըլը տալ, կարկուտու նրման յըրա տալ և այլն:

Գերադաս անդամ բայ բաղադրիչը կարող է լինել պարզ և ածանցավոր: Գերակշռում են պարզ կազմություն ունեցող բայ գերադաս անդամով ՀԴՄ-ները՝ դուշու նրման ապրէլ, շան նրման հաչիլ,աղու նրման լիւզ տալ, սեմուշկու նրման չըրթիլ, հմլմնծ յէդու նրման քինիլ, կի՛ղլիւ նրման ձւրձւր աշկու յէշիլ և այլն: Բայական ՀԴՄ-ներում գերադաս անդամը կարող է լինել նաև կրավորական (մօմու նրման հմլվիլ, աղու նրման հմլվիլ, յէդու նրման հմլվիլ), սոսկածանցավոր (լակ ծիւվիւ նրման իրէսան կէնալ, գի՛ղլիւ նրման պէնվալ, հավու նրման թառ ինիլ, կօտրած քրթօլիւ նրման մաչ ըղնէլ, կատվու նրման մաշկէն չըղնէլ), պատճառական (շան նրման սրտկըցընէլ) կազմությունների:

Ղարաղաղի բարբառի բայական ՀԴՄ-ների գերադաս անդամը կարող է լինել նաև հարադիր բայ, ինչպես՝ կըլէյու նրման նըէստա կէնալ, կատվու նրման մաշկէն չըղնէլ, էշու նրման գօրծ անէլ, ըրէվու նրման լիւս տալ, թէփու նրման վըլը տալ, կարկուտու նրման յըրա տալ, ծիւկնու նրման լըղ տալ, կօտրած շիրէփու նրման մաչն ըղնէլ, հավու նրման հավաք/թառ ինիլ, ճմնջիւ նրման ծէք տալ, մըռալիւ նրման քօն ինիլ և այլն: Հարադիր բայերի ակտիվությունը ՀԴՄ-ների կազմությանը պատահական չէ, քանի որ հարադիր բայերը համարվում են ժողովրդական մտածողության արտահայտություն, այնպես, ինչպես դարձվածները ընդհանրապես:

Բարբառում ունենք նաև զուգաբայական հարադրությամբ արտահայտված գերադաս անդամ ունեցող բայական ՀԴՄ՝ **քաշու նրման յըրա տալ տանել**:

Ղարաբաղի բարբառում քիչ են այն բայական ՀԴՄ-ները, որոնք ամբողջ կառույցով ներկայանում են որպես զուգաբայական հարադրություն, ընդ որում համեմատությունը կարող է լինել միայն մի եզրում (**կըթնատու կավու նրման քացէ տալ, կաթնէն ամանը պարան տալ**) կամ երկու եզրերում էլ (**արխու նրման կյալ, կիտու նրման քիինիլ; կօզնի նրման կօջ կ'ալ, կըթնուկու նրման տըրըզել**):

Մի շարք բայական ՀԴՄ-ներ կարող են ունենալ տարբերակային ձևեր, ընդ որում տարբերակներ կարող են առաջացնել ինչպես ստորադաս բաղադրիչը, այնպես էլ գերադաս բաղադրիչը: Բերենք օրինակներ՝ **ադու/ծոնոն նրման հալ(վ)իլ, գոնլի նրման պենվալ/պըճըզվել**:

Բայական ՀԴՄ-ները միագագաթ չեն լինում: Սովորաբար գերադաս անդամ անորոշ դերբայի ու կապի հետ միասին կազմության մեջ լինում են նաև այլ անդամներ, որոնք բնորոշվում են ձևաբանական տարբեր հատկանիշներով: Ներկայացնենք բայական ՀԴՄ-ները ըստ երրորդ անդամի ձևաբանական հատկանիշների: Որպես երրորդ անդամ գերազանցապես հանդես է գալիս գոյականը, որը **նրման** կապի պահանջով արտահայտվում է տրական հոլովով, ինչպես՝ **սէմուշկու նրման չըրթիլ, արխու նրման փըրըխկալ/քըքըլալ, գոնլի նրման պահել, մըռալի նրման քօն ինիլ, օխծոն նրման փըշըցընել, կըլիու նրման նըհատա կիենալ, գոնլի նման պենվալ/պըճըզվել, գոնլի նրման պըրծընել** և այլն: Երբեմն գոյական բաղադրիչը ստանում է գոյականով, ածականով, թվականով կամ հարակատար դերբայով արտահայտված լրացում՝ այսպերպ ծավալուն դարձնելով բայական ՀԴՄ-ն: Բերենք օրինակներ՝ **աշկու լիւսոն նրման պահել, ճըղպօրու մաչու նրման պըրծընել, ճըղպօրու մաչու նրման պահել, ճըղպօրու մաչու նրման չըխկչըխկալ, լակ ծոնվու նրման իրեսան կիենալ, հէնգ մաննան նրման գիդալ, հնիւնծ յէդու նրման քիինիլ, կօտրած շիրէփու նրման**

մաչն ըղնէլ, փընջանձ մօրու նըման պահէլ և այլն: Հազվադեպ ՀԴՄ-ն ծավալուն դարձնողը կարող է լինել բայի լրացումը՝ **քըլըծու/սարու նըման դըլվումը/քըմակէն վըէննը կէնալ**:

Անվանական բաղադրիչը գերազանցապես առանց հողի է, որը բացատրվում է **նըման** կապի խնդրառական պահանջով:

Բայական ՀԴՄ-ների գոյական բաղադրիչը հանդես է գալիս միայն եզակի թվով, ինչպես երևում է վեր բերված օրինակներից:

Ղարաբաղի բարբառի բայական ՀԴՄ-ների գերադաս անդամ կարող են դառնալ ներգործական և չեզոք սեռի բայեր: Ներգործական սեռի գերադաս անդամով ունենք **սէմուշկու նըման չըրթիլ** (հեշտ հաղթահարել), **գիճիճի նըման պահէլ** (լավ պահել), **աղու նըման լիւզ տալ** (մեկին անչափ սիրել), **ճըղպօրու մաչու նըման պահէլ** (շատ լավ պահել) և այլն: Չեզոք սեռի գերադաս անդամ բայ բաղադրիչ ունենք **կօտրած քըթծլի նըման մաչ ըղնէլ** (իրեն չվերաբերող բանի մեջ խառնվել, միջամտել), **ճըղպօրու մաչու նըման չըխչըխկալ** (թնդալ, ծիծաղել), **մումու նըման հալվիլ** (հյուծվել, նիհարել), **կատվու նըման մաշկէն չըղնէլ** (1. Համառել, իր ասածը պնդել, 2. Վտանգից՝ վնասից խուսափել կարողանալ) և այլն: Հասկանալի է, որ, կախված բայասեռից, բայական ՀԴՄ-ները ձևավորում են տարբեր կառուցվածքի նախադասություններ՝ ներգործական կան չեզոք, որից էլ բխում է նախադասության՝ այլ անդամներ ունենալը կամ դրանց ձևավորվածությունը: Բերենք օրինակներ:

Այան կուճիւր թօռնանը ճըղպօրու մաչու նըման ա պահում:
Խօրթ մարը ըստրանց գիճիճի նըման ա պահում: **Հարթնանը** աղու նըման լիւզ ա տամ: **Խօխէնքը** ապուն ըսածան ճըղպօրու նըման չըխչըխկամ ըն: **Թաքուհին** տըէսնում ա, վեր օրկանցօր թաքավէրը մումու նըման հնլվում ա: **Մարթը** հիշկան թակում ա, կընէգը էլհա կատվու նըման մաշկէն չի ըղնում:

Առաջին երեք նախադասություններում ընդգծվածները ուղիղ խնդիրներ են, որոնք դրվել են ներգործական սեռի բայական ՀԴՄ-ների պահանջով: Վերջին երեք նախադասություններում

ստորոգյալները չեզոք սեռի բայական ՀԴՄ-ներ են, որոնք ընդհանրապես խնդիր չեն պահանջել:

Եթե գերադաս բայական բաղադրիչի կազմությունը փոխվի՝ պատճառական ածանցի ավելացումով, ապա տեղի կունենա ՀԴՄ-ների քերականական (սեռային) փոփոխություն՝ չեզոք-ներգործական իմաստային անցումով: Համեմատենք **շան նըման սասկել** և **շան նըման սրսկըցնել** դարձվածները. առաջինը չեզոք սեռի է, երկրորդը՝ ներգործական:

Խոսելով բայական ՀԴՄ-ների սեռային առանձնահատկությունների մասին՝ պետք է հաշվի առնել, որ գերադաս անդամ բայ բաղադրիչը սեռը ոչ միշտ է համընկնում ամբողջ դարձվածի սեռային պատկանելությանը: Ներգործական սեռի բայ բաղադրիչը կարող է ձևավորել թե՛ ներգործական, թե՛ չեզոք սեռի բայական ՀԴՄ-ներ: Ինչ վերաբերում է չեզոք սեռի բայական բաղադրիչին, ապա այն հիմնականում ձևավորում է չեզոք սեռի բայական ՀԴՄ-ներ: Բերենք օրինակներ: Ներգործական սեռի բայ բաղադրիչով կազմվել են ներգործական սեռի ՀԴՄ-ներ՝ **թութակու նըման կըրկնել** (նույն ձևով կրկնել), **աշկու լիւսճի նըման պահել** (շատ լավ պահել), **փընջնծ մօրու նըման պահել** (լավ պահել), **հէնգ մաննան նըման գիդալ** (շատ լավ իմանալ), **էշո նըման պինըցընել** (շատ չարչարել, աշխատեցնել) և այլն: Ներգործական սեռի բայով կազմվել են նաև չեզոք սեռի բայական ՀԴՄ-ներ, քանի որ ամբողջ դարձվածը արտահայտում է չեզոք սեռի իմաստ, ինչպես՝ **գիւլիւ նըման պըրծընել** (փորձանքից անվնաս ազատվել), **էշու նըման գօրծ անել** (շատ աշխատել, չարչարվել), **թեփու նըման վըեր տալ**(ծառերը՝ թփերը առատ պտուղ բռնել), **թօրու նըման կըտըրել** (1.շատ սուր, հատու լինել, 2.շատ ցուրտ լինել), **ճըղպօրու մաշու նըման պըրծընել**(որևէ փորձանքից՝ նեղ իրավիճակից անվնաս ազատվել), **կիւլիւ նըման ճըրճըր աշկու յէշիլ** (իրար նկատմամբ անհավատարիմ, խարդախ լինել) և այլն:

Չեզոք սեռի բայ բաղադրիչով կազմվում են միայն չեզոք սեռի բայական ՀԴՄ-ներ, ինչպես՝ **մումու նըման հալվիլ** (հյուծվել, նիհարել), **կատվու նըման մաշկէն չըղնել** (1. համառել, չզիջել,

2. վտանգից՝ վնասից խուսափել կարողանալ), **հավու նրման հավաք/թառ ինիլ** (1. բարձր տեղ նստել՝ մնալ, 2. շատ շուտ քնել), **շան նրման ապրել** (չարչարվել) և այլն:

Կան բացառություններ.**ընգնել** բաղադրիչով կազմված **շան նման կրլխու ընգնել**, **էշու նման կրլխու ընգնել** ՀԴՄ-ներում չեզոք սեռի բայով կազմվել են ներգործական սեռի դարձվածներ, որոնց սեռային պատկանելությունը հաստատվում է ոչ միայն իմաստային, այլև շարահյուսական մակարդակում, այսինքն՝ ուղիղ խնդիր ընդունելով: Օրինակ՝ **Տըէսէ՛ր՝ շան նման կրլխու ընգալ ասաճս**:

Կան այնպիսի բայական ՀԴՄ-ներ, որոնց գերադաս անդամը ունի հարացուցային տարբեր ձևեր, բայց եթե այն դիմավոր ձևով է հանդես գալիս, ձևավորում է փակ կառույց, այսինքն՝ դարձվածը ամբողջությամբ հանդես է գալիս որպես նախադասություն, որտեղ այլ անդամներ չկան: Այսպես, **արխու նրման կյալ**, **կիտու նրման քիինիլ**; **կրթնատու կրվու նրման քացէ տալ**, **կաթնէն ամանը պարան տալ** բայական ՀԴՄ-ները ձևավորում են նախադասություն ՀԴՄ-ներ: Օրինակ՝ **Փուլը ըտի յա. արխու նրման կրկ'ա, կիտու նրման քիինի**: **Մաղ գանքումը Մարգօ աքերը քրվօրը քօմագ՝ ըրալ**, **վերջումը կրթնատու կրվու նրման քացէ տըվալ**, **կաթնէն ամանը պարան տըվալ**:

Ղարաբաղի բարբառի բայական ՀԴՄ-ների մի մասը առաջանում է մակբայական ՀԴՄ-ների ծավալման հետևանքով: Դա, իհարկե, չի նշանակում, որ յուրաքանչյուր մակբայական ՀԴՄ-ի ու բայի կապակցությունն պիտի դիտարկվի որպես բայական ՀԴՄ: Եթե տվյալ մակբայական ՀԴՄ-ն ունի կապակցելիության սահմանափակություն, այսինքն՝ կարող է հանդես գալ միայն մեկ բայի հետ, ապա նման ՀԴՄ պետք է համարել բայական: Այսպես, **աշկու լիւսնի նրման** ՀԴՄ հանդես է գալիս միայն **պահել** բայի հետ, հետևաբար տրամաբանական է **աշկու լիւսնի նրման** ՀԴՄ-ն առանձին վերցրած մակբայական չհամարել, այլ **աշկու լիւսնի նրման պահել** ՀԴՄ-ն համարել բայական: Եթե տվյալ ՀԴՄ-ն կարող է կապակցվել շատ բայերի հետ, ուրեմն ունենք մակբայական ՀԴՄ, ինչպես՝ **մին մարթու նրման** (+ **հըվաքվել, անել, համաձայնվիլ, կյալ**), **էշնի նրման**

(+ պինըցընէ, գործ անէ, չըրչարվել), խանումու նըման (+ապրէ, պահէ, առուտօր անէ, տոնրոնր կ'ալ) և այլն: Իսկ եթէ տվյալ ՀԴՄ կապակցվում է միայն մի քանի բայերի հետ, կարծում եմ, ունենք մակբայական ՀԴՄ, որի ծավալման հետևանքով առաջանում է բայական ՀԴՄ: Այսպես, ունենք **գոնվլոն նըման** մակբայական ՀԴՄ-ն, որը կարող է կապակցվել **թըռչիլ, հըսնէլ, փախճիլ, քինիլ** բայերի հետ և ձևավորել բայական ՀԴՄ-ներ: Նույն կերպ **հալած յեղու նըման** մակբայական ՀԴՄ-ն կարող է կապակցվել **քինիլ, ընցընէլ, ընթունէլ** բայերի հետ: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ տարբեր բայերի հետ կապակցության ժամանակ մակբայական ՀԴՄ-ն պահպանում է իր իմաստը: Այսպես, **գոնվլոն նըման** ՀԴՄ-ն միշտ նշանակում է «արագ, սրընթաց», **յեղու նման-ը**՝ «հեշտ»:

Բայական ՀԴՄ-ները բնութագրվում են նաև շարահյուսական ակտիվ կիրառությամբ: Խոսքում նրանք կարող են հանդես գալ թե՛ անդեմ, թե՛ դիմավոր ձևերով: Անդեմ ձևով հանդես գալով՝ կարող են կատարել ենթակայի, գոյականական և բայական անդամների լրացումների դեր: Բերենք օրինակներ:

Լակ ծոնվոն նըման իրեսան կ'էնօղ ախճիգ ա, գործ չօնիս նըհէտը: Տա կըլէու նըման նըստա կ'էնօղներան ա, մըհալ մեր քըցիլ: Իլածըտ յեղու նըման քինիլմով պըրծըննան ա: Էտ կատվու նըման մաշկէն չըղնօղը մունք ընք, վէչ տա տուր:

Դիմավոր ձևով հանդես գալով՝ նրանք դառնում են ստորոցյալ՝ հանդես գալով նախադասություններում կամ ձևավորելով հաղորդակցական դեր ունեցող միավորներ: Բերենք օրինակներ:

Ըտրանք կարկուտու նըման յըրա յըն տամ, քարվանը թըլանում: Էտ տըղան էլ ծոնկնու նըման լըղ ար տամ, դմստի նի յա մընում ծօվէն տակը, թաքավէրին ըխճըկանը մուտանան տոնս օնում: Ըտի թաջիրին հըրըստօթունը մին ամսումը յըլէու նըման հալվում ա:

Մակբայական ԴՄ-ները իրենց բառաքերականական առանձնահատկություններով տարբերվում են գոյականական ու բայական ԴՄ-ներից, որոնց կազմում գոյական (գոյականականի համար) և բայ (բայականի համար) բաղադրիչների առկայությունը

պարտադիր է: Մակբայական դարձվածների շատերի կազմության մեջ մակբայ բաղադրիչի առկայությունը պարտադիր չէ. այս տեսակետից մակբայական ԴՄ-ները նմանվում են ածականականների այն տեսակներին, որոնցում բացակայում է ածական բաղադրիչը: Այս յուրահատկությունը վերաբերում է նաև ՀԴՄ-ներին: Այս կապակցությամբ Պ. Բեդիրյանը գրում է. «Հայերենի համար նշենք, որ բուն մակբայներով համեմատություն-դարձվածքներ չունենք, և դա դժվար չէ բացատրել. չէ՞ որ համեմատության մյուս եզրում գոյականն է, որի առարկայական հատկությունները կարելի է բացահայտել ածականի միջոցով: Ծայրահեղ դեպքում, համեմատությունների մեջ կարող են հանդես գալ այնպիսի բառեր, որոնք գտնվում են ածականի ու մակբայի «սահմանագլխին» և խոսքային միջավայրում, նայած լրացյալին, կարող են դիտվել իբրև ածականներ կամ մակբայներ»⁹:

Մակբայական դարձվածների մյուս առանձնահատկությունն այն է, որ նրանց կազմության մեջ կարող է լինել նյութական իմաստ ունեցող միայն մեկ բաղադրիչ, մյուս բաղադրիչը կապն է կամ կապական բառը: Այսպիսի ԴՄ-ները, ինչպես գիտենք, կոչվում են միագագաթ:

Ինչ վերաբերում է մակբայական ՀԴՄ-ներին, ապա այս տեսակետից նրանք հանդես են գալիս նույն օրինաչափությամբ, ուղղակի պետք է նշել, որ միագագաթ մակբայական ՀԴՄ-ների կազմությանը մասնակցում են **նըման/մընան** կապը: Մի շարք մակբայական ՀԴՄ-ներ կրկնում են միագագաթ ածականական ՀԴՄ-ներին, այլ կերպ ասած՝ միագագաթ դարձվածային այս միավորները համատեղում են ածականի ու մակբայի իմաստները, ինչպես՝ **ըրմօգու նըման** (արագ, աննկատ), **գրկլի նըման** (լավ, գեղեցիկ) և այլն: Ինչպես նշել ենք, նույն դարձվածը որպես ածականական կարող է ունենալ մեկ, որպես մակբայական մեկ այլ իմաստ: Այսպես, **գրկլի նըման** միագագաթ մակբայական ՀԴՄ-ն նշանակում է «լավ, ուշադիր» (**գրկլի նըման պահել**), իսկ նույն դարձվածը՝

⁹ Բեդիրյան Պ. , նույնը, էջ 105:

որպես ածականական ՀԴՄ, ունի «գեղեցիկ» (**գո՛ւլը նըման ախճիգ**) իմաստը:

Միագագաթ մակբայական դարձվածների մեծ մասը հանդես է գալիս միայն որպես մակբայական՝ լրացնելով բայի: Հոլովված գոյականով և **նըման** կապով ձևավորված այս ՀԴՄ-ները տարբերվում են իրենց կապակցելիությամբ: Կան միագագաթ մակբայական ՀԴՄ-ներ, որոնք կարող են դառնալ մի քանի բայերի լրացում: Այսպես, **գո՛ւլը նըման** ՀԴՄ-ն կարող է կապակցվել **թըռչիլ, հըսնել, փախճիլ, քի՛նիլ** բայերի հետ, **գո՛ւլը նըման** ՀԴՄ-ն՝ **պահել, պըրծընել** բայերի հետ, **ըըմ՛գը նըման-ը**՝ **ապրել, անց կենալ, ինիլ** բայերի հետ: Ընդ որում, պետք է նշել, որ բերված օրինակներում, անկախ լրացյալ բայից, մակբայական ՀԴՄ-ն ունենում է նույն իմաստը. **գո՛ւլը նման** նշանակում է «արագ, սրընթաց», **գո՛ւլը նըման-ը**՝ «լավ», **ըրազու նըման-ը**՝ «աննկատ, արագ»: **Գո՛ւլը նըման** բաղադրիչ առկա է նաև **գո՛ւլը նըման պենվալ/պըճըղվել** ՀԴՄ-ում, բայց այս դեպքում ունենք բայական ՀԴՄ, քանի որ ամբողջ կառույցը միասնաբար մեկ իմաստ է արտահայտում, այն է՝ «գեղեցկանալ»:

Մակբայական միագագաթ ՀԴՄ-ների մի մասը կապակցելիության տեսակետից նման սահմանափակում չունի, նրանց կարող են լրացնել ամենատարբեր իմաստներ արտահայտող բայերի: Այսպես, **էշու նըման** դարձվածը նշանակում է «հիմարաբար, ապուշաբար» և կարող է լրացնել այնպիսի բայերի, որոնց համար որպես գործողության ձև կարող է լինել մակբայական ՀԴՄ-ի իմաստը, ինչպես՝ **էշու նըման սուս անել /պահել/վեննը կենալ/ խօսել, խուխու նըման** ՀԴՄ-ն նշանակում է «խոնարհաբար, պատրաստակամորեն» և կարող է լրացնել տարբեր բայերի՝ **անգուճ օնել, անել, պիրիլ, տանել** և այլն:

Իմաստային տեսակետից յուրահատուկ է **շան նըման** ՀԴՄ-ն. Այն կապակցվում է տարբեր բայերի հետ և յուրաքանչյուր դեպքում արտահայտում է տարբեր իմաստներ՝ **շան նըման ապրել** (շատ վատ ապրել, չարչարվելով ապրել), **շան նըման հաշիլ** (վայրախո-

սել, վայրահաչել), **շան նրման վախել** (սաստիկ վախենալ), **շան նրման սրտկըցընել** (շանսատակ անել):

Միագագաթ ՀԴՄ-ներում որպես կապի խնդիր հանդես է գալիս հիմնականում հոլովված գոյականը, որի իմաստային դաշտում առկա հատկանիշներից հիմնականն էլ դառնում է ամբողջ դարձվածի իմաստային հիմքը: Հնարավոր է նաև, որ մեկից ավելի հատկանիշներ դառնան դարձվածի համար իմաստային հիմք: Այս հանգամանքը առաջացնում է համանունության մակբայական ՀԴՄ-ների համար: Այսպես, **ծըտու նրման** նշանակում է «քիչ» (հմմտ. **ծըտու նրման օտել- քիչ ուտել**) և «թեթև, արագ» (հմմտ. **ծըտու նրման յօր օնել- թեթև վերցնել**):

Բազմաբաղադրիչ մակբայական ՀԴՄ-ներ բարբառում հազվադեպ են՝ **մին մարթոն նրման** (միասնաբար), **հէնգ մաննան նրման** (շատ լավ), **մին տրոնան կապած շան նրման** (միասնաբար), **սրբտէն ձուգնին նրման** (իր ուզածով), **տոնգնը կիճկոն նրման** (ագահաբար):

Շարահասությունը մակբայական ՀԴՄ-ներում կայուն է. կապը միշտ վերջադաս է, ինչպես՝ **իրննոն նրման, ըսօրվա նրման, թուխարկանու նրման, ախայօր նրման/պէս** և այլն: **Ախայօր նրման** դարձվածը ունի նաև եղանակավորող ԴՄ-ի արժեք և նշանակում է «արի համաձայնիր, մի հակառակվիր»: Օրինակ՝ **Ախայօր պէս, պէր մին պէն մըտածինք**:

Մակբայական ՀԴՄ-ները նախադասության դիտվածքում հիմնականում կատարում են մակբային հատուկ՝ հատկանշային պարագայական պաշտոններ: Բերենք օրինակներ:

Վըրչէմնու նրման կօրծ ա անում: Տոնգնը կիճկոն նրման յըրա պըրծավ, կուրկուտը լօխ կէրավ: Քամէն տըշէղու նրման տանը թախտափուշը յըէր կալնվ տարավ: Այուն չըխարակը սըհաթու նրման կօրծ ա անում:

Այժմ անդրադառնանաք Ղարաբաղի բարբառի հաղորդակցական արժեք ունեցող ՀԴՄ-ներին: Սրանք ունեն նախադասության ձևավորում և որպես այդպիսիք ձեռք են բերել կայունություն, պատրաստի վերարտադրելիություն և մասնակի կամ ամբողջական վերաիմաստավորվածություն:

Պայմանականորեն հաղորդակցական արժեք ունեցող ՀԴՄ-ները կարելի է բաժանել երկու խմբի՝ 1) նախադասություն ՀԴՄ-ներ, որոնք կարող են առաջանալ բայական ՀԴՄ-ների գերադասանդամի՝ բայի՝ ստորոգական ձևավորում ստանալու դեպքում: Այսպես, **Էշն նրման գործ անէլ** բայական ՀԴՄ-ն կարող է հանդես գալ որպես նախադասություն ՀԴՄ, ինչպես՝ **Էշն նրման գործ արբալ /գործ ըրալ/ գործ կանէ** և այլն: Ընդ որում, ինչպես երևում է բերված օրինակներից, գերադասանդամ բայ բաղադրիչը կարող է հանդես գալ հարացուցային տարբեր ձևերով, 2) նախադասություն ՀԴՄ-ներ, որոնք ունեն միայն նախադասության ձևավորում և որպես դարձվածային միավոր կարող են հանդես գալ միայն նախադասության կառուցվածքով, ինչպես՝ **Հանց ա խրնձծր՝ մաչան կէս ըրած; Հանց ա (լրհա) սոր/սորանց ինի** և այլն:

Քանի որ բայական ՀԴՄ-ների քննության ժամանակ առաջին տեսակին պատկանող ՀԴՄ-ները ներկայացվել են, ուստի կրկնությունից խուսափելու համար այստեղ կխոսենք միայն երկրորդ՝ միայն նախադասության ձևավորում ունեցող ՀԴՄ-ների մասին:

Ինչպես նախադասություններին ընդհանրապես, այնպես էլ հաղորդակցական ՀԴՄ-ներին բնորոշ են ստորոգումը, հնչերանգային ավարտվածությունը, երանգավորումը և շարադասությունը:

Ղարաբաղի բարբառի նախադասություն ՀԴՄ-ները ունեն **հանց ա** բաղադրիչը, որը որպես կանոն նախադասության առաջին բառն է: Օրինակ՝ **Հանց ա սոր ծընված ինի, Հանց ա (լրհա) յըրկէ ինի, Հանց ա ըսէղու յըրա նըստած ինի** և այլն: **Հանց ա** (նշ. է՝ ոնց որ) բաղադրիչը կարող է ունենալ տարբերակային ձևեր՝ **հանց ըմ, հանց ըս**, որոնք գործածվում են, երբ խոսքը համապատասխանաբար առաջին և երկրորդ դեմքերին է վերաբերում, ինչպես՝ **Հանց ըս սոր ծընված ինիս, Հանց ըմ ըսէղու յըրա նըստած ինիմ** և այլն: Երրորդ դեմքին վերաբերող **հանց ա** բաղադրիչը, որ ընդհանրականանորոշ նշանակություն ունի, ավելի հաճախադեպ է, ուստի և բառարաններում նախադասություն ՀԴՄ-ները բերված են հենց այդ բաղադրիչով: Այս բաղադրիչը պետք է դիտարկել որպես վերաբերական, չնայած որ այն հանդես է գալիս տարբեր դեմքերով (ժա-

մանակակից հայերենում ունենք **կարծեմ, կարծես** վերաբերականները). մի օրինակում ունենք հոգնակի թվով արտահայտություն, ինչպես՝ **Հանց ըն սրլկըհած, ՌըրՌը քըընծ (ինին)**:

Ինչպես հայտնի է, դարձվածներին որպես լեզվական միավորների, հատուկ է կայունության հատկանիշը, որը դրսևորվում է լեզվական տարբեր մակարդակներում՝ բառային, ձևաբանական, շարահյուսական: Ձևաբանական մակարդակում նախադասություն ՀԴՄ-ների կայունությունից է բխում ստորոգյալի՝ սահմանափակ թվով ժամանակաձևերով արտահայտվելու հանգամանքը: Որպես ստորոգյալ հիմնականում հանդես է գալիս **ինիլ** (լինել) բայի ըղձական եղանակի ապառնի ժամանակաձևի երրորդ դեմքի բայը՝ **ինի**: Օրինակ՝ **Հանց ա յըեղը կըրակեն ինի**; **Հանց ա Մանթաշովեն թօնը ինի**; **Հանց ա ամեն շագը օխտը մետըր ինի**; **Հանց ա աշխադանքըս ուտեյիս ինի**; **Հանց ա ըշխարքես դարդը Ռըմնը ինի**; **Հանց ա էշու ընգուճում քօն իլնծ ինի** և այլն: Ինի բաղադրիչը երբեմն կարող է գեղջված, բայց հասկանալի լինել: Բերենք օրինակներ՝ **Հանցա թօփու գՌուլլա**; **Հանց ա սըրոց/սըեվ սըրոց/նօթ/նութըլօլա**; **Հանց ա սըեվ սար**; **Հանց ա տանձու կօթ**; **Հանց ա քըչըված ծՌ** և այլն: Բոլոր այս օրինակներում կարելի է ավելացնել **ինի** բաղադրիչը: Բերված օրինակներից երևում է, որ նախադասություն ՀԴՄ-ները սակավաբաղադրիչ են, առավել շատ բառ-բաղադրիչ ունեցող նախադասություն ՀԴՄ-ներն են **Հանց ա թօթ/մօլլա ինի խօզՌ մըսու յիշիյիս**; **Հանց ա թօթ թակած, արեվ էրնծ**:

Ղարաբաղի բարբառի նախադասություն ՀԴՄ-ների մի մեծ խումբ ձևավորվում է ածականական ԴՄ-ներից, որոնց ավելանում է **հանց ա** բաղադրիչը: Դա, իհարկե, չի նշանակում, որ յուրաքանչյուր ածականական ԴՄ-ի կարող է ավելանալ **հանց ա** բաղադրիչը և ձևավորել նախադասություն ՀԴՄ: Նկատելի է, որ նախադասություն ՀԴՄ կարող են կազմել այն ածականական ՀԴՄ-ները, որոնք ունեն առարկայի արտաքին ֆիզիկական կամ ներքին հոգեկան հատկանիշի բնութագրություն: Արտաքին ֆիզիկական հատկանիշի իմաստ ունեն **դիքճն դաբան** (անվարժ, անբան), **արչու պՌն** (ծխով լցված), **բիզնվ ծըկօտած** (շատ փոքր), **ըգարան ընգած հավ**

(ամբողջապես թրջված), **արչու քթերթ** (գեր, թմբիկ), **ըրասխեն ճուրը** (վարար, հորդ, առատ), **թօրքու գառի** (տգեղ, այլանդակ) և այլն, որոնք **հանց ա** բաղադրիչի հետ ձևավորում են նախադասությունն ՀԴՄ: Օրինակ՝ **Հանց ա+ արչու պինն; Հանց ա+ թօրքու գառի** և այլն: Ներքին հատկանիշի իմաստ ունեն **թօրի քաշ/շօն/ սըլեթա հավ** (աներես), **թօրքու փըսա** (ուշ-ուշ հայտնվող), **իրեսը վըեռան/ըստառան կարած** (անամոթ, լպիրշ), **կյուլու ճօտ** (ճարպիկ, համարձակ) և այլն, որոնք ևս կարող են ձևավորել նախադասությունն ՀԴՄ-ներ: Պետք է նշել, որ խոսքային միջավայրում շատ ավելի հաճախադեպ է նման ածականական ՀԴՄ-ների գործածությունը **հանց ա** բաղադրիչի հետ և պատահական չէ, որ բառարանում նշված դարձվածների համար որպես օրինակներ բերված են հենց նման կառույցներ:

Հարկ ենք համարում նշել, որ **հանց ա** բաղադրիչի հետ նախադասությունն ՀԴՄ չեն կազմում այն ածականական ՀԴՄ-ները, որոնք, արտահայտելով արտաքին կամ ներքին որևէ հատկանիշ, իրենց կազմության մեջ ունեն **նըման** կապը. Այս հանգամանքն էլ խանգարում է նման ՀԴՄ-ների կապակցումը **հանց ա** բաղադրիչի հետ: Օրինակ՝ **գիղիճ նըման** (գեղեցիկ), **խանումու նըման** (նյութապես ապահովված), **ծիւնի նըման** (շատ սպիտակ), **մազի նըման** (շատ բարակ), (մըղըրճանջու նըման ժրաջան) և այլն: Բացի դրանից՝ **նըման** կապով ձևավորված համարյա բոլոր ՀԴՄ-ները համատեղում են ածականական ու մակբայական ԴՄ-ների իմաստները, հանգամանք, որը ևս խոչընդոտում է նրանց կապակցումը **հանց ա** բաղադրիչի հետ:

Ամփոփելով նախադասությունն ՀԴՄ-ները՝ նշենք երկու հետաքրքիր իրողություն.

1. Կան նախադասության կառուցվածք ունեցող ՀԴՄ-ներ, որոնցում բացակայում է համեմատության իմաստ ունեցող բաղադրիչը, այսինքն՝ **նըման** կամ **հանց ա**, բայց ամբողջ կառույցը ունի համեմատության իմաստ, ինչպես **Լըհա ասխա սօր ա ծընվալ** (Նոր ծնվածի նման է, այսինքն՝ իրեն լավ է զգում), **Խըլեքը օրումըս ա**

(Խելքով ինձ նման է (սովորաբար բացասական իմաստով), **Օրումքս ա** (Վիճակով ինձ նման է):

2. Կան նախադասություն շՌՄ-ներ, որոնցում, ընդհակառակը, կա համեմատություն ցույց տվող բաղադրիչ, տվյալ դեպքում **նրման** կապը, բայց ամբողջ կառույցը համեմատության իմաստ չի արտահայտում: Օրինակ՝ **Աշխարքը շօռ կ'աս, ըտրա նրմանը քրթենայ չրս** (Ասում են շատ լավ կամ շատ վատ մարդկանց կամ իրերի մասին), **Աշխարքը/լեռը/նեռը/վրեղը ըտրա նրմանը ծրնայ չի** (Շատ լավն է կամ շատ վատն է), **Հինչու վա նրման** (Դժգոհության, անբավականության արտահայտություն՝ շատ վատ է, անտանելի է, տգեղ է և այլն), **Պեն ասէ, պենու նրման ինի** (Ասածդ անհեթեթությունն է, հիմարությունն է, կարգին բան ասա), **Քու մար քեզ նրման քաննեն ա պերայ** (Ինձ խաբել չես կարող - ասում են խորամանկություն անողին), **Ճիրնու նրման քինում ա, դումու նրման՝ մրնում** (Ասում են նրանց մասին, ովքեր պատրաստվում են որևէ տեղ գնալ, սակայն ձգձգում են):

РЕЗЮМЕ
КОМПАРАТИВНЫЕ ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ
КАРАБАХСКОГО ДИАЛЕКТА
Минасян Шогер, Ацрапетян Лиана

В статье представлены фразеологические единицы карабахского диалекта, в основе которых лежит одно из средств образности - сравнение. Компаративные фразеологические единицы рассматриваются по их номинативным и коммуникативным типам. Номинативные компаративные фразеологические единицы имеют адъективный, глагольный и адвербальный подтипы, некоторые коммуникативные фразеологические единицы могут иметь разные парадигматические формы, другая часть имеет только одну парадигматическую форму.

Ключевые слова: фразеологическая единица, сравнение, метафора, фразеологическое выражение, адъективная фразеологии-

ческая единица, глагольная фразеологическая единица, адвербиальная фразеологическая единица.

SUMMARY
COMPARATIVE PHRASEOLOGICAL UNITS
OF KARABAKH DIALECT
Minasyan Shogher, Hayrapetyan Liana

The article presents the phraseological units of the Karabakh dialect, which are based on one of the means of figurativeness - comparison. Comparative phraseological units are considered according to their nominative and communicative types. Nominative comparative phraseological units have adjectival, verbal and adverbial subtypes; some communicative phraseological units may have various paradigmatic forms, while the other part has only one paradigmatic form.

Key words: phraseological unit, comparison, metaphor, phraseological expression, adjectival phraseological unit, verbal phraseological unit, adverbial phraseological unit.

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մարզպան Արմեն

Արցախի պետական համալսարանի ռեկտոր
rector@asu.am

Բանալի բառեր. բարբառ, գրաբար, լեզվաբան, բառ, արմատ, աշխատություն, հոդված, զեկուցում, բառարան, ժողովածու

Ղարաբաղի բարբառը հայերենի կենդանի բարբառներից ամենատարածվածն ու կենսունակն է, որով հաղորդակցվում են Արցախի Հանրապետությունում, Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում ապրող հարյուր հազարավոր հայեր: Երբ և հատկապես որ շրջանում է ստեղծվել այն՝ դժվար է ասել: Խոսելով այդ մասին և հիմք ընդունելով, որ բարբառում գրաբարյան *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղների խլացումն ընդգրկում է բնիկ հայերեն բառերն ու ասորերենից, պարսկերենից, հունարենից կատարված հին փոխառությունները, սակայն չի տարածվում թուրքական փոխառությունների վրա, և նկատի ունենալով, որ ձայնեղների խլացման օրենքը գործել է մինչև 12-րդ դարը՝ «*թուրքերի՝ Հայաստան գալուց առաջ*» ու դադարել է գործելուց այդ դարից հետո՝ Հրաչյա Աճառյանը նրա ծագումը հատկացնում է 12-րդ դարին¹: Հակադրվելով դրան՝ Գ. Ջահուկյանը առաջ է քաշում իր տեսակետը, ըստ որի՝ հայերենի բարբառների հնչյունական, քերականական և բառապաշարային հատկանիշները ձևավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում², և բաղաձայնների խլացման երևույթը պայմանավորված է այլ հանգամանքներով³:

¹ Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, I մաս, Ե., 1940, էջ 380

² Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, «Պատմաբանասիրական հանդես», Ե., 1959, N2-3, էջ 311:

³ Ջահուկյան Գ., Արցախահայ (Ղարաբաղի) բարբառի կազմավորման մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1991, N5, էջ 58:

Ղարաբաղի բարբառի մասին առաջին վկայությունը թողել է 8-րդ դարի քերական Ստեփանոս Սյունեցին՝ հայերենի տարածական մի քանի տարբերակների շարքում նշելով նաև *զԱրցախայինն*։ «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ բառնս զեզերականս, որպէս զԿորճայն եւ զՏայեցին եւ զԽութայինն եւ զՉորրորդ Հայեցին եւ զՍպերացին եւ զՍիւնին եւ զԱրցախայինն. այլ մի միայն զՄիջերկրեայսն եւ զՈստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան. այլ եւ աւգտակարք ի պատմութիւնս, զի մի վրիպեացի անընդել գոլով լեզուացն»⁴։ Նույնը կրկնել է 14-րդ դարի բանաստեղծ, քերական Հովհաննես Երզնկացին⁵։

1862-1863թթ. հրատարակած «Ասրի բեզ եւ Գիքի» դրամայի⁶, որը հեղինակը համարում է Ղարաբաղի բարբառով (*ղարաբաղերեն լեզու*) գրված, առաջին մասի ներածականում (էջ 896-900) ներկայացնելով բարբառի որոշ առանձնահատկություններ՝ Գալուստ Շերմազանյանն այն կոչում է «*քաջ տղամարդի և պատերազմական լեզու*»։ Դրամայում գործածված դժվարհասկանալի բազմաթիվ (հիմնականում՝ բարբառային և փոխառյալ) բառեր համապատասխան էջերում բացատրվում են գրական հայերենով։

Իր 1869թ. հրատարակած աշխատության մեջ Քերովբե Պատկանյանը հայ բարբառների դասակարգմանը և որոշ բարբառների նկարագրությանը զուգընթաց ներկայացնում է Ղարաբաղի բարբառի հակիրճ ուսումնասիրությունը⁷։ Սկզբում⁸ տեղադրելով բարբառով գրառված որոշ նյութեր՝ հեղինակն այնուհետև քննում է բարբառի հնչյունական (*որոշ ձայնավորների ու բաղաձայնների քմային արտասանություն, հնչյունափոխություն, ձայնավորով*

⁴ Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, с.187.

⁵ Патканов К., Исследование о диалектах армянского языка, Санкт-Петербург, 1869, էջ 9.

⁶ Շերմազանեան Գ., Ասրի բեզ եւ Գիքի, «Կոունկ Հայոց աշխարհին», Թիֆլիս, 1862, թիւ ԺԲ, էջ 896-930, 1863, թիւ Բ, էջ 113-137:

⁷ Патканов К., Исследование о диалектах армянского языка, Санкт-Петербург, 1869, էջ 55-73:

⁸ Նույնը, էջ 55-63:

սկսվող միավանկ բառերի սկզբից հ-ի ավելացում), բառապաշարային (գրաբարում չվկայված, ինչպես նաև գրաբարյան իմաստներից տարբեր իմաստ ունեցող բառերի առկայություն), քերականական (անվանական և դերանվանական հոլովում, խոնարհում) մի շարք առանձնահատկություններ: Միաժամանակ, խոսելով Խոյի բարբառի մասին, նա հավաստում է, որ այդ բարբառը խոսվում է Խոյում, Սալմատում, ինչպես նաև Ղարաբաղի մի քանի տեղերում՝ Շուշվա շրջակայքում՝ Ավետարանոցում և այլուր, և որ այն շատ կողմերով թեև նման է Ղարաբաղի բարբառին, սակայն ունի մի շարք տարբերություններ, ինչպես՝ *ի-ն է դարձնելու հակում*, բայական ներգոյականի *ս-ով կազմություն՝ ում, ըմ, ման-ի փոխարեն, ու-ի փոխարեն ահան-ով ապառնի դերբայի կազմություն*⁹:

Ղարաբաղի բարբառի որոշ օրինաչափություններ, հատկապես հոլովման ու խոնարհման հարացույցներն են ներկայացված Մակար Բարխուդարյանի՝ Արցախի նշանավոր զվարճախոս Պըլը-Պուղու հետ կապված զվարճալի պատմությունները (գրառված գրական հայերենով ու Ղարաբաղի բարբառով (տվյալ ժամանակաշրջանի տառադարձությամբ) ընդգրկող ժողովածուի առաջաբանում¹⁰, իսկ վերջում կցված է բարբառին հատուկ բառերի բացատրական բառարան (էջ 171-190): Նույն հեղինակի բանահյուսական մեկ այլ ժողովածուի¹¹ «Այլաբանական իմաստներ» բաժինը (էջ 44-52) իրականում Ղարաբաղի բարբառի դարձվածների հավաքածու է:

«Ժողովրդական լեզուի շեշտադրութիւնը արեւելեան ճիւղի բարբառների մէջ «հոդվածում»¹² Մանուկ Աբեղյանը հայերենի արևելյան խմբակցության որոշ՝ Արարատյան, Ագուլեցոց, Գուգարաց, Թիֆլիսի բարբառներին զուգընթաց ներկայացնում է Ղարա-

⁹ Նույնը, էջ 74-76

¹⁰ **Բարխուդարեանց Մ.**, Պըլը -Պուղի, Թիֆլիս, 1883, էջ Բ-ԻԳ:

¹¹ **Բարխուդարեանց Գ.**, Բարոյական առածներ, Թիֆլիս, 1898:

¹² **Աբեղեան Մ.**, Ժողովրդական լեզուի շեշտադրութիւնը արեւելեան ճիւղի բարբառների մէջ, «Նոր դար», Թիֆլիս, 1890, N141-145:

բաղի բարբառի շեշտադրության առանձնահատկություններն ու շեշտից կախված հնչյունափոխության որոշ դեպքեր: Ըստ հեղինակի՝ «Արևելյան բարբառներից առանձին քերականական շեշտադրություն ունին միայն Արարատյան բարբառն յուր բոլոր երկրորդական բարբառներով, Արցախու և Սյունյաց (Ղարաբաղի), Ագուլեցոց (գոկերի), Գուգարաց և Թիֆլիսի բարբառները: Սյուն երկրորդական գավառաբարբառները, որոնք այս գլխավոր բարբառների մեջ են, հարկավ, ենթարկվում են առոգանության միևնույն օրենքին, որ ունին մայր բարբառները»:

Այս շրջանում բարբառի որոշ առանձնահատկությունների նվիրված երկու հոդվածներով է հանդես եկել Ղազարոս Աղայանը¹³, որոնցից առաջինում անդրադարձ է կատարվում *բ, գ, դ, ձ, ջ* (ըստ հեղինակի՝ *մետաղաձայն հնչյուններ*) և *պ, կ, տ, ծ, ճ* (ըստ հեղինակի՝ *նուրբ կարծրատիպ հնչյուններ*) բաղաձայնների հնչյունափոխությանը և գործածության որոշ դեպքերի, այնուհետև ներկայացվում են *ռ* տառի *ւէ, ւը, ւա* ձևերով գործածության դեպքերն ու բերվում համապատասխան օրինակներ, իսկ երկրորդում մեկնաբանվում են բարբառում գործածվող *տէր* (Աստված), *տար* (որևէ բանի տեր) և *դէր* (քահանա) բառերը, առանձնակի ուշադրություն է դարձվում *դէր* բառի քննությանը: Վերջինիս ծագումը կապվում է *Տիր* աստծո անվան հետ, որն ըստ հեղինակի՝ օտար բառ է և պետք է լինի *դիր*: Դեռևս անտիպ է Աղայանի կազմած «Ղարաբաղի բառարանը»¹⁴, որի առաջին մասում քննվում են բարբառի հնչյունական մի շարք իրողություններ, իսկ երկրորդ մասում տրվում է (հեղինակի մշակած տառադարձությամբ) բարբառում գործածվող շուրջ 2000 բառ՝ համապատասխան բացատրություններով:

¹³ Աղայան Ղ., Ո տառի հնչիւնը Ղարաբաղի բարբառում, «Տարագ», Թիֆլիս, 1898, N 48, էջ 1090, Տէր, տար եւ դէր բառերը Ղարաբաղի բարբառում, «Տարագ», Թիֆլիս, 1899, N 6, էջ 152:

¹⁴ Աղայան Ղ., Ղարաբաղի բառարանը, Նոր Նախիջևան, 1890-ական թթ., 67էջ, ՀՀ Ե.Չարեւնցի անվան գրականության եւ արվեստի թանգարան, Աղայան Ղազարոսի ֆոնդեր, հհ. 48, 49:

Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության մեջ առանձնահատուկ դեր ունի Հրայր Աճառյանը: Դեռևս Փարիզում ուսանելու ժամանակ նա փորձառական հնչյունաբանության հիմնադիր Ռուսլոյի լաբորատորիայում փորձառական մեթոդով մի քանի բարբառախոսների և իր անձի վրա ուսումնասիրության էր ենթարկել համապատասխան բարբառների, այդ թվում նաև Շուշիի խոսվածքի հնչյունաբանությունը: 1899-1901թթ. «Արարատ» ամսագրում տպագրվում է նրա «Քննություն Ղարաբաղի բարբառին» ուսումնասիրությունը¹⁵, որը 1901 թ. հրատարակվում է առանձին գրքով¹⁶: Աշխատության առաջաբանում (էջ ա-գ) թվարկվում են բարբառով գրված տպագիր նյութերը և այն աշխատանքները, որոնցում հեղինակներն անդրադարձել են բարբառի որոշ իրողությունների: Բուն ուսումնասիրությունը կազմված է չորս գլխից: Առաջին գլուխը (էջ 1-34) վերնագրված է «Չայնախօսություն», որտեղ ներկայացվում են բարբառում գործածական բոլոր հնչյունները՝ ձայնավորներ՝ *ա, մ, է, ը, ըէ, ի, օ, ու, էօ, իւ, երկբարբառներ՝ էյ, օյ, ուա*, բաղաձայններ՝ *բ, գ, գյ, դ, գթ, ժ, լ, իւ, ծ, կ, կյ, հ, հյ, ձ, դ, ճ, մ, յ, ն, շ, ջ, պ, ջ, ո, ս, վ, տ, ը, ց, փ, ք, քյ*, որոնցից յուրաքանչյուրը նկարագրվում է առանձին՝ ուշադրություն դարձնելով հնչյունախոսությանը և գործածության դիրքերին, անհրաժեշտության դեպքում բերվում են բառերի օրինակներ: Առավել ծավալուն է երկրորդ՝ «Չայնաբանություն» գլուխը (էջ 34-140): Այստեղ Աճառյանը հանգամանորեն նկարագրում է բոլոր ձայնավորների, երկբարբառների ու բաղաձայնների հնչյունափոխության դեպքերը՝ նշելով նաև շեշտի վերջընթեր դիրքն ու շեշտանախորդ դիրքում գտնվող ձայնավորի սղվելու կամ *ը*-ի վերածվելու օրինաչափությունը: Երրորդ՝ «Քերականություն» գլխում (էջ 141-188) նկարագրվում են

¹⁵ Աճառյան Հ., Ուսումնասիրություններ հայկական բարբառախօսութեան Գ. Քննություն Ղարաբաղի բարբառին, «Արարատ», Վաղարշապատ, 1899, համար իններորդ, էջ 394-399, համար Ժ. և ԺԱ. –րդ, էջ 453-459, 1900, թիւ Ա., էջ 26-28, թիւ Բ., էջ 73-76, թիւ Դ., էջ 190-193, թիւ Ը. և Թ., էջ 411-415, թիւ ԺԱ., էջ 529-533, թիւ ԺԲ., էջ 612-616, 1901, թիւ Դ., էջ 236-239, թիւ Ե. և Զ., էջ 310-312, թիվ Է. և Ը, էջ 368—375:

¹⁶ Աճառյան Հ., Ուսումնասիրություններ հայկական բարբառախօսութեան Գ. Քննություն Ղարաբաղի բարբառին, Վաղարշապատ, 1901, 199 էջ:

բարբառի անվանական հոլովումը, որոշյալ հոդը, ածականի համեմատության աստիճանները, թվականների (հեղինակը կոչել է *թուական ածականներ*) տեսակները, դերանունների հոլովումը, ստացական հոդերը, բայի խոնարհումը, անփոփոխելի բառերը (նախադրություններ, մակբայներ, շաղկապներ, ձայնարկություններ), շեշտադրության ծագումը և բարդ բառերը: Չորրորդ գլխում (էջ 189-198) ներկայացվում է *«Թիւնիս պրէլիս»* հեքիաթը՝ գրառված Էջմիածնի վանքի միաբան Եսայի սարկավագ Մահտեսի Բաբայանից (ծննդով Վարանդայի Գիշի գյուղից), ով նաև աջակցել է Աճառյանին՝ նրա ուսումնասիրության համար կազմելով Ղարաբաղի բարբառի բառարանը¹⁷: Աշխատության մեջ Աճառյանը ընդհանուր առմամբ համեմատության ելակետ է ընդունել գրաբարը՝ այս կամ այն լեզվական օրինաչափությունը ներկայացնելիս հաճախ համեմատության եզրեր անցկացնելով այլ բարբառներում առկա համապատասխան երևույթների հետ, մի հանգամանք, որ հատուկ է նրա բարբառագիտական բոլոր աշխատություններին: Քիչ չեն նաև ընդհանուր բնույթի դիտարկումները: Այսպես, խոսելով բարբառի շեշտադրության մասին, նա հանգում է այն եզրակացության, որ արևելյան մի շարք բարբառների վերջընթեր շեշտը *«գուտ հետևողութիւն և շարունակութիւն է իրենց կորսնցուցած նախկին բնիկ լեզուին շեշտադրութեան»*¹⁸:

Աշխատությունը մեծ հետաքրքրություն առաջացրեց: Պատահական չէ, որ ֆրանսիացի մեծ հայագետ Ա. Մեյեն հանդես եկավ ընդարձակ գրախոսականով¹⁹, ըստ արժանվույն գնահատելով այն, միաժամանակ նշելով որոշ թերություններ և Ղարաբաղի բարբառի հնչյունական առանձին օրինաչափությունների՝ հատկապես բաղաձայնական ու ձայնավորական համակարգերի զար-

¹⁷ Նույնը, էջ գ:

¹⁸ Նույնը, էջ 116:

¹⁹ **Մեյե Ա.**, Հ. Աճառյան - Ուսումնասիրություններ հայկական բարբառախոսության. Գ. Քննություն Ղարաբաղի բարբառին, Վաղարշապատ, 1901, Գ- -198 էջ, «Journal Asiatique», Փարիզ, 1902, էջ 561-571:

գացման, քմայնացման, տարաբնույթ հնչյունափոխությունների վերաբերյալ կատարելով կարևոր դիտողություններ:

«*Քննութիւն Ղարաբաղի բարբառին*» ուսումնասիրության արդյունքները Աճառյանը ամփոփել է իր «*Հայ բարբառագիտութիւն. ուրվագիծ և դասավորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով)*»²⁰ աշխատության մեջ, որը հեղինակի՝ 1909 թվականին Փարիզում ֆրանսերեն լեզվով հրատարակած «*Classification des dialectes arméniens par Adjarian*» աշխատության մշակված և լրացված տարբերակն է: Այստեղ նա, հիմք ընդունելով ներկա և անկատար ժամանակների կազմության եղանակը և հայերենի՝ իրեն հայտնի բարբառները բաժանելով «*ուս*», «*կը*» և «*ել*» ճյուղերի, առանձին ենթաբաժնում (էջ 61-75) ներկայացնում է «*ուս*» ճյուղի մեջ ընդգրկված Ղարաբաղի բարբառի տարածման սահմանները, հնչյունախոսությունը, ձայնավորների, երկբարբառների, բաղաձայնների հնչյունափոխության դեպքերը, հոլովների կազմությունը, հոլովման և խոնարհման յուրահատկությունները, դերբայների դրսևորումները, Գանձակի, Ղազախի ու Ղարադաղի ենթաբարբառների՝ Ղարաբաղի բարբառից ունեցած որոշ տարբերություններ, բարբառին ու նշված ենթաբարբառներին առնչվող ուսումնասիրություններն ու ստեղծագործությունները: Վերջում տրվում է բուն բարբառով և ենթաբարբառներով (նաև Ձանգեզուրի գավառականով) գրառված մեկական նմուշ: Բացի դրանից, Ղարաբաղի բարբառին անդրադարձ է կատարվում այլ բարբառների այս կամ այն օրինաչափությունը քննելիս: Ղարաբաղի բարբառի հակիրճ նկարագրությունն է տրված նաև նրա «*Հայոց լեզվի պատմություն*» աշխատության երկրորդ մասում²¹: Նշանավոր լեզվաբանը բարբառի համապատասխան ձևերին հաճախ է անդրադարձել նաև իր

²⁰ **Աճառեան Հ.**, Հայ բարբառագիտութիւն. ուրվագիծ և դասավորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով), «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Ը, Մոսկուա-Նոր Նախիջևեան, 1911, էջ:

²¹ **Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 331-332:

«Լիակատար քերականություն հայոց լեզվի» բազմահատորյակում²² բազմաթիվ լեզվական երևույթներ քննելիս:

Բարբառի բառապաշարը հավաքագրելու և կորստից փրկելու տեսանկյունից լուրջ նշանակություն ունի Աճառյանի «Հայերեն գաւառական բառարանը»²³, որն ընդգրկում է, ըստ հեղինակի, հին մատենագրությամբ չավանդված 30000 գավառական բառ և դարձված: Գլխաբառից հետո համառոտագրությամբ նշվում են բառի գործածության վայրերը, որից հետո տրվում է իմաստների բացատրությունը, բազմաթիվ դեպքերում՝ վկայված օրինակներ: Առանձին պարբերություններով ներկայացվում են տվյալ բառով կազմված դարձվածները: Միաժամանակ աստղանիշով առանձնացվում են այն արմատները, որոնք գրաբարում ավանդված չեն, իսկ դրանց վերջում նշվում են հեղինակի կամ ուրիշների կողմից տրված ստուգաբանությունները: Բառարանի շուրջ 8000 բառ ու դարձվածային միավոր, որոնց գերակշիռ մասը Աճառյանը վերցրել է շուշեցի նշանավոր մանկավարժ Ավետիս Բահաթրյանի կազմած «Ղարաբաղու գավառական բառգիրք» ձեռագիր բառարանից, վերագրված են Ղարաբաղի բարբառին: Հարկ է նշել, որ բազմաթիվ բառերի ու դարձվածների դիմաց նշվում է միայն Ղարաբաղը, իսկ մի շարք բառեր ու դարձվածներ էլ, որոնք խիստ կենսունակ են բարբառում, համապատասխան նշում չունեն:

Բարբառի հարյուրավոր բառեր են ընդգրկված նաև Աճառյանի այլ բառարաններում²⁴: Սրանցից հատկապես հարուստ է առաջինը, որտեղ ներկայացվում են թուրքերենից կամ նրա մի-

²² **Աճառեան Ն.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզուների), Ներածություն, հհ I- VII, Ե., 1955-2005:

²³ **Աճառեան Ն.**, Հայերեն գաւառական բառարան, «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Թ., Թիֆլիս, 1913:

²⁴ **Աճառեան Ն.**, Թուրքերենի ազդեցութիւնը հայերենի վրայ և թուրքերենէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի և Նոր-Նախիջևանի բարբառներուն, «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Գ., Մոսկուա-Վաղարշապատ, 1902, **Աճառեան Ն.**, Հայերեն արմատական բառարան, հհ.1-7, Երևան, 1926-1935, հհ. Ա-Դ, Ե., 1971-1979, **Աճառեան Ն.**, Եւրոպական լեզուներից փոխառեալ բառեր հայերենի մէջ, Վիեննա, 1951:

ջոցով այլ լեզուներից (հասկապես արաբերենից ու պարսկերենից) փոխառյալ բառերը, տրվում բացատրությունը, թուրքերենի ձևը, ծագումը, ֆրանսերեն նշանակությունը, գործածության սահմանները: Դրանցից Ղարաբաղի բարբառին հեղինակը հատուկ է համարել շուրջ 1000-ը:

Ոչ պակաս կարևոր է Սահակ Ամատունու «*Հայոց բառ ու բան*» բառարանը²⁵, որը գրված է գրական հայերենի տառադարձությամբ և ընդգրկում է հայերենի բարբառներում գործածական շուրջ 16000 բառ ու դարձվածային միավոր: Նախ տրվում է գլխաբառը, այնուհետև՝ գործածության վայրը, բացատրությունը, գրավոր կամ բանավոր խոսքից առնված օրինակը (երբեմն՝ կրճատումով), իսկ ոճերը (դարձվածները) տրվում են համապատասխան գլխաբառերի տակ: Բառարանում ընդգրկված միավորներից շուրջ 4000-ը գործածական են Ղարաբաղի բարբառում, չնայած դրանցից շատերի դիմաց Ղարաբաղը նշված չէ: Հեղինակը դարձվածները ներկայացնելիս հիմնականում սահմանափակվել է Արարատյան բարբառով, սակայն ընգրկված միավորների զգալի մասը նույնպես գործածվում է Ղարաբաղի բարբառի խոսվածքներում: Մի շարք բառեր էլ ներկայացված են միայն Ղարաբաղի բարբառի անվան տակ: Բառարանն առանձնանում է վկայված օրինակների առատությամբ:

Բարբառին անդրադարձել է նաև Արամ Դադյանը իր և եղբոր՝ Խաչիկ Դադյանի՝ Վարանդայի, մասամբ նաև Դիզակի ու Խաչենի գյուղերից գրառած (տվյալ ժամանակաշրջանի գիտական տառադարձությամբ) ժողովրդական վիճակի երգերի՝ ջանգյուլումների հավաքածուի մեջ²⁶: Առաջին մասի ներածականում՝ «*Երկու խոսք*» (էջ 37-40), տեղեկություններ են տրվում նյութերի գրառման հանգամանքների մասին, լուրջ դիտարկումներ են արվում Ղարաբաղի բարբառի (հեղինակը անվանում է *ղարաբաղցերեն*) որոշ

²⁵ **Ամատունի Ա.**, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912:

²⁶ **Դադյան Ա.**, Վարանդայի բանառը գրականութիւնից, «Ազգագրական հանդես», XVII գիրք, Թիֆլիս, 1908, N 1, էջ 37-48, XVIII գիրք, Թիֆլիս, 1908, N2, էջ 25-32, XIX գիրք, Թիֆլիս, 1910, N1, էջ 85-89:

օրինաչափությունների և բարբառային տառադարձության վերաբերյալ: Ժողովածուում գործածված դժվարհասկանալի գրեթե բոլոր (հիմնականում՝ բարբառային և փոխառյալ) բառերը համապատասխան էջերում բացատրվում են գրական հայերենով:

Հետևելով բարբառների դասակարգման ձևաբանական սկզբունքին՝ Արարատ Ղարիբյանը իր «*Հայերեն բարբառների մի նոր ճյուղ*» աշխատության մեջ²⁷ Հր. Աճառյանի կողմից ներկայացված «ել» ճյուղը վերանվանում է «լ» և առանձնացնում «ս» ճյուղը՝ վերջինիս մեջ ներառելով նաև Լեոնային Ղարաբաղում խոսվող Շաղախի և Հաղրուօթի բարբառները: Ուսումնասիրության մեջ մյուս բարբառներին զուգահեռ առանձին բաժիններով ներկայացվում են Շաղախի (էջ 50-58) ու Հաղրուօթի (էջ 107-127) բարբառների (իմա՝ Ղարաբաղի բարբառի ենթաբարբառներ) հնչյունաձևաբանական հիմնական առանձնահատկությունների քննությունը և դրանցով գրառված նյութեր: Նույն հարցին հեղինակն անդրադարձել է «*Հայ բարբառագիտություն*» ձեռնարկում²⁸՝ միաժամանակ առաջ քաշելով հայերենի բարբառների հնչյունական դասակարգումը և առաջին տեղաշարժի ենթարկված (որոնց մեջ գրաբարյան ձայնեղները խլացել են) բարբառների շարքին դասելով նաև Ղարաբաղի, Հաղրուօթի և Շաղախի բարբառները: Ուսումնասիրության մեջ առանձին ենթաբաժնով (էջ 88-104) տրվում է Ղարաբաղի բարբառի նկարագրությունը՝ տարածման սահմանները, հիմնական օրինաչափությունները (որոշ դեպքերում՝ Հաղրուօթի, Շաղախի, Մեղրու բարբառների համեմատությամբ), բարբառով գրառված նմուշներ, իսկ «ս» ճյուղի բարբառների քննությանը նվիրված բաժնում (էջ 146-153) անդրադարձ է կատարվում Հաղրուօթի և Շաղախի բարբառներին: Նշված հարցերն առավել հանգամանորեն ու գիտական տեսանկյունով Ղարիբյանը քննել է 1953թ. հրատարա-

²⁷ **Ղարիբյան Ա.**, Հայերեն բարբառների մի նոր ճյուղ, «Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», հ. 11, Ե., 1939, էջ 24-188:

²⁸ **Ղարիբյան Ա.**, Հայ բարբառագիտություն (Ձեռնարկ բուհերի ուսանողության համար), Ե., 1947:

կած աշխատության մեջ²⁹՝ նաև առանձին ենթաբաժին նվիրելով (էջ 230-242) Ղարաբաղի բարբառի հնչյունաքերականական, հատկապես հնչյունափոխության, հոլովման, խոնարհման առանձնահատկությունների նկարագրությանը:

«*Հայ բարբառագիտության դասընթաց*» բուհական դասագրքում³⁰ Ահարոն Գրիգորյանը այլ բարբառներին շարքում տվել է նաև Ղարաբաղի (էջ 251-284) և Հաղրութի (էջ 474-494) բարբառների նկարագրությունը՝ անդրադառնալով վերջիններիս տարածման սահմաններին, հնչյունախոսությանը, հնչյունափոխությանը, խոսքի մասերի ու նրանց քերականական կարգերի դրսևորմաներին, շարահյուսական մի շարք առանձնահատկությունների կն, ընդգրկել դրանցով գրառված նյութեր:

Իր «*Դիտողություններ բարբառների զարգացման ներքին օրենքների վերաբերյալ*» հոդվածում³¹ բարբառների քերականական կառուցվածքի ուսումնասիրման գործում առավել կարևորելով տվյալ բարբառի՝ համաժողովրդական լեզվից ու մյուս բարբառներից ունեցած տարբերությունների վերհանումը՝ Սերգեյ Աբրահամյանը քննության է առնում Ղարաբաղի և Հաղրութի բարբառների երկու կարևոր օրինաչափություն՝ նույն բառերի՝ որոշյալ կամ անորոշ առումներով գործածվելու դեպքում տարբեր հոլովման (ոչ բոլոր հոլովներում) ենթարկվելու երևույթը և ժամանակի մակբայների գործածության առանձնահատկությունները՝ կապված ներկայում կատարվող կամ ապագայում կատարվելիք և անցյալում կատարված գործողության հատկանիշ ցույց տալու հետ: Առանձնակի ուշադրություն է դարձվում նաև այդ երևույթների առաջացման պատճառներին և ընթացքին:

²⁹ Ղարիբջան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., 1953:

³⁰ Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957:

³¹ Աբրահամյան Ս., Դիտողություններ բարբառների զարգացման ներքին օրենքների վերաբերյալ, «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր: Հասարակական գիտություններ», Ե., 1955, N 7, էջ 65-73:

Ուշագրավ աշխատություն է Արմենակ Պողոսյանի «*Հաղրութի բարբառը*» մենագրությունը³²: որտեղ ներկայացվում է Արցախի Հաղրութի շրջանի բնակավայրերի խոսվածքների ամբողջության՝ Հաղրութի բարբառի համաժամանակյա հանգամանակից քննությունը: Ներածական մասում (էջ 5-9) տեղեկություններ են տրվում շրջանի գյուղերի տնտեսությունների թվի (*ըստ 1895 և 1958 թվականների*), բարբառի և Ղարաբաղի բարբառի ու Ղարադաղի գավառից գաղթածների (*ըստ հեղինակի՝ Շաղախ-Խծաբերդյան խումբ*) խոսվածքների (*Խծաբերդ, Դոլանկար, Շաղախ, Մելիքջանլու, Խրմանջուղ, Աղբուլաղ*) փոխազդեցության, բարբառի վերաբերյալ եղած ուսումնասիրությունների մասին: Առաջին մասում՝ «*Հնչյունաբանություն*» (էջ 11-80), ներկայացվում են բարբառի հընչունախոսությունը, ձայնավորների, բաղաձայնների և երկբարբառների հնչյունափոխության դեպքերը, անդրադարձ է կատարվում շեշտին ու հարցականին: Երկրորդ մասում՝ «*Ձևաբանություն*» (էջ 82-268), քննության են առնվում բոլոր խոսքի մասերը և նրանց քերականական կարգերը: Առանձնակի ուշադրություն է դարձվում գոյականի հոգնակիի կազմությանը, հոլովների կազմությանն ու հոլովման տիպերին, հոդերին, դերանվանական հոլովմանը, դերբայներին, բայի խոնարհման փոփոխություններին, եղանակային ձևերի կազմությանը, երկրորդական բաղադրյալ ժամանակներին, պատճառական, կրավորական, անկանոն, պակասավոր, հավելավոր, հարադիր բայերին, ժխտական խոնարհմանը, եղանակային ձևերի կիրառություններին, կապվող բառի հոլովատությանն ու կապերի իմաստային առումներին ու շարադասությանը նև: Երրորդ մասում՝ «*Բառագիտություն*» (էջ 269-305), ներկայացվում են բարբառի բառապաշարի շերտերը, գրաբարից ավանդված որոշ բառերի իմաստափոխությունը, այլ բարբառներում չհանդիպող մի քանի դարձվածներ, ոճեր, առածասացվածքներ, բառակազմական միջոցները, բարդությունների և ածանցների տեսակները: Չորրորդ մասում՝ «*Շարահյուսություն և շարադասություն*» (էջ 305-332), քննվում են նախադասության

³² Պողոսյան Ա., Հաղրութի բարբառը, Ե., 1965:

տեսակների և նրանց անդամների շարադասության հետ կապված որոշ հարցեր: Հինգերորդ՝ հավելվածային մասում (էջ 333-366) Հաղրութի շրջանի տասնյակ բնակավայրերի խոսվածքներով տրվում են բարբառային նմուշներ և պարզաբանումներ մենագրությանը կցված բարբառագիտական 8 քարտեզների վերաբերյալ: Աշխատությունն ունի նաև օգտագործված գրականության և օժանդակ աղբյուրների համառոտ ցանկ (էջ 367-368): Ուսումնասիրության մեջ տարբեր օրինաչափություններ քննելիս հեղինակը Հաղրութի տեղական խոսվածքներին զուգընթաց մի շարք դեպքերում անդրադառնում է Ղարադաղից գաղթածների, եզակի դեպքերում՝ Սյունիքից գաղթածների (*Պետրոսաշեն, Թեգխարաբ, Արփագյաղուկ, Մայիտակաշեն* գյուղեր) խոսվածքների առանձնահատկություններին: Աշխատությունը հեղինակի՝ 1948 թվականին ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում պաշտպանած թեկնածուական ատենախոսության (որին կցված են նաև գրաբարից ավանդված, բարբառային և փոխառյալ բառերի բառացանկեր) լրամշակված տարբերակն է:

Ա. Պողոսյանը Ղարաբաղի բարբառի հակիրճ նկարագրությունն է ներկայացրել «*Հայ բարբառագիտություն*» բուհական դասագրքում³³: Նույն հեղինակի «*Նի մասնիկը եւ նրա բառակազմական նշանակությունն ու իմաստային առումները հայերենի բարբառներում*» հոդվածում³⁴ հանգամանորեն քննվում են *նի* մասնիկի ծագման, ձևավորման, նշանակության, իմաստային առումների հարցերը ու նրա հարադրությամբ կազմված բայական հարադրությունների և այլ կապակցությունների դրսևորումները հայերենի մի շարք, հատկապես Ղարաբաղի և Հաղրութի բարբառներում:

³³ **Պողոսյան Ա.**, Հայ բարբառագիտություն, Ե., 1996, էջ 181-205:

³⁴ **Պողոսյան Ա.**, Նի մասնիկը եւ նրա բառակազմական նշանակությունն ու իմաստային առումները հայերենի բարբառներում, «Պատմաբանասիրական հանդես», Ե., 1974, N 2, էջ 124-144:

Անգնահատելի է Կարո Դավթյանի «*Լեոնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*» մենագրությունը³⁵: Ի տարբերություն իր նախորդների՝ հեղինակն ընտրել է ուսումնասիրության ուրույն մեթոդ՝ ելնելով լեզվաբանական աշխարհագրության արդիական պահանջներից: Աշխատությունը բաղկացած է ներածությունից և հինգ բաժիններից: Ներածական մասում (էջ 5-13) ներկայացվում են աշխատության ստեղծման նախադրյալները, նպատակը, կառուցվածքը, Ղարաբաղի տարածքի բարբառների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների և բարբառով գրված աշխատանքների ցանկը: «*Բնակավայրերի անունները*» ենթաբաժնում համարակալված են Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բոլոր 221 գյուղերը: Հետագայում տեղի խնայողության և գործը համեմատաբար հեշտացնելու նպատակով լեզվական յուրաքանչյուր երևույթ քննելիս հղումները կատարվում են այդ համարներին, ինչը հնարավորություն է տալիս վերլուծության ենթարկելու բոլոր գյուղերի խոսվածքները՝ վեր հանելով դրանց առանձնահատկություններն ու ընդհանրությունները: «*Հնչունարանություն*» բաժինը (էջ 15-85) բաղկացած է երկու հիմնական ենթաբաժնից՝ «*Հնչունախոսություն*» և «*Հնչունափոխություն*»: «*Հնչունախոսության*» մեջ Կ. Դավթյանը, հիմք ընդունելով Հր. Աճառյանի, Ա. Ղարիբյանի և Է. Աղայանի գործածած տառադարձությունները, ներկայացնում է Ղարաբաղի տարածքի բոլոր խոսվածքներում եղած ձայնավոր և բաղաձայն հնչյունները, որոնք բացակայում են գրական հայերենում: Առանձին սյունակներով տրվում են այդ հնչյունների տառադարձությանը, իբրև ինչ արտասանվելը, սովյալ հնչյունը ընդգրկող բառերի օրինակներ և արտասանության վայրը: Ընդհանուր առմամբ նա տարածքի բարբառներին հատուկ է համարում 13 ձայնավոր, 39 բաղաձայն, 2 կիսաձայն հնչյուն, 7 երկբարբառ և 15 երկհնչյուն՝ առանձին աղյուսակում ամփոփելով դրանք ըստ բարբառների: Առավել մանրամասնությամբ է ներկայացվում «*Հնչունափոխություն*» ենթաբաժինը, որտեղ հետազոտվում են հայերեն հընչյունների փոփոխությունները: Յուրաքանչյուր հնչյունի փոփոխու-

³⁵ Դավթյան Կ., Լեոնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966:

թյունները վերլուծվում են առանձին, ընդ որում՝ տարբերակվում են տվյալ հնչյունի հնարավոր ընդհանրական և միևնույն բառերում եղած փոփոխություններն ըստ գյուղերի: Միաժամանակ քննության են առնվում հնչյունափոխական այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հնչյունների անկումը և հավելումը, կրկնությունը, բառամասերի կրճատումը, դրափոխությունը, ձայնավորների ներդաշնակությունը, ինչպես նաև շեշտի դրսևորման յուրահատկությունները: Հարուստ փաստական նյութով և գիտական խոր վերլուծություններով է կազմված «*Ձևաբանություն*» բաժինը (էջ 86-223): Այստեղ հեղինակը մեկ առ մեկ քննում է բոլոր խոսքի մասերը՝ իրենց քերականական կարգերով, երևան հանում յուրաքանչյուր գյուղի խոսվածքում դրանց դրսևորման առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում կատարում համեմատություններ այլ բարբառների և գրաբարի հետ, բերում առատ և սպառիչ օրինակներ: Առանձնակի խորությամբ են ուսումնասիրվում գոյականի հոգնակիի կազմությունը և հոլովումը, դերանունների տեսակները, դերբայները, բայի եղանակները և ժամանակային ձևերը, անկանոն և պակասավոր բայերը, երկրորդական բաղադրյալ ժամանակները: Բաժնի վերջում առանձին ենթաբաժիններով ներկայացվում է խնդրո առարկա խոսվածքների ածանցման, բառաբարդման և շարահյուսական մի շարք առանձնահատկություններ: «*Բարբառային ազդեցությունների մասին*» բաժնում (էջ 224-235) Կ. Դավթյանը ուշադրություն է դարձնում այլ բարբառային միջավայրերից եկած և Լեռնային Ղարաբաղում ամբողջական գյուղերով, ինչպես նաև տեղական գյուղերում վերաբնակվածների վրա բարբառային նոր միջավայրերի ազդեցության, տեղական «*ուլ*» և «*ս*» ճյուղերի բարբառների փոխազդեցությունների հարցերին՝ իրավամբ բացահայտելով, որ տեղական խոսվածքների ազդեցությունը չափազանց մեծ է եկվորների վրա, որի արդյունքում վերջիններս իրենց բարբառային ձևերով տեղի են տվել տեղականներին՝ աստիճանաբար յուրացնելով նրանց հնչյունական և քերականական օրինաչափությունները: Նմանապես «*ս*» ճյուղի Հաղբուրթի բարբառային միջավայրի բարբառախոսները,

հատկապես երիտասարդները, ենթարկվել են «ուս» ճյուղի Ղարաբաղի բարբառի ազդեցությանը: Աշխատության չորրորդ բաժնի՝ «*Բարբառային խմբավորումներ և նմուշներ*» (էջ 236-296), առաջին ենթաբաժնում, իբրև ուսումնասիրությունների ամփոփում, խմբավորվում են Լեռնային Ղարաբաղում գոյություն ունեցող բարբառային ձևերը ըստ բարբառաձյուղերի, բարբառների, ենթաբարբառների, խոսվածքների՝ հիմնականում հիմք ընդունելով մեծահասակ բնակչության խոսակցությանը: Առանձնացվում են տարածքում առկա վեց բարբառներ, որոնցից երկուսը՝ Ղարաբաղի և Մեհտիշենի՝ «ուս» ճյուղի, երեքը՝ *Հաղրութի, Շաղախ-Խծաբերդի և Չայլվի* կամ *Ուրմիայի*՝ «ս» ճյուղի, մեկը՝ Սարաղայի՝ «լ» ճյուղի: Ղարաբաղի բարբառը հեղինակը բաժանում է երկու խմբի՝ Ղարաբաղի բուն բարբառ /128 խոսվածքով/ և Ղարաբաղի բարբառի ենթաբարբառային խոսվածքներ /9 ենթաբարբառ՝ 20 խոսվածքով/, Հաղրութի բարբառը բաժանում է երեք ենթախմբի՝ բուն բարբառ /34 խոսվածքով/, Տումու խոսվածք և Շուշիքենդի ու Քարին տակի խոսվածքներ, Շաղախ-Խծաբերդի բարբառում ընդգրկում է 8 խոսվածք և Ջանյաթաղի առանձին խոսվածքը, Չայլվի կամ Ուրմիայի բարբառում՝ Ներքին և Վերին Չայլունների խոսվածքները, իսկ Մեհտիշեն և Սարաղա գյուղերի խոսվածքները առանձնացնում՝ որպես առանձին բարբառներ: Բարբառների, ենթաբարբառների ու խոսվածքների դիմաց առանձին պունակներում տրվում են նրանց հիմնական հատկանիշները և առանձնահատկությունները, Լեռնային Ղարաբաղից դուրս այլ խոսվածքների հետ նմանությունները, անհրաժեշտության դեպքում՝ որոշ ծանոթություններ: Բաժնի երկրորդ՝ «*Նմուշներ*», ենթաբաժնում բերվում են Ղարաբաղի տարածքի 40 գյուղերի խոսվածքներով գրառված նմուշներ: Դրանց կողքին հեղինակը նմուշներ է գետեղել Գորիսի շրջանի Տեղ, Եվլախի շրջանի Նամեթաբաղ և Միր Բաշիրի շրջանի Բեգում Սարով գյուղերի խոսվածքներով: Բարեխիղճ ու տքնաջան աշխատանքի արդյունք է նաև աշխատության վերջին՝ «*Համադրական բառարան*» բաժինը (էջ 297-503), որտեղ գրաբարի համեմատությամբ տրվում են տարածքի բոլոր վեց բարբառների համապատաս-

խան բառային համարժեքները: Ընդհանուր առմամբ բառարանը ընդգրկում է շուրջ 3000 բառ և բառաձև, այդ թվում որոշ՝ գրաբարում բացակայող, բայց գրաբարյան ձևերից կազմված բառեր: Հայերեն ձևերի բացակայության դեպքում կամ դրանց զուգընթաց տրվում են նշված բարբառներում գործածական բարբառային կամ փոխառյալ տարբերակները: Մենագրությանը կցված է բարբառագիտական 8 քարտեզ: Ցավով պետք է նշել, որ հրատարակչության մեղքով ուսումնասիրության մեջ սպորդել են մի շարք քերականական և տեխնիկական սխալներ, որոնց մասին հեղինակը հանդես է եկել առանձին հոդվածով³⁶:

Աշխատությունը գրախոսել է Արարատ Ղարիբյանը³⁷՝ այն համարելով Ղարաբաղի մարզի հայկական բարբառներն անմահացնող աշխատություն ու միաժամանակ անդրադառնալով տարածքի բարբառների փոխհարաբերություններին, որոշ օրինաչափությունների և կատարելով արժեքավոր դիտողություններ ու եզրահանգումներ:

1972 թ. հրատարակվում է Գևորգ Ջահուկյանի «*Հայ բարբառագիտության ներածություն*» մեծարժեք ուսումնասիրությունը³⁸, որի առաջին մասում (էջ 13-156) քննվում են համաժամանակյա բարբառագիտության հարցեր: Ի տարբերություն նախորդ՝ միահատկանիշ դասակարգումների՝ մաթեմատիկական ճշգրիտ մեթոդների կիրառմամբ հարյուր տարբերակիչ հատկանիշի հիման վրա ներկայացվում է հայերենի բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգումը: Դասակարգման ենթակա 120 բարբառախոս վայրերից 11-ը (*Շուշի, Հաթերք, Հարավ, Կաղարծի, Շահումյանովսկ, Ջանյաթաղ, Հաղրութ, Շուշիքենդ, Տումի, Շաղախ, Մեհտիշեն*) հեղինակն ընտրել է Լեռնային Ղարաբաղի տարած-

³⁶ **Դավթյան Կ.**, Նամակ խմբագրությանը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1967, N4, էջ 89-92:

³⁷ **Ղարիբյան Ա., Դավթյան Կ.**, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը. Գրախոսություն, «Պատմաբանասիրական հանդես», Ե., 1966, N4, էջ 273-276:

³⁸ **Ջահուկյան Գ.**, Հայ բարբառագիտության ներածություն (վիճակագրական բարբառագիտություն), Ե., 1972:

քից՝ դրանց համար համեմատության եզր (բարբառային կենտրոն) սահմանելով դարեր առաջ Արցախից գաղթած հայերի կողմից Վրաստանում հիմնադրված Բոլնիս Խաչեն գյուղի խոսվածքը, որը լեզվական օտար միջավայրում առավել անփոփոխ է պահել Ղարաբաղի բարբառի յուրահատկությունները: Արդյունքում, ըստ սահմանված մակարդակային միավորների տարբերակիչ հատկանիշների քանակի, բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբի մեջ առանձնացվում են Ղարաբաղի և Մեհտիշենի բարբառները, իսկ մյուսները, ինչպես նաև Գորիսը և Խանազահը (Ղարադաղ), համարվում են Ղարաբաղի բարբառի խոսվածքներ: Բացի դրանից, Ղարաբաղի բարբառին և նրա նշված խոսվածքներին լուրջ ուշադրություն է դարձվում նաև աշխատության երկրորդ մասում (էջ 159-333), որտեղ քննվում են տարածամանակյա բարբառագիտության մի շարք հարցեր՝ 5-րդ դարի բարբառային վիճակը, ժամանակակից հայ բարբառների ժամանակագրական փոխհարաբերությունը, բարբառային հնագույն տարբերությունների հետքերը գրաբարում, բարբառների հնչյունաբառաքերականական հնաբանությունները ևն:

Նշանավոր լեզվաբանը բարբառին անդրադարձել է նաև «*Արցախահայ (Ղարաբաղի) բարբառի կազմավորման մասին*» հոդվածում³⁹՝ քննելով որոշ առանձնահատկություններ՝ բառասկզբի հավելուրդային *հ*-ի գործածություն՝ հատկապես հնդեվրոպական ծագման բառերում (*հինչ, հուր, հով//հուվ*), գրաբարյան *ն*-ով վերջացող հիմքերի պահպանում (*մօկնը, ծօնգնը//ծօյնը*) և գրաբարից ավելի մեծ տարածում (*անդէմնը, փիրփէշնը, պտէշնը*), հնչյունների քմայնացում, ձայնեղների խլացում հին փոխառություններում, ձայնավորների հերթագայություն, գրաբարի ոչ արմատական ձևերի դիմաց արմատական ձևերի առկայություն (*զգէնուլ-կէնայ, կոճել-կոճ, պէպէն-պէն*), գրաբարյան ձևերին զուգահեռ հին և անկախ ձևերի պահպանում (*կեղեւ-քլէվ, պատուհան-պտոռան*,

³⁹ **Ջահուկյան Գ.**, Արցախահայ (Ղարաբաղի) բարբառի կազմավորման մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1991, N 5, էջ 52-58:

նապաստակ-ըլքբաստրակ) և հին այլ երևույթներ: Արդյունքում Ջահուկյանը հիմնավորում է դեռևս 1959 թ. իր առաջ քաշած դրույթը, որի համաձայն՝ հայերենի բարբառների հնչյունական, քերականական և բառապաշարային հատկանիշները ձևավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում՝ պատմական տվյալ պայմաններից կախված՝ ուժեղանալով, թուլանալով կամ նույնիսկ ընդհատվելով և պատմական տվյալ պայմաններում տալով բարբառային տվյալ խմբավորումները:

Ղարաբաղի բարբառի ծագումնաբանությանն անդրադարձ է կատարել նաև Բագրատ Ուլուբաբյանը⁴⁰: Բարբառը համարելով ազգի տվյալ հատվածի պատմության կենդանի վկայությունը և անդրադառնալով հայերենի ամենամեծ՝ Արցախի (Ղարաբաղի) բարբառի ընդգրկած սահմաններին, նրա մասին եղած ուսումնասիրություններին ու մասնագիտական գրականության մեջ առկա հիշատակություններին՝ հեղինակը կարևորում է բարբառի բազմակողմանի քննության անհրաժեշտությունը: Միաժամանակ քննության առնելով Արցախի պատմության և բարբառի ծագման ու զարգացման հետ կապված մի շարք հարցեր, հենվելով պատմական և կոնկրետ փաստերի վրա՝ նա վեր է հանում բարբառում պահպանված գրաբարյան որոշ օրինաչափություններ՝ վերջնահանգ *ն*-ի առկայություն, *ջ* հնչյունի բացակայություն և օտարազգի բառերում նրա փոխարեն *չ*-ի գործածություն, մի շարք բառերի սկզբում *հ*-ի հավելում, որոշ դեպքերում *զ* նախդիրի, հինհայերենյան հոլովաձևերի պահպանում, բառապաշարի համընկնում: Արդյունքում փորձելով հիմնավորել, որ Ղարաբաղի բարբառը առաջացել է շատ ավելի վաղ, քան Արցախի՝ 387 թվականի մեկուսացումը, հեղինակը հակադրվում և հերքում է Արցախի պատմությունը աղավաղող աղբրեջանամետ որոշ գործիչների առաջ քաշած այն թյուր տեսակետը, որ իբր Ղարաբաղի բարբառը առաջացել է ավելի ուշ՝ գարգարա-հաբեթական լեզվի կամ աղվաներենի հիմքի վրա:

⁴⁰ **Ուլուբաբյան Բ.**, Հայոց լեզվի հյուսիս-արևելյան եզրի և հարակից հարցերի մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1968, N 1, էջ 51-77:

1975թ. Ալեքսանդր Մարգարյանը հրատարակում է «Գորիսի քարքառը» մենագրությունը⁴¹ ներկայացնելով Գորիսի շրջանի բուլոր և Սիսիանի ու Ղափանի շրջանների սահմանամերձ որոշ բնակավայրերի խոսվածքների ամբողջության՝ Գորիսի քարքառի (իմա՝ Ղարաբաղի քարքառի ենթաբարբառ) ամբողջական համաժամանակյա (մի շարք դեպքերում նաև գրաբարի համեմատությամբ) ուսումնասիրությունը: Այն բաղկացած է ներածական մասից և երկու բաժնից: «Ներածության» (էջ 3-22) մեջ տեղեկություններ են տրվում քարքառի ընդգրկած տարածքների, քարքառի վերաբերյալ եղած ուսումնասիրությունների, նրանով գրառված նյութերի մասին, Ղարաբաղի քարքառից ունեցած տարբերությունների վերհանմամբ փորձ է արվում հիմնավորելու նրա՝ ինքնուրույն քարքառ լինելու տեսակետը: Առաջին բաժինը բաղկացած է չորս մասից՝ «Հնչյունաբանություն» (էջ 23-116), «Ձևաբանություն» (էջ 117-237), «Բառագիտություն» (էջ 238-269), «Նմուշներ» (էջ 270-310): Առաջին մասում ներկայացվում են քարքառի հնչյունական համակարգը, շեշտի դրսևորումները, ձայնավորների, երկբարբառների, բաղաձայնների համաժամանակյա ու տարաժամանակյա հնչյունափոխությունները, հնչյունների անկման, հավելման, կրկնության, դրափոխության դեպքերը: Երկրորդ մասում առանձին ենթաբաժիններով հանգամանորեն քննության են առնվում բուլոր խոսքի մասերի ու նրանց քերականական կարգերի դրսևորումները: Առանձնակի ուշադրություն է դարձվում գոյականի հոգնակիակազմության, հոլովների ու նրանց կազմության, հոլովման, հոդառության, ածականի համեմատության աստիճանների, դերանունների հոլովման, դերբայների կազմության ու գործածությունների, բայի եղանակների ու ժամանակաձևերի կազմության, բազմապատկական, կրավորական, պատճառական, անկանոն, պակասավոր բայերի, ժխտական խոնարհման, երկրորդական բաղադրյալ ժամանակների, կապերի հոլովառության ևն քննությանը: Երրորդ մասը նվիրված է քարքառի բառապաշարի շերտերի, իմաստափոխության ու բառակազմության քննությանը: Չորրորդ

⁴¹ Մարգարյան Ալ., Գորիսի քարքառը, Ե., 1975:

մասի առաջին ենթամասում զետեղված են բարբառային նմուշներ մի շարք գյուղերի ու Գորիս քաղաքի խոսվածքներով, իսկ երկրորդ ենթամասում ներկայացվում են գրաբարից ավանդված, բարբառային, արևելյան լեզուներից և ռուսերենից փոխառյալ բառերի բառացանկեր (շուրջ 10000 միավոր): Մենագրությունից բացի, Ալ. Մարգարյանը տարբեր տարիների հանդես է եկել մի շարք հոդվածներով⁴², որոնք հետագայում ընդգրկվել են նրա «Ստուգաբանություններ» գիտական ժողովածուի մեջ⁴³: Դրանցում հեղինակը, արժևորելով հայ բառագիտության նվաճումները մասնավորապես բառերի ծագման, առաջացման, բաղադրության ու փոփոխությունների հարցերի ուսումնասիրման բնագավառում և քննադատաբար մոտենալով այլ լեզվաբանների տեսակետներին, հնչյունափոխական տարբեր երևույթների և բառիմաստների զուգորդությամբ կատարում է հիմնականում Ղարաբաղի և Գորիսի բարբառներում գործածվող բազմաթիվ բառերի (*աշան/հաշան* (կալի մեջ խրձերի ցրվածքը), *սւքել* (ցամաքել, չորանալ), *ձկռել* (կզել), *կաթ* (շիթ, կաթիլ), *թրմփալ* (մեծ ձայնով ընկնել), *զամբ/զէմբ* (ջրադացի քարերի շուրջը նստած այլուրի փոշի), *չռել* (աչքերը լայն բացած և

⁴² **Մարգարյան Ալ.**, Աշան բառի այլ ստուգաբանության փորձ, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1994, N 2, էջ 72-74, **Մարգարյան Ալ.**, Բառաքնական դիտողություններ, «Պատմաբանասիրական հանդես», Ե., 1959, N 4, էջ 221-232, **Մարգարյան Ալ.**, Բառաքնություն, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1981, N 1, էջ 180-187, **Մարգարյան Ալ.**, Բարբառային բառերի մեկնություններ, «Պատմաբանասիրական հանդես», Ե., 1971, N 3, էջ 210-221, 1973, N 4, էջ 127-136, 1975, N 2, էջ 183-191, 1977, N 3, էջ 157-164, 1980, N 2, էջ 98-104, 1998, N1-2, էջ 221-226, **Մարգարյան Ալ.**, Բարբառային մի քանի բառերի ծագման մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1972, N2, էջ 236-242, **Մարգարյան Ալ.**, Մի քանի տեղանունների ծագման մասին, «Պատմաբանասիրական հանդես», Ե., 1988, N4, էջ123-130, **Մարգարյան Ալ.**, Ծիռուկայր տեղանվան ծագման մասին, «Զանգեզուր», Գորիս, 1991, 21 մարտի, թիվ 35(6982), **Մարգարյան Ալ.**, Ստուգաբանական հետախուզումներ, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1985, N3, էջ 92-102, **Մարգարյան Ալ.**, Ստուգաբանական մեկնություններ, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1992, N 2, էջ 122-135, 1994, N 3, էջ124-132, **Մարգարյան Ալ.**, Տեղանվանական մեկնություններ, «Պատմաբանասիրական հանդես», Ե., 1992, N1, էջ 133-139:

⁴³ **Մարգարյան Ալ.**, Ստուգաբանություններ, Ե., 2015:

սևեռուն նայել, երկար ժամանակ հայացքը չհեռացնել նույն կետից), *շկակել* (արագ վագել), *պլպլալ//պսպղալ//փսպղալ* (փայլել, ցոլալ), *ծածառ* (երեխայի՝ նոր ոտքի կանգնելը), *շրդաղել* (շաղախել), *պսպար//պսպալ* (պար, երեխայի խաղալը), *քոլոլ* (շների գգգվելը՝ գգվրտոցը), *մըրցընէլ* (փակել, ծածկել, կողպել), *խօխա//ըրախա//րախա* (1.երեխա, ծնողի չհասունացած որդի, զավակ, 2. տղայամիտ, մանկամիտ, անմիտ, անփորձ), *առռի//առռէ* (հույժ, շատ), *ճօշք//ճօժկ* (1. բամբասանք, 2. կախօրրան, ճլորթի), *շալք* (գոլորշի, շոգի), *պէկ//պակ* (1.ավերված, քարուքանդ եղած տեղ, ավերակ, 2.արտաքնոց), *տունչ* (դեմքի այն մասը, որտեղ քիթը, բերանը և ծնոտն են գտնվում), *աղէր//աղէր* (տերտեր, քահանա), *առիս* (ինձ մոտ, մոտս, ձեռքիս), *մըթքէն դօնը ընգնէլ* (մտքերի մեջ խորասուզվել), *թօր(ը)//թօռ(ն)* (որ, որտեղ, դեպի որ կողմը), *խընձաղա//խընձաղի* (ձնծաղիկ), *կըզնըվէլ//կըզնվիլ* (բարկանալ, գայրանալ), *գուլի* (1.հնդկահավ, 2.հնդկահավին կանչելու ձայն), *խըռըզնըհատ ինիլ//տըէռնալ* (տանջամահ լինել), *խըռըզնըհատ անէլ* (տանջամահ անել), *կուզէլ//կուզէլ//կուզիլ//կուզիլ* (1.միզել, 2.վախենալ, մի բանից խիստ զարհուրել), *հախկ* (ընկերակից գութանավորներից ամեն մեկի վարելիք հողը), *սաքէլ* (իրար վրա կանոնավոր դարսել), *սատալ-սըքատալ* (խիստ սատել, ընդարմանալ, մրսել), , *զլուխկոնձի* (զլխի վրայով թավալվելով ոստյուն), *թարսել//թարսիլ* (ընդեղենը տեփուրով թեթև վեր նետելով՝ հակառակ կողմը շուտ տալ), *սէն* (կանանց և սուրբ կենդանիների կրծքի կաթի անուժ, փուչ լինելը), *տանկ//տանգ* (ջվալի (տոպրակի) երկու կողերի օղակները), *տօպ* (1.կաթիլ, 2.մի քիչ), *կոնձէլ* (1.ոգելից խմիչքով լի բաժակը միանգամից դատարկել՝ ըմպել, 2.խմել, հարբել), *հուշտոիկ* (1.խրտնող, 2.թեթևսուլիկ, թեթևամիտ), *պլուտ* (1.աղքատ, դատարկաձեռն, 2.անբարոյական), *տունդի* (երաստան, նստատեղի), *թերմացք* (կերակրի մնացորդ), *լըհա // լիհա // ալլահ // ալլա // էլլա//էլլահ* (1.պէս, նման, կարծես թէ, 2.երբ որ, հենց որ, 3.միայն, միայնակ, 4.այլևս, դարձյալ, մեկ էլ), *լօխ* (ամբողջ), *ճապկի* (ամուր և ճկուն ճյուղերով թուփ), *շհատք//շահաղ//շհաղ* (հացահատիկն աղալու վարձ, որ վերցնում են

հացահատիկով), *չիմ* (բոլորը, ամբողջը, ամենքը), *պէլ* (գիժ, խենթ), *մի/մին/մըն/մը հավուր // հովուր* (1.մի քիչ՝ որոշ ժամանակ, 2.դիցուք, ասենք թե), *արշա ընզընէլ // ինգիլ // կ'ալ* (1.ծնվել, ծնունդ առնել, 2. հայտնվել, առաջանալ, գոյանալ, ստեղծվել), *ճուարան//ճուվարան//ճրվարան* (կթոց, դալար ճյուղերից հյուսված մեծ կողով), *տառալ* (կատաղել), *սըլպահաստ//սիլպահաստ//սիլպիհաստ//սըլպիհաստ* (ընտիր, մաքուր (ցորեն), *լալ* (հորդ՝ տեղատարափ անձրև, հեղեղ), *հէնց//հանց* (1.այնպես, այն կերպով, 2.ուղղակի, իսկ և իսկ, 3.նույնիսկ), *պոպոզ* (սրածայր, սուր ծայրով վերջացող), *սնդու//սնտու* (գետնի երեսից հողի տակով դեպի թոնիրը տանող խողովակաձև անցք), *գահմ* (վախ, սարսափ), *ըրամա(ն)կ//ըրամա(ն)զ//ըրամա(ն)ք ըղնէլ // ինգէլ* (մարդու շարք անցնել, հրապարակում երևելի լինել, ինչ-որ բանով հայտնի դառնալ), *քնափ* (շատ քնող, քնկոտ), *ճպէլ* (աչքը թարթել) *միլ* (գերան), *մղակ* (դուռ, դռան ներքին կողմը, շեմքի մուտքը), *շնթոնէլ //շնթոկէլ//շնթոտէլ* (մի տեղ երկար նստել մնալ, պառկել, քնել (շների և մարդկանց մասին), *նան // նանա//նանե//նանի* (մայր, մայրիկ), *տկլոր* (բոլորովին մերկ, մերկանդամ), *փնթի//փնթէ* (1.կեղտոտ, 2.տգեղ, 3.թափթփված, անփույթ) և որոշ տեղանունների (*Գորիս, Ջանգեզուր, Խնածախս//Խանածախս, Կոռնիձոր//Կոռնիձոր, Մշնահանդ, Ջալախիր, Քարահունջ, Շինուհայր//Շնհեր//Շընրհէր, Արավուս, Խնձորեսկ, Խոզնավար*) ստուգաբանական վերլուծություններ:

Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության մեջ կարևոր տեղ ունի Լավրենտի Հովհաննիսյանը: Դեռևս 1977թ. հրատարակած հոդվածում⁴⁴ նա հանգամանորեն քննում է բարբառի՝ գրաբարի հետ ունեցած բառային (*արթակ, բանգի, ըրմանալ, թումբ, խանձող, կապար, կլափէն տալ, հայս, ճիճի, ճիրըթափվէլ, քրթըվէլ, ճոճոկ, մին, չօրք, ուլանալ և այլն*) և քերականական (*անձներական թվականների առկայություն, որոշ բայերի իմաստային բազմաբնույթ կիրառություններ, հոգնակերտ ք-ի պահպանում, -ուք վերջավոր-*

⁴⁴ **Հովհաննիսյան Լ.**, Գրաբարի եւ Ղարաբաղի բարբառի առնչության հարցի շուրջ, «Պատմաբանասիրական հանդես», Ե., 1977, N 1, էջ 141-152:

ըությամբ հոգնակի գործիականի կազմություն, որոշ նախդիրների գործածություն, մի շարք բառերում վերջնահանգ ն-ի պահպանում, հարցանել և խնդրել բայերի՝ բացառական հոլովով խնդրատություն, հինհայերենյան բազմաթիվ ոճերի (քընավ ընցընել, հըդէ ընգընել, մըննան ընգնել, աշք ածել) պահպանում և այլն) մի շարք ընդհանրություններ, որոնք արդի հայերենում չեն գործածվում կամ հաճախական չեն, ինչպես նաև հնագույն բարբառային որոշ արտահայտություններ, որոնք բաժանում է երկու խմբի՝ գրաբարում ավանդված գուգահեռ ձևերից մեկի առկայություն և գրաբարում չավանդված հնդեվրոպական կամ հին բարբառային արտահայտություններ: Դրանց և պատմական որոշ փաստերի ներկայացմամբ հեղինակը, հակադրվելով այն տեսակետին, որ Արցախի բնակչությունը հայախոս է դարձել 9-12-րդ դարերում, և բարբառի ծագումը կապվում է այդ դարերի հետ, հիմնավորում է, որ Արցախ-Սյունիքում հայերենը սկսել է գործածվել հայ տարրերի կազմավորման ընթացքին զուգահեռ, և այդ տարածքում գործածվող հայերենը, բազում դարերի ընթացքում կրելով զգալի փոփոխություններ, մեզ է հասել մի վիճակով, որը կոչվում է Ղարաբաղի բարբառ: Նույն շրջանի մեկ այլ հոդվածում⁴⁵ հանրահայտ ճշմարտություն համարելով բարբառային որոշ բառերի ու բառաքերականական ձևերի հին ակունքներ ունենալը՝ հեղինակը քննում է պատմական Արցախ և Սյունիք նահանգներում գործառող ընդհանուր՝ Ղարաբաղի բարբառի բառային մի շարք հնաբանություններ՝ դրանց տակ նկատի ունենալով ինչպես գրաբարում չավանդված, այնպես էլ ավանդված, սակայն արդի գրական հայերենում ու որոշ բարբառներում չգործածվող կամ էլ նվազ գործածական բառերն ու բառաձևերը: Որպես գրաբարում չավանդված հնաբանություն՝ հիշատակվում է ձայնդարձը, որի մի շարք ցայտուն օրինակներ առկա են Ղարաբաղի բարբառում՝ *խաչ-խեչ(ակ)*, *շեշտ-շաշտ*, *քերթ-քարթ(եղ)*: Գրաբարում չավանդված՝ հնդեվրոպական ծագմամբ բառերից նշվում են նաև *կրթել*, *լլմլամել*, *շքոել*, *շըկակել*,

⁴⁵ **Հովհաննիսյան Լ.**, Բառային հնաբանություններ Ղարաբաղի բարբառում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1979, N 9, էջ 52-60:

տհանիլ: Առավել հանգամանորեն են ներկայացվում գրաբար-
բարբառ առնչությունների արդյունքում Ղարաբաղի բարբառին
հատուկ, բայց գրական հայերենում չգործածվող կամ նվազ գոր-
ծածական հինհայերենյան տասնյակ բառեր և կազմություններ՝
*պուտ, կեղ, կօտեգ, գիրգամօտ, պիցիթենիլ, նորել, քեմուխտ, ծիր,
ճեղնը, գօզուակ, նօթել, կօռնը, նի տալ, յրտանալ, պըրանէլ*: Այս
շարքին են դասվում նաև գրաբարյան նույն բառի իմաստային
նրբերանգով գործածվող *անկիւն* (մի կողմ, ծայր), *տանիմ* (տեղա-
վորել, պարունակել), *աղոթել* (բուժել, գիր առնել), ամբողջությամբ
գրաբարում չավանդված, սակայն գրաբարյան բաղադրիչներից
կազմված *պիտրնհարինք, փուրրհարէնք, պիցիհար, ըխպրհար,
քամհար, քեթկալ, պունակալ, վրոակալ, քըմըկալած, կըղըկալած,
լըպըկալած*, գրաբարի սկզբնական արտասանությունը պահպա-
նած *յէինել, յէտ, յըղէ, յուպուպ, յանգին քըցիլ, յօրթ-յօրթ անէլ*
բառերն ու կազմությունները: Հետագայում ավելի խորացնելով
ուսումնասիրությունները⁴⁶ Լ. Հովհաննիսյանը այլ լեզվաբանների
կարծիքների համեմատությամբ հանգամանորեն քննում և ստու-
գաբանում է բարբառում գործածվող տասնյակ հնաբանություններ,
բարբառային և իրանական լեզուներից փոխառյալ բառեր (*դօն,
ըրաժան/արաժան, ըրամակ ընկնել, կասկ, տաճակ, այա, անգի,
թոնթորալ, լեմ, կտիտ, ճիթ, շկակել, սեռ, սղալել, տնզգել, ցեռ,
ցլեփ, քծծել, քնթել, ազի, դօն, լեթված, իըրթըլուկ, ծօռնը, կեփ, կօք*

⁴⁶ **Հովհաննիսյան Լ.**, Բարբառային մի քանի բառերի քննություն, «Պատմաբանա-
սիրական հանդես», Ե., 1999, N 2-3, էջ 283-287, **Հովհաննիսյան Լ.**, Ղարաբաղի
բարբառի բառապաշարի հնագույն շերտերը, «Լրաբեր հասարակական գիտու-
թյունների» Ե., 2000թ., N1, էջ 117-122, **Հովհաննիսյան Լ.**, Ղարաբաղի բարբառում
իրանական մի քանի փոխառությունների մասին, «Լրաբեր հասարակական
գիտությունների», Ե., 1990, N 11, էջ 65-70, **Հովհաննիսյան Լ.**, Ղարաբաղի բարբա-
ռում միջին իրանական լեզուներից կատարված մի քանի փոխառությունների
շուրջ, «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ. Միջազգային գիտաժողով, 8-9
հոկտեմբերի, 2014 թ.. Ջեկուցումների ժողովածու», Ե., 2014, էջ 62-67, **Հովհաննիս-
յան Լ.**, Ղարաբաղի (Արցախի) բարբառի մի քանի բառերի ստուգաբանություն,
«Պատմաբանասիրական հանդես», Ե., 2019, N 1, էջ 177-183, **Հովհաննիսյան Լ.**,
Ղարաբաղի (Արցախի) բարբառի բայական հնաբանությունները, «Ջահուկյանա-
կան ընթերցումներ», Ե., 2021, էջ 79-83:

(տալ), կօնք, հասի, շէկէ, պըլօրը (տանէլ), պըէ, չավ (անէլ), սըլէթա, սըտ, վահր, տալ, տըհանիլ, թակէլ, պուլ, կէտ, կէտէլ, կէտ անէլ, կէնալ, անքմ, թէր, լուսէմնը, անգ, պիհիթ, պէնալ, պէռնէլ, բէրբէլ, կէզան, կէնգաս, լօսէլ, (տ)կողին, շաղվէլ, թառ, կէզան, հարգակ, պըտըրհան, աշկարա, հըրակաշ, վոագ, սօշ, նի ընկնէլ, նի ծըծէլ, նի անէլ, նի քըցիլ, նի մտնէլ, նի պըծնէլ, նի թակէլ, նի կցնէլ, նի կապէլ, նի պրանէլ, նի կյալ, նի կէնալ, նի կօկէլ, նի չըռէլ, բարա, տըժէր, կուշտ/քուշտ, բըշտէլ, բիշտի տալ, հուշտ (լինէլ), չափ (տալ, թողէլ), հազ (անէլ), սազ (անէլ), լօլակ, թալակ, կըռօճ, ասպ(ը), ճուլհակ, հըրիշտրակ, տըրիճակ, տէնգ, սօշ, նշան, նշանց տալ են)՝ անդրադառնալով դրանց իմաստային ու գործառական առանձնահատկություններին և հավաստելով, որ նմանօրինակ նյութի քննությամբ կարելի է նորովի լուսաբանել Ղարաբաղի բարբառի կազմավորման բնույթն ու ընթացքը, գրաբար-բարբառ փոխհարաբերությունները, այլ բարբառների նկատմամբ դրսևորվող յուրահատկությունները և հաստատել պատմական Արցախի տարածքում վաղնջական շրջանից հայ տարրի ու հայոց լեզվի գոյության փաստը:

Այլ հոդվածներում⁴⁷ Լ. Հովհաննիսյանն անդրադառնում է գրաբարյան ձայնեղների՝ բարբառում խլացման երևույթից շեղվող դեպքերին, բարբառի բառակազմական հնաբանություններին, միջին հայերենի և Ղարաբաղի բարբառի բուսանունների գուգադրական քննությանը նն:

Գրաբարի և աշխարհաբարի համապատասխան օրինաչափությունների հետ համեմատությամբ պատմական Արցախ-Սյունիքի բուն խոսվածքների անվանական հոլովման որոշ առանձնա-

⁴⁷ **Հովհաննիսյան Լ.**, Գիտարկումներ Ղարաբաղի բարբառի բաղաձայնական համակարգի վերաբերյալ, «Ջահուկյանական ընթերցումներ. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու (Ե., հունիսի 15-16, 2017)», Ե., 2017, էջ 206-210, **Հովհաննիսյան Լ.**, Միջին հայերենի և Ղարաբաղի (Արցախի) բարբառի բուսանունների գուգադրական քննություն, «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության արդի խնդիրներ. Գիտական հոդվածների ժողովածու», Ե., 2019, էջ 97-106, **Հովհաննիսյան Լ.**, Ղարաբաղի բարբառի բառակազմական հնաբանությունները, «Ջահուկյանական ընթերցումներ», Ե., 2020, էջ 100-106:

հատկություններ՝ ձայնավորող վերջավորվող բառերի, այդ թվում *-ցի* վերջածանցով գոյականների՝ *-ք*-ով հոգնակիակազմություն և *ք-ց* հերթագայությամբ թեքում, բաղաձայնահանգ բազմավանկ բառերի՝ *-նէ/-նի* վերջավորությամբ հոգնակիակազմություն և խոսվածքների մեծ մասում *ի* հոլովմամբ թեքում, ընտանիք, գերդաստան ցույց տվող *-անք*, *-ունք* վերջավորություններով հավաքական անունների, ինչպես նաև եզակի թվում ներքին *օ* հոլովման ենթարկվող գոյականների, *ախճիկ*, *կընէկ*, *մարթ* բառերի հոգնակի ձևերի և տեղի հատուկ անունների՝ գրաբարյան հոլովման առանձնահատկությունների պահպանում, նույն բառերի անորոշ և որոշյալ առումներով գործածությամբ պայմանավորված՝ սեռական-տրականում տարբեր թեքություններով (*ի*, *ու*) հոլովում, ներքին *օ(ու)* հոլովման լայն կիրառություն, *ոջ* հոլովման խիստ սահմանափակում, որոշ բառերի տարածն հոլովումներ են են ներկայացվում Բարսեն Մեծունցի «Անվանական հոլովման առանձնահատկությունները Արցախ – Սյունիքի խոսվածքներում» հոդվածում⁴⁸:

Այլ հոդվածներում⁴⁹ հեղինակը քննության է առնում Ղարաբաղի բարբառի Շաղախի ենթաբարբառի հոլովման ու խոնարհման առանձնահատկությունները, ձայնավորների (հատկապես գրական հայերենում չվկայված) հնչույթային համակարգը, Շամշադին-Իջևանի խոսվածքի և Արարատյան ու Ղարաբաղի բարբառների փոխհարաբերությունները: Հարկ է նշել, որ Բ. Մեծունցը 1975թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն⁵⁰, որ-

⁴⁸ **Մեծունց Բ.**, Անվանական հոլովման առանձնահատկությունները Արցախ – Սյունիքի խոսվածքներում, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1989, N 1, էջ 106-113:

⁴⁹ **Մեծունց Բ.**, Հոլովման ու խոնարհման առանձնահատկությունները Շաղախի ենթաբարբառում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1974, N3, էջ 86-91, **Մեծունց Բ.**, Շաղախի բարբառի ձայնավոր հնչույթները, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1973, N 1, էջ 218-223, **Մեծունց Բ.**, Շամշադին-Իջևանի խոսվածքի և Արարատյան ու Ղարաբաղի բարբառների փոխհարաբերությունները, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1985, N2, էջ 43-47:

⁵⁰ **Մեծունց Բ.**, Շաղախի ենթաբարբառը, Ե., 1975, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարան (ձեռագիր):

տեղ ներկայացվում է Արցախի Հաղթուծի շրջանի Խծաբերդ, Դուլանլար, Շաղախ, Մելիքջանլու, Խրմանջուղ, Ալբուլաղ գյուղերի խոսվածքների ամբողջության՝ Շաղախի ենթաբարբառի համաժամանակյա քննությունը: Ներածական մասում տեղեկություններ են տրվում տվյալ գյուղերի հիմնադրման, հարցի ուսումնասիրության պատմության, աշխատության կազմման սկզբունքների ու կառուցվածքի մասին: Բուն ուսումնասիրության մեջ առանձին բաժիններով և ենթաբաժիններով քննության են առնվում ենթաբարբառի հնչյունախոսությունը, հնչյունափոխության դեպքերը, խոսքի մասերի և նրանց քերականական կարգերի դրսևորումները, շարահյուսական առանձնահատկությունները, բառապաշարի շերտերը, իմաստափոխության տեսակներն ու դեպքերը, բառակազմական միջոցները: Ուսումնասիրությանը կցված են նշված վեց գյուղերի խոսվածքներով գրառված նյութեր, գրաբարից ավանդված ու բարբառային բառերի բառացանկեր և օգտագործված գրականության ցանկ:

Տարբեր լեզվաբանների կողմից առանձին բարբառ, Ղարաբաղի բարբառի կամ Ղարաբաղի ու Մեղրու բարբառների ենթաբարբառ ընդունված և Պարսկաստանի Փայտակարան-Ղարաղաղի տարածքում խոսված խոսվածքախմբերի հնչյունաքերականական օրինաչափություններն են ներկայացվում Ռուբեն Բաղդամյանի «*Ղարաղաղի միջենթաբարբառը*» հոդվածում⁵¹: Այստեղ հեղինակը փորձում է հիմնավորել Ա. Ղարիբյանի կողմից առաջ քաշված տեսակետն այն մասին, որ Ղարաղաղի տարածքում գործել են երեք ենթաբարբառներ՝ Ղարաղաղի, Դգմարի և Քեյվանի, որոնք միջին դիրք են գրավել մերձարաքսյան ու Արցախական կամ *ւ-ական* և *ոււ-ական* եռաստիճան անտեղաշարժ և երկաստիճան ձայնեղագուրկ բաղաձայնական համակարգ ունեցող բարբառախմբերի նկատմամբ:

Հարցի ուսումնասիրության համար առաջադրելով մի քանի կանխադրույթներ՝ հնչյունախոսական պլան, գործառական պլան,

⁵¹ Բաղդամյան Ռ., Ղարաղաղի միջենթաբարբառը, «Պատմաբանասիրական հանդես», Ե., 1985, N 1, էջ 185-194:

տառադարձություն, դիտարկման նյութը, պատմական հայեցակետը և համաժամանակյա դիտարկումները, տարբերակիչ հատկանիշների համակարգը, մենահատկանիշ հնչույթաբանական հակադրություններ, ձայնավորների ներդաշնակությունը և հնչույթաբանական հակադրությունները, հնչունական բնութագրության տեսանկյունները, տառերի այբբենական դասավորությունը, Հրանտ Պետրոսյանը «Ղարաբաղի բարբառի հնչունական կազմը» հոդվածում⁵² քննում է բարբառի, մասնավորապես նրա Ջրաբերդի խոսվածքի հնչունական կազմը: Առանձնակի ուշադրություն է դարձվում հնչույթային համակարգին, իմաստային հակադրության նվազագույն զույգերի միջոցով հաստատվում են ձայնավորների և բաղաձայնների հնչույթային արժեքը, որի արդյունքում հիմնավորվում է, որ նշված խոսվածն ունի 43 հնչույթ (11 ձայնավոր և 32 բաղաձայն): Հոդվածագիրը նաև այն տեսակետն է արտահայտում, որ Ղարաբաղի բարբառի տառերի այբբենական դասավորությունը անհրաժեշտ է կատարել ըստ մեսրոպյան այբուբենի՝ մասնակի փոփոխություններով՝ քմայինները տեղադրելով համապատասխան ոչ քմայիններից հետո, *ու*-ն՝ *ւ*-ի տեղում, *օ*-ն *ո*-ի, *ը*-ն՝ *ը*-ից հետո:

Արցախյան ազգային-ազատագրական շարժումը նոր թափ է հաղորդում Արցախի գիտության զարգացմանը: Պատմության, ազգագրության, հնագիտության, բանագիտության և այլ բնագավառներին զուգընթաց մեծ ուշադրություն է դարձվում Ղարաբաղի բարբառի ուսումնասիրությանը:

1998թ. Արմեն Սարգսյանը ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում պաշտպանում է թեկնածուական թեզ «Շաղախի ենթաբարբառը Հաղրութի ենթաբարբառի միջավայրում» թեմայով, որը հրատարակվում է հետագայում⁵³: Այստեղ համաժամանակյա և տարածաժամանակյա մոտեցումներով քննվում են Արցախի Հաղրութի շրջանի

⁵² **Պետրոսյան Հ.**, Ղարաբաղի բարբառի հնչունական կազմը, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1986, N 2, էջ 45-55:

⁵³ **Սարգսյան Ա.**, Շաղախի ենթաբարբառը Հաղրութի ենթաբարբառի միջավայրում, Ստեփանակերտ, 2009:

Խծաբերդ, Դուլանլար (Արևշատ), Շաղախ (Մարեն շեն), Մելիքջան-լու (Մելիքաշեն), Խրմանջուղ (Ծաղկավանք), Ալբուլաղ (Ակնաղբյուր) գյուղերի խոսվածքները, որոնց ամբողջությունը մասնագիտական գրականության մեջ հայտնի է *Շաղախի ենթաբարբառ* անվամբ, և որոնց բնակիչների նախնիները 1828թ. այդ գյուղերն են գաղթել Պարսկաստանի Ղարադաղի գավառից: Աշխատությունը բաղկացած է ներածական մասից և հինգ բաժնից: «Ներածության» մեջ (էջ 3-5) տեղեկություններ են տրվում տվյալ գյուղերի հիմնադրման, տեղական՝ Հաղրութի ենթաբարբառից մայրենի՝ Ղարադաղի բարբառի կրած ազդեցությունների, արդի վիճակի, հարցի վերաբերյալ եղած ուսումնասիրությունների վերաբերյալ: Առաջին բաժնում՝ «Հնչյունաբանություն» (էջ 6-24), առանձին ենթաբաժիններով հանգամանորեն ներկայացվում են ենթաբարբառի հնչյունախոսությունը, հնչույթային համակարգը, շեշտի դրսևորումները, համաժամանակյա, տարաժամանակյա, դիրքային և փոխազդեցական հնչյունափոխության դեպքերը: Երկրորդ բաժինը՝ «Ձևաբանություն» (էջ 25-78), նվիրված է խոսքի մասերի և նրանց քերականական կարգերի քննությանը: Երրորդ բաժնում՝ «Շարահյուսական ակնարկ» (էջ 79-80), թվարկվում են շարահյուսական առանձնահատկությունները, իսկ չորրորդ բաժնում՝ «Բառագիտություն» (էջ 80-85), քննվում են ենթաբարբառի բառապաշարի շերտերը, իմաստափոխության տեսակներն ու դեպքերը, բառակազմական միջոցները: Ամբողջ քննությունը կատարվում է Ղարաբաղի բարբառի Հաղրութի ենթաբարբառի համեմատությամբ և հին ու նոր սերունդների խոսվածքների հակադրությամբ: Նման մոտեցմամբ հինգերորդ բաժնում՝ «Շաղախի և Հաղրութի ենթաբարբառների համեմատական նկարագիրը» (էջ 86-88), հեղինակը Գ. Ջահուկյանի՝ հայերենի բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման ակզբունքների և տարբերակիչ հատկանիշների համաձայն ներկայացնում է Շաղախի ենթաբարբառի հին ու նոր խոսվածքների և Հաղրութի ենթաբարբառի համեմատական նկարագիրը՝ արդյունքում հիմնավորելով, որ Շաղախի հին սերնդի խոսվածքը ներկայանում է որպես առանձին ենթաբարբառ, մինչ-

դեռ նոր սերնդի խոսվածքը դասվում է Հաղորթի ենթաբարբառի խոսվածքների շարքին: Ուսումնասիրությանը կցված են նաև հավելված (էջ 89-97), որտեղ նշված վեց գյուղերի ու Հաղորթի հին և նոր սերունդների խոսվածքներով ներկայացվում են բարբառային նյութեր, և օգտագործված գրականության ցանկ (էջ 98-100):

Ենթաբարբառի որոշ օրինաչափություններ հրատարակվել են նաև առանձին հոդվածներով⁵⁴: Այլ հոդվածներում և գիտական զեկուցումներում հեղինակն անդրադարձել է Ղարաբաղի բարբառի հնչույթային համակարգին⁵⁵, բանահյուսական ժողովածուներում բարբառային օրինաչափությունների և հատկապես տառադարձության պահպանման կարևորությանը⁵⁶, բառապաշարին⁵⁷, դարձվածային իրողություններին⁵⁸, Ղարաբաղի տարածքի

⁵⁴ **Մարգարյան Ա.**, Շաղախի ենթաբարբառի հնչույթային համակարգը, «Բանբեր Երեւանի համալսարանի», Ե., 1995, N 3, էջ 197-203, **Մարգարյան Ա.**, Շաղախի եւ Հաղորթի ենթաբարբառների դերանվանական համակարգը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 1998, N 1, էջ 59-64, **Մարգարյան Ա.**, Շաղախի և Հաղորթի ենթաբարբառների համեմատական նկարագիրը, «Գիտությունը եւ կրթությունը Ղարաբաղում», Ե., 1997, N 2, էջ 62-65:

⁵⁵ **Մարգարյան Ա.**, Արցախահայ բարբառի հնչույթային համակարգը, «Հայ բարբառագիտության միջազգային համագումար, 11-12 օգոստոս, Ստեփանակերտ, 2001 թ. Թեզիսներ», Ստեփանակերտ, 2001, էջ 29-30, **Մարգարյան Ա.**, Չայնավոր և բաղաձայն հնչույթները Գորիսի բարբառում, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2011, N 1-2, էջ 95-97:

⁵⁶ **Մարգարյան Ա.**, Բարբառային օրինաչափությունների պահպանման կարևորությունը բանահյուսական ժողովածուներում (Ղարաբաղի բարբառի օրինակով), «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2012, N 1, էջ 108-110, **Մարգարյան Ա.**, Տառադարձության կարևորությունը բանահյուսության մեջ, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի 10-ամյա զործունեությանն ու Շուշիի ազատագրման 15-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, հոկտեմբերի 19-21, 2007 թ.», Ստեփանակերտ, 2007, էջ 61-62:

⁵⁷ **Մարգարյան Ա.**, Բնիկ, բարբառային եւ փոխառյալ բառերը արցախահայ բարբառում, «Նարեկ» Ստեփանակերտ, 2003, N 2, էջ 34-36, **Մարգարյան Ա.**, Հապավումները արցախահայ բարբառում, «Լեզվի եւ գրականության զարգացման ու դասավանդման հիմնախնդիրներ. ԱրՊՀ» Ստեփանակերտ, 2004, էջ 16-19, **Մարգարյան Ա.** Ղարաբաղի բարբառի գունանունները (հեղինակակց Շ. Մինասյան), «Բանբեր Երեւանի համալսարանի», Ե., 2004, N 2, էջ 190-194, **Մարգարյան Ա.**, Գրաբարից

բարբառների արդի կարգավիճակին, Արցախի տարածքում բարբառային ազդեցություններին և հայերենի բարբառների շարքում Մեհտիշենի բարբառի տեղին⁵⁹, բարբառի ուսումնասիրության

ավանդված բառերի իմաստափոխական որոշ դեպքեր արցախահայ բարբառում, «Հայ գրերի գյուտի եւ Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակին նվիրված կրթական միջազգային գիտաժողով. Ձեկուցումների դրույթներ. Հունիսի 2-5-ը, 2005 թ., Ստեփանակերտ – Ամարաս», Ե., 2005, էջ 68-70, **Սարգսյան Ա.**, Բարբառային բառերը եւ բառաձևերը Ղազարոս Աղայանի հեքիաթներում, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2008, N 1, էջ 117-118, **Սարգսյան Ա.**, Հնդեվրոպական ծագում ունեցող բառերը Ղարաբաղի բարբառում, «Հայոց լեզվի հարցեր. ԱրՊՀ», Ստեփանակերտ, 2009, էջ 48-50, **Սարգսյան Ա.**, Բուն ազգացկական բառանվանումները Ղարաբաղի բարբառում, «Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին», Ստեփանակերտ, 2009, պրակ 1, էջ 12-14, **Սարգսյան Ա.**, Ռուսերենից փոխառյալ բառերի հնչյունային եւ իմաստային փոփոխությունները Ղարաբաղի բարբառում, «Լրատու.Մեսրոպ Մաշտոց համալսարան», Ստեփանակերտ, 2010, N 2, էջ 239-242, **Սարգսյան Ա.**, Ղարաբաղի բարբառի բառապաշարի արտացոլումը հայերենի բարբառային բառարաններում, «Ջահուկյանական ընթերցումներ. Հրաչյա Աճառյանի ծննդյան 135-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Ե., 2011 թ., ապրիլի 27-29)», Ե., 2011, էջ 257-269:

⁵⁸ **Սարգսյան Ա.**, Հատուկ անուններով կազմված դարձվածները Ղարաբաղի բարբառում, «Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողով. 7-9 հոկտեմբերի, 2015 թ.. Ձեկուցումների ժողովածու», Ե., 2015, էջ 305-312, **Սարգսյան Ա.**, Ղարաբաղի բարբառի բայական դարձվածների սեռային առանձնահատկությունները, «Ջահուկյանական ընթերցումներ. Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի 90-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Ե., 2010 թ., մայիսի 6-7)», Ե., 2010, էջ 266-270, **Սարգսյան Ա.**, Հարցական եւ հեզնական հնչերանգը Ղարաբաղի բարբառի դարձվածներում (հեղինակակց Շ. Մինասյան), «Կանթոն», Ե., 2007, N 1, էջ 91-94, **Սարգսյան Ա.**, Ղարաբաղի բարբառի դարձվածների հնչերանգային առանձնահատկությունները (հեղինակակց Շ. Մինասյան), «Ջահուկյանական ընթերցումներ. Գիտական հոդվածների ժողովածու», Ե., 2016, էջ 194-199, **Սարգսյան Ա.**, Միայն դարձվածներում պահպանված Ղարաբաղի բարբառին հատուկ բառեր ու բառաձևեր (հեղինակակց Շ. Մինասյան), «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 1999, N 1, էջ 94-97:

⁵⁹ **Սարգսյան Ա.**, Բարբառային ազդեցությունները Արցախի տարածքում (հեղինակակցից Լ. Մարգարյան), «Հայ բարբառագիտության միջազգային համագումար, 11-12 օգոստոս, 2001», Ստեփանակերտ, 2001, էջ 31-32, **Սարգսյան Ա.**, Ղարաբաղի տարածքի բարբառների արդի կարգավիճակը ըստ Գ. Ջահուկյանի բազմահատ-

պատմությանը⁶⁰ և այլ հարցերի⁶¹: 2013 թ. հրատարակվում է Ա. Սարգսյանի «*Ղարաբաղի բարբառի բառարան*» աշխատությունը⁶², որը կազմված է «*Ներածությունից*» և բուն բառարանից: «*Ներածության*» մեջ (էջ 5-26) առանձին բաժիններով ներկայացվում են հարցի ուսումնասիրության համառոտ պատմությունը, բարբառի հնչյունաբառաքերականական օրինաչափությունները, ինչպես նաև բառարանի կազմման սկզբունքներն ու վկայված օրինակների աղբյուրների և ծագումնաբանական, լեզվառճական, քերականական բնութագրումների համառոտագրությունների

կանիշ-վիճակագրական դասակարգման, «Ջահուկյանական ընթերցումներ», Ե., 2009, էջ 154-158, **Սարգսյան Ա.**, Մեհտիշենի բարբառի տեղը հայերենի բարբառների շարքում, Место мекхтишенского диалекта в ряду армянских диалектов, The place of the Mehtishen dialect among the Armenian dialects, «Հայ լեզվաբանության IX միջազգային գիտաժողովի թեզիսների ժողովածու. ՌԳԱ լեզվաբանության ինստիտուտ», Սանկտ-Պետերբուրգ, 2012, էջ 191-194:

⁶⁰**Սարգսյան Ա.**, Կարո Դավթյանի Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը աշխատությունը, «Կարո Դավթյան. Կենսամատենագիտություն», Ստեփանակերտ, 2004, էջ 19-23, **Սարգսյան Ա.**, Ղարաբաղի բարբառը Հրաչյա Աճառյանի ուսումնասիրություններում, «Հայոց լեզվի հարցեր. Հոդվածների ժողովածու. ԱրՊՀ», Ստեփանակերտ, 2006, էջ 55-56, **Սարգսյան Ա.**, Ղարաբաղի բարբառը 19-20-րդ դարերի լեզվաբանական ուսումնասիրություններում, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները. Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, 17-19 հոկտեմբերի, 2013 թ. Ջեկուցումների ժողովածու» Ե., 2014, էջ 316-319, **Սարգսյան Ա.**, Ղարաբաղի բարբառի ուսումնասիրությունը «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի էջերում, «Հայ լեզվաբանության XI միջազգային գիտաժողով՝ նվիրված Ջոն Գրեյի հիշատակին (1937-2016), 2-5 հոկտեմբերի, 2017. Հիմնադրության ժողովածու», Ե., 2017, էջ 107-110:

⁶¹ **Սարգսյան Ա.**, Մայրենի լեզվի ուսուցման դժվարությունները Ղարաբաղի բարբառախոս միջավայրում, «Հոդվածների ժողովածու. Նվիրվում է հայ գրերի գյուտի և Ամարասի դպրոցի 1600-ամյակին. ԱրՊՀ», Ստեփանակերտ, 2005, էջ 52-54, **Սարգսյան Ա.**, Հոդային կարգը Ղարաբաղի բարբառում (որոշյալ եւ անորոշ առումներ) (հեղինակակից Շ. Մինասյան), «Կրթությունը և գիտությունը Արցախում», Ե., 2004, N 1-2, էջ 141-146, **Սարգսյան Ա.**, Ստացականությունը եւ դիմորոշությունը Արցախահայ բարբառում (հեղինակակց Շ. Մինասյան), «Կրթությունը եւ գիտությունը Արցախում», Ե., 2004, N3-4, էջ 141-144:

⁶²**Սարգսյան Ա.**, Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013:

ցանկերը: Բուն բառարանը (էջ 27-834) իրականում ունի բացատրական, դարձվածաբանական ու ծագումնաբանական բնույթ և ընդգրկում է բարբառի խոսվածքներում գործածվող շուրջ 40000 բառ ու դարձված (այդ թվում՝ դրանց տարբերակներ): Յուրաքանչյուր բառահոդված կազմված է հինգ մասից՝ ա) *գլխաբառ*, բ) *ծագումնաբանական նշումներ*, գ) *լեզվառճական և քերականական նշումներ*, դ) *իմաստաբանություն*, ե) *օրինակներ և դրանց աղբյուրների վկայություն*: Գլխաբառերը ներկայացվում են մեծատառերով և նուրբ այբբենական կարգով: Գլխաբառից հետո բերվում են տարբեր խոսվածքներում գործածվող հնչյունափոխված տարբերակները, որոնցից յուրաքանչյուրը, այբբենական կարգով դրվելով համապատասխան տեղում, *տես*-ով հղվում է հիմնական բառին: Որպես գլխաբառեր են ներկայացվում նաև դերանվանական հոլովմամբ թեքվող դերանունների սեռականի և տրականի ձևերը, անկանոն բայերի խոնարհված յուրահատուկ ձևերը, բայերի կրավորական ձևերը ևն: *Ծագումնաբանական նշումներ* մասում համառոտագրությամբ նշվում է այն լեզուն (*հնդեվրոպական հիմք լեզու, գրաբար, արաբերեն, պարսկերեն, թյուրքական լեզուներ, ռուսերեն ևն*), որից բառը անցել է բարբառին, որից հետո բերվում է փոխատու լեզվի ձևը՝ գրաբարինը՝ հայկական, ռուսերենինը՝ սլավոնական, իսկ մյուսները՝ լատինական այբուբենով: Ծագումնաբանական նշումներ չունեն բարբառային և այն բառերը, որոնց ծագումը հեղինակը չի կարողացել բացահայտել: *Լեզվառճական և քերականական նշումներ* մասում համառոտագրությամբ տրվում են սոցիալական (*ծածկաբանություն, մանկական*), վերաբերմունքային (*անարգական, արհամարհական, ծաղրական, հեզնական*), քերականական (*գոյական, ածական, ներգործական բայ ևն*) բնութագրումները: *Իմաստաբանություն* մասում հնարավորինս համառոտ և հստակ ներկայացվում են բառերի ուղղակի և փոխաբերական բոլոր նշանակությունները: Մեծ թիվ չեն կազմում հոմանշային բացատրությունները: Նույնիմաստ բառերից բացատրվում է միայն մեկը՝ ամենից տարածվածը, իսկ մյուսները *տես*-ով հղվում են վերջինիս: Բառերի նշանակությունները պարզաբանելու ու

հիմնավորելու համար նախադասություններով (երբեմն՝ բառակապակցություններով) բերվում են տպագիր ու ձեռագիր աղբյուրներից և բանավոր խոսքից քաղված օրինակներ՝ համառոտագրությամբ նշելով աղբյուրը (տպագիր աղբյուրների դեպքում՝ նաև համապատասխան ժողովածուի վերնագիրն ու էջը): Վկայված օրինակներ բերվում են բոլոր բառիմաստների համար, բացառությամբ մի շարք գոեհկաբանությունների և որոշ՝ *տես*-ով հղում ունեցողների: Բառահոդվածի վերջում՝ բառի բոլոր իմաստները բացատրելուց հետո, խիստ այբբենական կարգով ներկայացվում են տվյալ գլխաբառով սկսվող դարձվածները (նաև տեղական նշանակության՝ կոնկրետ որևէ գյուղում կամ ենթաշրջանում գործածվող), որին հետևում են բացատրությունը և վկայված օրինակները (բացառությամբ հաղորդակցական արժեք ունեցող դարձվածների): Նույնիմաստ դարձվածները բացատրվում են մեկ անգամ, մյուս դեպքերում հղում է կատարվում, իսկ եթե դրանք տարբերվում են միայն մեկ անդամի (ոչ առաջին) փոփոխությամբ, ապա վերջիններս ներկայացվում են նույն դարձվածի կազմում՝ իրարից անջատելով ուղղահայաց գծիկներով: Եթե որևէ գլխաբառ հղվում է մեկ այլ գլխաբառի, ապա առաջինի տակ նույնանիշ դարձվածները չեն բերվում: Բառարանում խստիվ պահպանվել են բարբառային գիտական տառադարձության (ավանդական) սկզբունքները: Աշխատությանը կցված է օգտագործված գրականությանն ու ձեռագիր աղբյուրների ընդարձակ ցանկ (էջ 835-845):

Արմեն Մարգսյանը Շոդեր մինասյանի համահեղինակությամբ հրատարակել է «*Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան*» բառարանը⁶³, որի ներածական մասում (էջ 5-63) տրվում են բարբառի դարձվածների քննությունը, բառարանի կազմման սկզբունքները և վկայված օրինակների աղբյուրների համառոտագրությունների ցանկը, իսկ բուն բառարանը (էջ 64-558) ընդգրկում է բարբառի խոսվածքներում գործածվող դարձվածները (այդ թվում՝ տեղական նշանակության՝ կոնկրետ որևէ գյուղում

⁶³Մարգսյան Ա., Մինասյան Շ., Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան, Ե., 2017:

կամ ենթաշրջանում գործածվող): Յուրաքանչյուր դարձվածահոդվածում դարձվածից հետո (առկայության դեպքում) համառոտագրությամբ նշվում են տվյալ դարձվածային միավորի բովանդակության և ձևի հասարակական վերաբերմունքային երանգները (*անարգական, արհամարհական, ծաղրական, ծածկաբանություն, մանկական, օրհնանք, հեզնական, բարեմաղթություն, անեծք*), որից հետո հնարավորինս համառոտ և հստակ ներկայացվում են դարձվածի նշանակությունները: Նույնիմաստ դարձվածներից բացատրվում է միայն մեկը՝ ամենից տարածվածը, իսկ մյուսները *տես*-ով հղվում են վերջինիս: Եթե դարձվածը հանդես է գալիս նաև հավելյալ տառերով ու բառերով, ապա վերջիններս դրվում են կլոր փակագծերի մեջ, իսկ միայն մեկ անդամի (ոչ առաջին) փոփոխությամբ տարբերվող նույնիմաստ միավորները հիմնականում ներկայացվում են նույն դարձվածի կազմում՝ իրարից անջատելով ուղղահայաց գծիկներով: Դարձվածների նշանակությունները պարզաբանելու ու հիմնավորելու համար նախադասություններով բերվում են տպագիր ու ձեռագիր աղբյուրներից և բանավոր խոսքից քաղված օրինակներ՝ համառոտագրությամբ նշելով աղբյուրը (տպագիր աղբյուրների դեպքում՝ նաև համապատասխան ժողովածուի վերնագիրն ու էջը): Բառարանում խստիվ պահպանվել են բարբառային գիտական տառադարձության (ավանդական) սկզբունքները: Աշխատությանը կցված է օգտագործված գրականության ու ձեռագիր աղբյուրների ցանկ (էջ 559-566): Հեղինակը կազմել ու հրատարակել է նաև Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության մատենագիտությունը⁶⁴:

Բարբառի բառապաշարի մի մասն է ընդգրկված Գուրգեն Բաղդասարյանի *«Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան»* երկհատորյակում⁶⁵: Առաջին հատորի ներածական մասում անդրադարձ է կատարվում հարցի ուսումնասիրության պատմու-

⁶⁴ **Սարգսյան Ա.**, Մատենագիտություն Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության, Ե., 2019, 156 էջ:

⁶⁵ **Բաղդասարյան Գ.**, Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան, հ. Ա, Ստեփանակերտ, 2008, 436 էջ, հ. Բ, Ստեփանակերտ, 2010:

թյանը, ներկայացվում են բառարանի կազմման սկզբունքները, կառուցվածքը, օգտագործված գրականության և համառոտագրությունների ցանկերը: Բուն բառարանն (գրական հայերենի տառադարձությամբ) ընդգրկում է շուրջ 15000 բառ, բառաձև, դարձված, առած-ասացվածք, անեծք, օրինանք, հանելուկ, ոճական արտահայտություն ևն: Սկզբում դրվում է գլխաբառը, այնուհետև՝ իմաստների բացատրությունը, հազվադեպ՝ նաև վկայված օրինակներ: Գլխաբառերի տակ տրվում են դարձվածները (բացատրություններով) ու մյուս միավորները: Իրականում հեղինակը բառարանում հիմնականում ընդգրկել է Ա. Մարգարյանի «*Գործիսի բարբառը*», ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակած «*Հայոց լեզվի բարբառային բառարան*», Ստ. Մալխասյանի «*Հայերեն բացատրական բառարան*» և որոշ այլ աշխատություններից քաղված բառեր ու դարձվածներ: Բառարանում չափազանց մեծ է այն միավորների թիվը, որոնք ընդհանրապես չեն գործածվում Ղարաբաղի բարբառում, ինչպես՝ *բուլիտ* (հոկեյի մեջ հակառակորդի դարպասին նշանակված տուգանային հարված), *գիշեր-ցերեկ* (տորթի տեսակ), *դարչենա* (թխվածքի տեսակ), *եվրոակցիա* (եվրո բաժնետոմս), *ժոնգլեր* (աճպարար), *ծախտովել* (շատ բան վաճառվել), *կանփորկա* (ինքնաեռի գլխանոց), *կանոնավոր գորք* (մշտական գորք), *կանաչ լոբու պահածո* (պահածոյի տեսակ), *պլանտատոր* (պլանտացիայի տեր), *ցեխաջրաբուժություն* (հանքային ցեխաջրով բուժվելը) ևն:

Ղարաբաղի բարբառի դարձվածների ամբողջական ու բազմակողմանի քննությունն է ներկայացվում Շողեր Շինասյանի «*Ղարաբաղի բարբառի դարձվածները*» մենագրությունը⁶⁶: Աշխատության սկզբում (էջ 3-20) առանձին բաժիններով անդրադարձ է կատարվում նյութի ընտրությանը, հարցին առնչվող գրավոր աղբյուրներին, օտար և հայ լեզվաբանության մեջ դարձվածի ըմբռնման և դասակարգման վերաբերյալ եղած կարծիքներին, օգտագործված գրավոր աղբյուրների լեզվին ու տառադարձությանը: Բուն աշխատանքը կազմված է երեք մասից: Առաջին մասում՝ «*Ղարձվածների*

⁶⁶ Մինասյան Շ., Ղարաբաղի բարբառի դարձվածները, Ստեփանակերտ, 2007:

դասակարգումը» (էջ 21-77), անդրադառնալով տարբեր լեզվաբանների կողմից կատարված դասակարգումներին՝ հեղինակը, ըստ հաղորդակցական արժեքի, ներկայացնում է բարբառի դարձվածային միավորների դասակարգումը (*անվանական դարձվածային միավորներ, հաղորդակցական դարձվածային միավորներ*)՝ առանձին ենթաբաժիններով հանգամանորեն քննելով գոյականական, ածականական, բայական, մակբայական, եղանակավորող դարձվածային միավորները և հաղորդակցական դարձվածները, դարձվածային թերի նախադասությունները, բարդ կառուցվածք ունեցող դարձվածային նախադասությունները, դրանց կառուցվածքային տիպերը: Երկրորդ մասում՝ *«Բառիմաստային մի շարք երևույթների դրսևորումը Ղարաբաղի բարբառի դարձվածներում»* (էջ 78-99), քննության են առնվում բազմիմաստության, համանունության, հոմանիշության, հականիշության դրսևորումները ինդրո առարկա դարձվածներում, ինչպես նաև՝ միայն դարձվածներում պահպանված բառերն ու բառաձևերը: Երրորդ մասը՝ *«Լեզվաարտահայտչական միջոցների դրսևորումը դարձվածներում»* (էջ 100-115), նվիրված է բարբառի դարձվածներում լեզվաարտահայտչական միջոցների (*փոխարեբություն, փոխանունություն, խորհրդանշան, համեմատություն, շրջասություն, չափազանցություն և նվազասույթ, հեզնանք, բազմաշաղկապություն և անշաղկապություն, դիմառնություն, զեղչում*) ու դրանց տարատեսակների քննությանը: Աշխատությանը կցված են նաև ծանոթագրություններ (էջ 116-119) և օգտագործված գրականության, աղբյուրների, բառարանների ցանկ (էջ 120-124): Աշխատությունը հեղինակի՝ 1999 թվականին ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում պաշտպանած թեկնածուական ատենախոսության (որին կցված է Ղարաբաղի բարբառի դարձվածների բացատրական բառարան (շուրջ 3000 միավոր) լրամշակված տարբերակն է:

Բացի դրանից և Ա. Սարգսյանի համահեղինակությամբ հրատարակած աշխատանքներից, Շ. Մինասյանը հանդես է եկել Ղա-

րաբաղի բարբառին (հիմնականում դարձվածներին) վերաբերող մի շարք հոդվածներով⁶⁷:

2007թ. հրատարակած ուսումնասիրության⁶⁸ մեջ և որոշ հոդվածներում⁶⁹ Ջուլիա Երվանդյանը, ծագումնաբանական, իմաստային և կառուցվածքային մասնակի դիտարկումներով քննում է հայագիտական տարբեր, հատկապես Հր. Աճառյանի և Գ. Ջահուկյանի ուսումնասիրություններում քննարկված, սակայն Ղարաբաղի բարբառում հնչունակազմական և իմաստային որոշ յուրահատկություններով գործածվող մի շարք հնագույն արմատական ձևեր՝ *կընձկոնձալ, կ'օձի//գօձի, կոճ, հանգ, շօռ կ'ալ, ճըռաքել, պօսպօս անել, ռէքնակ, նօթի, պուլ, կէնալ, խրէխտ, խլխլալ, ծամ, ծըէն*, հին հայերենին (որոշները՝ նաև ընդհանուր հայերենին) հատուկ հիմքերի տարբերակներ՝ *կուլ, կ'աղէլ//կէղէլ, կաղաղ, պըէժ, հէտի, մօլ, գ'ուրգ, վէրթիմ//ուրթումնը, օխտը, թա, լպոտել, ծիծիլինգ//ծուծուլուկ, լըբաստրակ, լէնգ/լինգ, կօզնի/կուզնի, սրէռ//սէռ, յէր, օշափ//օշէփ, տանդ, ճախ, քոյր, պացրու//պէցուր//պէցրու*, բառակզբում ձայնավորից առաջ նախաձայն *h* հնչյունի կիրառական հնարավորությունները: Հեղինակը հանգում է այն եզրակա-

⁶⁷ **Մինասյան Շ.**, Բազմիմաստությունը եւ համանունությունը Ղարաբաղի դարձվածներում, «Կրթությունը եւ գիտությունը Ղարաբաղում», Ե., 1997, N 2, էջ 66-70, **Մինասյան Շ.**, Հաղորդակցական դարձվածները Ղարաբաղի բարբառում, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1999, N 1, էջ 106-112, **Մինասյան Շ.**, Ղարաբաղի բարբառի թռչնանունները, «Լեզվի եւ գրականության զարգացման ու դասավանդման հիմնախնդիրներ. ԱրՊՀ», Ստեփանակերտ, 2004, էջ 28-31, **Մինասյան Շ.**, Լեզվաարտահայտչական միջոցների դրսևորումը Ղարաբաղի բարբառի դարձվածներում, «Արցախի պետական համալսարան. Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու)», Ստեփանակերտ, 2016, պրակ I, էջ 246-250 :

⁶⁸ **Երվանդյան Ջ.**, Ղարաբաղի բարբառի բառային կազմի հաստատման գործընթացը, Ե., 2007:

⁶⁹ **Երվանդյան Ջ.**, Հնագույն բառարմատները Ղարաբաղի բարբառում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2004, N 1, էջ 108-117, **Երվանդյան Ջ.**, Հ նախահավելականի արտահայտությունը Ղարաբաղի բարբառում, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 2000, N3, էջ 119-124, **Երվանդյան Ջ.**, Հնդեվրոպական նախալեզվի բառահիմքերը Ղարաբաղի բարբառում, «Հայագիտություն եւ զուգադրական լեզվաբանություն. Գիտական աշխատություններ. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան», Ե., 2003, պրակ Գ, էջ 140-150:

ցության, որ նախահավելական *h*-ն ավելի հաճախակի է հանդիպում կենտրոնից հեռու ընկած խոսվածքներում, մանավանդ Մարտակերտի և Շահումյանի հատվածում՝ միաժամանակ հանդես բերելով իմաստային զանազան դրսևորումներ: Նշվում է նաև, որ ձայնդարձի տարբեր աստիճաններով տարբերակումներից բացի, առավել ակնառու է *h* սաստկականի հավելումը, որը ոչ միայն բառի նշանակությանը նոր երանգ է հաղորդում, այլև առաջ է բերում նոր իմաստի ձևավորում: Առանձնացվում են բարբառում գործածվող հնագույն ձևերի երկու խմբեր՝ *1.արմատներ, որոնք գալիս են հայերենի հիմնական շերտի միջոցով և ենթարկվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններին* (կէտ, կուլ, հօթ, լեպ, կնդիչ, փօմփուխ, սուլուլ, պէնձիկ, կլանչել, կօլօլ, սրէխ, շէք, լակ, ճիթ և այլն), *2.արմատներ, որոնք շեղվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններից և ենթադրում են օտար ենթաշերտ կամ որևէ հնդեվրոպական լեզվից հին փոխառություն, որի աղբյուրը չի պահպանվել կամ դեռևս հայտնի չէ* (պուքել, փոռնգօնի տալ, թխել, կօստել, կնջեմնը, պօխ, փալ տալ, փըստըցնել, պլպլալ, իլշել, սկկեկ և այլն):

Ուշագրավ է Մելադա Աղաբեկյանի «Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն» ուսումնասիրությունը⁷⁰, որտեղ պատմահամեմատական մեթոդով ներկայացվում է Արցախ-Սյունիքի տարածքի Ղարաբաղի (*Բոլնիս-Խաչենի, Շուշի, Հաթերքի, Հարավի, Կաղարծիի, Շահումյանովսկի, Գորիսի, Ջանյաթաղի, Հաղրութի, Շուշիքենդի, Տումիի, Շաղախի, Խանազահի խոսվածքներով*), Կոզենի, Հավարիկի, Շամախիի (*Շամախիի, Քյարքյանջի խոսվածքներով*), Մեհտիշենի, Մեղրու (*Գուդեմնիսի, Վարհավարի, Կարձևանի, Մեղրու խոսվածքներով*), Բուրդուրի բարբառների, Ղազախ-Կիրովաբաղի միջբարբառի (*Թուվուզի, Ղազախի, Կիրովաբաղի խոսվածքներով*)՝ ակնհայտ նմանություններ ցուցաբերող բարբառային հնչյունական համա-

⁷⁰ Աղաբեկյան Մ., Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն, «Հայերենի բարբառագիտական ատլաս», պրակ 3, Ե., 2010, էջ 54-165:

կարգերի քննությունը, բացահայտվում են դրանցում եղած հնչյունական փոփոխությունների օրինաչափություններն ու հարաբերական ժամանակագրությունը, տվյալ համակարգերի տարածքային կապերն ու ծագումնաբանական ընդհանրությունները: «Ներածություն» (էջ 54-69) մեջ անդրադարձ է կատարվում հայ և օտարագրի լեզվաբանների կողմից հայերենի բարբառների հնչյունական համակարգերի հետազոտմանը, տրվում են ուսումնասիրության սկզբունքները: Առանձին բաժիններով և ենթաբաժիններով առաջին մասում (էջ 69-126) քննության են առնվում ձայնավորների համակարգային (*ղծորդական շարքերի առաջացումը, շեշտ, շեշտադրական հնչյունափոխություններ, ձայնավորների ներդաշնակությունը*) և ոչ համակարգային փոփոխությունները, երկրորդ մասում (էջ 127-148)՝ հպական ու կիսաշփական, շփական, ձայնորդ բաղաձայնների համակարգային և ոչ համակարգային փոփոխությունները: Ուսումնասիրության վերջում հեղինակը ներկայացնում է իր ամփոփումները (էջ 148-162), ըստ որի՝ Սյունիք-Արցախ տարածքի հնչյունահնչույթային համակարգերը ձևավորվել են եռաստիճան (*ձայնեղ, խուլ, շնչեղ խուլ*) հակադրությամբ հպական ու կիսաշփական բաղաձայնների և քմայնության ոչ հնչույթային հատկանիշով օժտված ձայնավորների ընդհանուր հենքի վրա:

Լուսինե Մարգարյանի՝ 2011թ. հրատարակված ուսումնասիրության⁷¹ մեջ, որը հեղինակի՝ 2008թ. ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում պաշտպանած թեկնածուական ատենախոսության լրամշակված տարբերակն է, ըստ լեզվական տարբեր մակարդակների՝ քննվում է Արցախի բանահյուսության լեզուն: Առաջաբանում (էջ 4-17) հիմնավորվում է թեմայի արդիականությունը, անդրադարձ է կատարվում Արցախի բանահյուսության գրառման պատմությանը, բանահյուսական ժանրերի թեմատիկ ու լեզվական փոփոխություններին, բանահյուսական նմուշների գրավոր փոխադրության առանձնահատկություններին: Առաջին գլխի առաջին բաժնում՝ «Ղարաբաղի բարբառի հնչյունական համակարգի արտահայտությունը Արցախի բանահյուսության մեջ» (էջ 18-20), ներկայացվում

⁷¹Մարգարյան Լ., Արցախի բանահյուսության լեզուն, Ստեփանակերտ, 2011:

են Ղարաբաղի բարբառի և բանահյուսության հնչյունական համակարգերի տարբերություններն ու դրանք պայմանավորող պատճառները, իսկ երկրորդ բաժնում՝ *«Արցախի բանահյուսության լեզվի բառապաշարի առանձնահատկությունները»* (էջ 20-49) քննվում են բանահյուսության բառապաշարի շերտերը, բառիմաստային առանձնահատկությունները, հումանիշության դրսևորումները: Երկրորդ գլխում՝ *«Քերականական իրողությունների առանձնահատկությունները բանահյուսության լեզվում»* (էջ 50-87), քննության են առնվում խոսքի մասերի ու նրանց քերականական կարգերի դրսևորումները և շարահյուսական մի շարք առանձնահատկություններ, տրվում են նաև վիճակագրական որոշ տվյալներ, որոնք հստակորեն արտացոլում են Արցախի բանահյուսական ստեղծագործությունների քերականական կառուցվածքի առանձնահատկությունները: Երրորդ գլխում՝ *«Բանահյուսության լեզվի ոճական առանձնահատկությունները»* (էջ 88-109), վեր են հանվում տարբեր ժանրերի (*հանելուկ, առած-ասացվածք, խաղիկ, հեքիաթ*) ոճական առանձնահատկությունները, առանձնակի ուշադրություն է դարձվում դրանցում ոճական հնարանքների դրսևորումներին: Չորրորդ գլխում՝ *«Գրականացումը բանահյուսության մեջ»* (էջ 110-126), քննության է առնվում Արցախի բանահյուսության մեջ գրականացման երևույթը, բացահայտվում են գրականացման գործընթացը խթանող գործոնները, պայմաններն ու պատճառները:

Լ. Մարգարյանը հեղինակ է նաև Ղարաբաղի բարբառի տարբեր իրողությունների քննությանը նվիրված մի շարք հոդվածների⁷²:

⁷² **Մարգարյան Լ.**, Արցախ-Սյունիք տարածաշրջանի համանուն բնականուների առնչությունները, «Ջահուկյանական ընթերցումներ. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու (Ե., հունիսի 15-16, 2017)», Ե., 2017, էջ 260-273, **Մարգարյան Լ.**, Բարբառի պատմական զարգացման ընթացքը Արցախի բնականուներում, «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ. Միջազգային գիտաժողով, 8-9 հոկտեմբերի, 2014 թ.. Ձեկուցումների ժողովածու», Ե., 2014, էջ 83-96, **Մարգարյան Լ.**, Հումանիշությունը բանահյուսության մեջ, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2007, N 2, էջ 98-104, **Մարգարյան Լ.**, Ղարաբաղի բարբառի ուսուցման անհրաժեշտությունը Արցախի հանրակրթական և բուհա-

Կապանի տարածաշրջանի խոսվածքների քննությանն է նվիրված Սվետլանա Մանուչարյանի ուսումնասիրությունը⁷³, որտեղ առանձին գլուխներով ներկայացվում են նշված խոսվածքների հնչյունաբանությունը (էջ 14-98), բառագիտությունը (էջ 99-118), ձևաբանությունը (էջ 119-181), շարահյուսությունը (էջ 182- 190), խոսվածքների համեմատական նկարագիրը (էջ 196-202), նմուշներ ու բանահյուսական նշխարներ (էջ 203-217), բարբառային բառարան (226-271), իսկ ներածական մասում (էջ 3-13) տեղեկություններ են տրվում տարածաշրջանի և նրա բնակավայրերի մասին, անդրադարձ է կատարվում հարցի ուսումնասիրության պատմությանը, աշխատության կառուցվածքին ևն: Բացի դրանից, հեղինակը հանդես է եկել որոշ հոդվածներով⁷⁴:

Տարբեր տարիների Ղարաբաղի բարբառին ու նրա առանձին խոսվածքներին վերաբերող և առնչվող որոշ հոդվածներով, գիտա-

կան կրթահամակարգում, **Սարգսյան Լ.**, «Խաղաղ Կովկասը^a տարածաշրջանի զարգացման գործոն. ԼՂՀ և ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր. Ստեփանակերտ, 4 նոյեմբերի, 2011 թ., Մեսրոպ Մաշտոց համալսարան», Ե., 2011, էջ 526-530, **Սարգսյան Լ.**, Շաղկապների գործածության առանձնահատկությունները Արցախի բանահյուսական ստեղծագործություններում, «Մեսրոպ Մաշտոց համալսարան. Լրատու», Ստեփանակերտ, 2007, N 1 էջ138-147:

⁷³ **Մանուչարյան Ս.**, Կապանի տարածաշրջանի խոսվածքները, Ե., 2020:

⁷⁴ **Մանուչարյան Ս.**, Բմաստափոխության դրսևորումները Կապանի տարածաշրջանի խոսվածքներում, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2012, N 1, էջ 112-115, **Մանուչարյան Ս.**, Կապանի տարածաշրջանի խոսվածքների համեմատական քննություն, «Ջահուկյանական ընթերցումներ. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու (Ե., հունիսի 15-16, 2017)», Ե., 2017, էջ 234-248, **Մանուչարյան Ս.**, Կապանի տարածաշրջանի խոսվածքների հնչյունական իրողությունների ընդհանուր նկարագիրը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2014, N3, էջ 238-243, **Մանուչարյան Ս.**, Սահմանական եղանակի ժամանակաձևերը Կապանի տարածաշրջանի խոսվածքներում, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Ե., 2014, էջ 296-303, **Մանուչարյան Ս.**, Քերականական մի շարք իրողությունների դրսևորումները Կապանի տարածաշրջանի բարբառային միավորումներում, «Կանթեղ», Ե., 2015, N 4, էջ 54-63:

կան զեկուցումներով են հանդես եկել նաև Ս. Ալավերդյանը⁷⁵, Ս. Ամիրջանյանը⁷⁶, Ս. Ավետիսյանը⁷⁷, Ա. Բաբայանը⁷⁸, Դ. Բաբայանը⁷⁹, Օ. Բաբայանը⁸⁰, Ա. Խաչատրյանը⁸¹, Հ. Մարտիրոսյանը⁸², Գ. Մելիքյանը⁸³, Լ. Մինասյանը⁸⁴, Ե. Միրզոյանը⁸⁵, Ժ. Միքայել-

⁷⁵ **Ալավերդյան Ս.**, Ղարաբաղի բարբառի հնչյունային մի առանձնահատկության մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1970, N3, էջ 78-82:

⁷⁶ **Ամիրջանյան Ս.**, Ղարաբաղի բարբառի մի քանի բարբառային հնաբանություններ, «Արցախի պետական համալսարան. Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու)», Ստեփանակերտ, 2016, պրակ II, էջ 166-168:

⁷⁷ **Ավետիսյան Ս.**, Բառիմաստային առանձնահատկությունները Մեհտիշենի բարբառում, «Կրթությունը և գիտությունը համաշխարհայինացման դարաշրջանում. Մեսրոպ Մաշտոց համալսարանի գործունեության 15-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր. 3 նոյեմբերի, 2012 թ., Ստեփանակերտ», Ե., 2012, էջ 241-247, **Ավետիսյան Ս.**, Մեհտիշենի բարբառի առաջացումը Խոյի և Ղարաբաղի բարբառների հարաբերակցության արդյունքում, «Խաղաղ Կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն. ԼՂՀ և ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր. Ստեփանակերտ, 4 նոյեմբերի, 2011 թ., Մեսրոպ Մաշտոց համալսարան», Ե., 2011, էջ 466-470, **Ավետիսյան Ս.**, Մեհտիշենի բարբառի հոլովման համակարգը, հոլովների կազմությունը, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Ե., 2014, էջ 233-243՝

⁷⁸ **Բաբայան Ա.**, Նի, լյու (լու) և իք մասնիկները Ղարաբաղի բարբառում, «Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու», Ե., 1960, N 6, I մաս, էջ 225-235՝

⁷⁹ **Բաբայան Դ.**, Ընդհանուր արմատներին առնչվող հարցերը լեզվաբանության, հնագիտության և առասպելաբանության մեջ՝ հայերեն, անգլերեն լեզուների և դարաբաղյան բարբառի օրինակով, «Գարուն», Ե., 2013, N2-3, էջ 16-27:

⁸⁰ **Բաբայան Օ.**, Գրաբարի և Արցախ-Ղարաբաղի բարբառի լեզվական որոշ ընդհանրությունները, «Արցախ», Ստեփանակերտ, 1990, N 2, էջ 58-87:

⁸¹ **Խաչատրյան Ա.**, Ստուգաբանական դիտարկումներ, «Հայերենի բարբառագիտական ատլաս», պրակ 3, Ե., 2010, էջ 23-54:

⁸² **Martirosyan H.**, Development of some dialectal features in the Artsakh region, «Հայոց լեզվի պատմության հարցեր. Միջազգային հայերենագիտական ութերորդ գիտաժողովի զեկուցումներ, 15-18 օգոստոսի, 2008 թ.», Ստեփանակերտ, 2008, էջ 13-20, **Martirosyan H.**, Սյունիք-Արցախ բարբառների ստուգաբանություն, «Հայագիտություն. Սյունիք», Ե., 2016, թիվ 1, էջ 26-39:

⁸³ **Մելիքյան Գ.**, «Փյաթաթախ փիլը դանդաղում». Արցախի բարբառում մի քանի պարսկական փոխառությունների շուրջ, «Արևելագիտության հարցեր», Ե., 2016, N 12, էջ236-239:

յանը⁸⁶, Ռ. Մովսիսյանը⁸⁷, Ա. Վարդանյանը⁸⁸, Ն. Վարդապետյանը⁸⁹, Ս. Քումունցը⁹⁰ և ուրիշներ:

⁸⁴ **Մինասյան Լ.**, Արցախի Մարտունու շրջանի մանրատեղանունների բառագիտական քննությունը, «Հավելված ԱրՊՀ գիտական տեղեկագրի N1 (10). Մեսրոպյան գրերի գյուտի և Արցախում հայոց առաջին դպրոցի ստեղծման 1600-ամյակին նվիրված երիտասարդ գիտնականների միջազգային գիտական համաժողովի նյութերի ժողովածու», Ստեփանակերտ, 2005, էջ 59-62, **Մինասյան Լ.**, Արցախի Մարտունու շրջանի մանրատեղանունների իմաստային դասակարգումը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2007, N 2, էջ 105-109, **Մինասյան Լ.**, Ջայնավորների հնչյունափոխությունը Մարտունու շրջանի մանրատեղանուններում, «Ազգ և ժառանգություն» համահայկական երիտասարդական գիտաժողով. Ստեփանակերտ, 26-30 սեպտեմբեր, 2006թ.», Ստեփանակերտ, 2006, էջ 148-154:

⁸⁵ **Միրզոյան Ե.**, Բարբառային բառաշերտը Տմբլաչի Խաչանի ֆելիետոններում, «Հայոց լեզվի հարցեր (հոդվածների ժողովածու), ԱրՊՀ», Ստեփանակերտ, 2006, էջ 44-47, **Միրզոյան Ե.**, Գրաբարյան բառածների գործառույթը Ղարաբաղի բարբառի բառային կազմում, «Հայոց լեզվի պատմության հարցեր. Միջազգային հայերենագիտական ութերորդ գիտաժողովի զեկուցումներ, 15-18 օգոստոսի, 2008 թ.», Ստեփանակերտ, 2008, էջ 97-101:

⁸⁶ **Միքայելյան Ժ.**, Առկայացման քերականական կարգը Ղարաբաղի բարբառում, «Ձահուկյանական ընթերցումներ. Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Ե., մայիսի 7-8, 2008թ.)», Ե., 2008, էջ 123-129,

Միքայելյան Ժ., Արցախի բարբառային միավորների քմային բաղաձայնները, «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ. Միջազգային գիտաժողով, 8-9 հոկտեմբերի, 2014 թ.. Ձեկուցումների ժողովածու», Ե., 2014, էջ 114-119,

Միքայելյան Ժ., Բայի երկրորդական ժամանակները Ղարաբաղի բարբառում, «Հայոց լեզվի պատմության հարցեր. Միջազգային հայերենագիտական ութերորդ գիտաժողովի զեկուցումներ, 15-18 օգոստոսի, 2008 թ.», Ստեփանակերտ, 2008, էջ 49-53, **Միքայելյան Ժ.**, Գորիսի խոսվածքի հնչյունա-հնչյութաբանական մի քանի առանձնահատկություններ, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1980, N8, էջ 37-48:

⁸⁷ **Մովսեսյան Ռ.**, Արցախի գրողների ստեղծագործությունների բարբառային բառերի ծագումնաբանությունը և իմաստային առանձնահատկությունները, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի լրատու», Ե., 2016, էջ 338-343, **Մովսեսյան Ռ.**, Բարբառային անվանաբայական հարադրությունները Արցախի գրողների ստեղծագործություններում, «Դպրատուն. Գիտական հոդվածների ժողովածու», Ստեփանակերտ, 2014, N1, էջ 108-113, **Մովսեսյան Ռ.**, Բարբառային քերականական իրողությունները Արցախի գրողների ստեղծագործություններում, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2016, պրակ1, էջ 90-94:

Որոշ աշխատանքներ էլ դեռևս գտնվում են ձեռագիր վիճակում:

Ավետիս Բահաթրյանի «*Ղարաբաղու զաւառական բառգիրք*» բառարանը⁹¹ ընդգրկում է Ղարաբաղի բարբառին հատուկ շուրջ 6000 բառ (տվյալ ժամանակաշրջանի բարբառային տառադարձությամբ), որոնց դիմաց տրված է իմաստների բացատրությունը: Ըստ Հր. Աճառյանի տեղեկությունների⁹²՝ Ա. Բահաթրյանը, գրաբարի բառարաններից քաղված՝ ժողովրդին հասկանալի բառերին ավելացնելով Ղարաբաղի բարբառին հատուկ բարբառային բառերը (դրանց քիչ գրական ձև տալով) և ժողովրդի մեջ գործածվող թուրքական փոխառությունները, կազմել էր ընդարձակ բառարան՝ նպատակ ունենալով նոր գրական լեզու ստեղծելու: Հեղինակին համոզելով, որ նրա նախաձեռնությունը անիմաստ է, Աճառյանը Բահաթրյանի համաձայնությամբ այդ աշխատությունից (որը հետագայում հրդեհի կորուստ է դարձել) արտագրում է Ղարաբաղի բարբառի բառերը և կազմում սույն բառարանը:

⁸⁸ **Վարդանյան Ա.**, Ղարաբաղի բարբառում նոր իրանական որոշ փոխառությունների շուրջ, «Արևելագիտության հարցեր», Ե., 2016, N12, էջ 273-280:

⁸⁹ **Վարդապետյան Ն.**, Չայնավորների և երկբարբառների հնչյունափոխությունը Գորիսի բարբառում, «Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատանքների ժողովածու», Ե., 1960, N6, մաս 2-րդ, էջ 129-157:

⁹⁰ **Քումուկց Մ.**, «Գորիս» տեղանվան ստուգաբանություն, «Գիտական հոդվածների ժողովածու. Նվիրվում է Հրաչյա աճառյանի ծննդյան 140-ամյակին», Ե., 2016, էջ 378-396, **Քումուկց Մ.**, Չանգեզուր տեղանվան ստուգաբանության շուրջ, «Հայագիտություն. Սյունիք», Ե., 2016, թիվ 1, էջ 40-58, **Քումուկց Մ.**, Սյունիք-Արցախի բարբառային տարածքի ռազմական բնագավառի տերմինները Գորիսի բարբառում, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվա հասարակագիտական համալսարանի», Ե., 2017, N 1, էջ 690-700, **Քումուկց Մ.**, Ֆիզիկական աշխարհ նշող գրաբարյան շերտի բառերը Սյունիք-Արցախ տարածքային բարբառներում, «Հայագիտություն. Սյունիք», Ե., 2016, թիվ 1, էջ 59-72:

⁹¹ **Բահաթրյան Ա.**, Ղարաբաղու զաւառական բառգիրք, Ծուշի, 19-րդ դարի վերջեր, Երևանի պետական համալսարանի գրադարան (ձեռագիր):

⁹² **Աճառյան Հ.**, Կյանքիս հուշերից, Ե., 1967, էջ 269-271:

Մարգարիտ Գրիգորյանի «Ղարաբաղի բարբառը եւ Շուշվա ենթաբարբառը» ուսումնասիրության⁹³ ներածական մասում (էջ 1-47) անդրադարձ է կատարվում Ղարաբաղի բարբառի մասին եղած մասնագիտական գրականությանը, փորձ է արվում հիմնավորել Շուշի քաղաքի խոսվածքի՝ առանձին ենթաբարբառ լինելու տեսակետը, ներկայացվում են վերջինիս տարբերությունները Ղարաբաղի բարբառից ու Հաղրութի ենթաբարբառից, գրական հայերենի ու ռուսերենի ազդեցության աստիճանները Ղարաբաղի բարբառի և Շուշվա ենթաբարբառի վրա ևն: Առաջին բաժնում՝ «Շուշի քաղաքի լեզվական հարստությունները» (էջ 47-61), հիմնականում նկարագրվում են խոսվածքի հնչյունական համակարգն ու հնչյունափոխության որոշ դեպքեր, երկրորդ բաժնում՝ «Բառագիտություն» (էջ 61-74), ամանցման ու բառաբարդման տեսակները: Առավել ընդարձակ է երրորդ՝ «Ձևաբանություն» բաժինը (էջ 74-148), որտեղ քննության են առնվում բոլոր խոսքի մասերն ու նրանց քերականական կարգերը, տրվում հոլովման ու խոնարհման հարացույցները: Չորրորդ բաժնում՝ «Ղարաբաղի բարբառի նախադասությունների կազմությունը» (էջ 149-157), ներկայացվում են բարբառում նախադասությունների կազմության, դրանց անդամների կապակցման եղանակները, իսկ վերջին՝ «Ղարաբաղի բարբառի լեզվական հարստությունները» բաժնում (էջ 159-218) հեղինակն անդրադառնում է բարբառի բառապաշարի շերտերին, ըստ իմաստի՝ բառերի տեսակներին, պատկերավորման միջոցներին, լեզվառճական տարբեր առանձնահատկությունների, նախադասության տեսակներին, կետադրությանը, առոգանությանը, «ջարժումների լեզվին» ևն: Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունը անմշակ է և խմբագրման կարիք ունի:

⁹³ Գրիգորյան Մ., Ղարաբաղի բարբառը եւ Շուշվա ենթաբարբառը, Բաքու, 1948-1958 թթ., 220 էջ, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարան (ձեռագիր):

Ն. Վարդապետյանի «Սյունյաց բարբառ» թեկնածուական ստենախոսության⁹⁴ առաջաբանում (էջ I-V) փորձ է արվում հիմնավորելու Սյունիքի (Գորիսի, Սիսիանի, Ղափանի) խոսվածքների ամբողջության՝ Ղարաբաղի բարբառից տարբեր բարբառ լինելու տեսակետը, ինչպես նաև տրվում է աշխատության կառուցվածքը: Առաջին մասում՝ «Հնչյունաբանություն» (էջ 1-90), առանձին ենթաբաժիններով՝ «Հնչյունախոսություն», «Հնչյունափոխություն», հանգամանորեն ներկայացվում են բարբառում գործածվող բոլոր հնչյունների արտասանական բնութագրումներն ու հնչյունափոխության տեսակները: Երկրորդ մասը՝ «Ձևաբանություն» (էջ 91-247), նվիրված է խոսքի մասերի և նրանց քերականական կարգերի, ածանցների ու շեշտի քննությանը: Առավել մեծ ուշադրություն է դարձվում հոգնակիակազմության, անվանական ու դերանվանական հոլովման և խոնարհման դրսևորումներին: Երրորդ մասի՝ «Բառագիտություն», առաջին ենթաբաժնում՝ «Բառապաշարի շերտերը» (էջ 248-256) ներկայացվում են գրական, բարբառային և փոխառյալ բառերը, երկրորդ ենթաբաժնում՝ «Իմաստափոխություն» (էջ 256-260)՝ իմաստափոխության տեսակները, իսկ երրորդ ենթաբաժնում ընդգրկվում են գրաբարից Սյունյաց բարբառ բառացանկը (էջ 261-297) և բարբառային բառարանը (էջ 298-421): Հավելվածում (էջ 422-435) ընդգրկված են բարբառով գրառված ժողովրդական որոշ երգեր, «Անպան Հուռին» հեքիաթը և «Վեցկի Մարգարի պատմությունը» գրույցը: Աշխատության վերջում կցված է օգտագործված գրականության ցանկ (էջ 436-439):

Հիշատակության արժանի է Արտեմ Բաբայանի «Ղարաբաղի Վարանդայի բարբառը» մենագրությունը⁹⁵, որը Լեոնային Ղարաբաղի Վարանդայի գավառի խոսվածքների ամբողջության (ըստ հեղինակի՝ Վարանդայի բարբառի) ամբողջական համաժամանակյա (մի շարք դեպքերում՝ նաև գրաբարի համեմատությամբ)

⁹⁴ Վարդապետյան Ն., Սյունյաց բարբառ, Ե., 1961, 439 էջ ՀՀ ԳԱԱ, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարան (ձեռագիր):

⁹⁵ Բաբայան Ա., Ղարաբաղի Վարանդայի բարբառը, Ե., 1967, 387 էջ, Ա. Բաբայանի անձնական արխիվ (ք. Երևան):

ուսումնասիրությունն է: Ներածական մասում՝ «Առաջաբանի փոխարեն» (6 էջ), տեղեկություններ են տրվում ուսումնասիրության սկզբնաղբյուրների, բարբառի առանձնահատկությունների մասին, ներկայացվում է Վարանդայի գյուղերի ցանկը: Առաջին բաժնում՝ «Հնչյունախոսություն» (10 էջ), նկարագրվում են բարբառին հատուկ բոլոր հնչյունները, երկրորդ՝ «Հնչյունափոխություն» (28 էջ) բաժնում՝ շեշտի դրսևորումները, գրաբարյան ձայնավորների, երկբարբառների, բաղաձայնների կրած հնչյունափոխության բոլոր դեպքերը: Առավել ընդարձակ է երրորդ՝ «Ձևաբանություն» (296 էջ), բաժինը, որտեղ հանգամանորեն քննության են առնվում բոլոր խոսքի մասերն ու նրանց քերականական կարգերը (*հոգնակիակազմություն, հոլով ու հոլովում, ածականի համեմատության աստիճաններ, դերանունների հոլովում, դերբայներ, բայի եղանակներ ու ժամանակաձևեր նն*): Այս բաժնում անդրադարձ է կատարվում նաև ածանցմանը, բառերի տեսակներին՝ ըստ կազմության, կոչական մի շարք բառերի ձևակերպումներին, *նի, լյու, իք* մասնիկների գործածությանը նն: «Հավելվածն» ընդգրկում է բարբառով գրառված (գիտական տառադարձությամբ) բանահյուսական նյութեր ու դարձվածներ (22 էջ) և *գրաբարից բարբառ* բառարան (23 էջ): Աշխատության վերջում կցված է օգտագործված գրականության ցանկ (2 էջ):

Մրանցով չեն սպառվում Ղարաբաղի բարբառին վերաբերող ուսումնասիրությունները: Բարբառին մեծապես առնչվում են նաև հայերենի բարբառների տարբեր օրինաչափությունների նվիրված ընդհանուր ուսումնասիրություններ⁹⁶, բառարաններ⁹⁷, Արցախի

⁹⁶ **Աբրահամյան Ա.**, Երկրագործական գործիքների անվանումները հայերենի բարբառներում, Ե., 2013, **Բառնապյան Ջ.**, Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում, Ե., 2009, **Գևորգյան Գ.**, Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի տարածագործառական բնութագիրը, Ե., 2013, **Խաչատրյան Հ.**, Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում, Ե., 2009, **Մեսրոպյան Հ.**, Ածականական հոմանիշները հայերենի բարբառներում, Ե., 2010, **Մեսրոպյան Հ.**, Կրոնակեղեցական բառապաշարը հայերենի բարբառներում, Ե., 2016:

բանահյուսական և բարբառագիր ժողովածուներ⁹⁸, այլ աշխատանքներ⁹⁹:

РЕЗЮМЕ

Краткая история изучения карабахского диалекта Саркисян Армен

В докладе представлена история изучения карабахского диалекта с середины 19-го века до наших дней. Автор рассматривает исследования, словари, статьи, доклады и сборники, связанные с диалектом. Особое внимание уделено монографиям, связанным с карабахским диалектом и его отдельными субдиалектами.

Ключевые слова: диалект, грабар, лингвист, слово, корень, исследование, статья, доклад, словарь, сборник

⁹⁷ **Բեդիրյան Պ.**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011, **Բեդիրյան Պ.**, Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա-Է, Ե., 2001-2012, **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, Ե., 1987:

⁹⁸ Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը (գրառումը, բնագրի պատրաստումը եւ ծանոթագրությունները Մ. Գրիգորյան-Սպանդարյանի), Ե., 1971, **Օստորյան Ա.**, Գորիսապատում, գիրք Բ, Գորիս, 2011, Հայ ժողովրդական հեքիաթներ , հհ. V-VII, Ե., 1966-1979, **Հարությունյան Լ.**, Նշխարներ Արցախի բանահյուսության, հհ. 1-5, Երևան-Ստեփանակերտ, 1991-2011, **Ղազիյան Ա.**, Արցախ, «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», Ե., 1983, հ. 15, **Ղահրամանյան Վ.**, Օջախի գիրք. Նշխարներ, Ե., 2002, **Մելիք-Շահնազարեանց Վ.**, Զուռնա-Տմբլա, գիրք Ա-Բ, Վաղարշապատ, 1907-1908, Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից (կազմողներ՝ Ա. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան), Ե., 1978, **Սարգսյան Ա.**, Արցախի բանահյուսությունը, Ե., 2015:

⁹⁹ Ամբողջական ցանկը տե՛ս **Սարգսյան Ա.**, Մատենագիտություն Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության, Ե., 2019, էջ 46-152

SUMMARY
A brief history of studying the karabakh dialect
Sargsyan Armen

The report presents the history of the study of the Karabakh dialect from the middle of the 19th century to the present day. The author considers researches, dictionaries, articles, reports, collections related to the dialect. Particular attention is paid to the monographies related to the Karabakh dialect and its individual subdialects.

Key words: dialect, Grabar, linguist, word, root, research, article, report, dictionary, collection

ԼՈՌՈՒ ՇԱՄՈՒՏՅԱՆ ԵՆԹԱԽՈՍՎԱԾՔԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՊԸ
ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ՀԵՏ՝

Սարգսյան Արմեն Շ.

ԳԱԱ ՀԱԻ առաջատար գիտաշխատող
armensargg@gmail.com

Բանալի բառեր. բարբառ, խոսվածք, ենթախոսվածք, բառապաշար, բառակազմություն, քերականական առանձնահատկություններ:

Լոռու խոսվածքը, այդ թվում նաև Շամուտ գյուղի ենթախոսվածքը, ճիշտ է, մտնում է Արարատյան բարբառի կազմի մեջ՝ ներկայանալով իբրև ինքնուրույն խոսվածքային միավոր, այնուամենայնիվ մի քանի տարբերակիչ դրսևորումներով այն հեռանում է Արարատյան բարբառից և մոտենում, երբեմն էլ նմանվում է Արցախ-Ղարաբաղի բարբառին: Այսպես, եթե միավանկ բառերի հոգնակին և՛ Արարատյան բարբառում, և՛ Լոռու խոսվածքում, այդ թվում՝ շամուտյան ենթախոսվածքում, կազմվում է *եք//էք* մասնիկով, ապա որոշ բառերի (*ձի, էջ, գեղ, էծ և այլն*) հոգնակին կազմվում է *ան* մասնիկով՝ *ձիան, գիլան, իշան, էծան, ինչք բացակայում է* Արարատյան բարբառի մի շարք խոսվածքներում, սակայն առկա է Ղարաբաղի բարբառում՝ *իծանոց – այծերի փարախ², ծիանոց – ձիերի ախոռ՝ գոմ³*:

Լեզվաբան Մանվել Ասատրյանը փաստում է, որ բազմականկ գոյականների հոգնակիի «նի» կազմությամբ ևս «Լոռու խոս-

¹ Հրապարակվում է առանց խմբագրական միջամտության, ըստ հեղինակի ներկայացրած տարբերակի:

² **Սարգսյան Ա. Յու.**, Ղարաբաղի բարբառի բառարան, Արցախի պետ. Համալսարան, Ե., 2013, էջ 224:

³ Նույն տեղում, էջ 318:

վածքը հեռանում է Արարատյան բարբառից և որոշ չափով միանալով Ղարաբաղի բարբառին՝ նրա հետ միասին մի առանձին դիրք գրավելով հայերենի բարբառների մեջ»⁴, զբրբացնի, ջրդացնի, ջրդացպաննի, բլլանըքնի, ձիավորնի, հրլիվորնի, պառավնի և այլն: Վերջիններս «նե» հոգնակիակերտի կազմությամբ, առկա է նաև Ղարաբաղի բարբառում՝ օր.՝ Գրբացնե, Ճրղըցնե, ճրղացպաննե, բլլանըքնե, ձիավորնե և այլն:

Փաստենք նաև, որ բազմավանկ բառերի «նի» հոգնակիակերտով կիրառությունը գոյություն ունի նաև *Իջևանի, Շառշաղինի և Գորիսի* շրջաններում:

Եթե Արարատյան բարբառում *գրաբարյան միավանկ բառերի* վերջնահնչյուն «ն»-ն ընկել է, ապա Լոռու խոսվածքում ու նրա մի շարք ենթախոսվածներում պահպանվել է՝ վերածվելով «ը»-ի: Օր.՝ նուռը, ձեռը, բուռը, դուռը, մատը և այլն:

Ղարաբաղի բարբառում այդ վերջնահնչյուն «ն»-ն պահպանվելով՝ ավելանում է նաև «ը»: Օր.՝ նօռնը, մօկնը, ծեռնը, բուռնը, դուռնը, մատնը⁵: Ի դեպ, այդ նույն երևույթը առկա է նաև գաղտնավանկ ունեցող որոշ երկվանկ բառերի կիրառության պարագայում: Օր.՝ աստղ – աստղը, անեծք – անիծկը, մանր – մանդրըրը, սանր – սանդրըրը և այլն: Մանվել Ասատրյանը նշում է, որ նման ձևերով «Լոռու խոսվածքը հեռանում է Արարատյան խոսվածքներից և որոշ չափով մոտենալով Ղարաբաղի բարբառին՝ շփման մեջ է մըտնում գրաբարի հետ»⁶:

Լոռու խոսվածքին նվիրված իր ուսումնասիրության մեջ Մ. Ասատրյանը ներկայացնում է բառերի ու բառաձևերի մի փունջ՝ 74 բառ, «որոնց մի զգալի մասը ոչ մի բառարանում չի արձանագրված»⁷: Մենք փորձեցինք այդ բառափնջից որոշ բառեր համադրել Ա. Յու. Մարգարյանի կազմած Ղարաբաղի բարբառի բառարանում, Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած Հայոց

⁴ Ասատրյան Մ., «Լոռու խոսվածքը», Ե., «Միտք» հրատ., 1968, էջ 18:

⁵ Նշվ. աշխ., էջ 15-16:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 30-32:

լեզվի բարբառային բառարանում տեղ գտած բառագանձի և մեր գրանցած Լոռու շամուտյան ենթախոսվածքի բառախմբի հետ տեսնելու՝ կա՞ն արդյոք ակնառու նմանություններ կամ տարբերություններ, եթե կան, ապա ի՞նչ բնույթի են:

Այսպես, թե՛ Լոռու խոսվածքում, թե՛ շամուտյան ենթախոսվածքում *լիսածակ*-ը՝ *երդիկ* է նշանակում, իսկ այլ հնչարտաբերմամբ՝ *թուսածակ*-ը Ղարաբաղի բարբառում առկա է *պատի վրա բացված անցք, որտեղով ներս է թափանցում լույսը*⁸ նշանակությամբ, որը նույն գործառույթն է կատարում, ինչ *լիսածակ*-ը:

* *կտիտ*-ը՝ սպտուր-կտտուր//կտտոր նշանակությամբ⁹, որը *ոչխարի, այծի, նապաստակի կեղտն է*, ղարաբաղյան բարբառում ներկայացված է նույն իմաստն արտահայտող *կրտէտ*¹⁰ հնչարտաբերմամբ:

Եթե Ղարաբաղի բարբառում *խրնջիլք*-ը վերաբերում է *իրերի՝ անկարգ-անկանոն դասավորությանը*¹¹, իսկ Լոռու խոսվածքում այն *ավելորդ, մանր-մունր իրեր նշանակությամբ* է կիրառվում¹², ապա շամուտյան ենթախոսվածքում այդ երկուսի իմաստային հատկանիշներն է կրում՝ նշանակելով *և՛ թափթփված, և՛ ավելորդ, և՛ անկարգ-անկանոն դասավորված իրեր*¹³:

Ղըչրդու-Ղուչուրդու-ն՝ հարայ-հրոց հոմանիշությամբ, Ղարաբաղի բարբառում նշանակում է *աղմուկ-աղաղակ, ժխոր*¹⁴, իսկ Լոռու խոսվածքում՝ *կանչ*¹⁵, Շամուտի ենթախոսվածքում՝ *ինչ-որ*

⁸ Նույն տեղում, էջ 254:

⁹ Նշվ. աշխ., էջ 31:

¹⁰ **Սարգսյան Ա. Յու.**, Ղարաբաղի բարբառի բառարան, Արցախի պետ. համալսարան, Եր., 2013, , էջ 366:

¹¹ Նույն տեղում, էջ 279:

¹² **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 31:

¹³ **Սարգսյան Ա. Շ.**, Շամուտ. պատմաազգագրական, բանահյուսական նյութերի ժողովածու (անտիպ):

¹⁴ **Սարգսյան Ա. Յու.**, նշվ. աշխ., էջ 456:

¹⁵ **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 31:

կարևոր լուր հաղորդելիս շատ բարձր ձայնով կանչն է (Մինը բացըրը ձենով դըչրդու էր տալի):

Երբեմն բարբառներում և ենթախոսվածքներում հանդիպում են այնպիսի բառեր, որոնք բոլորովին հակառակ իմաստային կիրառությունն ունեն: Այսպես, Ղարաբաղի բարբառում օտար թուրքերեն *ալամաթ* բառը նշանակում է արտակարգ, արտասովոր, չքնաղ¹⁶, չտեսնված, չնաշխարհիկ, հրաշալի¹⁷, իսկ Շամախիի և Կարինի բարբառներում՝ վատթար, սարսափելի (եղանակ, ցավ և այլն)¹⁸:

Ալամաթիլ-ը Լոռու խոսվածքում նշանակում է ապականել, կեղտոտել¹⁹, Շամուտի և Կոթիգյուղի (Նոյեմբերյանի տարածաշրջան) ենթախոսվածքներում այս նույն *Ալամաթիլ-ըլամաթվիլը*, բացի վերը բերված իմաստից, նշանակում է նաև ինչ-որ գործի, ձեռնարկի մեջ թաթախվել (Էլ ըլամաթվիլ մի, էսա պրծնըմ ենք)²⁰: Բոլորովին այլ իմաստ արտահայտող այս բայական կառույցը թե ի՞նչ առնչություն ունի Ղարաբաղի, Շամախիի և Կարինի բարբառների օտարալեզու *ալամաթ*-ի հետ, մեզ համար դեռևս պարզ չէ:

Եթե փոփոխանալ // փորփոշանալ բայը թե՛ Արարատյան բարբառում, թե՛ Ղարաբաղի /Ղզխ/ և Ուրմիայի բարբառներում նշանակում է *փուխը դառնալ* (Սրա արմատը՝ *փոփոլ//փորփոշ*-ն է և նշանակում է *փափուկ, փխրուն, փուխը: Փոփոլ //փորփոշ*-ի երկրորդ իմաստը *գիրուկ, չաղիկն է*)²¹ ապա այս նույն բառի բայական կառույցը շամուտի, նաև՝ Մարգահովիտի ենթախոսվածք-

¹⁶ Նույն տեղում, էջ 32:

¹⁷ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Ե., «Գիտություն» հրատ., 2001, էջ 12:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 30:

²⁰ Սարգսյան Ա. Շ., Շամուտ. պատմաագագրական, բանահյուսական նյութերի ժողովածու (անտիպ):

²¹ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Է, Ե., «Գիտություն» հրատ., 2012, էջ 49, 51: Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, Արցախի պետ. համալսարան, Եր., 2013, էջ 680:

ներում նշանակում է *հայարտանայ, պարծենայ*²²: (Էկել եմ փոփոխանամ իմ համագյուղացով): Ի դեպ, ներկայացված բառերը բացակայում են Ղարաբաղի բառարանում:

Սա, դա, նա ցուցական դերանունների հոգնակիի կազմության *սրհանք, դրհանք, նրհանք* ձևերը բացակայում են Արարատյան բարբառում, սակայն առկա են Արցախ-Ղարաբաղի բարբառում²³: Սրանց հոգնակի թվի ուղղական հոլովի կազմության՝ *սրհանք, դրհանք, նրհանք* և դրանց սեռ., տր., հայց. հոլովի՝ *սրհանց, դրհանց, նրհանց*, գործիականի՝ *սրհանցով, դրհանցով, նրհանցով*, ներգոյականի՝ *սրհանցրմ, դրհանցրմ, նրհանցրմ*, հոլովական ձևերի կազմությամբ ևս Լոռու բարբառը (այդ թվում նաև՝ Շամուտի ենթախոսվածքը) մոտենում է Արցախ-Ղարաբաղի բարբառին:

Շամուտի ենթախոսվածքում շրջանառվող *ծընգլահան անել* հարադրավոյ բայը՝ զգվեցնել, հոգնեցնել իմաստով, բացակայում է և՛ Ղարաբաղի, և՛ այլ բարբառներում:

Իսկ ինչո՞վ է պայմանավորված Արցախ-Ղարաբաղի բարբառում առկա *նմանությունները* Լոռու խոսվածքի, այդ թվում նաև Շամուտի ենթախոսվածքի ու *Իջևանի, Շամշադինի* տարածաշրջանների բնակչության խոսվածքի հետ: Այդ երևույթը ամենայն հավանականությամբ պայմանավորված է այդ տարածքներ 18-րդ դարի վերջին տեղի ունեցած *դարաբաղյան մեծ գաղթի* հետևանքների հետ:

Եթե նոր բնակավայրերի հիմնադրման ժամանակ բացարձակ մեծամասնություն են կազմել ներգաղթյալները, ապա տվյալ բարբառը կրողները, շրջապատված լինելով այլ բարբառակիրներով և շփվելով նրանց հետ, կարողանում են հնարավորինս անադարտ պահել իրենց նախկին տեղավայրի լեզուն: Այդպես է եղել ինչպես մեծ գաղթի հետևանքով Տավուշի մարզի Շամշադինի տարածաշրջանում հաստատված Արցախ-Ղարաբաղի գյուղերից ներ-

²² Սարգսյան Ա. Շ., Շամուտ. պատմաազգագրական, բանահյուսական նյութերի ժողովածու (անտիպ):

²³ Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 20:

գաղթած բնակչության հետ, այնպես էլ Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանի երկու գյուղերում՝ *Կարծնաղբյուրում*²⁴ և *Արմանիսում*²⁵, որոնց բնակիչների նախնիները 1829-30 թթ. և 1870 թ. գաղթել են [Ալաշկերտից](#):

Իրենց բարբառով շարունակում են հաղորդակցվել նաև 20-րդ դարավերջին Ղարաբաղյան շարժման հետևանքով Հայաստանի Հանրապետության Նոյեմբերյանի և Սպիտակի շրջանների ադրբեջանական դատարկված գյուղերում հաստատված Ղարաբաղի բարբառը կրող *չարդախլվեցիներն* ու *խաչակապցիները*:

Թե՛ Ստեփանավանի տարածաշրջանի երկու գյուղերում հաստատված ալաշկերտցիները, թե՛ ավելի քան երեք տասնամյակ առաջ Լոռու և Տավուշի մարզերի վերոնշյալ գյուղերում վերաբնակեցված արցախցիները, շրջապատված լինելով հայերենի այլ բարբառակիր հարևան գյուղերի բնակչությամբ, շարունակում են միմյանց հետ հաղորդակցվել իրենց մայրենի բարբառով:

Այլ է խնդիրը, երբ վերաբնակեցված բնակավայրերի բնակչությունն ապրում է խառը, կամ էլ՝ որևէ բարբառը կրող բնակչության գերակայությունն ունեցող խմբերով: Բնականաբար, նրանց շփման ժամանակ կամա թե ակամա լինում են գերակշռող բարբառակիրների՝ *բառապաշարային*, *քերականական*, նույնիսկ *հնչերանգային* ազդեցություններ: Այսպես, 18-րդ դարավերջին 1795-97 թթ. պարսից Աղա Մահմեդ խանի զորքերի դեմ մղած երկարատև պատերազմների, երաշտի և սովի հետևանքով արցախցիների՝ դեպի Գուգարած աշխարհ կատարված մեծ արտագաղթի, այնուհետև կրկին Արցախ ներգաղթի հետևանքներով տարածաշրջանի մի շարք գյուղերում մնացած ընտանիքների լեզվական ազդեցության կնիքն ակնառու է Լոռու խոսվածքի և շամուտյան ենթախոսվածքի վրա: Դա փաստում է նաև այն հանգամանքը, որ 19-րդ դարի 60-ականների սկզբին հայկական նոր բնակատեղիում՝

²⁴ Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., [Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան](#), հ. 2, Ե., «Երևանի համալսարանի հրատարակչություն», 1986, էջ 884:

²⁵ Նույն տեղում, էջ 465-466:

Շամուտում, վերաբնակվում են հիմնականում 1795-97 թթ. Արցախ-Ղարաբաղից տեղափոխված և Լոռու տարբեր բնակավայրերում (Օձուն, Կուրթան, Սանահին, Հաղպատ, Խոժոռնի, Բաղանիս և այլն) հաստատված դարաբաղցիների տոհմերի ժառանգները: Ինչ խոսք, համատեղ ապրելով և քանակապես գերակշռելով նրանց բարբառը չէր կարող իր ազդեցությունը չունենալ ինչպես Արարատյան բարբառի Լոռու խոսվածքի, այնպես էլ Շամուտի ենթախոսվածքի վրա:

Այժմ անդրադառնանք շամուտեցիների խոսակցական լեզվում հանդիպող որոշ բառերի արտաբերման, հնչերանգային, ինչպես նաև քերականական, բառակազմական և այլ կարգի դրսևորումներին, որոնց մասին լեզվաբանները Արարատյան բարբառին և Լոռու խոսվածքին նվիրված իրենց ուսումնասիրություններում կա՛մ հպանցիկ են խոսել, կա՛մ էլ ընդհանրապես չեն անդրադարձել:

Շամուտեցիների խոսակցական լեզվում հանդիպում են քերականական և բառակազմական հետաքրքիր դրսևորումներ, որոնցից շատերը, ընդհանրություններ ունենալով Արարատյան բարբառի Լոռու խոսվածքի հետ, առանձնանում են նաև իրենց ինքնատիպությամբ ու նրբերանգներով: Այսպես, օրինակ.

- Որոշ դեպքերում պահպանվել է գրաբարում գոյականի սեռական հոլովի **ա**-ով կազմության կիրառությունը: Օր.՝ *Շամուտա* անտառները մը քոլի տանձ շատ կա: Կամ էլ՝ *Շամուտա* ախչիկ եմ, *Լորուտա*՝ հարսը:

- Կան **ու** հոլովման բառեր: Օր.՝ *Ձախու* աշկըս խաղըմ ա: *Աչու* ոտըս սըզու ա տալի:

- Որոշ բառերի հոգնակին այլ կերպ՝ **ն(ո)րենք** – ով է կազմվում: Օր՝ սերմ – սերմորենք:

- Ինքնատիպ է գոյականների (հիմնականում ծառատեսակները, երբեմն էլ՝ թփատեսակները մատնանշողների) **ըքի (քի)** վերջածանցը, որը համապատասխանում է արդի հայերենի **ի, ենի** ածանցներին: Օր.՝ դամբը**քի**, ըճար**քի**, լորը**քի**, խնձոր**քի**, տանձը**քի**, կակալ**քի**, կաղնը**քի**, շամը**քի**, մասը**քի**, ուռը**քի**, ֆոնը**քի** և այլն:

• **Ուտ**-ից բացի, ենթախոսվածքում օգտագործվում է նաև ծառատեսակի և թփատեսակի առատությունը ընդգծող **կուտ** վերջածանցը՝ Օր.՝ **ըճարկուտ**, **խնձորկուտ**, **ղամբշկուտ**, **շլորկուտ** և այլն:

• Ժամանակային իմաստ արտահայտող որոշ գոյականների համար սեռականի **վա** հոլովաձևի փոխարեն օգտագործվում է **են**-ը: Օր.՝ տարի-տարե**ն**, ամիս-ամսե**ն** (Ըսքամ տարե**ն** մարթեմ, էս բանը տեհած չէի: Իրեք ամսե**ն** յեղը կրերեմ):

Ղու դերանվան սեռական հոլովը (**քո**) բառակապակցության մեջ (**Քո** ունեցածով, քոնի միջոցով) դառնում է **քունինով** կամ **քունով**, այսինքն՝ քո գրիչով, քո գործիքով մի բան անելը

Օր.՝ Կարըմ չէ ս քունինով (քո պատառաքաղով) վեր ունես:

* Ես և իմ դերանունների միացությունը՝ արտահայտված հարցականով՝ **եսի՞մ** չգիտեմ նշանակությամբ, ցույց է տալիս անորոշ վիճակ: Օր.՝ Չես գալի՞ս: // – Եսի՞մ:

• Որոշ անձնական դերանուններ ինքնատիպ կառուցվածքով են հոլովվում: Այսպես,

ես դերանվան բացառական հոլովը **ինձանի** է, **քո** դերանվան բացառականը՝ **քեզանի**, նա դերանվան բացառականը՝ **նրանի**, **սա** դերանվանը՝ **սրանի** և այլն:

* **Ե՞րբ** հարցական դերանունը դարձել է **յե՞փի**: Օր.՝ Էդ յե՞փի ա էլել:

* **Երբ**-ի բացառականը՝ **երբվանից**, դարձել է **յեփինչա**: Օր.՝ **Յեփինչա** ըսպասըմ եմ:

• **Այսպես**, **այդպես**, **այնպես** ցուցական դերանունները Շամուտի ենթախոսվածքում դառնում են՝ **սրհե** // **ըսրհենց**, **տրհե** // **ըտրհենց-տրհենց**, **նրհե** // **նրհենց** (Ոնչ տրհե են անըմ, ոնչ էլ՝ նրհե, ա՛յ սրհե են անըմ):

• **Այստեղ**, **այդտեղ**, **այնտեղ**-ը արտաբերվում է **ստեղ**, **ըտեղ**, **ընդեղ**:

• **Այստեղ**, **այդտեղ**, **այնտեղ**-ի հոգնակի ներգոյական հոլովը կազմվում է **եք** վերջավորության միջոցով՝ **ստեղեք** – **այս տեղերում**, **ըտեղեք** – **այդ տեղերում**, **ընդեղեք** – **այն տեղերում**:

• Ժամանակային իմաստ արտահայտող *ընդոնըմը* փոխարինում է *այն ժամանակ*-ին, *մի դոնըմը՝ մի ժամանակ* – ին:

• *Ետ դառ ու գնա* մերժողական պատասխանի փոխարեն օգտագործվում է գործողության իմաստին համապատասխան *կրունգրտ թա՛րս* հրամայական ձևը:

• *Վեր կենալ* հարադրավոր բայի հրամայական *վե՛ր կացեք* ձևի փոխարեն Շամուտում կիրառվում է *վերե՛ք* ձևը:

• Իսկ *տալ* բայի եզակի հրամայականը *ի՛նձի* է դարձել: Օր.՝ Ի՛նձ տուր – *Ի՛նձի*:

• *Հեռանալ* բայի հրամայականի՝ *հեռացի՛ր*-ի փոխարեն օգտագործվում է և՛ *Հեռո՛ւ* –ն (իմա՝ մի կողմ քաշվիր), և՛ *դե՛նի // դենը* –ն: *Մի դե՛նի* (իմա՝ մի կողմ, մի դենը գնա):

• Շամուտում բազմապատկական *ատ, ոտ, կոտ* բայածանցների հետ օգտագործվում է նաև *հարել*-ը: Օր.՝ ձեռնահարել, բզահարել, բշտահարել և այլն:

Կամ էլ կիրառվում է *ըշտորել*-ը: Օր.՝ խըռըշտորել (շատ խառնել, տակնուվրա անել), լըղըշտորել (խոսքը կամ էլ ջրիկ ինչ-որ բան անընդհատ խառնել):

Բազմապատկական իմաստ են արտահայտում նաև *մըլոր, մըրատ* և *մըգատ* բայածանցները, որոնք կրկնավոր բարդության հնչյունափոխված (ծալ-մըլ, ծըռ-մըռ, դըզ-մըզ) կառույցներ են: Այսպես՝ Ծալել – ծալմըլորել, ծըռել – ծըռմըռատել, դզել – դըզմըզատել և այլն:

Առկա են *օտարալեզու միշ* վերջածանցով կազմված մի շարք բառ-բառակապակցություններ՝ ենմիշ, աշմիշ, դնամիշ, չաբալամիշ, գյոռմամիշ, ընջըլ(ա)միշ, բուդուրմիշ, հոպտամիշ ըլել (անսպասելի պողթկալ), որցակլամիշ ըլել (աքլորանալ) և այլն:

• Քեզ, իր(ան) դերանունների հետ *պես, նման* կապերի փոխարեն *ա* հոդակապով *դայդի օտար* բառն է կիրառվում՝ *քեզադայդի, իրանադայդի, մեզադայդի, ձեզադայդի* և այլն:

Համեմատ-ի փոխարեն կիրառվում է *ուգորա*-ն: Օր.՝ *Քեզուգորա* խոսա, տարիքդ *ուգորա* բաներ ասա, *իրանուգորա* չի մենձ-մենձ խոսըմ և այլն:

Քիչ չեն **ֆաստն** (տեսք) օտար բառով կազմված բարդությունները: Օր.՝ *Մարդաֆաստն, ըրեխաֆաստն, կնիկաֆաստն և այլն:*

• **Անընդհատ**-ի փոխարեն շամուռայան ենթախոսվածքում կիրառվում է **հլենինչ**-ը: Օր.՝ Դասատուն **հըլենինչ** ինձ էր հարցեր տալի:

• **Անընդհատ**-ի փոխարեն ենթախոսվածքում օգտագործվում է նաև **մի ծերի**-ն: Օր.՝ Թողըմ չի խոսամ, **մի ծերի** ինքն ա վրա տալի:

• **Եթե** շաղկապի փոխարեն գյուղացիների բանավոր խոսքում շրջանառվում է **բան ա, որ** –ը կամ **թե որ**-ը: Օր.՝ **Բան ա, որ// թե որ** տենաս, կասես չեմ գալի:

* **Համար** և **պատճառով** կապերի փոխարեն կիրառվում է **ծերա**-ն: Օր.՝ Մի պատառ **ֆողի ծերա** իրար միս են ուտըմ:

* **Ամեն անգամ**-ի փոխարեն ասվում է **ամեն հետ**, իսկ **ամեն անգամվա պես**-ի փոխարեն՝ **ամեն հետվա պես**: Օր.՝ Ամեն **հետվա** պես չեմ կարըմ քաղեմ. մենձացել եմ:

• **Երբեք, ոչ** -ի փոխարեն գործածվում է **անըմը**: Օր.՝ **Անըմը**, գնալ չըտեմ, ինչ ուզըմ ա, թող մտածի:

Կողմ, մոտ, ուղղությամբ, դիմաց-ի փոխարեն ենթախոսվածքում օգտագործվում է **առթնակ**-ը: Օր.՝ Մեարոպի տան **առթնակը** մի բլուր կա:

• Շամուռայան ենթախոսվածքում **հան** կամ **հանա** վերջավորությունը ևս **կողմ** իմաստն է արտահայտում և կիրառվում է ժամանակ ցույց տվող որոշ բառերի հետ:

Օր.՝ ռավոդ**ահան** կամ ռավոդ**ահանա** – առավոտյան կողմ, րիզն**ահան**(ա/ – իրիկունը (երեկոյան կողմ), քշեր**ահանա** – գիշերով, գիշերվա կողմ, գիշերն ընկնելուն պես, ձեքել**ահանա** – ձեքել(ա)**հան**(ա) – առավոտյան կողմ, վաղ առավոտյան, լույսը նոր բացված: **Մեքին**-ը նշանակում է առավոտ շուտ:

Կողմ իմաստն է արտահայտում նաև **կուռ**-ը՝ **րիզնակուռը, ճաշվակուռը**:

* **Միզուցե**-ն դառնում է **բալի //բալքի**: Օր.՝ Ըսօր **բալի //բալքի** անձրև գա:

• Երբեմն էլ *որոշ*-ի փոխարեն կիրառվում է *բազի*, իսկ *երբեմն*-ի փոխարեն՝ *բազիբիր* բառերը: Օր.՝ *Բազի* մարդ էլ կասի՝ չեմ կարա:

• *Մեկ-մեկ էլ*-ի փոխարեն օգտագործվում է *բազի-բազի* -ն: Օր.՝ *Բազի-բազի* ես էլ եմ շրշկլվում (իմա՝ շփոթվում):

• *Վերջապես, ի վերջո, հանկարծ* բառերի փոխարեն կիրառվում է *գեծդանգեժ*-ը: Օր.՝ Որ շատ սպասեցինք, մին էլ *գեծդանգեժ* նավոդահան ըրեվաց:

• *Չիմ* (լրիվ, բոլորը) հոլովական ձևերում դառնում է *ջիմնու(ց), չիմնուն*:

• *Ինչպես երևում է*-ի փոխարեն գործածվում է *ըրեվալով*-ը: Օր.՝ *Ըրեվալով*՝ ըսօր անձրեվ տի գա:

• *Անագին*-ի փոխարեն օգտագործվում է *խելի (մըխելի), մըթամ թե*-ն՝ մըթաթե, *իբր թե, մի քիչ*-ը՝ մի *նայսա* (Մի նայսա ցածրը խոսա):

• *Ի հեճուկս նրա*-ն ենթախոսվածքում դարձել է *նրա լաջու, նրա ինասու*:

* Իսկ *պես-նման*-ի փոխարեն ենթախոսվածքում առկա է *վարի* ձևը՝ *մարդավարի, գեղավարի, իշավարի* վայրենավարի և այլն:

* *Ավուն*-ով նվազական աստիճանի ածական է կազմվում՝ դեղնավուն-դեղինին մոտ, կարմրավուն – կարմիրին մոտ և այլն:

* Խոսվածքում կիրառվող *դեսը, դեղը, դենը* համապատասխանում են *դեպի այն կողմ* -ին, *դեպի այս կողմ*-ին և *դեպի այդ կողմ*-ին:

Մարդ-մուրթ կրկնավոր բարդությունը բանավոր խոսքում դառնում է նաև *մարդ-մադաթ*, իսկ *լինել, չլինել* հարադրավոր բայերի հետ նշանակում է *ոչ ոք*: Օր.՝ Գնացի տուն, տեհա՝ մարդ-մադաթ չկա:

* *Հետ*-ը նշանակում է նաև *անգամ*: Օր.՝ *Ամեն հետ* պապը գաթա չի ուտում:

• *ացու* ածանցով կազմված բառախումբն արտահայտում է առանձնացված իմաստը: Օր.՝ *սերմացու* (սերմի համար *առանձ-*

նացված), դեյրացու (շրջագգեստի համար առանձնացված կտոր), մատաղացու (մատաղի համար *առանձնացված գառ, աքլոր*) և այլն:

• 1920-ականներից հետո սկսվեցին գործածվել քիրացու, ախալերացու (ընտրած, մտերին, հավատարիմ քույր, եղբայր):

• Շամուտյան ժողովրդախոսակցական լեզվում *մյուս, հաջորդ օրը* դառնում է *էքսը, վաղը՝ էքուց, վաղը չէ մյուս օրը՝ էլօր, ասելու 3-րդ օրը՝ գալօր*, իսկ *երեկ-ը՝ էրեգ (ի), երեկ չէ առաջի օրը՝ մեկեղ օրը, երեկ չէ առաջի օրվա նախորդ օրը՝ մեկսել օրը*:

• 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարավերջը շամուտյան ենթախոսվածքում կիրառվում են նաև բառեր, որոնք այլ տարածաշրջանների խոսակցական լեզվում կամ բացակայում են, կամ էլ շատ քիչ բարբառներում են կիրառվում, ինչպես՝ *Ղառնախ* – քամիների հետևանքով փոսերը ձյունով լցված տեղ, իսկ *ղառնախ սարքելը* – քամիների հետևանքով փոսերը ձյունով լցնել:

Ձնառել բառը Շամուտի ենթախոսվածքում՝ նշանակում է ձյունից աչքերը վնասվել՝ կուրանալ: *Ձնառելը՝ ձմեթ առնել լինել բացատրությամբ, տեղ է գտել* միայն Մալխասյանի բառարանում²⁶: Իսկ *ձմեթ-ը այդ նույն բառարանում*²⁷ և Հայոց լեզվի բարբառային բառարանում²⁸ աչքի շլացում և տկարությունն է, որ առաջ է գալիս երկար ժամանակ ձյունին նայելուց:

Նշենք նաև, որ Գողթան գավառում (Մեսրոպավան, Բիստ, Ալահի) ձյունից աչքերը կուրանալուն ասում էին *աչքերը ձյունով արնկել*: Շիրակում՝ Վահրամաբերդում, այդ երևույթին ասում են *աչք առնել*, Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում՝ *Հաչկրոնել*:

• Լռռու խոսվածքում, այդ թվում՝ Շամուտի ենթախոսվածքում, շրջանառվում է *մռռ* անվանումը: Քանի որ բարբառները եղել և մնում են գրական հայերենի հարստացման գլխավոր աղբյուրներից մեկը, հետևաբար զարմանալի է, թե ինչու է գրական հայերենում *մռռ* միավանկ բառի փոխարեն օգտագործվում բազմաբա-

²⁶ Մալխասյան, հ. 3, էջ 179:

²⁷ Մալխասյան, հ. 3, էջ 178:

²⁸ Բրբռ. բառարան, հ. Գ, էջ 337:

դադրիչ ազնվամորի (ազն+/ի/վ+ա+մորի) բազմավանկ բառը: Առավել ևս, երբ գրական հայերենում ունենք մեկ այլ թփատեսակի՝ *մոշ*-ի օրինակը: Գրական հայերենում *մոռ*-ի կիրառությունը նաև կկանխի ռուսերեն *մայինա*-ի հաղթարշավը և դուրս կմղի մեր խոսակցական լեզվից: Ի դեպ, վերջին տասնամյակներին լոռեցիները, այդ թվում նաև շամուտեցիներից շատերը սկսել են *մոռի* փոխարեն կիրառել ռուսերեն *մայինա* անվանումը, իսկ այդ թփատեսակի առատության վայրը՝ ռուսերեն բառով, բայց հայկական վերջածանցով՝ *մայինկուս*:

Նույնը վերաբերում է նաև *հղի բառի կիրառությանը*, երբ Լոռու խոսվածքում և մի շարք ենթախոսվածքներում ունենք դրա *ծոցվոր* համարժեքը: Մեր գրողներից Հովհ. Շիրազը և Հրանտ Մաթևոսյանն են իրենց ստեղծագործություններում օգտագործում *ծոցվոր* բառը՝ դրանով պայծառություն հաղորդելով կնոջ մայրանալու երևույթին: Չէ՞ որ *ծ*-ի և *ց*-ի ալիտերացիան պայծառություն է տալիս կնոջ մայրանալու երևույթին:

Փաստենք նաև, որ *ծ*, *ց*-ով կազմված տառակապակցությունների մեծ մասով ստեղծված բառերը տրամադրություն ստեղծող են և պայծառ զգացողություն են ստեղծում, ինչպես ծիրան, ծիածան, ծիծաղ, ծոց, ծոցվոր, ցնձալ, ցնցուղ, ծափ և այլն: Դրան հակառակ՝ *փ*, *բ*, *թ* տատերով կապակցված մի շարք բառեր մի տեսակ տհաճ զգացողություն են առաջացնում, ինչպես թրիք, թուք, թուրք և այլն:

Այսպիսով, Լոռու խոսվածքում և նրա ենթախոսվածքներից մեկում Արցախ-Ղարաբաղի բարբառի հետ որոշակի ընդհանրությունների առկայությունը բացատրվում է տեղացիների խոսվածքի վրա այդ բարբառակիրների ակնառու ազդեցությամբ, ինչն էլ պայմանավորված է վերջիններիս քանակային գերակշռությամբ:

Լոռու խոսվածքը, Շամուտի ենթախոսվածքի հետ Արարատյան բարբառի մաս կազմելով, իր բառազանձով և բառակազմական-քերականական առանձնահատկություններով երբեմն հեռանում է նրանից՝ մոտենալով Արցախ-Ղարաբաղի բարբառին, կամ էլ ներկայանում է որպես ինքնուրույն միավոր:

РЕЗЮМЕ

Характеристика подречи Шамутян Лорийского поддиалекта и его связь с карабахским диалектом Саркисян Армен Ш.

Речь Лори с Шамутом входит в состав араратского диалекта, однако, с некоторыми отличительными проявлениями отходит от араратского диалекта и входит, а иногда и напоминает карабахский диалект.

Таким образом, по группе слов, входящих в его словарный запас, и некоторым грамматическим особенностям словообразования речевая шамутский поддиалект Лори как самостоятельная речевая единица приближается к карабахском диалекту.

- В шамутском поддиалекте и карабахском диалекте множественное число группы слов образуется с помощью частицы “ан”.

- По составу множественного числа многосложных сеществительных шамутский поддиалект также сближается с карабахским диалектом.

В последнем случае множественное число “ни” становится “не”.

- Окончание древнеармянских односложных слов “н” сохранилось в речи Лори и ряде слоговоров, а также карабахском диалекте превратившись в “ы”.

Иногда в лексике шамутского поддиалекта встречаются слова имеющие иное значение, чем лорийская речь и карабахский диалект.

Некоторое сходство, наличие общих черт с карабахским диалектом объясняется присутствием переселенцев уз Арцаха в ряде поселений Лори вследствие великого арцахского переселения в конце XVIII века влиянием носителей диалекта на речь местных жителей. Это явление обусловлено количественным преобладанием последних.

Ключевые слова: диалект, речь, поддеалект, словарный запас, состав слова, грамматические особенности, многосложные слова.

SUMMARY

Characteristics of the Loru shamutyan sub-speech and relationship with the dialect of Karabakh Sarkisyan Armen Sh.

It is true that the dialect of Lori with the subdialect of Shamut is part of Ararat vernacular; however, with several distinctive features, it departs from Ararat vernacular and approaches, and sometimes even resembles, Karabakh vernacular.

Thus, with a group of words included in its vocabulary and some lexical-grammatical specifics, Shamut subdialect of Lori, as an independent dialectal unit, approaches Karabakh vernacular.

* In Shamut subdialect and Karabakh vernacular, the plural of a group of words is formed with the particle “an” (⟨ան⟩).

* With the structure of the plural “ni” (⟨նի⟩) of polysyllabic nouns, Shamut subdialect also resembles Karabakh vernacular. In case of the latter, the plural “ni” (⟨նի⟩) transforms into “ne” (⟨նե⟩).

* The end-sound “n” (⟨ն⟩) of monosyllabic words of the Old Armenian language has been preserved in the dialect of Lori and a number of its subdialects, as well as in Karabakh vernacular, having transformed into “ə” (⟨ը⟩).

* Sometimes there are words in the vocabulary of Shamut subdialect, which, in contrast to the dialect of Lori and Karabakh vernacular, have different meanings.

Existence of certain similarities and commonalities with Karabakh vernacular is explained especially by the presence of immigrants in a number of settlements of Lori as a result of the great migration from Artsakh at the end of the 18th century and by the obvious influence of the immigrants' vernacular on the dialect of the locals. This phenomenon is due to the quantitative predominance of the immigrants.

Key words: vernacular, dialect, subdialect, vocabulary, word-formation, grammatical features, polysyllabic words.

ՂԱՐԱԲԱՂԻ ՊԱՏՈՒՄԻ ՀՆՉԵՐԱՆԳԻ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վանյան Լուսինե

Արցախի պետական համալսարան
ավագ դասախոս
vanyanlusine@gmail.com

Բանալի բառեր. Ղարաբաղի բարբառ, շարույթի հնչերանգ, հեքիաթի ենթախոսույթ, հնչագործաբանություն, կորերի իլլոկուցիա, զուգադրում:

Հոդվածում քննվում է Ղարաբաղերենի պատումի հնչերանգը գրական հայերենի համեմատությամբ: Հայտնի է, որ գրական լեզվի հնչերանգը ուսումնասիրվել է բառային պլանում Ռ. Թոխմախյանի, նախադասության պլանում Ա. Արամյանի, Ս. Բաղդասարյանի և Ս. Ղուկասյանի կողմից: Սակայն Ղարաբաղի բարբառի նախադասության և տեքստի պլանների հնչերանգը նվազ ուշադրության է արժանացել՝ ուսումնասիրվելով ռիթմաշեշտային կազմի հայեցակերպով: Այս խնդրի լուծման նպատակով Ղարաբաղերենի հեքիաթի խոսույթը համեմատվել է գրական հայերենի նույնաբնույթ տեքստերի հետ: Դիտարկվել են շարույթի կորերը՝ արտահայտած գործաբանական իմաստի առանձնացմամբ:


Հնչերանգի քննությունը հիմնվում է հնչերանգի Ռ. Պոտապովայի տված ընդգրկուն սահմանման վրա, որի համաձայն հնչերանգը դիտարկվում է իբրև մեղեդու, ուժի, խոսքի արագության և ձայնի որակի միություն: Քննության ժամանակ դիտարկվել են այս չափորոշիչներից յուրաքանչյուրի նշանակալի մեծությունն ու տատանումները՝ իրադրային կամ իլլոկուտիվ իմաստի արտահայտման մեջ: Քննության նպատակը շարույթի պատումի կորի վերհանումն է իլլոկուցիայի հաշվառմամբ: Կիրառվել են նաև հնչյունաբանական, հնչագործաբանական, տեսական, համեմատության և լսողական-գործիքային մեթոդները:

Իբրև քննության նյութ են ծառայել Հ. Թումանյանի հեքիաթների ենթաժանրի գրական և դրանց թարգմանությունը բարբառով: Դրանք ձայնավորվել են արևելյան գրական հայերենի կրողների, դրանց բարբառային տարբերակը՝ ընթերցվել բարբառի կրողների կողմից:


Վերլուծությունը ցույց տվեց, որ Ղարաբաղի բարբառի չեզոք պատումին հատուկ է հայերենի **ալիքաձև, ապա մարող կորը**: Սրանով դա տարբերվում է անգլերենի երկգագաթ շարույթից: Շարույթի միջուկում մեղեդին վեր է բարձրանում դեպի շեշտված վանկ, որին հետևում է վարընթաց տոն՝ ավարտական և վերընթաց տոն՝ անավարտ շարույթներում: Վերընթաց կորը բնութագրում է շեշտված վանկը, որի վրա այն կամ շարունակվում է, կամ բեկվում է՝ փոխարինվելով հավասար կամ վարընթաց կորով: Բեկման կետը վերընթաց անշեշտ հատվածի աճին զուգընթաց տեղափոխվում է աջ, ավելանում է տոնի փոփոխման արագությունը, լայնանում է մեղեդային ձայնաշարը: Վերընթաց ճյուղը գերազանցում է վարընթացը, ինչը պայմանավորված է լեզվի վերջնաշեշտ միտումով: Վարընթաց ճյուղի երկարությունը կախված է հետշեշտային վանկերի քանակից: Առավելագույն տոնը կրում է նախաշեշտ վանկը, իսկ նվազագույնը՝ շեշտվածի վերջը: Վերընթաց ճյուղը կարող է իրացվել առանց հետագա վարընթաց տոնի: Հազվադեպ լինում է նաև վարընթաց միջուկային տոն՝ միավանկ շարույթներում, ինչպես նաև տոնի հավասար նախաշեշտ շարժում՝ վերընթաց-վարընթաց միջուկային տոնից առաջ/Ս. Բաղդասարյան/:

Շարահյուսորեն և իմաստաբանորեն բազմաշարույթ ասույթների ալիքաձև կորում կան ավելի շատ վերընթաց կամ/ և վերընթաց-վարընթաց գագաթներ: Ասույթի սկզբում կամ կենտրոնում տեղակայված գագաթներին հաջորդում է աստիճանաբար մարող հնչերանգ:

Այս տեսակի կորը դիտարկվել է հեքիաթի չեզոք պատումում թե՛ գրական հայերենում, թե՛ Ղարաբաղի բարբառում: Օրինակ՝




Սպեկտրոգրամ 1. Գրական հայերենի պատումի ալիքաձև կոր



Սպեկտրոգրամ 2. Ալիքաձև կորը Ղարաբաղի բարբառում


Տեքստի սկիզբը երկու տարբերակներում էլ ունի դանդաղ արտաբերություն խոսողի ուշադրությունը գրավելու նպատակով:

Պատումի բազմաշարույթ ասույթներին հատուկ է նաև **մուտքի ընդգծված զագաթ** և անմիջապէս մարող տոն: Օրինակ՝




Սպեկտրոգրամ 3. Մուտքի ընդգծված զագաթով շարույթ Ղարաբաղի բարբառում

Հեքիաթասացը գրական հայերենում և բարբառում կիրառում է նաև մուտք+**հավասար** սանդղակը.




Սպեկտրոգրամ 4. Պատմողական եղանակի հավասար սանդղակ Ղարաբաղի բարբառում




Սպեկտրոգրամ 5. Հեքիաթի պատումի մուտք+հավասար սանդղակ գրական հայերենում

Ղարաբաղյան բարբառին բնորոշ է մենտալ գործունեության հնչերանգը, որն ունի բարձրացող, ապա հավասար կոր: Այն համընդհանրույթ է, արտահայտված նաև գրական հայերենում, ռուսերենում, լեհերեն և գերմաներեն լեզուներում: Այն առկա է նաև գրական տարբերակի հիշողությունների իլլոկուցիայում հեքիաթների ենթաժանրում: Օրինակ՝




Սպեկտրոգրամ 6. Մենտալ հիշողության հնչերանգ գրական տարբերակում, *մոզի* հնչաբառի վրա

Այստեղ միջուկի */մոզի/* առաջին վանկի վրա նկատվում է տոնի կտրուկ բարձրացում, ապա հավասար կոր:




Սպեկտրոգրամ 7. Մենտալ հիշողության հնչերանգ Ղարաբաղի բարբառում, *թոկը վիզն է կապում* հնչաբառի վրա

Նման կոր է դիտարկվում նաև Ղարաբաղի բարբառի այս կառույցում:



Սպեկտրոգրամ 8. Մենտալ հիշողության հնչերանգ Ղարաբաղի բարբառում, *վեր ծէն ա տամ* հնչաբառի վրա


Մենտալ գործողության կորը փոխանցում է այն գործողության հիշողության իլոկուցիան, որը խոսողը անցյալում կատարել է.




Սպեկտրոգրամ 9. Հիշողության իլոկուցիայի կորը Ղարաբաղի բարբառում, վեր նի յում կապալ հնչաբառի վրա

Այս կորը բազմիմաստ է և մենտալ գործողություն մատնանշելու հետ մեկտեղ նաև անավարտության իմաստ է փոխանցում: Այն հաճախ հեքիաթի ենթառճում գրական հայերենում և Ղարաբաղերենում բնորոշ է ավարտական երկարացում և վերջընթեր/նախավերջնթեր վանկի շեշտ:

Իրադարձությունների **դինամիկ զարգացման իլոկուցիան** արտահայտվում է շեշտված գազաթների ակտիվ ընդգծմամբ, արագացմամբ և ինտենսիվության աճով.




Սպեկտրոգրամ 10. Դինամիկ գործողությունների իլլուցիա, արտահայտված ցայտուն զագաթներով, բարձր ինտենսիվությամբ և տեմպով Ղարաբաղի բարբառում, կետագծով նշված է ինտենսիվությունը




Սպեկտրոգրամ 11. Դինամիկ գործողությունների իլոկուցիա, արտահայտված ցայտուն զագաթներով, բարձր ինտենսիվությամբ և տեմպով գրական հայերենում, կետագծով նշված է ինտենսիվությունը

Հնչերանգի զագաթը կարող է իրացվել շարույթի վերջում.



Սպեկտրոգրամ 12. Ղարաբաղի բարբառում շարույթի վերջի զագաթ

Երկու տարբերակներում էլ առկա է շարույթի կենտրոնում իրացվող հնչերանգ.



Սպեկտրոգրամ 13. Կենտրոնական գազաթով կոր Ղարաբաղի բարբառում

Հիմարի միամտության փոխանցման իմաստը ստանում է վերընթաց-վարընթաց տոն, ինտենսիվության աճ, ձայնաշարի նեղացում /*ձախեցի*/, բարբառում այս իմաստը կարող է և հավասար տոն ստանալ:

Իսկ հեզնանքի հնչերանգին բնորոշ է վերընթաց+վարընթաց+վերընթաց տոն, բացասական զգացումի և ցրտի նկարագրության ժամանակ ձայնաշարը նեղանում է, ինտենսիվությունը և բաղաձայնների տևողությունը աճում:

Գրական տարբերակի համեմատությամբ բարբառում նկատվեց բարդ կորերի պակաս կուռ ընդգծում ավելի սակավ վերընթաց-վարընթաց տոներ, ավելի հաճախակի հավասար տոն և ավելի նեղ ձայնաշար:

Այսպիսով, Ղարաբաղի բարբառն ունի գրական հայերենին բնորոշ ալիքաձև սանդղակ, վերընթաց+հավասար սանդղակ, հավասար+վերընթաց/ սանդղակ, ընդգծված մուտքով սանդղակ,

միննույն ժամանակ դրանում նկատվում է պարզ տոների ավելի բարձր գործածություն և ավելի նեղ ձայնաշար: Իլլոկուտիվ իմաստի հնչերանգային դրսևորումները նման են դիտարկվող երկու տարբերակում: Մենտալ գործողություն նկարագրող գործողությունը ավելի հաճախական է բարբառում:

Օգտագործված գրականություն

Արամյան Ա.Ս. *Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում*. Հայկական ՍՍՀ ԳԱ, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., 1978, էջ 12-52:

Ղուկասյան Ս.Վ. *Պատմողական հնչադասության հնչերանգը ժամանակակից գրական հայերենում*. Ե., Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 5: 1986, էջ 55-62:

Արամյան Ա.Ս. *Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում*. Հայկական ՍՍՀ ԳԱ, Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե.: 1978, էջ 12-52:

Потапов В.В. Динамика и статика речевого ритма. Сравнительное исследование на материале славянских и германских языков, Москва, КомКнига: 2004, с. 150-261.

Янко Т.Е. Интонационные стратегии русской речи в сопоставительном аспекте, Москва, Языки славянских культур, 2008, с. 104-125.

РЕЗЮМЕ

Некоторые особенности интонации карабахской речи

Ванян Лусине

В статье рассматривается интонация повествования в карабахском диалекте в сопоставлении с восточноармянским литературным языком. Выявляются отличительные черты огибающей синтагмы с учетом акцентоносителя и иллокутивного значения на

материале сказки. В карабахском диалекте обнаруживаются основные типы литературного языка с более узким диапазоном и меньшей выпуклостью контуров.

Ключевые слова: интонация синтагмы, карабахский диалект, иллокутивные смыслы огибающей, сопоставление с литературным армянским, фонопросодия.

SUMMARY
Some peculiarities of Karabakh speech intonation
Vanyan Lucine

The article views the intonation of fairy tale narration in the Karabakh dialect as compared with Eastern Armenian standard. It reveals characteristic features of intonation group and considers its accents and illocution. The dialects shares inherent features of main intonational contours of the standard, exhibiting narrower range and less convex pragmatically significant tones.

Keywords: intonation of syntagm, the Karabakh dialect, illocution of the contour, comparison with the standard, phonoprosod.

ԱՐՑԱԽ-ՍՅՈՒՆԻՔԻ ԲԱՐԲԱՌԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐ
ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Վարդանյան Արտակ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի
բանասիրական գիտությունների թեկնածու
բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող
artva@list.ru

Բանալի բառեր. Արցախ-Սյունիքի բարբառ, խոսվածք, Նախիջևան, Երնջակ, բարբառային հատկանիշներ, Գյաղ, Շոռոթ:

Նախաբան

Նախիջևանի տարածքը, ընդգրկելով պատմական Հայաստանի Վասպուրական աշխարհի Գողթն և Նախճավան, Այրարատ աշխարհի՝ Շարուր, Սյունիք աշխարհի՝ Ճահուկ և Երնջակ գավառները, լինելով տարբեր ազգագրական շրջանների խաչմերուկ, բազմիցս ենթարկվելով բնակչության զանգվածային տեղաշարժերի, օժտված է եղել բարբառային բազմազանությամբ:

1918-1920թթ. իրադարձությունների նախօրյակին, երբ բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմում էին հայերը, Նախիջևանի տարածքն ընդգրկում էր շուրջ յոթ տասնյակ հայաբնակ քաղաքներ և գյուղեր¹: Անցյալ դարասկզբի Նախիջևանի հայ բնակչության վերաբերյալ առկա վիճակագրական-տեղագրական ուսումնասիրությունների ընձեռած տվյալների և տարածքում առկա խոսվածքների վերաբերյալ երկար տարիների մեր հավաքչական աշխատանքների հիման վրա կազմել ենք Նախիջևանի հայ բնակչություն ունեցող

¹ Ա.Ղո (Յովհաննէս Տէր-Մարտիրոսեան), Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906թթ.). փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանութիւններով, Ե., 1907:

բնակավայրերի բարբառների համապատկերը և Նախիջևանի բարբառային քարտեզը²:

1605 թվականին Շահ Աբբասի կազմակերպած բռնագաղթի հետևանքով գրեթե ամայանալուց, մի քանի տասնամյակ անց աստիճանաբար հայերով վերաբնակեցվելուց, ապա 1828 թվականին Արևելյան Հայաստանի կազմում Ռուսաստանին միանալուց հետո հայերի թիվը գերակշիռ դարձավ, սակայն 1918 թվականի վիճակով Նախիջևանի հայ բնակչության մեծ մասը խոսում էր 1828 թվականից տարածքում հաստատված վերաբնակների՝ Խոյի (33 բնակավայր) և Մարաղայի (3 բնակավայր) բարբառներով:

Չնայած Նախիջևանի բնակչությանը վիճակված բազմաթիվ գանգվածային տեղաշարժերին՝ տարածքում, այնուամենայնիվ, պահպանվել էին նաև տեղաբնիկ բարբառներ. Ագուլիսի բարբառը գործածվում էր 7 բնակավայրում, Ջուղայի բարբառը՝ 1 բնակավայրում, Արարատյան բարբառը՝ 4 բնակավայրում, Ճահուկ-Վայքի միջբարբառը՝ 2 բնակավայրում, Հյուսիսային Գողթնի միջբարբառը՝ 6 բնակավայրում: Նախիջևանի տարածքի սյունիքյան հատվածում՝ Երնջակ գավառի կենտրոնական և հյուսիսային մասերում տեղադրված Աբրակունիս, Գյաղ, Նորաշեն, Շահկերտ (Ղազանչի), Շոռոթ և Փորաղաշտ (Փարաղաշտ) գյուղերում պահպանվել էր նաև Արցախ-Սյունիքի բարբառը (այսուհետ՝ Արցախի բարբառ):

Նախիջևանի Ինքնավար Հանրապետության կազմավորումից հետո՝ 1924 թվականին հայ բնակչության թիվը չգերազանցեց 20 տոկոսը, քանի որ պետական մակարդակով խոչընդոտվեց տարածքից գաղթած հայության՝ հայրենի բնակավայրեր վերադարձը³: Ողջ

² **Ա. Վարդանյան**, Նախիջևանի բարբառային քարտեզը.– Հանդես ամսօրեայ, չ. 1-12, Վիեննա, 2000, էջ 457-470: **A. Vardanyan**, Dialectologic Map of Nakhidjevan, Apaga, N. 19, Tehran, 2004, p. 8-12:

³ **А. Варданян**, Изгнание коренного армянского населения из Нахиджевана. - Зов вишاپасара: статьи, эссе, рассказы, Е., 2010, с. 51-56.

խորհրդային շրջանում այդ հանրապետության դրսևորած հետևողական հակահայ քաղաքականության հետևանքով հայերի թիվը գնալով ավելի նվազեց և 1988 թվականին՝ Նախիջևանի վերջնական հայաթափման նախօրյակին կազմում էր տարածքի ընդհանուր բնակչության ընդամենը 1,5-2 տոկոսը:

Արցախի բարբառը կրող հիշյալ 6 բնակավայրերից համեմատաբար ավելի ուշ՝ անցյալ դարի 60-ական թվականներին են իսպառ հայաթափվել Փորադաշտը, Գյաղը և Շոռոթը, իսկ Աբրակունիսը, Շահկերտը և Նորաշենը՝ ավելի վաղ՝ 30-40-ական թվականներին:

Տեղանունների ստուգաբանությունը

Նախ անդրադառնանք Արցախի բարբառը կրող այս բնակավայրերի անունների ստուգաբանությանը⁴:

Աբրակունիս – Ըստ ավանդության՝ հայոց Աբբակ նահապետն է հիմնադրել պատմական նշանավոր այս ավանը, և այս հիմքով ստուգաբանության համաձայն՝ բնակավայրի անվանումը բխում է նահապետի անձնանունից⁵: Նախապես ունենալով *Աբրակունիք* ձևը և կիրառվելով հայցականաձև՝ դարձել է *Աբրակունիս*, այնուհետև բաղաձայնների դրափոխությամբ՝ *Աբրակունիս*:

Գյաղ – Ամենայն հավանականությամբ այս տեղանունը կրում է հայերեն *գյուղ* արմատը, քանի որ նախ՝ պատմական Հայաստանում այս արմատով բազմաթիվ տեղանուններ են եղել (*Գյուղ* անվամբ գյուղ Սասուն գավառում, ավան Բագրևանդ գավառում, *Գյուղիկ* անվամբ

⁴ **Ա. Վարդանյան**, Նախիջևանի որոշ տեղանունների ստուգաբանության շուրջ.– «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2018, էջ 362-369;

⁵ **Ա. Սյվազյան**, Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, Ե., 1978, էջ 42-43:

գյուղեր Վասպուրականում և Տայքում և այլն)⁶, երկրորդ՝ Գյաղի հարևան որոշ բնակավայրերի խոսվածքներում հին հայերենի *է-ի* դիմաց առկա է *ա (üi)*՝ իսկ *ա > խըլագ, մէջք > մաշկ, տեր > տար* (Ռամիս), *էգ > աք, պահէգ > պըհագ, տեր > տււր* (Փառակա), ամէն *ա > ամման*, *թէ > թււ* (Բիստ), *գիւղ > գէղ > գ'աղ* (Ողոհի) և այլն⁷: Ի դեպ, Ս. Օրբելյանը⁸ և Ղ. Ալիշանը⁹ գյուղանունը վկայել են *Գաղ* ձևով, իսկ տեղի խոսվածքում գյուղը անվանվում էր *Գււղ*՝ հնչյունափոխված Աճառյանի օրենքով: Պարսկերենից փոխառված աղբբեջաներեն անվանումները ունեն *Gal, Kal* ձևերը:

Նորաշեն – Ստուգաբանության կարիք չունեցող այս գյուղանունը հավանաբար Ստեփանոս Օրբելյանի հիշատակած՝ Երնջակ գավառի *Նորագյուղիկ* բնակավայրն է¹⁰:

Շահկերտ (Ղազանչի) – Գյուղի առաջին անունը կազմված է պարսկերեն شاه šāh («թագավոր») արմատից և հայերեն *-կերտ* (պրսկ. -گرد gerd) վերջածանցից («արքայակերտ»), իսկ երկրորդ անունը ստացել է օտարների կողմից՝ գյուղը պղնձարդյունահանմամբ և կաթսայագործ վարպետներով հայտնի լինելու պատճառով (թրք. բրբ. gazancı («կաթսայագործ»))¹¹:

⁶ Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.1, Ե., 1986, էջ 911-912:

⁷ Ս. Վարդանյան, Հյուսիսային Գողթնի միջբարբառը, Ե., 2021, էջ 21:

⁸ Ս. Օրբելեան, Պատմութիւն տանն Սիսական, Ս., 1861, էջ 378:

⁹ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1803, էջ 358:

¹⁰ Ս. Օրբելեան, նույն տեղում:

¹¹ Այն նշանավոր գյուղն է, որտեղ Պարսկաստանի Հեյդարկուլի խանի դեմ 1750 թվականին բարձրացված խոշոր ապստամբությունից հետո բնակիչների զգալի մասը գաղթել է Շուշի, որտեղ հաստատված շահկերտցի իշխանական տոհմերը կառուցել են Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին, Խանդամիրյան թատրոնը և այլ նշանավոր կառույցներ:

Շոռոթ (*Շոռոտ, Շոռուտ, Շուռութ*) – Գյուղանունը բխում է կա՛մ հայերեն **շոռ** («մածնաշոռ») արմատից և *-ուտ* կամ *-ոտ* ածանցից, կա՛մ պարսկերենից փոխառյալ *շուր* (شور «աղի») բառից և նշված ածանցներից մեկից¹²:

Փորադաշտ (*Փարադաշտ*) – Աշխարհագրական դիրքով պայմանավորված այն բազմաթիվ տեղանուններից է, որոնց հիմքը հայերեն *փոր* արմատն է (*Փոր, Փորակ(ն), Փորակուտ* և այլն)¹³, տվյալ դեպքում՝ *ա* հոդակապով միացած *դաշտ* արմատի հետ: Երկրորդ տարբերակն առաջացել է ձայնավորների հետընթաց ներդաշնակությամբ:

Դիտարկումներ

Մինչև անցյալ դարի 60-ական թվականները Արցախի բարբառի խոսվածքները կրող այս բնակավայրերից, ցավոք, Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով ժամանակին գրանցվել և պահպանվել է միայն Գյաղի խոսվածքը¹⁴: Մեր տրամադրության տակ է եղել նաև 2021 թվականին նախկին շոռոթեցուց գրանցված մի ձայնագրություն¹⁵: Այնուամենայնիվ, այս երկու նյութերի ընձեռած հնարավորության սահմաններում համեմատել ենք Նախիջևանի Երնջակ գավառի հիշյալ գյուղերի խոսվածքների (այսուհետ՝

¹² Այն նշանավոր գյուղն է, որտեղ ծնվել է հայ նշանավոր բանաստեղծ, գուսան, նկարիչ-ծաղկող Նադաշ Հովնաթանը (1661-1722), նրա որդիները՝ նկարիչ-ծաղկողներ Հարություն և Հակոբ Հովնաթանյանները:

¹³ **Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, նշվ. աշխ., հ.5, Ե., 1986, էջ 274:

¹⁴ Գյաղի խոսվածքը 1983 թվականին ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով գրանցել է Հայաստանի ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակից Դարիկո Կոստանյանը (տետր հ. 214), բարբառախոսներ՝ Մարգարիտ Հարությունյան (ծնվ.1908, Գյաղ), Արև Մուրադյան (ծնվ.1908, Գյաղ):

¹⁵ 2021 թվականին ձայնագրել և մեզ է տրամադրել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն Տոբթ Դալայյանը, բանախոս՝ Վայոց ձորի Գողթանիկ գյուղի բնակիչ Մարիամ (Մանիկ) Նազարյան (ծնվ. 1927թ., Շոռոթ):

խոսվածք) և Արցախի բարբառի հատկանիշները¹⁶, որոշակի եզրակացության հանգել այս խոսվածքախմբի բարբառային նկարագրի վերաբերյալ:

Հնչյունաբանական նկատառումներ

Արցախի բարբառին խիստ բնորոշ հնչյունափոխական օրենքները (բառասկզբի ձայնեղ պայթականների և պայթաշփականների խլացում, Աճառյանի օրենք, *ii*, *ö*, *iii* քմային ձայնավորների և *q*, *ʃ*, *ք* քմային բաղաձայնների առկայություն, ձայնավորների ներդաշնակություն, օտար բառերի *ջ* հնչյունի դիմաց *չ*, *շ* եշտը՝ վերջընթեր և այլն) խոսվածքում ընդհանուր առմամբ պահպանվել են: Այնուամենայնիվ, կան հնչյունական հատկանիշների որոշակի առանձնահատկություններ:

Խոսվածքում Արցախի բարբառին բնորոշ՝ միջակա դիրքով ձայնավորները վերածվել են պարզ ձայնավորների. *ը^է > է*, *ը^հ > ի*՝ վը^էրցակ > վերցակ (< որձակ), հը^էրթ > հերթ (< հերթ), տը^հրեվ > տիրեվ (< տերև) և այլն: Այդուհանդերձ, այս հնչյունները հանդիպում են սակավաթիվ բառերում՝ *սը^հրիլ* (< սիրել), *կը^հրիլ* (< գրել) և այլն:

Խոսվածքում առկա է Նախիջևանի տարածքի բարբառներին (Ճահուկ-Վայքի, Հյուսիսային Գողթնի միջբարբառներ) բնորոշ *ռ^հ* շնչեղ ձայնորդը. որդն > *վօռ^հնը* («որդ») (*Արց.*՝ *վը^էրթնը*), գորտնուկ > *կօռ^հնուկ* («գորտ») (*Արց.*՝ *կէրթնուկ*) և այլն:

Արցախի բարբառին խիստ բնորոշ *ու > օ*, *օ > ու*, հնչյունափոխությունները գրեթե բացակայում են՝ սուտ-*սուտ*, պտուկ-*պրտուկ*, տուն-*տուն* (*Արց.*՝ *սօտ*, *պրտօկ*, *տօն*); խոզ-*խօզ*, փոս-*փօս*, խոտ-*խօտ* (*Արց.*՝ *խուզ*, *փուս*, *խուտ*) և այլն, սակայն կան առանձին բացառություններ՝

¹⁶ **Ա. Սարգսյան**, Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013: **Կ. Դավթյան**, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966: **Ա. Սարգսյան**, Գորիսի բարբառը, Ե., 1975:

գլուխ-կրլոխ (Գյղ.), խաղող-հավուղ (Շոթ.), ծում-ծում, մում-մում և այլն: Երևույթը հավանաբար տեղի է ունեցել հարևան բարբառների (Ջուղայի, Խոյի, Մարաղայի) ազդեցությամբ, որոնցում հնչյունափոխության հիշյալ երևույթները բացակայում են: Հատկանիշների նման բարբառամիջյան ազդեցությունները բնորոշ են նաև տարածքի այլ բարբառների: Օրինակ, Հյուսիսային Գողթնի միջբարբառի Ողոհիի խոսվածքում բառասկզբի ձայնեղները որոշ դեպքերում չեն խլանում՝ բահ > բէհ, բան > բէն, ձագ > ձէգ, ձախ > ձէխ և այլն, որը կարելի է բացատրել հարևան Մեղրու բարբառի ազդեցությամբ: Հետաքրքիր է նաև Ճահուկ-Վայքի միջբարբառի Օծոփի խոսվածքի օրինակը՝ միջբարբառի շուրջ մեկ տասնյակ գյուղերի խոսվածքներում բառամիջի և բառավերջի խուլերը վերածվում են համապատասխան ձայնեղների (կովկիթ>կովգիթ, կատու>կադու, այծ>էձ, կճուճ>կըջուջ), Օծոփի խոսվածքում, սակայն, այս օրենքը մասամբ է գործում (կատու>կատու, կճուճ>կըճուճ, բայց՝ կովկիթ>կովգիթ, այծ>էձ): Մա նույնպես կարելի է բացատրել բարբառամիջյան առնչություններով, քանի որ Օծոփի տեղաբնիկ բնակչության հետ գյուղում բնակվում էին նաև խոյեցի վերաբնակներ:

Գրաբարի ն վերջնահանգով բառերի ն-ն Գյաղի խոսվածքում չի պահպանվել (*մուկ(ք), սերմ(ք), կուռք, հարս, նուն*), իսկ Շոռոթի խոսվածքում պահպանվել է (*խոռնք, ծուկուի*): Արցախի բարբառի խոսվածքներում երկու տարբերակներն էլ առկա են:

Ու (ու) ձայնավորով ավարտվող բառերի վերջում հավելվում է *վ* հնչյունը՝ ձու > ծուվ, տուր > տու > տուվ և այլն, որը, անշուշտ, տեղի է ունեցել թեք ձևերի ազդեցությամբ (*ծուվէն մաշին, տրվալ ա*):

Ձևաբանական նկատառումներ

Խոսվածքի հոլովման և խոնարհման համակարգերը հիմնականում համապատասխանում են Արցախի բարբառի հոլովման և խոնարհման համակարգերին՝ որոշ առանձնահատկություններով հանդերձ:

Բացառական հոլովի -ան վերջավորության դիմաց առկա է *-ից՝ սարից, կելից, թռանից*, գործիականի *-ալ*-ի դիմաց՝ *-ով՝ կէղով, ծովով, կարմընջով*, ներգոյականի *-ում/ըմ*-ի դիմաց՝ միայն *-ըմ՝ աշխարքըմ, կետըմ, պէրանըմ* և այլն: Բոլոր հոլովները ստանում են որոշյալ հոդ:

Անկատար դերբայը կազմվում է *-ըմ* վերջավորությամբ՝ *ուզըմ, մընըմ* և այլն:

Օժանդակ բայով կազմվող ժխտականը սովորաբար արտահայտվում է չ մասնիկով՝ ինչպես Արցախի բարբառում, սակայն Գյաղի խոսվածքում նախադաս է՝ *չէմ մընալ, չէմ ասիլ, չիմ մընալ, չիմ ասիլ* և այլն, թեև երբեմն դրսևորվում են գուգահեռ ձևեր՝ *մընալու չէմ // չէմ մընալու, տալիս չէք // չէք տալիս* և այլն: Շոտթի խոսվածքում միայն հետադաս է՝ *ճարալ չինք, լըցնըմ չէնք* և այլն:

Անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքը կազմվում է *ւ*-ով՝ *պէրամ, տրամ*, որը բնորոշ է Նախիջևանի տարածքի բարբառների մեծ մասին:

Անցյալ ժամանակի իմաստն արտահայտող որոշ կադայարներ կազմվում են համապատասխան դերբայով, օժանդակ բայով և *լինել* բայի ամփոփված ձևեր հանդիսացող *էլ* կամ *էր* մասնիկով՝ *նըստէլ իմ // նըստէլ էմ էր* («նստել էի») (Գյղ.), *նըստըմ ընք էլ* («նստում էինք») (Շոռ.), *զարմացէլ ինք // զարմացէլ էնք էր* (Գյղ.), *զարմացէլ ընք էլ* (Շոռ.) («զարմացել էինք») և այլն: Հնարավոր է, որ այս հատկանիշը մերձակա Հյուսիսային Գողթնի միջբարբառի ազդեցությունն է, թեև հարավային մասով խոսվածքները շփվել են նաև Խոյի բարբառի հետ (Երնջակ գավառի Կզնութ, Արազին գյուղեր), որտեղ նույնպես առկա է համանման երևույթ:

Ձևաբանական հատկանիշների փոխազդեցությունները բնորոշ են նաև այլ բարբառների: Օրինակ, Ճահուկ-Վայքի միջբարբառում բոլոր ժխտական ձևերը կազմվում են օժանդակ բայի հետադաս կիրա-

նույնությամբ՝ *լըսըմ չէմ, քընաք վոջ, ա՛ղալ մի* և այլն: Միայն Ադավնա-
ձորի խոսվածքում օժանդակ բայը կիրառվում է առաջադաս՝ *չէմ
լըսըմ, չըքընաք, մի՛ աղալ* և այլն: Սա կարելի է բացատրել այս բնա-
կավայրում ժամանակին հաստատված խոյեցի մի քանի տոհմերի
բարբառի ազդեցությամբ¹⁷: Կամ մեկ այլ օրինակ՝ Նախիջևան քաղաքի
խոսվածքում, որը Արարատյան բարբառի խոսվածք է, անցյալի ձևերը
կազմվում են Խոյի բարբառի նման. *կընըմ էմ, կընալու էնք*, բայց՝
կընըմ էմ էր, կընալու էնք էր և այլն:

Բառագիտական նկատառումներ

Խոսվածքի բառապաշարում առկա են Արցախի բարբառին հա-
րազատ բազմաթիվ բառանուններ, ինչպես նաև դրանց հնչատարբե-
րակներ.

Կըլօխ, ճիթ («ողկույզ»), *խընէցի, ծսնքսնր, փալագ, մաշնակ*
(«միջին մեծության պուլիկ»), *զըրզսնրթսնր, սալակ* («կողով, զամբյուղ»)՝
Արց.՝ *սսնսն(կ), կարկաճ* («սնամեջ դդում»)՝ *կարկաժ, տըխտըմօր՝*
թըխտըմօր, տըրխէտան՝ տըրխատան, պոնկ՝ պօկ, ըրխա՝
ըրախա//խօխա, հսնքոն («ագի, պոչ»), *կսնլ* («գալ»), *քինալ* («գնալ»)՝
քինսնլ, պատրօն («սկեսրայր»)՝ *պատրուն, վէրցակ՝ վըրցակ,*
թէփըմ//թէփուռ, ծոնվ՝ ծոն, թանօվ («թանապուր»)՝ *թանավ, կաթնօվ՝*
(«կաթնապուր»)՝ *կաթնավ, փի* («ճարպ»), *տէրադօրմի* («տերոդորմյա,
թագրեհ»)՝ *տըրըդօրմա, կուտափ՝ կուտապ//կօտապ* և այլն:

Այս խմբի որոշ բառանուններ խոսվածքում ենթարկվել են իմաս-
տափոխության.

¹⁷ Ա. Վարդանյան, Վայոց ձորի միջբարբառը, Ե., 2004, էջ 52:

Բըլասմա («դալ»)՝ Արց.՝ *բըլասմա* («կաթի խառնուրդով խմորի խյուս»), իսկ «դալ» իմաստն ունի *խէժնը* բառը; *կօվքիթ* («կօվկիթ»), իսկ Արց.՝ *կօվկէթ*-ն ունի «կթվոր» իմաստը և այլն:

Առկա են նաև այնպիսի բառաանուններ, որոնք բացակայում են Արցախի բարբառում.

Մէվ («խաղողի մաս»), *կէղ* («գյուղ»), *ըշտաշուկ* («դեղձ»), *հէղէփ* («ընկույզի միջուկ»), *յէղաքար* («հեւսան, հեւսանաքար»), *պաշտանիք* («տղամարդու վարտիք»), *ճօճ* («պարանով կապած օրորոց»), *թաքուվի* («քահանայի կին, տերտերակին»), *ծանձ* («լորձ»), *ճոճմանի* («քարկտիկ»), *քըրդօզ* («բանջար քաղելու՝ փայտե պոչով դանակ») և այլն:

Արցախի բարբառում բացակայող բառերի զգալի մասը գրեթե նույնական է հարևան բարբառների համապատասխան բառերի հետ.

Քարթանքալա («քարադոդոշ»)՝ *Ճհկ.-Վյք.*՝ *քննթանքնլն* (Արց.՝ *քըրդթանթոուշ*), *քնլուզ* («աղբանոց»)՝ *քնլուզ, կըռէճ* («ծառի խեժ»)՝ *կըռէնջ, քալաֆա* («գուգարան»)՝ *քըլնֆն, փնլուշ* («ճմլած խաղողի մնացորդ»)՝ *փըլուշ, ննգիզ* («ընկույզ»)՝ Ազլ.՝ *ննգնուզ, Հս.Գ.*՝ *ննգնուզ, ննգիզ* (Արց.՝ *ճըղուպուր*) և այլն: Այս շարքում կան նաև հարևան Ճահուկ-Վայքի միջբարբառի բառապաշարի համապատասխան բառերի հետ նույնիմաստ մեծաթիվ բառեր՝ *զընզըրթա* («փոքր ողկույզ»), *չախկալա* («խակ ծիրան»), *թէշի* («խլիկ»), *չըքալուկ* («անյուղ մածնաշոռ, որից չորթան են պատրաստում»), *աշի* («մանդակ»), *տօրէն* («տորոն»), *չիրք* («թարախ») և այլն:


Եզրակացություն

Հաշվի առնելով, որ Արցախի բարբառի և Նախիջևանի սյունիքյան հատվածի խոսվածքի բարբառային հատկանիշների տարբերությունների որոշ մասն առկա է նաև Արցախի բարբառի տարածման բուն սահմաններում, նաև այն հանգամանքը, որ քննվող խոսված-

քները գործառույթ բնակավայրերը՝ Գյաղը և Շոռոթը աշխարհագրորեն գտնվել են Արցախի բարբառի տարածման սահմանների տվյալ հատվածի ծայրհարավային եզրին, ենթադրում ենք, որ դեպի հյուսիս տեղադրված մյուս բնակավայրերի (Շահկերտ, Փորադաշտ, Նորաշեն) խոսվածքներում առավել հարազատորեն պետք է պահպանված լինեին Արցախի բարբառի հատկանիշները, որոնց մի մասը, տարածվելով դեպի հարավ, թուլացել կամ մարել է՝ հարևան բարբառների հետ շփման արդյունքում:

Հավելված 1

ԱՐՅԱՆ-ՍՅՈՒՆԻՔԻ ԲԱՐԲԱՌԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ



Ուստի, կարող ենք առավել փաստացի ասել, որ Նախիջևանի տարածքի 8 բարբառների թվում մինչև անցյալ դարի երկրորդ կեսը գործառվել են նաև Արցախի բարբառի խոսվածքները՝ հնչյունաբանական, ձևաբանական և բառապաշարային որոշ առանձնահատկություններով հանդերձ:

ՍՈՒՏԱՄԱՆԸ
(Գյաղի խոսվածքով)

Ընրմ ա, չընրմ՝ մին թաքավոր ա ընրմ: Էտ թաքավորը ուրանն
յերգիրըմը հայտարարըմ ա. «Օվ ընէնց սուտ ասի, վոր յէս ասէմ՝ սուտ
ա, իմ թաքավորութունիս կէսը կըտամ ուրանն»:

Կանլիս ա մին չօբան: Ասըմ ա.

- Թաքավոր ապրած կէնաս, իմ հերըս մին դաբանակ փեղ ունէր,
վոր ըստիան մէգնըմ էր, յերգիրըմը աստըղները խառնըմ էր:

- Կըպատահի,- պատասխանըմ ա թաքավորը:- Իմ պապիս էլ
մին դայլան ունէր. մին պըտուկը տընըմ էր պէրանին, էն մին պըտուկն
էլ մէգնըմ էր, ըրէքնակիցը վառըմ:

Սուտասանը կըլօխը քօրիլօլ տոնու ա կանլի:

Կանլիս ա մին դարգի: Ասըմ ա.

- Ներօդութուն, թաքա՛վոր, յէս պիտի վաղը կանմ էր, յետացել էմ:
Յէրէկ բօլ անձրէվ յէկավ, կէծակնին տըրաքան, յերգիրըմը ճըղվավ,
քիանացել իմ կըրկատէլի:

- Հա, լնվ էս արեւ,- ասըմ ա թաքավորը,- համա լնվ չիր
կըրկատէլ. էս առօտը մին քիչ անձրէվ յէկավ:

Էտ էլ ա տոնու կանլի:

Մէշօլ ա կանլիս մին ախկադ կէղացի՝ քանրմաղը կըռնատակին:

- Տոնն ի՞նչ էս ուզըմ, ա՛յ մարթ,- հըրցընըմ ա թաքավորը:

- Ինձ մին քանրմաղ վօսկի էս պառտկ, յէկէլ էմ, վօ տանէմ:

- Մին քննարմաղ վօսկի՞,- զարմանըմ ա թաքավօրը:- Սուտ էս
ասըմ, յէս քէզ վօսկի պատուկը չէմ:
- Թա սուտ էմ ասըմ, թաքավուրութունիտ կէսը ինձ տուվ:
- Չէ՛, չէ, դօրթ էս ասըմ,- իսօկըն փօխըմ ա թաքավօրը:
- Թա դօրթ էմ ասըմ՝ մին քննարմաղ վօսկիս տուվ:

*Գրանցել է Դարիկոն Կոստանդյանը՝ 1983թ.
Բարբառախոսներ՝
Մարգարիտ Հարությունյան (ծնվ.1896, Գյաղ)
Արև Մուրադյան (ծնվ.1896, Գյաղ)*

Համառոտագրությունների ցանկ

- Ագլ. – Ագուլիսի բարբառ
- Արց. – Արցախ-Սյունիքի բարբառ
- բրբ. – բարբառային
- Գյղ. – Գյաղի խոսվածք
- թրք. – թուրքերեն
- Հս.Գ. – Հյուսիսային Գողթնի միջբարբառ
- Ճհկ.-Վյք. – Ճահուկ-Վայքի միջբարբառ
- Շոռ. – Շոռոթի խոսվածք
- պրսկ. – պարսկերեն

РЕЗЮМЕ
Говоры арцах-сюникского диалекта на
территории Нахиджевана
Варданын Артак

Территория Нахиджевана, охватывая перекресток ашхаров Васпуракан, Айрат и Сюник исторической Армении, многократно подвергаясь массовым переселениям населения, обладала диалектным многообразием.

В канун событий 1918-1920гг., когда абсолютное большинство населения составляли армяне, территория Нахиджевана охватывала около семи десятков армянонаселенных пунктов, подавляющая часть которых говорила на хойском, а также марагинском диалектах. Сохранились также коренные диалекты – агулисский диалект, джугинский диалект, джауквайкский междиалект, междиалект Северного Гохтна, говоры араратского диалекта, а также арцах-сюникского диалекта.

На арцах-сюникском диалекте говорили в 6-и населенных пунктах: селах *Абракунис, Гях, Норашен, Шахкерт (Казанчи), Шорот и Парадашт (Парадашт)* исторической провинции Ернджак.

Вследствие антиармянской политики, проводимой Советским Азербайджаном в прошлом веке, не только полностью лишился армян весь край, не только полностью были уничтожены тысячи памятников армянской культуры, но и, вырванная с корнем из колыбели, была уничтожена целая группа армянских диалектов. Из 6-и населенных пунктов, говорящих на арцах-сюникском диалекте, Парадашт, Гяг и Шахкерт лишились армян сравнительно позже – в 70-х годах прошлого века, а Абракунис, Шорот и Норашен – гораздо раньше.

Вместе с некоторыми фонетическими, морфологическими и лексическими различиями (почти полное отсутствие чередований *nl > o* и *> o, o > nl o > u*, окончание *-pl' -ət* причастия несовершенного вида и предложного падежа, наличие многих слов, заимствованных из соседних диалектов и т. д.), на территории Нахиджевана в основном сохранились говоры арцах-сюникского диалекта.

Ключевые слова: арцах-сюникский диалект, говорь, Нахиджеван, Ернджак, диалектные признаки, Гях, Шорот.

SUMMARY

Subdialects of the Artsakh-Syunik dialect in the Territory of Nakhijevan Vardanyan Artak

The territory of Nakhijevan, situated at the crossroads of the provinces of Vaspurakan, Ayrarat, and Syunik of historical Armenia, and repeatedly subjected to mass migrations of the population, showed a high degree of dialectal diversity.

On the eve of the events of 1918-1920, when the absolute majority of the population was Armenian, the territory of Nakhijevan included about seven dozen Armenian settlements, the vast majority of which spoke Khoy and Maragha dialects. Indigenous dialects had also been preserved – the Agulis dialect, the Jugha dialect, the Jahuk-Vayk interdialect, the North Goghtn interdialect, subdialects of the Ararat dialect, as well as the Artsakh-Syunik dialect.

The Artsakh-Syunik dialect was spoken in 6 settlements: the villages of Abrakunis, Gyagh, Norashen, Shakhkert (Ghazanchi), Shorot and Paradasht (Paradasht) of the historical province of Yernjak.

As a result of the anti-Armenian policy pursued by Soviet Azerbaijan in the last century, not only did the whole region completely lose its Armenian population, not only were thousands of monuments of Armenian culture completely destroyed, but also, uprooted from its native soil, a whole group of Armenian dialects was extinguished. Of the 6 settlements that spoke the Artsakh-Syunik dialect, Paradasht, Gyagh and Shakhkert lost their Armenians relatively late – in the 70s of the last century, and Abrakunis, Shorot and Norashen – much earlier.

Despite some phonetic, morphological, and lexical differences (the almost complete absence of alternations **nl** > **o** u > **o**, **o** > **nl** o > u, the ending -

pu-əm of the imperfect participle and prepositional case, the presence of many words borrowed from neighboring dialects, etc.), the subdialects of the Artsakh-Syunik dialect had mainly been preserved in the territory of Nakhijevan.

Key words: Artsakh-Syunik dialect, subdialect, Nakhijevan, Yernjak, dialect features, Gyakh, Shorot.

**ԳՈՐԻՄԻ ԲԱՐԲԱՈՒ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՈՆԵՐԻ
ԲԱԶՄԱՀԱՏԿԱՆԻՇ ԴԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Քումունց Մհեր

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
գիտաշխատող
mherkumunts@gmail.com

Բանալի բառեր. միջբարբառախումբ, Գորիսի բարբառ, Ղարաբաղի բարբառ, խոսվածք, բարբառների բազմահատկանիշ դասակարգում, հնչյունաբանական, քերականական հատկանիշ:

Նախախոսք

Ըստ հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման¹ Գորիսի խոսակցականը համարվում է *ուլ՝ճյուղի* Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբի խոսվածք²: 1970-ական թվականներից հետո բարբառագիտական որոշ աշխատություններում, հետևելով բարբառների բազմահատկանիշ դասակարգմանը՝ Գ. Ջահուկյանի կողմից կատարված, Գորիսը ներկայացվում է որպես խոսվածք³:

Չպետք է տպավորություն ստեղծվի, որ հակված ենք Գորիսի տարածաշրջանի խոսակցականը պարտադիր բարբառ ներկայաց-

¹Ջահուկյան Գ. Բ., Հայ բարբառագիտության ներածություն (վիճակագրական բարբառագիտություն), Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1972, 348 էջ (այսուհետև՝ ՀԲՆ):

² Այս հարցին մենք անդրադարձել ենք «Բարբառագիտական մի քանի եզրույթների և ըմբռնումների շուրջ» հոդվածում՝ «Գորիսի բարբառ» եզրույթի շրջանակում (Քումունց Մ., Հանրապետական գիտաժողովի նյութեր, 2022, թիվ 3, 187-196):

³ Հմմտ.՝ Միքայելյան Ժ., Գորիսի խոսվածքի հնչյունա-հնչույթաբանական մի քանի առանձնահատկություններ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, թիվ 8, էջ 37-48 (այսուհետև՝ Միքայելյան 1980), Աղաբեկյան Մ., Մյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն, Հայերենի բարբառագիտական ատլաս (ուսումնասիրություններ և նյութեր), պրակ 3, Ե., 2010, էջ 107 (այսուհետև՝ Աղաբեկյան 2010) և այլն:

նելու: Որևէ անվանում՝ բարբառ, խոսվածք, չի նսեմացնում կամ բարձրացնում Գորիսի տարածաշրջանի խոսակցականի դերը: Անկախ «կոչում(ներ)ից» այն հայերենի հնագույն բարբառային միավորներից մեկն է, որ կրում է նախահայերենյան և հինհայերենյան լեզվական ավանդույթները՝ պատմական որևէ շրջանում էական տեղաշարժի ենթարկված չլինելու շնորհիվ: Բայց միավորն էլ իր յուրահատկությունների և բնիկ տարածքում գոյատևելու, զարգանալու շնորհիվ ձեռք է բերել մակարդակային իրավունք:

Բարբառս երբևէ չի քննվել կամ թերևս վերանայվել բազմահատկանիշ դասակարգման համատեքստում: Կարծիք է ստեղծվում, որ Ա. Մարգարյանը այս պահանջը բավարարել է «Գորիսի բարբառը» կարևոր աշխատության լույսընծայումով: Այնինչ պետք է ընդունել, որ Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածությունը» «հայերենի բարբառների, ենթաբարբառների ու խոսվածքների իրար նկատմամբ ունեցած դիրքն ու փոխհարաբերությունները հնարավորին չափ օբյեկտիվ, ճշգրիտ, մաթեմատիկորեն որոշելու»⁴ չափանիշ է: *Այս հիմունքով՝ մենք՝ որպես բարբառակիր, փորձել ենք «Գորիսի բարբառ»-ի տվյալները համեմատել հայերենի բարբառների համար առանձնացված գուգարանություններին (հատկանիշներին): Մեր օրերում էականորեն փոխվել են հայերենի բարբառների հատկանիշները, ըստ այդմ՝ գոյություն ունեցող բարբառների և խոսվածքների կարգավիճակը: Արդ՝ մեր կանխադիտարկմամբ, ըստ բազմահատկանիշ դասակարգման, Գորիսի շրջանի խոսակցականը լեզվավիճակով (համաժամանակյա կտրվածքով) բարբառ է:*

Հարցի պատմական ակնարկ

Հայերենի բարբառային միավորների շարքում հատկանշական և ուրույն դեր ունեն Սյունիքի և պատմական Սյունիքի բարբառներն ու խոսվածքները: Սյունիքը ոչ միայն ներկա է գտնվել հայ ժողովրդի պատմական ձևավորման և զարգացման ընթացքին,

⁴(Ասատրյան Մ., *Հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը*, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 4, 1974, էջ 85:

այլն վճռական դեր է ունեցել հայապահպանման գործում: Այս ամենով հանդերձ, ինչպես նկատում են, «Սյունիքի տարածաշրջանը բանահյուսական, ազգագրական, լեզվագիտական առումներով շատ հաճախ առանձնակի ուշադրության չի արժանացել: Իսկ առաջադիր բազմաթիվ հարցեր քննվել են Արցախի տարածքի նույն հատկանիշների սահմանում՝ նույնացնելով Արցախն ու Սյունիքը: Իհարկե, լայն առումով բանահյուսական հատկանիշները կարող են լինել նման, գուցե և շատ հաճախ նույնական, բայց նեղ առումով տարբեր են ոչ միայն բանահյուսական երկերի բովանդակությունը, այլև արտահայտման ձևն ու մտածելակերպը: Այս տարբերությունը նկատվում է նաև, օրինակ, Սյունիքի տարբեր բնակավայրերի միջև: Ընդ որում, որքան էլ զարմանալի, բայց բոլորովին տարբեր է Սյունիքի խոսակցական տարբերակների նկարագիրը, որն էլ, անշուշտ, կազմում է բանահյուսական հորինվածքների հիմնական շաղախը, լեզվամտածողության արգասիքը»⁵:

Պատմական շրջանում Հայաստանի հարավարևելյան տարածքում տարբերակվել են Սյունիքի և Արցախի բարբառները. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ զբառս զեզերականս որպէս զԿորճայն և զՏայեցին և զԽութայինն և զՉորրորդ Հայեցին և զՍպերացին և զՍյունին և զԱրցախայինն...»⁶: Ավելին, սրանք այնքան տարբեր են եղել, որ, թվում է, համարժեքվել են առանձին լեզուների⁷:

Գորիսի բարբառը զիտական ուսումնասիրության դեռևս արժանացել է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին: Հնչյունական, քերականական և բառային տվյալների կարելի է հանդիպել Հ. Աճառյանի տարբեր աշխատություններում՝ «Classification des dialectes arméniens»⁸, «Քննություն Ղարաբաղի բարբառի»⁹, Ղարա-

⁵ **Ներսիսյան Լ.**, Գորիսի բանահյուսությունը, Գիտական նյութերի ժողովածու, Հայագիտություն. Սյունիք, թիվ 1, 2016, էջ 126:

⁶ **Ադոնց Ն.**, Երկեր, Հայերենագիտական ուսումնասիրություններ(5 հատորով), ԵՊՀ հրատ., Ե., 2008, էջ 187:

⁷ **Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Հայպետհրատ, Ե., 1951, էջ 131:

⁸ **Adjarian H.**, Classification des dialectes arméniens, Librairie Honoré Champion, Paris, 1909, 107 pages. 25-34 (107 p.).

բաղի բարբառի համատեքստում: Հետաքրքրական է, որ բառապաշարին վերաբերող աշխատանքներում Ղարաբաղի բարբառին զուգահեռ Հ.Աճառյանը վկայում է *Գորիսի բարբառի* բառերը¹⁰: Ա.Ղարիբյանը 1953թ.գրած «Հայ բարբառագիտության» մեջ ընդհանուր անունով նշում է *Ձանգեզուրի ենթաբարբառ*՝ վերջինս համադրելով մի կողմից Երևանի, մյուս կողմից Ղարաբաղի բարբառներին¹¹: Ն. Վարդապետյանի կողմից 1962 թ. «Սյունիքի բարբառը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսություն է պաշտպանվել ԳԱԱ Լեզվի ինստիտուտում, որտեղ Գորիսը գիտական հանրությանը ներկայացվել է որպես առանձին բարբառ¹² կրող շրջան: Ըստ Գ. Ջահուկյանի կազմած բազմահատկանիշ դասակարգման՝ *Գորիսի բարբառը* ընդգրկվում է *Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախմբի Ղարաբաղի բարբառի* մեջ՝ որպես *ենթաբարբառ*: 1976 թ. Ա. Մարգարյանը նորովի քննության նյութ է դարձնում Գորիսի բարբառը՝ հրապարակ հանելով «Գորիսի բարբառը» ստվարածավալ և արժեքավոր աշխատությունը¹³: Այստեղ մանրամասն քննվում են նաև հնչյունական, քերականա-

⁹ **Աճառեան Հ.**, Ուսումնասիրություններ հայկական բարբառախոսության: Քննություն Ղարաբաղի բարբառին, «Արարատ» ամսագիր, տարի ԼԳ, (1899), թիվ Թ, էջ 394-399 (ամսագրի մյուս էջերում մինչև 1901թ.նույնպես բարբառների բաժանում առկա չէ):

¹⁰ «Գաւառական»-ում, սակայն, 31 բարբառների ցանկում Գորիսը չի նշում ո՛չ Ղարաբաղի բարբառի կազմում, ո՛չ առանձին (Աճառեան Հ., Հայերէն գաւառական բառարան, Լազարեան ճեմարան արեւելեան լեզուաց, հատ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 1 (այսուհետև՝ ՀԳԲ)), բայց բառահողվածներում առանձին է դնում՝ Գոր. Ղրբ. (էջ 4):

¹¹ **Ղարիբյան Ա.**, Հայ բարբառագիտություն (հնչյունաբանություն և ձևաբանություն), Հայկական ՍՍՌ պետական հեռակա մանկավարժական ինստիտուտ, Ե., 1953, էջ 232-233:

¹² **Վարդապետյան Ն.Հ.**, Սյունյաց բարբառ (ատենախոսություն), ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, Ե., 1962: Ցավոք, հնարավոր չեղավ այս աշխատանքի տվյալները համադրել մեր քննությանը: Այս առումով մեր աշխատանքի համեմատական (տարածամանակյա) քննությունը կարող է լիարժեք չլինել:

¹³ «Վերջին ժամանակներս առանձնացվել են Հաղրութի, Գորիսի բարբառները»,- արձանագրում է Լ.Հովհաննիսյանը (Հովհաննիսյան Լ., Գրաբարի և Ղարաբաղի բարբառի առնչության հարցի շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 1, 1977, էջ 141):

կան և բառային առանձնահատուկ այն բոլոր ձևերը, որոնք տարբերություններ ունեն *Ղարաբաղի բարբառում* ընդգրկված բարբառային միավորներից: Այս ամենը հիմք ունենալով՝ հեղինակը եզրահանգում է, որ «Գորիսի բարբառը՝ իր ընդգրկված որոշակի սահմաններով, *պատմական Սյունիքի լեզվի կամ բարբառի օրգանական շարունակությունն է* և, իբրև այդպիսին, *ոչ թե ստորադասավում է Ղարաբաղի կամ Արարատյան բարբառին, այլ ունի տեղական բարբառներին բնորոշ իր յուրահատուկ հնչունական համակարգը, բառային ֆոնդն ու քերականական կառուցվածքը և ամենայն իրավամբ էլ մի ինքնուրույն ու ինքնատիպ բարբառ է*»¹⁴ (ընդգծումը՝ Մ.Ք.), որ անգամ տարբերակում է ունեցել հին և նոր Գորիսներում. «Գորիսի ոչ մի փոդոցում լեզուն այնքան վճիտ չէ, ինչպես Հին ճանապարհի վրա: Այդ լեզու չէ, այլ կարոտ, տխրություն, զայրույթ. այդպես Ղաթրինի ձորում երգում է կաքավը, և մթնում կարկաչում է Ցուրտ աղբյուրը»¹⁵: Եթե գիտական տիրույթում տարածված են *Գորիսի բարբառ* և *Գորիսի ենթաբարբառ* եզրույթները, գրքերից դուրս և՛ Արցախում, և՛ Սյունիքում Գորիսի խոսակցականը համարվում է բարբառ՝ հավանաբար նկատի առնելով ոչ այնքան հնչունական և քերականական տարբերությունները, որքան բառապաշարի կազմը, որի հիմքով Հ. Աճառյանը Գորիսի բարբառը դրել է Երևանի, Ղարաբաղի, Շամախիի, Ագուլիսի և մյուս բարբառների (30 բարբառների և ենթաբարբառների) շարքում¹⁶: Եվ իսկապես, նախ՝ 18-րդ դարից սկսած, երբ իսլամ դավանող տարբեր ցեղեր սկսեցին տեղավորվել Սյունիք-Արցախը կամրջող Քաշաթաղի տարածքում՝ նվազեցնելով հաղորդակցման, փոխշփման պայմանները, ապա՝ խորհրդային շրջանում, երբ Արցախը ընդգրկվեց Ադրբեջանի կազմում, ավելի է խորացել Սյունիքի և Արցախի բարբառ-

¹⁴ **Մարգարյան Ա.**, Գորիսի բարբառը, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1975, էջ 7 (այսուհետև՝ Մարգարյան 1975):

¹⁵ **Բակունց Ա.**, Երկերի ժողովածու, հատ. 3, Հայկական ՍՍՀ, ԳԱ հրատ., Ե., 1985, էջ 485:

¹⁶ **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան (4 հատորով, 2-րդ հրատարակություն), հատ. 1, Երևանի համալսարանի հրատ., Ե, (առաջին հրատարակությունը՝ 1926-1935, 7 հատորով), 1971, էջ 21:

ների տարբերությունը՝ կապված նաև արևելյան լեզուներից և ռուսերենից ներթափանցած փոխառությունների հետ¹⁷: 2020 թվականից Սյունիքի և Արցախի բարբառախոս հանրության կապը դարձյալ նվազել է, Հաղթութի շրջանի խոսակցական տարբերակները այժմ գրկված են բնօրրանից, իսկ Արցախի մյուս խոսվածքները տարբեր շրջաններից գաղթած բարբառախոս հանրության փոխշփման ազդեցության տակ են: Այսինքն՝ Գորիսի և Արցախի բարբառային փոխշփումները դարձյալ փոքրանում են, որն էլ խորացնում է բարբառային միավորների միջև առկա տարբերությունները:

Բարբառային հատկանիշների ընտրությանը և նշանակմանը վերաբերող սկզբունքային հարցեր¹⁸

Միջձայնավորային և բառավերջի ետձայնավորային դիրքում, այլև *ք*-ից հետո գտնվող խուլ պայթականների՝ *պ, տ, կ, կի*-սաշփականների՝ *ծ, ճ, ձ* այնեղացման երևույթը գնահատվում է 0,5 միավորով (\pm)¹⁹: Հետաքրքրական է, որ 1.երևույթը չի ներառում կանոնով նախանշված բոլոր հնչյունները, 2.չափանշված օրինակներից՝ *կարպետ, գորտ, սիրտ, երկար, երկինք, արծաթ, գործ, կարճ, շապիկ, ուտել, պակաս, մածոն, կոճակ, վիշապ, շատ, կրակ, լուծ, մաճ* (18 բառ) միայն երկուսն են կրում այդ հատկանիշը՝ *երկար > էրգսն, երկինք > յերգինք* ($=11\%$)՝ $x \cdot 100 \div 18 = 11\%$, որտեղ *x*-ը հատկանիշը կրող բառերի քանակն է ամբողջի մեջ:

¹⁷ 1995-2020թթ. ընթացքում Արցախի Քաշաթաղի շրջանում ձևավորվում էր միջբարբառային միավոր՝ Արարատյան, Սյունիքի և Ղարաբաղի բարբառների միջակայքում, այլև գրական հայերենի ազդեցությամբ ընդհանրանում էր Սյունիքի և Արցախի բարբառ-խոսվածքների բառապաշարը:

¹⁸ Համեմատվող եզր ենք վերցրել Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման համար հիմք հանդիսացած զուգաբանությունները: Ուշադրության ենք արժանացրել հատկապես այն հատկանիշները, որոնք էական են Գորիսի բարբառի համար և կարող են ազդել միավորի կարգավիճակին:

Համեմատել-քննել ենք նաև այնպիսիք, որոնք կարևոր են, բայց վիճակագրության արդյունքում (աղյուսակում) դրանցով պայմանավորված փոփոխություն չի առաջարկվում:

¹⁹ Բարբառային զուգաբանություններին վերաբերող նյութերը քաղել ենք ՀԲՆ-ից, էջ 36-142:

Օ > ձ փոփոխությունը չի ներառում վերոբերյալ կանոնը. Խուլի ձայնեղացումը պայմանավորված է ն-ի ազդեցությամբ այս բառերում՝ *ածուխ* > *անձուղ*, *ձնձաղիկ* > *խընձաղի* // *ձնձաղիկ*: Այսինքն՝ երևույթը առհասարակ բացակայում է՝ 0%:

Ճ > ջ փոփոխությունը նույնպես բացակայում է, բացառությամբ երկու բառի, այն էլ՝ ն-ի ազդեցությամբ՝ *ճոճ(ք)* > *ճինջի* // *ճունջի*, *ճանճ* > *ճանջ*՝ 0%:

Կ > գ փոփոխության դեպքերը նույնպես չեն տեղավորվում տրված կանոնի շրջանակում, ինչը չենք կարող ասել մյուս բարբառների առումով, ինչպես, օրինակ գ(ո) ձայնեղի ազդեցությամբ *կոզոն* > *գօզոակ* // *գօդոսիկ*-ը (հնարավոր է նաև բառավերջի կ-ի ետընթաց տարնմանությամբ): *Կյանք* > *կյանք* // *գանք*-ը, *կիրակի* > *գիրսի* // *կիրակի* բառերը բացառություններ են: Ն-ի ազդեցությամբ կ-ն դարձել է գ հետևյալ բառերում՝ *արմունկ* > *արմունգ*, *ընկեր* > *հինգեր*, *ունկն* > *օնգրն* // *օնգնր*, *տնկել* > *տընգել*, *ցնկնել* > *ցընգնել*, *մեկնել* > *մէնգնել*, *թիկնել* > *թէնգնր տալ*, *կրունկ* > *կըրօնգնր*, *անկ(ան)ել* > *ինգել*: Բաղաձայնական քննվող հատկանիշի սահմանման օրինակներ թերևս կարող են լինել՝ ա. միջձայնավորային դիրքում *կ* > *գ*՝ *երեկ* > *նրոնգուն* // *նրոնգոն*, *լական* > *լնգան*, բ. բառավերջի ետձայնավորային դիրքում՝ *երեկ* > *իրեգի*, *հիշատակ* > *հիշատագ* // *հիշատակ*, *երամակ* > *ըրամակ* // *ըրամագ*, գ. *ք*-ին հաջորդող դիրքում՝ նշված երկու բառերը՝ *երկար* > *երգան*, *երկինք* > *յերգինք* (սրա համաբանությամբ՝ *երկիր* > *յերգիր*), գիրկ > գիրգ (°) «գութանի գլխի փակի ծայրի փայտը»²⁰: Մյուս բոլոր դեպքերում որպես կանոն կ-ն անփոփոխ է (օրինակները չենք բերում): Կ > գ փոփոխությունը կրած վերոնշյալ բառերի քանակական պատկերից (21 բառ) կարելի է ստանալ որակական հատկանիշը՝ ≈ 43%:

Տ > ղ փոփոխությունը՝ որպես ընդհանուր օրենքից շեղում, ինչպես նկատում է Ա.Մարգարյանը²¹, հիմնականում պայմանավորված է՝ 1. ն ռնգայինի ազդեցությամբ՝ *սանտր* > *սանղրր*, *ոտն* >

²⁰ Հավանական է՝ գրաբարի *գիրկ* բառից է՝ նոր իմաստով (Մարգարյան 1975, էջ 246), որի դիմաց բարբառն ունի *խրտտ*-ը:

²¹ Մարգարյան 1975, էջ 83-84:

վենդ, մատն > մանդ, ընտրել > հրնդրել // հրնդրել, փալանտուզ > փալանդուզ, 2.գրական բառերի առկայությամբ, որոնցում ձայնեղը չի խլացել՝ աղքատ > աղքադ, դատ > դադ, դատարան > դադարան, կամ ուղղակի ըմբռնվել են գրական՝ վարժապետ > վարժաբէդ, գիտել > գիդնլ, աշխատել > բշխադէլ, կատարել > կրդարէլ, վաշտապետ > վրշտաբէդ, օտար > օդար // օտար, կրոնական բնույթով՝ հավատ > հավադ, հավիտյան > հավիդյան, մկրտել > մրգրդդէլ // մրկրրտէլ, պատարագ > պրդարաք // պրտարաք // քաղարաք: Կարծում ենք՝ հիշյալ զուգաբանության օրինակներ կարող են ծառայել՝ ա. միջձայնավորային դիրքում՝ հավատավոր > հրվրդավէր (հմմտ. հավատ > հավադ), բ. բառավերջի ետձայնավորային դիրքում՝ ազատ > ազադ, պարսետ > քարսուդ «պարսատիկ», փշատ > փրշադ // փրշատ, արմատ > արմադ // արմադ, փայտ > փէդ (փայտանալ > փիդաննլ), ր-ին հաջորդող դիրքում՝ մարտ > մարդ (ամիս), որոնք էլ, ինչպես նկատում ենք, արտալեզվական գործոններով են առկայացել²² և համակարգային բնույթ չունեն՝ ≈31%:

Պ > ք փոփոխությունը նույնպես, «ընդհանուր օրենքից շեղվելով»²³, արտացոլվում է՝ ա. միջձայնավորային դիրքում՝ դէպի > դիքսի, վարժապետ > վրրժաբէդ, ստիպել > բստիբէլ, նապաստակ > բլբբաստրակ // բլբաստրակ, սիպեդ > սիբէդ, եպիսկոպոս > յէբիսկոբոս, բ. բառավերջի ետձայնավորային դիրքում՝ շիպ > շիք (այլն՝ շիբլէդ), ր-ին հաջորդող դիրքում՝ սպրիշում > քրբէշում, ոչ գործածական՝ սպրսի > քրբսի «առարկայի կշիռ»²⁴: Մնացած բոլոր դիրքերում պ-ն հիմնականում պահպանվում է՝ ճարպիկ > ճարպիկ, կարպետ > կարպէտ // կարպէրտ, ճարպ > ճրբպօտէլ, ճօպան > ճօպան, սպիտակ > սիպտակ, կճեպ > խրճէպ // քրչէփ // քրչէվ: Նշված կանոնին, ըստ «Գորիսի բարբառի» տվյալների²⁵, ենթարկվում է բառերի 28%-ը ($x(11) \cdot 100 \div 39$):

²² Այս մասին կարելի է տեսնել՝ Աղաբեկյան 2010, էջ 132:

²³ Մարգարյան 1975, էջ 82:

²⁴ Մարգարյան 1975, էջ 314:

²⁵ Մարգարյան 1975, էջ 82-83:

Ընդհանրացնենք՝

Ա. Պ, տ, կ, ծ, ճ խուլ պայթականների և կիսաշփականների ձայնեղացումը Գորիսի բարբառի բաղաձայնական համակարգում օրինաչափություն չէ ոչ միայն կանոնի շրջանակում՝ *բ*-ից հետո և միջձայնավորային ու բառավերջի ետձայնավորային դիրքերում՝ *կարպետ, գորտ, արծայթ, գործ, կարճ, շապիկ, ուտել, պակաս, մածուն, կոճակ, վիշապ, շատ, կրակ, լուծ, մաճ*, այլև ընդհանրապես, իսկ *ծ>ձ* և *ճ>ջ* փոփոխություններն առհասարակ բացակայում են:

Բ. Բարբառումս խուլերի ձայնեղացման երևույթին վերաբերող այլ ուսումնասիրություններ թեև տարվում են իրողության՝ որպես հնչյունական օրենքի մակարդակով, այդուհանդերձ ընդգծում են, որ հնչյունական երևույթը համակարգային բնույթ չունի, ինչպես՝ *սիրտ>սէրտ, երկու>երկու, ծիրտ > ծէրտ, երկայթ > արկայթ*, որոնք, ինչպես նկատում է Ժ. Միքայելյանը, «գրական փոխառություններ լինել չեն կարող»²⁶: Այս առումով Մ.Աղաբեկյանը դիտարկում է, որ նշված դիրքում խուլերի ձայնեղացումը հիմնականում պայմանավորված է ռնգային ձայնորդի (իմա՝ *ն, հմմտ. թանկ > թանգ, ճանկ > ճանգ, խունկ > խոնգ, քանկ > քանգ*) ազդեցությամբ և «ընդգրկում է խնդրո առարկա բարբառների (Մյունիք-Արցախի՝ Մ.Ք.) գրեթե ամբողջ բառապաշարը»²⁷:

Այսպիսով՝ սույն հարցի քննության շրջանակում ունենք 78 միավոր, որից 28-ը հանդիպում է նշված հնչյունների փոփոխությամբ, արդյունքում՝ $x \cdot 100 \div 78 \approx 36\%$, որը չի կազմում ընդհանուր թվի գոնե 50%-ը, իսկ հատկանիշների ընտրության և նշանակման հարցում, ինչպես նկատում ենք, «գերադասություն է տրվում բարբառային այն հատկանիշին, որ ա) ընդգրկում է բառերի և բառակապակցական տիպերի ըստ հնարավորին մեծ թիվ, բ) որով բնորոշվող միավորներն ունեն ֆունկցիոնալ (հաղորդակցային) մեծ արժեք ու ծանրաբեռնվածություն (հետևաբար նաև մեծ հաճախականություն)»²⁸:

²⁶ Միքայելյան 1980, էջ 38:

²⁷ Աղաբեկյան 2010, էջ 133:

²⁸ ՀԲՆ, էջ 37:

Ամփոփելով ասվածը՝ եզրակացնենք, որ բաղաձայնական հատկանիշի 6-րդ կետը տիպական չէ Գորիսի բարբառի համար:

«Խ-ի դիմաց տարնմանական հ՝ բառի մեջ հաջորդող *ղ*-ի առկայության դեպքում (*խ>հ*)» հնչյունափոխությունը²⁹, որ Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբից առանձնապես բնորոշ է Կոզենին, Հավարիկին, Շամախիին, Գորիսի բարբառում սահմանափակ թվով բառերում է նկատվում՝ *խաղ > խաղ // հաղ, խաղալ > խաղալ // հաղալ, խաղող > խաղող // հավուղ // հավօղ*: Այս հատկանիշի «արդյունքը» (աղյուսակում դրված է «-» նշանով³⁰) ենթադրում է «նան ոչ-տարնմանական խ> հ.խառնել>հառնել»³¹: Սկզբունքորեն, սակայն, հակասում է վերոնշյալ կանոնին, այն է՝ ոչ հնչյունա(փոխա)կան օրենքը ընդունել բարբառային (հնչյունաբանական) հատկանիշ:

Գորիսի բարբառում *յու*-ի (<իւ) դիմաց ոչ շրթնային ձայնավոր (*յու > ի, է, ա*)³² հանդիպում է՝ *այյուր > ա/ւյլիր // ւյլնւր, արյուն > ւյրին // ւյրնւն*, այդպես և՛ *մրջյուն > մրջէմնը*³³: Առավելապես տարածված է *յու > ու/նւ* փոփոխությունը (շրթնայինի վերածվելը՝ *յուր > նւրան, հարյուր > հւյրնւր, ձյուն > ծնւն*³⁴: Ենթադրվում է, որ *յու > ի, է* փոփոխությունները առավել հաճախական երևույթի (*յու > ու/նւ*) համաբանությամբ մարում են:

Վերոնշյալ երկու դիտարկումից նկատում ենք, որ հատկանիշների առկայությունը էական չի եղել բարբառային միավորի տարբերակման համար, և աղյուսակներում (Գորիս) գնահատվել են «-» նշանով:

27-րդ կետը վերաբերում է ույ-ի (ոյ) դիմաց ոչ շրթնային ձայնավորի առկայությանը, և բարբառի համար գնահատվում է

²⁹ ՀԲՆ, էջ 47:

³⁰ ՀԲՆ, էջ 62:

³¹ ՀԲՆ, էջ 47:

³² ՆՀԲ, էջ 63 (28-րդ կետ):

³³ Ա.Մարգարյանը ենթադրում է, որ բարբառի *մրջէմնը* տարբերակը առաջ է եկել ոչ թե գրաբարյան *մրջին-ից*, այլ *մրջին* ձևից (Մարգարյան 1975, էջ 71):

³⁴ *Ույ*-ի փոփոխության մյուս իրողությունները կարելի է համեմատել՝ Մարգարյան 1976, էջ 70-71:

բացասական նշանով: Մակայն արձանագրենք, որ այդ կանոնին հետևում են որոշ խոսվածքներում արձանագրվող բառեր՝ *քոյր > քնւր // քէր // քիր, կապոյտ > կնպիտ, պատրոյգ > պատրիք*:

Հնչյունական զուգաբանությունների 25-րդ կանոնը, ինչպես գիտենք, վերաբերում է սահմանափակ տարածում ունեցող բաղաձայնական այլ կարևոր յուրահատկությունների: Գորիսի բարբառի համար դրվում է «-» նշան, այսինքն՝ առկա չեն այդ հատկանիշները: Բայց, օրինակ, այդ հատկանիշներից մեկը առկա է Գորիսի բարբառում, ինչպես՝ ցուցական դերանունների միջձայնավորային *բ-ի* դիմաց *հ՝ սրանք*³⁵ *ըսրհանք, դրանք > ըսրհանք* և այլն:

Թյուրքերենի ազդեցությամբ *ինջի*-ով դասական թվականների կազմումը բարբառային միավորների տարբերակիչ հատկանիշ (69-րդ կետ) ընտրելը այլ հարց է (հիշենք, որ ըստ էության բարբառային զուգաբանությունների համեմատական եզրը գրական հայերենն է (գրաբար, գրական արևելահայերեն և արևմտահայերեն): Բայց և հետաքրքրական է, մինչև թյուրքերենի հետ շփվելը հայերենի բարբառները ինչ ածանց (մասնիկ կամ բառ) են գործածել դասական թվականների համար, որը և կարող էր համարվել քերականական հատկանիշ³⁶: Մա էլ հարցի մի կողմն է և այլ քննություն է ենթադրում: Մյուս կողմից, սակայն, արդյոք հաշվի են առնված այլ լեզուների հետ ունեցած շփումների արդյունքում գոյացած բոլոր մնացուկները հայերենի բարբառներում (օրինակ՝ *mis* // *mis*-ով հարակատարը, *siz* // *siz, be*-ով ժխտականները և այլն): Անցյալ դարի 60-70-ական թվականներին *-ինջի* ածանցի երբեմնի գոյության և դուրսմղման, ապա *-րորդ* // *-երորդ* ածանցի գործառման վերաբերյալ արդեն արձանագրում կա «Գորիսի բարբառում»³⁷: Այսինքն՝ ընդհանրացում չստացած³⁸ և անկում ապրող «հատկա-

³⁵ ԳԲ, էջ 159-160:

³⁶ Այս մասին տե՛ս՝ ՀԲՆ, էջ 87:

³⁷ Մարգարյան 1975, էջ 157-158:

³⁸ Այժմ ընդհանրապես բացակայում է Գորիսի շրջանում (Տեղ, Խնձորես, Շինուհայր գյուղերում տարեց մարդիկ հիշում են, որ նաև գործածում էին *-ինջի* ածանցը միայն միավորների համար):

նիշը», ընդհանուր սկզբունքի համաձայն, Գորիսի բարբառի համար տարբերակիչ չէ:

Այլ դիտարկումներ ևս կան, որոնք, սակայն, էականորեն չեն կարող ազդել բարբառային միավորի մակարդակին, ուստի սահմանափակենք վեոբերյալներով:

Բարբառային հատկանիշներ, որոնք կարող են էական տարբերակում մտցնել միավորի ճանաչման հարցում

Ոչ բառասկզբի շնչեղ խուլերի ապաշնչեղացման երևույթը (*փ, թ, ք, ց, չ > պ, տ, կ, ծ, ճ*) Գորիսի բարբառի համար էական հատկանիշ չէ:

Յ > ծ փոփոխությունը նկատվում է երկու բառում՝ *քաղցր > քաղծրր*, երբեմն՝ *վախեցնել > վրխծրնել // վրխցրնել: Եկեղեցի > (յեղծ //) յեղծի* փոփոխությունը հանդիպում է միայն այն դեպքում, երբ այն հատկանվան կողքին է, օրինակ՝ *Մըռըյեղծի*, բայց և՛ *Մըռըյեղցի*:

Ք > կ փոփոխությունը բարբառում հանդիպում է *աղքաղ > աղկաղ*, մասամբ՝ (*թանաք*) *թանսկ* բառերում: Մյուս դեպքերում, կարծում ենք, այդ փոփոխությունը պայմանավորված է *ք* հոգնակերտի՝ շփականությունն պարունակող բաղաձայններին հաջորդելու դիրքով, համակարգային ազդեցությամբ, հմմտ.՝ *լիվսսկ, փոխկ, քաշկր, անէսկր* և այլն³⁹:

Կանոնավորված չէ *թ > տ* փոփոխությունը, որ հանդիպում է մի քանի բառերում՝ *օխտը* (յոթ), *հաղթել > հախտալ // հախթալ* (էմ), շաբաթվա օրերում՝ *էրկուշնիտի, իրէքշնիտի*:

Փ > պ փոփոխությունն հանդիպում է *փայլ > պսպղալ* բառում, որն էլ, կարծում ենք, նախահայերենյան շրջանից մնացուկ է: Հ.-ե. **(s)p(h)el-* «փայլ, շողալ» արմատի *s > ṣ (շ)* սուլականով (պահպանված) և ձայնդարձով ածանցված բարբառային տարբերակներից են նաև (հուն. *σπληδός* «մոխիր», լատ. *splendeō* «փայլ, առկայծում») *շափաղ տալ, շափաղ անել* «ցոլալ», *շափաղ-շափաղ անել* «ցոլ-

³⁹Մրանցից որոշները, կարծում ենք, պայմանավորված են /ս-ի առկայությամբ և *ղ > խ* փոփոխությամբ *վրխծրնել, եղծի, փոխկ*:

ցլալ», շափաղշափաղ «ցուցուն» բառերը, որ, անշուշտ համապատասխանում են բարբառի նույնարմատ ձևերին՝ *պող*⁴⁰ «կարմիր կրակ կտրած ածուխ, կրակից թռած կայծ» (հմմտ.՝ *պող-պող* > *պըսպըղալ*), *պըլպըլալ* «փայլել, առկայծել», այլև հայերենի մյուս տարբերակներում առկա *պըլպըլալ* «փայլել, ցլալ» Վան Մուշ Թբ. Պոլ. և այլն⁴¹, հմմտ.՝ *փայլ* **sphel*⁴²: Ա.Մարգարյանը վկայաբերում է նաև *փափուկ* > *փըպկէլ*-ը, որն էլ, հնարավոր է, *կ*-ի ետընթաց ազդեցությամբ է ձևափոխվել, հմմտ.՝ *փըպկէլ*>*փըպկալա* // *փըփկալա* (փափկել է):

Չ > ճ է դառնում *ոչխար* > *վէխճար* (*վըխճարած*, *վուխճարած*, *վըխճըրապանրթ*, *վըխճըրատէր*, *վըխճըրատէղ*// *վուխճըրատէղ*) և *փախչել* > *փըխճըցնէլ* բառերում: Չ սուսկածանցով մյուս բոլոր ձևերում չ-ն անփոփոխ է՝ *սառչել* > *սառչիլ*, *կպչել* > *կըպչիլ* և այլն:

Նկատում ենք, որ ոչ բառասկզբի շնչեղ խուլերի ապաշնչեղացման երևույթը բարբառում ընդհանրական բնույթ չունի: Եվ որպես այս ամենի ամփոփիչ արդյունք՝ ներկայացնենք բերված օրինակների (*փրփուր*, *թուղթ*, *աղքատ*, *հարցնել*, *շունչ*, *թափել*, *թաթախել*, *թեքել*, *աքացի*, *փչել*, *թեփ*, *կաթ*, *քաղաք*, *բաց*, *խաչ*)⁴³ վիճակագրությունը. *փ*, *թ*, *ք*, *ց*, *չ* > *պ*, *տ*, *կ*, *ծ*, *ճ* փոփոխությունը կազմում է 13% (երկու բառ՝ *թուղթ* > *թօխտ*, մասամբ՝ *աղքատ* > *աղկաղ*):

Ոչ փոխառյալ բառերում քմայնացած ետնալեզվայինների (*զ*, *կ*, *ք*)՝ բառասկզբի, բառամիջի և բառավերջի իրողությունները, ինչպես և՛ *զ*, *կ*, *ք* > *ջ*, *ճ*, *չ* փոփոխությունները, կարծում ենք, նույն հարթության վրա դնելը չի տրամաբանվում որպես բարբառների միավորիչ հատկանիշ Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիդուսիսարևելյան միջբարբառախմբի համակարգում⁴⁴: Գործիսի բարբառի պարագայում, օրինակ, քմայնացած ետնալեզվայիններ ունեցող բոլոր բառերը չեն կարող արտասանվել և՛ քմայնացմամբ և առանց

⁴⁰ ԲՄՀ, էջ 130-131:

⁴¹ ՀԲՆ, էջ 319:

⁴² ՀՄԲ, էջ 757:

⁴³ ՀԲՆ, էջ 46:

⁴⁴ Հայ բարբառների բաղաձայնական զուգաբանություններ (8-րդ կետ, ՀԲՆ, էջ 46):

քմայնացման⁴⁵, ինչպես նկատում են: Այդուհանդերձ, եթե բերված օրինակներով փորձենք փաստել քմային ետնալեզվայինների՝ Գորիսի բարբառում (բոլոր խոսվածքները ներառյալ) գործառույթ⁴⁶, կատացվի հետևյալ պատկերը. երկձևությունների առկայությամբ՝ ≈9%, առանց երկձևությունների՝ 0%: Ահա պատկերը՝ *գարի > կւորի // կւորի, գառ(ն) > կւոռնր // կւոռնր, գլուխ > կիլծիս, քաղաք > քաղաք, քառասուն > քրռասու/օյն, քար > քար, թագ > թագ, հինգ > հէնգ, ձագ > ծւք, աղջիկ > ախճիկ, ծաղիկ > ծաղիկ, շապիկ > շապիկ, գիրք > գիրք // կիրք, երեք > իրէք, քաղաք > քաղաք, գերան > կերան, գինի > կինի, գիր > կիր, կերակուր > կերակուր, կես > կէս, քեռի > քէռի, քերել > քիրէլ (-ուս-ի համարանությամբ՝ քորոնս ա), քիթ > քէթ⁴⁷: Ա. Մարգարյանը, ընդգծելով Գորիսի և Ղարաբաղի բարբառների՝ իրարից ունեցած տարբերությունները, ուշադրության է արժանացնում նաև քմայնացած ետնալեզվայինների հատկանշական դերը. «Ղարաբաղի բարբառը հարուստ է քմային գ' (օր. գուրգ' < գիրկ, տէգ' // տէգ' < տիկ), կ' (օր. կ'օղ < գող, կ'ալ < գալ, ք' (օր. ըրիհի'նակ < արեգակն), այլև՝ դ' (հանդ' < անդ), լ' (լ'ոն < լու, ծիլի < ածելի), ծ', (կածակ // կւծակ < կայծակն) և այլն բաղաձայն հնչյուններով, այնինչ Գորիսի բարբառում դրանցից առկա են և իբրև *ինքնուրույն հնչույթներ են ըմբռնվում* միայն գ'-ն, կ'-ն, ք'-ն, որոնք *գործածության նեղ ոլորտներ են ընդգրկում և բառի բոլոր դիրքերում չէ, որ հանդես են գալիս* (ընդգծումները՝ Մ.Ք.):»:*

41-րդ կետը պահանջում է շեշտակիր *է-ի (է-ի)* դիմաց վերին շարքի (ավելի փակ) *շեշտակիր ձայնավոր կամ այդպիսի տարր պարունակող երկբարբառ (է, է > ի, էի և այլն)*՝ բացառությամբ *իէ-ի*: Այս հատկանիշը Գորիսի բարբառի համար գնահատվում է կես միավոր: Շեշտի տակ ընկած *է > ի* կամ երկբարբառ չի վկայվում

⁴⁵ Միքայելյան 1980, էջ 39:

⁴⁶ Մեր նպատակից դուրս է այս և մյուս հնչյունափոխական երևույթների ժամանակագրական և տարածվածության հարցերի քննությունը:

⁴⁷ Մենք այս և բոլոր բարբառային նմուշները ճիշտ գրանցելու համար երեք սերնդի ներկայացուցիչների շրջանում հարցում ենք անցկացրել 70-ից բարձր, 50-ից մինչև 70 և մինչև 50, և իսկապես՝ նշված հնչյուններ պարունակող բառերի շուրջ 91%-ը չի կրում ետնալեզվայինների քմայնացում (*գ, կ, ք*):

Գործիսում: Տրված հատկանիշի շրջանակում բացառություն է կազմում *դէզ* բառը, որն էլ, ինչպես Ա. Մարգարյանն է նկատում, *տէզ* բառի հետ չփոթելու հիմքով է⁴⁸, իսկ *թել*-ը ունի զուգաձև գործածություն՝ *թիլ // թէլ*: Մյուս դեպքերում է-ի փոփոխություն կա մ շեշտակիր դիրքում չէ, ինչպես *կալու չէմ > կալու չի, ա նէսկ > ա նիսկ, նարգէ ս > նա ղգիգ, շրէշ > շի ղիջ, գեշութո ն > կիշո թոն*, կամ պայմանավորված է դիրքային հնչյունափոխությամբ՝ *մէշ > միշին, էշ > իշա տա/էր, դէմ > տիմա նալ*, մյուս դեպքերում դառնում է ի, բայց ոչ շեշտի տակ՝ *կալ մ չէմ > կալ մ չի* և այլն: Լայն տարածում ունի հակառակ երևույթը՝ *ի > է՝ միս > մէս, ծիտ > ծէտ, սիրտ > սէրտ, միտ > մէտ, լիրք > լէրփ, հինգ > հէնգ* և այլն: Շեշտակիր *ե (է) -ի(>ի)* փոփոխությունը տարածում ունի միայն Շինուհայրի խոսվածքում՝ *վե գ > վի գ, տե դ > տի դ, ծէ փ > ծի փ, սէ վ > սի վ, Սէ բոժ > Սի բոժ* և այլն:

Բերված օրինակներից որոշենք հատկանիշի գոյության վիճակագրական պատկերը՝ *եզ(ն) > յէզնը, ես > յէս, էրք > հէփ, գետ > կէտ, թն > թէվ, թել > թէլ // թիլ, խելք > խէլք, կեղտ > կէխտ, հետ > նը հէտ // հէտ, ձեր > ձէր, ձմեռ(ն) > ձիմէռնը, մեծ > մէծ, մեղր > մէղրը, մեր > մէր, նեղ > նէղ, ներկ > նէրկ, վեց > վէց, տեղ > տէղ, կես > կէս, ձեթ > ձէթ, մեջ > մէջ, մեջք > մէշկ, սեր > սէր, գրեմ > կիրէմ, գրես > կիրէս, գրենք > կիրէնք, գրեն > կիրէն* (27 բառ)՝ զուգաձևությամբ՝ $\approx 4\%$, առանց զուգաձևության՝ 0% :

50-րդ կետի (ձայնավորական) հատկանիշները առհասարակ բացակայում են Գործիսի բարբառում:

Քերականական զուգաբանությունների 53-րդ կետը վերաբերում է հոգնակիի կազմությանը. «Ան [ան-ք, ան-(ն)եր] հոգնակերտ՝ առանց նախորդող բաղադրիչի (անք-ի դեպքում՝ առանց «ազգականներ, կողմնակիցներ» լրացական իմաստի)»⁴⁹: Գործիսի բարբառում *-անք // -անք* ածանցը դեռ նախորդ դարում էլ որակական դեր

⁴⁸ Մարգարյան 1975, էջ 43:

⁴⁹ ՀԲՆ, էջ 82:

չի ունեցել. որպէս բացառություն հանդիպում է *ձի > ծիյանք// ծիէք և ձու > ծնւլանք// ծիւլէք* բառերում⁵⁰:

Ամփոփում

Բարբառային հատկանիշների ընտրությանը և նշանակմանը վերաբերող հարցերը սահմանափակենք վերոնշյալներով: Բավարար արդյունք ձևավորելու համար կազմել ենք աղյուսակ՝ բոլոր հնչյունական և քերականական գուգաբանությունները (1-25 բաղաձայնական, 26-50 ձայնավորական, 50-75 անվանական, 76-100 բայական) նշելով ըստ Գորիսի բարբառում առկայության կամ բացակայության⁵¹. տե՛ս աղյուսակ 1:

Այս դիտարկումներն ընդունելու դեպքում⁵² տարբերություն է առաջանում Գորիսի բարբառային միավորին վերագրվող գնահատականում (տարածամանակյա լեզվավիճակով)⁵³. Գորիսի բարբառի տարբերակիչ հատկանիշների թիվը, ըստ մակարդակային ցուցի, անցնում է 20-ը (38 ընդհանուր հատկանիշ, 62 տարբեր (÷3 (մակարդակի)՝ ըստ 100 հատկանիշ պարունակող ցուցակի): Բարբառախմբերի, բարբառների, խոսվածքների ընտրությունը, ըստ բարբառային հատկանիշների, կատարվել է առանց բարբառների բառային հիմնական տարբերությունների, այսինքն՝ արդեն որոշված, կարգավիճակ ստացած միավորների բառային հիմնական տարբերություններն են համեմատված ՀԲՆ-ում: Վերևում արդեն նշել ենք բառային հիմնական տարբերությունների առկայությունը՝ մասնավորապես պայմանավորված արտաքին գործոններով: Դրա-

⁵⁰ Ա. Մարգարյանը արձանագրում է նաև *թի > թիյանք, լու > լնւլանք* կազմությունները, որոնք հիմա ընդհանրապես բացակայում են (Մարգարյան 1975, էջ 123):

⁵¹ Համառոտություններ՝ Արդ.-արդյունք, Բաղ.-բաղաձայնական հատկանիշ, Չայն.-ձայնավորական հատկանիշ, Անվ.-անվանական հատկանիշ, Բայ.-բայական հատկանիշ, Ընդ.ընդամենը, Բդի.-բազմահատկանիշ դասակարգմամբ նշված (+ կամ -, Դկամ ±), Հիգի.-համեմատությունից հետո գրանցվող հատկանիշ (+ կամ -, Դկամ ±):

⁵² Նշված հատկանիշների վերաբերյալ դիտարկումները կարելի է տեսնել՝ ՀԲՆ, էջ 67, 85, 87:

⁵³ Համաժամանակյա կտրվածքով մեր գնահատականը տրվել է «Նախախոսքում»:

Աղյուսակ 1

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ (ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՆՇԱՆԱԿՈՒՄԸ																									Արդ.	
Բաղ.	1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.	12.	13.	14.	15.	16.	17.	18.	19.	20.	21.	22.	23.	24.	25.	25
Բղի.	-	-	+	+	-	±	±	+	-	-	+	-	+	-	+	-	+ ¹	-	-	-	-	-	-	+	-	9
Հհգհ.	-	-	+	+	-	-	-	-	-	-	+	-	+	-	+	-	+ ¹	-	-	-	-	-	-	+	-	7
Ընդ.																									9/7	
Ձայն.	26.	27.	28.	29.	30.	31.	32.	33.	34.	35.	36.	37.	38.	39.	40.	41.	42.	43.	44.	45.	46.	47.	48.	49.	50.	25
Բղի.	+	-	-	-	-	-	+	+	+	+	+	+	+	+	-	±	±	+	-	+	-	+	-	+	+	15
Հհգհ.	+	-	-	-	-	-	+	+	+	+	+	+	+	+	-	-	±	+	-	+	-	+	-	+	-	13,5
Ընդ.																									15/13,5	
Անվ.	51.	52.	53.	54.	55.	56.	57.	58.	59.	60.	61.	62.	63.	64.	65.	66.	67.	68.	69.	70.	71.	72.	73.	74.	75.	25
Բղի.	-	+ ⁰¹	+	-	+	+	-	+ ¹	-	+	+ ²	+	-	+	-	-	+	-	+	+	-	-	-	+	-	13
Հհգհ.	-	+ ⁰¹	±	-	+	+	-	+ ¹	-	+	+ ²	+	-	+	-	-	+	-	-	+	-	-	-	+	-	11,5
Ընդ.																									13/11,5	
Բայ.	76.	77.	78.	79.	80.	81.	82.	83.	84.	85.	86.	87.	88.	89.	90.	91.	92.	93.	94.	95.	96.	97.	98.	99.	00.	25
Բղի.	-	-	-	-	-	-	+	+ ¹	-	-	-	+	+	+	-	-	-	-	-	-	-	+	-	-	-	6
Հհգհ.	-	-	-	-	-	-	+	+ ¹	-	-	-	+	+	+	-	-	-	-	-	-	-	+	-	-	-	6
Ընդ.																									6/6	

նից բացի՝ Մյունիք-Արցախի բարբառային միավորներում բավականին շատ են ոչ միայն հնչյունական զանազանություններով, այլև իմաստային հատկանիշներով բառային զուգաբանությունները, որոնք քիչ են հաշվի առնվում միավորների տարբերությունները քննելիս:

РЕЗЮМЕ
ГОРИССКИЙ ДИАЛЕКТ В КОНТЕКСТЕ
МОГОПРИЗНАКОВОЙ КЛАССИФИКАЦИИ АРМЯНСКИХ
ДИАЛЕКТОВ
Кумунц Мгер

Горисский диалект входит в ветвь УМ (ում) диалектного ряда (Карабах-Шамахи или междиалектная группа крайнего северо-восток). Однако Горисская разговорная речь согласно многопризнаковой говором. Впоследствии А. Маркарян провёл и пришёл к заключению, что Горис не один из говоров Карабахского диалекта, а самостоятельный диалект. После 1970-ых лексологии продолжают использовать термин горисский говор, следуя многопризнаковой классификации диалектов Г. Джаукяна. Диалект никогда не изучался в контексте многопризнаковой классификации.

В данной работе делается попытка исследования признаков Горисского диалекта по многопризнаковой классификации армянских диалектов. Кроме принципиальных вопросов, касающихся выбора и назначения диалектных признаков, исходя из статистических данных, исследовались диалектные признаки, которые могут внести существенное различие при распознавании диалектной единицы.

В результате выяснилось, что Горисская разговорная речь не говор, а диалект и диахроническим, и синхроническим языковым состоянием.

Ключевые слова: Горисский диалект, Карабахско-Шамакхинская междиалектная группа, многопризнаковой квалификации, фонология, грамматика.

SUMMARY
THE GORIS DIALECT IN THE CONTEXT OF MULTI-CHARACTERISTIC CLASSIFICATION OF ARMENIAN DIALECTS
Kumunts Mher

The dialect of Goris is included in the range of the dialects of the branch um (Karabakh- Shamakhi or Far Northeastern inter-dialect group). According to the multi-characteristic classification of the Armenian language, the spoken language of Goris was considered a speech. Later A. Margaryan made thorough research on the Goris dialect and came to the conclusion that the Goris dialect is not one of the Karabakh dialects, but an independent one.

After the 1970s in some dialectological works, the spoken term of Goris is continued to be used following the multi-characteristic classification of the dialects made by G. Jahukyan.

My dialect has never been studied in the context of multi-characteristic classification.

In this work, an experiment is done to examine the characteristics of the Goris dialect according to the multi-characteristic classification of Armenian dialects. In addition to the fundamental questions related to the selection and meaning of dialect characteristics, dialect features were examined with statistical data that can make a significant difference in the recognition of the unit.

As a result it was found that the spoken language of Goris is not a speech, but a dialect both in sequential and simultaneous language status.

Key words: Goris dialect, Karabakh-Shamakhi interdialect group, multi-attribute qualification, phonology, grammar.

ՄԵՀՏԻՇԵՆԻ ԲԱՐԲԱՈՒՐ

Մհեր Քումունց

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
գիտաշխատող
mherkumunts@gmail.com

Հարցի պատմությունից

Մեհտիշենի բարբառին առնչվող ամբողջական գիտական ուսումնասիրություն դեռևս բացակայում է: Բարբառագիտական որոշ աշխատություններում մասնակի անդրադարձ կա բարբառի լեզվական առանձնահատկություններին: Կարո Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը»¹ աշխատության տարբեր գլուխներում Արցախի բարբառների քննության համատեքստում խոսվում է նաև Մեհտիշենի բարբառի հնչյունաբանական, բառագիտական, քերականական հատկանիշների մասին: Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն»² աշխատության մեջ Մեհտիշենի բարբառին բնորոշ հատկանիշները տեսնում ենք բարբառային զուգաբանություններում: Մեհտիշենի բարբառով բանահյուսական նմուշներ են հանդիպում Ա. Սարգսյանի «Արցախի բանահյուսությունը»³ աշխատանքում, բարբառային հասկացական զուգաբանություններ (478 բառ) հավաքված են ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի կողմից: Սույն աշխատանքը կարևոր է առանձնապես հայ բարբառների համակողմանի ուսումնասիրության և մասնավորապես Արցախի բարբառային

¹ Դավթյան Կ. Ս., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1966, 504 էջ (այսուհետև՝ ԼՂԲՔ):

² Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1972, 346 էջ:

³ 1 (16), 2 (70, 188, 198բ, 200ա, 202ա, 209ա.), 3 (78), Սարգսյան Ա., Արցախի բանահյուսություն, «Էդիթ Պրինտ» հրատ., Ե., 2015, 760 էջ (երկրորդ լրամշակված հրատարակություն, 2019, 784 էջ) (այսուհետև՝ ԱԲ):

միավորներին սպասվող ռազմաքաղաքական վտանգների տեսանկյուններից⁴:

Բնակավայրի պատմական նկարագիրը և անունը

Մեհտիշենի բարբառը, ըստ հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման, ընդգրկվում է *ուլ* խմբակցության Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի մեջ: Մեհտիշեն (այսօր՝ Լուսաձոր) բնակավայրը գտնվում է Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանում: Լեռնային այս բնակավայրը հարուստ է հայկական նախաքրիստոնեական շրջանի հուշարձաններով՝ բնակատեղի (մ.թ.ա. II-I հազ.), դամբարանադաշտ (մ.թ.ա. II-I հազ.), մատուռ-սրբատեղի (մ.թ.ա. II-I հազ.): Մեհտիշենի պատմությանը, ժողովրդագրությանը, ազգագրությանը վերաբերող ուսումնասիրությունները նույնպես բացակայում են: Կ. Դավթյանը գրում է, որ բնակիչները եկել են Խոյից 1829 թ.-ին⁵: Ըստ ավանդազրույցների՝ Մեհտիշեն անունը առաջացել է անձանունից՝ *Մեհտի*⁶ (հմմտ.՝ *Մեհտի-Մահդի* < արաբ. *Mahdi* (مهدي) մահմեդական իմամի անուններից, որ բառացի ունի «նվիրյալ» իմաստը, հմմտ.՝ *Մէլիք Մահտի*⁷), հմմտ.՝ *մահդեսի* > *մուղղուսի*:

⁴ Վերջին շրջանում արցախցի Մ. Ավետիսյանը հրապարակել է երեք աշխատանք, որոնք հեղինակը սիրով մեզ է տրամադրել ոչ հրապարակային կազմվածքով («Մեհտիշենի բարբառի առաջացումը Խոյի և Ղարաբաղի բարբառների հարաբերակցության արդյունքում», «Բառիմաստային առանձնահատկությունները մեհտիշենի բարբառում», «Մեհտիշենի բարբառի հոլովման համակարգը, հոլովների կազմությունը»):

⁵ ԼՂԲԲ, էջ 250:

⁶ Իբր չորս եղբայրներ եկել են Պարսկաստանի Խոյ գավառից, այստեղ բնակություն հաստատել: Նրանք ունեցել են հայ ծառա՝ Մեհտի անունով: Այդ գյուղի առաջին գերեզմանը եղել է Մեհտիինը (բնակավայրի առաջին մահկանացուն կնքողը), որից էլ առաջացել է գյուղանունը (Ասացող՝ Արգեն Կարապետյան, 1953թ., Լուսաձոր):

⁷ **ԱՃառյան Հ.**, *Հայոց անձնանունների բառարան*, Պետական համալսարանի հրատ., Ե., հատ. Գ, 1940, էջ 170: Այս առումով հմմտ.՝ *Իբրահիմ* «բռնավորին» փոխարինած *Մեհտիղուլիխանին* (հմմտ.՝ **Առաքել Կոստանյանց**, Պատմություն Արցախի, աշխատասիրությամբ՝ Է. Մկրտչյանի, Ե., «Արմավ» հրատ., 2019, էջ 218): Բաֆֆին Արցախի հողերի նվիրատվության վերաբերյալ ամբող-

Մեհտիշեն անունը առաջին անգամ հանդիպում է 19-րդ դարի սկզբներին: Մինչ այդ ինչ է եղել բնակավայրի անունը՝ հայտնի չէ: Ավելի հավանական է, որ այն առաջացած լինի արաբ. պրսկ. *mahd* (مهد) «օրրան, ակունք» բառից, որ դուրս է մնացել բարբառային բառապաշարից, պահպանվել է տեղանվան մեջ և հետագայում առնչակցվել գյուղում տարածված ավանդազրույցին. «Վեր սըփթա փախած էկեր էն [մեր շինացիք], Չընգըլի դնուդնւմ վեր էն կացէ, յօթ ընտանիք էն լէ՝ Պօղօսյան, Պէտրօսյան, Մարքըսյան, Հարությունյան, Մէսրօփյան, Կարապէտյան, [...] քարէ-մարէ քանդէր էն, տէ սըկըսէ: Մին մարթ էկէ տըղօ անց կացէ, տըրանց տէսէ, ասէր է՝ էս տէ ինչ էք անըմ, բալա՛, էս ճըզէրը մէխկ էն էս ցըրտում: Ասէր էն՝ դէ փախած մարթիկ էնք լի, տէսնանք շտեղ էնք կարըմ: Ասէլօ վեր իփր թուրք է լէ էս, էս տարածքը Շուշվա գավառին ա լէ յէշէլիս: Ասէր ա յէկէք-տանէմ ծէզ գավառապետին կօխկը, ծէզ տեղ տա, տուն շինէք, ապրէք: Բայց էս յէօղնին էլ շատ վօսկի ա լէ նւրանց: Տըանք կաշառ էն յեր կալէ, քյացէ Շուշի՝ գավառապետի կօխկը: Յէկէր էն չափէ, ասէր էն՝ դէ ըստէ տուն շինէք: Հէտօ քյացէր էն տեղ, յէկէր էն չափէ, տուվէ նւրանց: Էտ վեր յէկէր է, մեր շինէցուց տէսէ յէ, ասէ, վեր ստէ ինչ էք անըմ, անըմը Մեհտի յա լէ: Տա հէտի էլ իփըր վեր սարաբ ա տանէ, տունը շինէ, տեղը շինէ, անըմը տրէ Մեհտիշեն»⁸:

Հնչյունական համակարգ

Մեհտիշենի բարբառի ձայնավորներն են՝ *ա, աի, ու, ու, օ, օ, ուէ, ի, ի՛, է, ը, ը՛ (վը՛րցակ)*: Սրանցից *ուէ* հազվադեպ է պատահում, (*խաղուէղ // խաղուղ, սուքավուէր // սըքըվեր // սուքուվեր*), իսկ *ի՛*-ն, որ արտասանվում է թույլ՝ *ը*-ին մոտ (*պի ցրանալ*), լսվում է տարեցների խոսքում: Բաղաձայնները գրաբարատիպ

ջական պատմություն ունի, որ վերաբերում է Մեհտի խանին և իշխան Մադաթովին (Րաֆֆի, *Երկերի ժողովածու*, Ե., «Հայպետհրատ», 1964, հատ. 10, էջ 331-333)

⁸ Ասացող՝ **Է. Սարգսյան**, գյուղ Մեհտիշեն:

են, հավելյալ՝ *զ, կ, ք*: Տ հնչյունն նույնպես հանդիպում է սակավաթիվ բառերում, որ, ինչպես տեղացիներն են նշում, «տա նօր են ասում ջահէլնին» (*Ջարդա*): Գրաբարում արձանագրվող երկբարբառները բացակայում են: Համեմատած Արցախի մյուս բարբառներին՝ Մեհտիշենում տարածված է տարբեր ձայնավորների *ը*-ի վերածման՝ *ջախջախել > ճրճախել, վարդավառ > վըրթավուր*, ապա սղման երևույթը՝ *աղաչել > // ըղաչել (նան՝ դաչել), որոտալ > ըրօտալ (նան՝ ղօտալ), ուղարկել > ըղարկել (նան՝ դարկել)*: Բաղաձայնական համակարգում առկա են որոշ առանձնահատկություններ: Նշենք մի քանիսը.

1. Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների վերածում խուլերի՝ *բան > պան, բերել > պերել // պիրել*,

2. Ինչպես գրական հայերենում, *ը*-ից հետո ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ-խլացում բառի որոշ դիրքերում՝ *արջ > արչ, երգ > յերք*:

3. Քմայնացած ետնալեզվայինների առկայություն՝ *կսւռըն, կիրել, կու/ուտել, ախճիգը, անգուն, քինալ*:

4. Բառավերջին դիրքում քմային *զ, կ, ք* հնչյունների ոչ շատ տարածում՝ հակառակ Արցախի բարբառային շատ միավորների, հմմտ. Մարտակերտ *կընանիք, ծալք, Մեհտիշեն՝ ծալք, կընանիք*. Թերևս ժամանակի ընթացքում ազդեցությունների հետևանք է, քանի որ Կ. Դավթյանը վկայում է, որ *ք* ավելի շատ է հանդիպում Մեհտիշենում⁹:

5. Տ-ի առնմանական փոփոխության երևույթ *ն, ր, ռ* ձայնորդների ազդեցությամբ՝ ինչպես՝ *մատ-մատ // մանը, մատներ-մաններ, մատնոց-մաննուց, մտնել-նիմնել, ռտներ-վըններ*:

6. Հ-ի հավելում բառասկզբում՝ *ամաչել - հրմանչել, ագի - հալքու, աներ-հաներ*:

Արցախի մյուս բարբառների համեմատությամբ՝ Մեհտիշենում արտասանությունը (բառային հնչակագմը) առավելապես մոտ է գրականին, հմմտ. Մարտակերտում և այլուր՝ *տար, Մեհտիշենում՝ տեր*, այդպես և՝ *մաշք - մէշկ, մաչ - մէչ, ախտել //*

⁹ ԼՂԲԲ, էջ 63:

յախնել, յէխնել-հախթել, օրթնւմ // վը՛րթումն // վուրթում // ուրթումնը-յերթում, անիսկ -անէցք, չամիչ // չամէնչ-չամիչ, վը՛դ-հօր: Բառային շեշտը միշտ վերջադիր է:

Բառագիտություն

Բառակազմական եղանակները ընդհանուր են Արցախի մյուս խոսվածքների հետ: Սակայն կան որոշ բառեր կամ բարբառային տարբերակներ, որ բնորոշ են հենց Մեհտիշենին և ծագումնաբանորեն տեղաբաշխվում են տարբեր շերտերում, ունեն առաջացման կամ ձևավորման յուրահատուկ պատկեր, ինչպես՝ Ա. Ծագումնաբանական շերտեր

1. *Հնդեվրոպական շերտից՝ Լէթվիլ* «երես առնել». հոմանիշ կամ իմաստով առնչակից է Սյունիք-Արցախում տարածված *լկստած* «անամօթ, չափազանց երես առած», *լկոտած* - *սկոտած*¹⁰, *լղղ(էլ)*¹¹ բառերին: *Լէթվէ/իլ* (> *լրթվօթուն*) «1. շփանալը, 2. լրբանալը» բառերը, փաստորեն, կարող են օրինակ լինել **sl-*, **sm-*, **sn-* (շարժուն **s-*-ի առկայությամբ) նախադիր հնչյունախմբով սկսվող բառերի հարցը քննելիս: Ինչպես գիտենք, հնդեվրոպական մի շարք լեզուներ՝ լատիներեն, հունարեն, ալբաներեն, կորցրել են նախադիր **s-*-ն հատկապես **-l*, **-m*, **-n* ձայնորդներին նախորդող դիրքում, սակայն բարբառի (այլև՝ բարբառախմբի) օրինակները վկայում են, որ երևույթը (ս-ի անկումը) ամբողջությամբ չի գործել նաև Սյունիք-Արցախի բարբառներում, կամ պահպանվել են այնպիսի ձևեր և իմաստներ, որոնք կրում են նախահայերենի լեզվական երևույթները և տակավին ուսումնասիրության կարիք ունեն: *Օնգնը* «ունկ» < **ous-* «ականջ»:

2. Հին հայերենից կամ ընդհանուրհայերենյան շերտից եկող և Սյունիք-Արցախի բարբառներին բնորոշ բաղադրությամբ

¹⁰ Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան («Էմինեան ազգագրական ժողովածու», հատ. Թ), Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, Թիֆլիս, 1913, էջ 427 (այսուհետև՝ ՀԳԲ):

¹¹ ՀԳԲ, էջ 428:

ձևավորված բառեր՝ *ճրտանուց* «վզից կախվող զարդարանք», *մըշկասեռ* «ողնաշար», *յրդօլի* «եղան», *նրզննսնիաց* «ընթրիք», *պրտըրհան* «սենյակում պատի մեջ երեսը բաց պահարան» < պատուհան, *վրհրըկալէլ* «թարախսակալէլ», *քըշըհանա* «առավոտ»:

3. *Անհայտ ծագում* ունեցող բարբառային տարբերակներ՝ *կյրզէլ* «ձաղկէլ» < հին հայերենից՝ *զէզ*, *սուրհէ* «սնամեջ գլխով դդում», *փանփըռէզ* «թմբիկ» < փափուկ բառից, *հըրըշնէլ* «երեսը կարմրել», *էլհան* «դարձյալ», հմմտ.՝ արաբ. *أحان* (alḥān) «մեղեդի», այլև հ.-ե. *alio- «այլ, ուրիշ»:

4. *Այլ լեզուներից՝ սնվնց* «փոխարեն» < արաբ. *عوض* (iwad) «փոխարենը», *զամբնուլ* «զամբյուղ» < պրսկ. *زنب* (zambil), *մըղափնն* «ափսոս» < արաբ. *مغلوب* (mağlūb) «պարտված, պարտություն կրած», *յուսբրուլ* «բռունցք» < թուրք. *yudruk* «բռունցք», *շէսթնուլ* «դեղձ» < պրսկ. *آلو شفت* (saftālu) «դեղձ», *զախուս* «զուգարան» < ռուս. *заход* «մտնել» բայից:

5. *Բնաձայնությոց* առաջացած՝ *բօ* // *բօվ* «բու», *ըրճըրճան* «կրճիկ»:

Բ. *Բառաստեղծման այլ միջոցներ ու եղանակներ*

6. *Համաբանությամբ՝ զամբ* «ջրադացքարի չորս կողմը նստած փոշի» > ենթադրվում է՝ *ամսպ* բառից է:

7. *Պատկերավորությամբ՝ ըկըռէվի սաղունձ* «խեժ», *ըրըխկալի* «խցան» < բերան կալող (*ըռէխ*) և վերցնող (*կալ*), *ծըրըկուտկուտ* // *ծըրըկակաչ* «փայտփորիկ», *կարկաժ* «դդում», *կըծըպրտօկ* «պզուկ», *կընըշկարմնը* «ծիածան», *կյէռննուկ* «գորտ», *կյնուլ է ցընում* «արև եղանակին բարակ կարկուտ», *մախժ* «ցոգով», *մուղան* «փայտյա կոթավոր գործիք, որով կալսած կալը ժողովում են մի տեղ» < արդյոք աշխարհագրական անվանումից է, որ համեմատվում է լեռների միջև եղած տարածքին, թե՞ անհայտ ծագում ունի, *մօլաբըրդի* (// *քըրըքարէ*) «քարկտիկ», *սըրտըմա ինէլ* «զզվել», *սըրփանք* «ընկերք», *վէռնըր* «որդ», *քարկէժ* «թարախոտ կոշտ վերք, որ գոյանում է կրունկի վրա»:

8. *Բաղադրությամբ*, մասնավորապես՝ *իսկական բարդությունները՝ թուռուծրհան* «մի ծայրը ճանկավոր, մյուսը թաթի ձևով ձող թոնրից հաց հանելու համար» < *թոնիր* > *թուռ* և *ծրհան*: Հայերենի բարբառներում տարածված *ակիշ*¹² «թոնրից հացը հանելու, տաշտին մնացած խմորը քերելու գործիք՝ մի ծայրը կեռ, մյուսը սուր կամ հարթեցրած» բառի¹³ փոխարեն գործածական է *ծրհան*-ը՝ «թաթակիշ, հացհան», որ վկայվում է միայն Սյունիք - Արցախում¹⁴: *Խըլուպուզ* «գարեկ» (կոպերի եզրի այտուցը), *կըրթակի* «կտուր տոփանելու զլանաձև քար»:

9. *Փոխազդեցական հնչյունափոխությամբ* առաջացած բարբառային տարբերակներ՝ *կակըռան* «փոցխ» < հմմտ.՝ տակոռահան, *կըծօրի* «լուսատիտիկ» > կայծորիկ, *կուկուզ կենալ* «պպզել» < կուզ-կուզ > կուկուզ:

Քերականություն

Մեհտիշենի բարբառում գոյականի հոգնակին կազմվում է *-էր, -ներ, -նի* և *-ք* մասնիկներով: Գրաբարաձև հոգնակիներից առկա են *-ց*-ով ձևեր՝ *ախպօրց(ը)*, նաև՝ *ախպէրների, հիլօց(ը), խօխօրց(ը)* (այլև սրանց որոշյալ ձևերը¹⁵): *Մարթօց, Մարթիկների* ձևերը սակավադեպ են:

Մեհտիշենի բարբառն ունի յոթ հոլով և ութ հոլովիչ՝ *-ի, -ու, -վա, -օչ, -ց, -օ(ր) // օ(ր), -ա(ն)*: Գոյականները հոլովվում են և՛

¹² «Ակիշ «կեռ, երկաթի ճանկ» [*<* պրսկ. *āgīš, ēgīš (āgīš)*]» (տե՛ս **Հովհաննիսյան Լ. Շ.**, «Եզնիկ կողբացու «Եղծ աղանդոցո»-ի լեզվի մի քանի առանձնահատկությունների շուրջ (Բնագիր և թարգմանություն), Լեզու և լեզվաբանություն, 1 (13), Ե., ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., 2015, էջ 29:

¹³ *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան* (հատ. I, II, III, IV, 1969-1980), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., հատ. Ա, էջ 29:

¹⁴ ՀԼԲԲ Բ, էջ 414: Հ. Աճառյանը *ծհան* բառի գործածությունը նշում է նաև Ղարադաղում՝ *հացհան*: Հավանական ենք համարում, որ *հացհան* բառից է *ծրհան*-ը՝ *հա* նախադիր վանկի անկումով՝ երկրորդ *հա* վանկի տարնամանությամբ և *հ*-ի կողքին *ց*-ծ փոփոխությամբ (հմմտ. նաև ՀԳԲ, էջ 649):

¹⁵ Ըստ Կ. Դավթյանի՝ «ավելի շուտ շրջապատի խոսվածքների ազդեցության հետևանք են» (ԼՂԲԲ, էջ 113):

որոշյալ, և՛ անորոշ ձևերով: Համեմատած Արցախի բարբառա-
յին մյուս միավորներին՝ սեռական հոլովը հոդառու չէ:

Հատուկ անուններում նկատվում են ա հոլովիչով ձևերը՝
Բարվա, Նահատակա ծօր:

Բացառականի համար կա նաև *-է* ձևույթը դերանուններում՝ *ինձանէ, քեզանէ*, կապական կառույցներում, ինչպես՝ *դարդէ* (Կրքճատեր էն խըրէգ ինէլի *դարդէ*): *-Ան* մասնիկով բացառականը սակավադեպ է հանդիպում (խօսչան յօր ա ունում հարթնի *հէտան* պըրծընըմ)¹⁶: *Երբվանից* բառաձևի համար կա *հիբանց* բարբառային տարբերակը, գործիական հոլովը գործառ-
վում է նաև *-օ* վերջավորությամբ՝ *վ-ի* անկմամբ (...*իրէք ախպէրօ, էմինը նըրան յէշէլօ-յէշէլօ...*), ներգոյականի իմաստով գործածվում է նաև *-է-ն*՝ «Հէն էնք իլէ *քաշէ*» (ներքևում ենք եղել): *-Ա* հոլովման ենթարկվում են ինչպես *տուն, շուն* («Ըստահանց *տան* ադաթը ըստի յա...»)¹⁷, այնպես էլ *-ուրթուն* ածանցով բառերը («...ո՞ւրա՛ հարըստութան կէսըն էլ էտ տըղին ա տամ»)¹⁸: *-Ն* վերջնահանգով հին հայերենից ավանդված բառերը, որոնք ուղիղ ձևերում չունեն հանգը (*ն*), ունենում են *կսնան, մրկան, մատան*, այլև՝ *կատի, մուկի, ծոկի* թեքված ձևերը: *-Օ* հոլովման են միայն *մայր, եղբայր, հայր, հորեղբայր* բառերը: Այլաձև հոլովումներից հաճախական քույր բառը այսպես է հոլովվում՝ *քուր, քրվօր, քրվօրը, քրվօրը, քրվօրից // քրվօր անից // քրվօր նէստից, քրվօրօվ // քրվօր անօվ, քրվօրում, քրվօր մէջ // քրվօր միչում*: Ընդհանուր պատկերը տե՛ս աղյուսակ 1-ում:

Գոյականները, դերանունները և փոխանվանաբար հանդես եկած մյուս խոսքի մասերը ստանում են որոշիչ հոդ ուղիղ և թեքված ձևերում: Որոշիչ հոդի բացակայությունը սեռական հոլովում նկատվում է ոչ միայն գոյականներում, այլև փոխանվանաբար գործածված բառերում: Բարբառումս անորոշ հոդի նշանակություն ունի *մի* դերանունը: Արցախի մյուս խոսվածքնե-

¹⁶ ԱԲ, էջ 236:

¹⁷ ԱԲ էջ 148:

¹⁸ ԱԲ էջ 148:

բում առկա *մին, մըն, մէ* ձևերը գրեթե չեն ներթափանցել տեղացիների խոսքի մեջ: Որոշիչ հոդերն են՝ *-ն, -ը* (դուշը, պապան), ստացական, դիմորոշ և ցուցական հոդերի (*-ս, -տ, -ը(-ն)*) կիրառությունների մեջ առանձնահատկություններ չկան՝ ցուցական՝ *յերգիրումս* դուրս գալիս, «էտ թաքավերըս ուրան օխձին էնչանք ա սիրըմ»¹⁹, ստացական՝ *տըղաս, տըղատ, տըղան*, ինչպես՝ «*Իմ ախձիգըս պիտի քեզ տամ*»²⁰, «բայց էտ դըշինգօթունը կըլօխըս սաղ վախտը օյին ա պերելու»²¹, դիմորոշ՝ «*Շինացիքս օրերով քաղում ինք...*»:

Ածականի համեմատության համար (բաղդատական) Մեհտիշենում գործածվում են՝ *ավելի..., քան* (*ավելի* դաշանգ ա իլէ, *քան...*), բացառականի *-ից, -է, -անից* մասնիկները (էն տըրանից լավ ա), *բացառականով դրված բառ + լավի* (*ստեղից լավի* լավ տեղ ա լէ): Գերադրականի համար առավել տարածված է *ամենից լավ* կառույցը, մասամբ նաև՝ *լօխյի անից* (բոլորից) ձևը (մեր տունը *լօխձի անից* մեծ ա լէ):

Անձնական դերանունների գծապատկերը տե՛ս աղյուսակ 2-ում, ցուցական դերանունները՝ աղյուսակ 3-ում:

Ցուցական դերանունների բաղադրյալ ձևերից են՝ *էսէնց, էտէնց, էնէնց, ընդի, էտքան, էտքան, էնքան, ստեղ // ըստեղ, տեղ // ըտեղ, նեղ // ընդեղ, էս յանը, էտ յանը, էն յանը* և այլն: *Այստեղ, այդտեղ, այնտեղ* իմաստով դերանունների գործածության մեջ նկատվում է նաև *դ*-ի անկում՝ *ստէ, տէ, ընդէ*: Հարցահարաբերականներից «ով» իմաստով առկա են *հով, օվ, հու* տարբերակները, թեքված ձևերից՝ *ում, հում*: *Ինչ // հինչ* դերանունը *-ի* հոլովմամբ է՝ *հինչ, հինչի, հինչին, հինչը, հինչից, հինչօվ, հինչում*: «Որտեղ» իմաստով են *շտեղ // ըշտեղ, վըրդեղ, հուր*: Փոխանուն դերանունները ենթարկվում են *-ի* հոլովման՝ *եզակի՝ իմը // իս, իմի, իմին, իմը // իմին, իմից, իմօվ // իմին անօվ, իմի մէչ*, հոգ-

¹⁹ ԱԲ էջ 279:

²⁰ ԱԲ էջ 147:

²¹ ԱԲ էջ 230:

նակի՝ *իսօնք, իսօնց, իսօնց, իսօնց* // *իսօնք, իսօնցից* // *իսօնց անից, իսօնցով, իսօնց անով, իսօնց մէջ*:

Օժանդակ բայն ունի հետևյալ պատկերը՝ ներկա՝ *էմ, էս, է // ա, էնք // էնք, էք // էք, էն*, անցյալ՝ *ի, -իր, -էր, -ինք, -ինք, -իք, -իք, -ին*: Կ. Դավթյանը այս կերպ նշում է նաև Տեղ գյուղի խոսվածքում: Նշենք, սակայն, որ այդկերպ օժանդակ բայը տարածված է նաև Գորիսի մյուս խոսվածքներում:

Բայական առանձնահատկություններից նշելի է, որ ենթակայական դերբայն ունի հիմնականում *-օղ* վերջավորությունը: Համեմատած մյուս խոսվածքների, որոնցում *-ացօղ* վերջավորությունը սակավադեպ է, Մեհտիշենն *-օղ*-ին զուգահեռ ունի նաև *-ացօղ՝ քինացօղ // քսնացօղ, կարթօղ // կըրթացօղ, մընօղ // մընացօղ*: Չնայած Արցախի բարբառների մեծ մասում ժխտական դերբայը որպես այդպիսին հիմնականում բացակայում է, Մեհտիշենում գրականի նման գործուն է *չէմ խըմի, չէմ մընա* խոնարհման ձևեր որպես ենթադրականի ժխտման արտահայտություններ: Անցյալ կատարյալի եզակի I դեմքում ավելանում է *-մ* մասնիկը՝ *յէկամ, քինսնցիմ, կարթամ // կա/ըրթացամ, ուշացամ*: Անցյալ կատարյալի հիմքի վերջադիր ձայնավորի զուգաձև գործածություն է նկատվում *գնալ* բայի եզակի I և II, հոգնակի I, II, III դեմքերում՝ *-ի* կամ *-ա*, ինչպես՝ *քսնցամ // քսնցիմ, քսնցամ // քսնցիր, քսնցամ, քսնցանք // քսնցինք, քսնցնք // քսնցիք, քսնցնն // քսնցին*: Մյուս բայերում անցյալ կատարյալի վերջավորությունները հիմնականում ձևավորվում են *-ամ, -ար, -ավ, -անք, -աք, -ան* մասնիկներով: Կ. Դավթյանը բարբառիս գրառումները կատարելիս նկատել է, որ *ա* խոնարհման կանոնավոր բայերի անցյալ կատարյալը առհասարակ անցոյական հիմքով է ձևավորվում՝ *կարթամ, կարթար, կարթավ, կարթանք, կարթաք, կարթամ*²²: Մականյն ցոյական հիմքով կազմությունները այսօր գերակշռում են ոչ միայն *-ան, -էն* սուկանցավոր, այլև *է* և *ա* խոնարհման պարզ բայերում, ինչպես՝ *մընացիմ, մընացիր, մընաց, մընացինք, մընացիք, մընացին, կը/արթացիմ,*

²² ԼՂԲՔ, էջ 163-164:

*կը/արթացիր, կը/արթաց, կը/արթացինք, կը/արթացիք,
կը/արթացին, այլն զուգաձևություններ՝ կ'իրանմ // կ'իրեցիմ,
կ'իրանք // կ'իրեցիր, կ'իրանմ // կ'իրեց, կ'իրանք // կ'իրեցինք, կ'իրանք
// կ'իրեցիք, կ'իրան // կ'իրեցին: Խոնարհման ընդհանուր պատ-
կերը տե ս աղյուսակ 4-ում:*

Անփոփում

Մեկ աշխատանքում հնարավոր չէ ամբողջացնել Մեհտիշենի բարբառի ողջ համակարգը: Բայց հակված ենք կարծելու, որ համաժամանակյա լեզվավիճակով Մեհտիշենը շարունակում է ներկայանալ որպես բարբառային յուրահատկություններով միավոր Արցախի բարբառների և գրական հայերենի ազդեցությունների ներքո: Շուրջ հիսուն տնտեսություն ունեցող գյուղում, ցավոք, երիտասարդները քիչ են, բարբառի գործառական շրջանակն էլ տարեցտարի փոքրանում է: Մեր ձեռքի տակ եղած գրառումների, բանահյուսական նմուշների օգտագործմամբ և տեղում բարբառակիր հանրության հետ ունեցած շփումների արդյունքում հետագայում կշարունակենք առավել մանրամասնությամբ ներկայացնել Մեհտիշենի բարբառը:

Աղյուսակ 1

	-հ	-ու	-օջ	-օ // -օ	-վա	-ա(ն)	-ց
Ու.	հաց	ծի	տէր	ախպէր	օր	թօռ	Ղամբարէնք
Ս.	հացի	ծիյու	տիրօջ	ախպօր	օրվա	թօռան	Ղամբարէնց
Տ.	հացի(ն)	ծիյու(ն) ծիյի(ն)	տիրօջը	ախպօր(ը)	օրվա(ն)	թօռան(ը)	Ղամբարէնց(ը)
Հ.	հաց(ը)	ծիյու(ն) ծի(ն)	տիրօջ(ը)	ախպօր(ը)	օր(ը)	թօռան(ը)	Ղամբարէնց(ը)
Բ.	հացից	ծիյուց ծիյու անից	Տիրօջէն(ը)	ախպօ(ե)րից(ը) ախպօր անից(ը)	օրէն օրէ	թօռից(ը)	Ղամբարէնցից(ը)
Գ.	Հացօ հացօվ	ծիյօվ(ը) ծիյու անօվ ծիյու նէստավ(ը)	տիրօջօվ(ը)	ախպօր անօվ(ը) ախպօր նէստավ(ը)	օրօվ	թօռօվ(ը) թօռան անօվ(ը) թօռօ	Ղամբարէնցօվ(ը)
Ն.	հացում	[-]ծիյու մէջ(ը) ծիյու անում(ը)	[-]տիրօջ մէջ(ը) տիրօջ անում(ը)	[-]ախպօր մէջ(ը) ախպօր անում(ը)	օրում(ը)	[-]թօռան մէջ(ը) թօռան անում(ը)	[-] Ղամբարէնցում(ը) Ղամբարէնց մէջին

Աղյուսակ 2

Եզակի

Ու.	յէս	տու տու	նա էն	ինքը
Ս.	իմ	քու քո	նրա	մերան մերան
Տ.	ինձ	քեզ	նրան	մերան մերան
Հ.	ինձ	քեզ	նրան	մերան մերան
Բ.	ինձա(ս)նից ինձնից իզնից	քեզանից քզնից	նրանից	մերանից մերան անից
Գ.	ինձանով	քեզանով քզանով	նրանով	մերանով մերան անով
Ն.	իզնում	քեզանում	նրանում	մերանում մերան անում

Հոգնակի

Ու.	մէնք մունք	տուք տուք	նանք նրանք	մերանք մերանք
Ս.	մեր	ծեր	նրանց	մերանց մերանց
Տ.	մեզ	ծեզ	նրանց	մերանց մերանց
Հ.	մեզ	ծեզ	նրանց	մերանց մերանց
Բ.	մեզնից մեզանից	ծեզնից	նրանցից նանցից	մերանցից մերանց անից
Գ.	մեզանով	ծեզնով ծեզանով	նրանցով նրանց անով	մերանցով մերանց անով
Ն.	մեզնում մեզանում մեր մէջ	ծեզանում	նրանցում	մերանցում մերանց մէջ

Աղյուսակ 3

Եզակի

Ու.	սա էտ	տա էտ	նա էն
Ս.	սըրա ըստըրա	տըրա ըտըրա	նըրա ընդըրա
Տ.	սըրան ըստըրան	տըրան ըտըրան	նըրան ընդըրան
Հ.	սըրան ըստըրան սա էտ	տըրան ըտըրան տա էտ	նըրան ընդըրան նա էն
Բ.	սըրանից ըստըրանից	տըրանից ըտըրանից	նըրանից ընդըրանից
Գ.	սըրանօվ ըստըրանօվ	տըրանօվ ըտըրանօվ	նըրանօվ ընդըրանօվ
Ն.	սըրանում ըստըրանում	տըրանում ըտըրանում	նըրանում ընդըրանում

Հոգնակի

Ու.	սըրանք ըստըրանք	տըրանք ըտըրանք	նըրանք ընդըրանք
Ս.	սըրանց ըստըրանց	տըրանց ըտըրանց	նըրանց ընդըրանց
Տր.	սըրանց ըստըրանց	տըրանց տըրանք տըրանք ըտըրանք	նըրանց ընդըրանց
Հ.	սըրանց սըրանք սըրանք ըստըրանք	տըրանցից ըտըրանք	նըրանց նըրանք ընդըրանց ընդըրանք
Բ.	սըրանցից ըստըրանցից	տըրանցից ըտըրանցից	նըրանցից ընդըրանցից
Գ.	սըրանցօվ ըստըրանցօվ	տըրանցօվ ըտըրանցօվ	նըրանցօվ ընդըրանցօվ
Ն.	սըրանցում	տըրանցում ըտըրանցում	նըրանցում ընդըրանցում

<i>Մահմանական եղանակ</i>	<i>Ե խոնարհում</i>	<i>Ա խոնարհում</i>
անկատար ներկա	քինու/ն/ըմ էմ, էս, է ա, էնք' էնք, էք' էք, էն	կ'իրում ի, իր, էր, ինք', իք', -ին
անկատար անցյալ	խաղ ի անում, իր, էր, ինք', իք', ին	խըմում ի, իր, էր, ինք', իք', -ին
Վաղակատար ներկա	թըռեր էմ, էս, ա, էնք, էք, էն	մօտացեր էմ, էս, ա, էնք, էք, էն
Վաղակատար անցյալ	կօրցըրե(ի)ր ի, իր, էր, ինք', -իք', -ին	քինացեր ի, իր, էր, ինք', իք', ին
Ապակատար ներկա	ճընա/ընչելու վեմ, վես, վա, էնք' էնք, էք' էք, էն	կ'ալու վի, վիր, վեր, վինք' վինք, վիք', վիք, վին
Ապակատար անցյալ	կօխելու վի, վիր, վեր, վինք, իք, ին	Ջըրմընալու վի, վիր, վեր, վինք, վիք, վին
Հարակատար ներկա	Թըխած էմ, էս, ա, էնք, էք, էն	Ըղացած էմ, էս, ա, էնք, էք, էն
Հարակատար անցյալ	նըստած ի, իր, էր, ինք, իք, ին	կըրթացած ի, իր, էր, ինք, իք, ին
Անցյալ կատարյալ	Ջարկամ, -ար, -ավ, -անք, -աք, -ան	յեկամ -ար, -ավ, -անք, -աք, -ան

Ըղծական եղանակ	Ե խոնարհում	Ա խոնարհում
Ապառնի	Կիրեմ, -էս, -է(ի), -ենք, -եք, -են	Կարթամ, -աս, -ա, -անք, -աք, -ան
Անցյալ	Կիրելի, -ելիր, -եր, -ելինք, -ելիք, -ելին	Կա/ըրթայի, -այիր, -ար, -այինք, -այիք, -ային
Պայմանական եղանակ	Ե խոնարհում	Ա խոնարհում
Ապառնի	Կըկիրեմ, -էս, -է(ի), -ենք, -եք, -են	Կըկարթամ, -աս, -ա, -անք, -աք, -ան
Անցյալ	Կըկիրելի, -ելիր, -եր, -ելինք, -ելիք, -ելին	Կըկարթայի, -այիր, -ար, -այինք, -այիք, -ային
Հարկադրական եղանակ	Ե խոնարհում	Ա խոնարհում
Ապառնի	Պետք ա կիրեմ, -էս, -է(ի), -ենք, -եք, -են	Պետք ա կարթամ, -աս, -ա, -անք, -աք, -ան
Անցյալ	Պետք ա կիրելի, -ելիր, -եր, -ելինք, -ելիք, -ելին	Պետք ա կարթայի, -այիր, -ար, -այինք, -այիք, -ային
Հրամայական եղանակ	Ե խոնարհում	Ա խոնարհում
Ապառնի	Կիրե՛, կիրեցե՛ք,	Կարթա՛, կարթացե՛ք

РЕЗЮМЕ
ДИАЛЕКТ МЕХТИШЕНА
Кумунц Мгер

Мехтишенский диалект согласно многопризнаковой квалификации армянских диалектов входит в группу УМ (nɫɯ) междиалектной группы Карабах-Шамахи. Мехтишен (ныне Лусадзор) находится в Аскеранском районе Республики Арцах. Гласные Мехтишенского диалекта: *a, ä, u, ü, o, ö, u^e, i, í, ý, y^e* (*ш, ш̇, п̇, п̇̇, о, о̇, п̇^t, ħ, ħ', t, p, p^t*). Кроме армянских согласных там есть *g^y, k^y, q^y* (*q, ħ, ṗ*). Словообразовательные методы Мехтишенского диалекта общие с другими говорами Арцаха. Слова, входящие в лексику, относятся к индоевропейским, древноармянским, диалектным и литературным словам. В диалекте Мехтишена множественное число существительных образуется при помощи: *-ер, -нер, -ни* и *-к (-tɾ, -úɫɾ, -úħ)* и *(-ṗ)*.

Диалект имеет 6 падежей и 8 показателей склонения: *-и, -у, -ва, -оч, -ц, -о* || *о̇, -а(н) (-ħ, -п̇, -ц̇ш, -о̇, -g, -о* || *-о̇, -ш(ú))*. Вспомогательный глагол имеет следующий вид: настоящее время: *ем, ес, е* || *а, енк^b* || *енк, ек^b* || *ек, ен* (*ɫɯ, ɫи, ɫ* || *ш, ɫúɾ* || *ɫúɾ, ɫṗ* || *ɫɾ, ɫú*), прошедшее время: *-и, -ип, -ер, -нк^b* || *-инк, -ик* || *-ик^b, -ин* (*-ħ, -ħɾ, -ɫɾ, -ħúɾ* || *-ħúɾ, -ħṗ* || *-ħṗ, -ħú*). В диалектах Мехтишена есть особенности диалектов Арцаха и Хоя, однако и сегодня он считается самостоятельным диалектом.

Ключевые слова: Многопризнаковойквалификации, Мехтишенский диалект, словообразовательные методы, фонетика, грамматика.

SUMMARY
THE DIALECT OF MEHTISHEN
Kumunts Mher

According to the multi-characteristic classification of Armenian dialects, the Mehtishen dialect is included in the Karabakh-Shamakhi inter-dialect group of the faction “nɫɯ”. The Mehtishen (today

Lusadzor) settlement is located in Askeran region of Artsakh Republic. The vowels of Mehtishen dialect are: *a, ä, u, ü, o, ö, u^e, i, í, ý, ý^e (u, uⁱ, nⁱ, nⁱ, o, ö, nⁱ^t, ħ, ħ^ˈ, t, p, p^t)*. In addition to Armenian consonants, here there are *g^y, k^y, q^y (q, ħ, p)*.

The word formation methods of the Mehtishen dialect are common to other dialects of Artsakh. The words included in the vocabulary belong to the Indo-European, Old Armenian dialectal and literary layers. In the Mehtishen dialect, the plural of the noun is formed by the particles *-er, -ner, -ni (-t^r, -üt^r, -üt^h)* and *-q (-p)*. The dialect has seven cases and eight case-forming particles: *-i, -u, -va, -och, -ts, -o || -ö, -a(n) (-h, -nⁱ, -uⁱ, -o^s, -g, -o || -ö, -u(ü))*. The auxiliary verb has the following form: present: *em, es, e || a, enq^y || enq, eq^y || eq, en (t^u, tu, t || u, tüt^p || tüt^p, t^p || t^p, t^u)*, past: *-i, -ir, -er, -inq^y || -inq, -iq^y || -iq, -in (-h, -h^r, -t^r, -hüt^p || -hüt^p, -h^p || -h^p, -h^u)*. The Mehtishen dialect has peculiarities typical of the Artsakh and Khoi dialects, but even today it is considered an independent dialect.

Key words: Multi-attribute qualification, Mehtishenk dialect, word-formation methods, phonetics, grammar.

**ԿՐԿՆԱՎՈՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ
ՍՅՈՒՆԻՔ-ԱՐՑԱԽԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ**

Քումունց Մհեր

ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
գլխաշխատող
mherkumunts@gmail.com

Բանալի բառեր. Սյունիք-Արցախի բարբառային տարածք, բառապաշար, բառակազմություն, կրկնավոր բարդություն, հնչյունափոխություն, բառիմաստ:

Մուտք

Սյունիք-Արցախի բարբառային տարածքի բառապաշարի հարստացման միջոցներից առաջնայինը բառակազմական եղանակն է: Համադրությամբ, վերլուծությամբ և ածանցմամբ ձևավորվող կազմությունները մի քանի անգամ գերակշռում են փոխառություններին և հայերենի այլ տարբերակներից փոխանցված միավորներին:

Նույն կամ տարբեր բառերի միասնությամբ ձևավորվող բաղադրյալ կազմությունները որպես կանոն առաջ են բերում նոր բառանվանումներ, որոնց բաղադրիչները իրար նկատմամբ կարող են ունենալ շարահյուսական տարբեր հարաբերություններ: Այս կարգի կազմությունները հիմնականում չեն մթազնել կապակցման միջոցների դերը: Բարդությունների մի մասը պատրաստի կաղապարներով փոխանցվել է բարբառային բառապաշարին, մի սովորմասն էլ հենց բարբառային տարածքում է ստեղծվել, որոնց գուգահեռները չենք գտնում հայերենի այլ տարբերակներում:

Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարին բնորոշ նման կազմություններն առանձին աշխատանքով չեն քննվել: Բարբառագիտական բնույթի տարբեր աշխատանքներում մասնակիորեն անդրադարձ է կատարվել բառային այդ միավորներին, սա-

կայն, ըստ էության, բացահայտված չեն բարդությունների ձևավորման բոլոր եղանակները Սյունիք-Արցախի բարբառային միավորներում, բաղադրությունների յուրահատկություններն ու նոր հասկացությունների ձևիմաստային արժեքը, որոնցով առանձնանում է բարբառը և շարունակում է զարգանալ:

Նկատի ունենալով հայերենում բարդությունների դասակարգման տարաբնույթ մոտեցումները՝ մենք այստեղ հիմնականում կգործառենք բարդությունների դասակարգման մեջ տիրապետող և բարբառային տարածքի յուրահատկությունները բնութագրող եզրույթները:

Այսպես՝ Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի բարդությունները բաժանվում են երկու մեծ խմբի՝ *վերլուծական* կամ *հարադրական և համադրական*:

Կառուցվածքային առանձնահատուկ եղանակներով պայմանավորված՝ Սյունիք-Արցախի բարբառներում աչքի են ընկնում կրկնավոր հարադրությունները:

Նույն արմատի կրկնությամբ ձևավորվող հարադրությունները առավելապես բնորոշ են բարբառային-խոսակցական տարբերակներին, քանի որ դրանք հիմնականում խոսքի իրադրական ոճում են ծագում: Բարբառային տարածքում այդպիսիք հիմնականում կաղապարավորման տարբեր եղանակով են առկայանում՝ *տանրտանկ-ման/երտանկ (տանու տայ)*, *ափրիս-ցրփէիս (տանու տայ)*, *դրնզրլ-դրնզրլ (անէլ)*, *շաղլի-մաղլի*, *սուս-փուս*, *սօտի-մօտի*, *տուղի-սուղի* և այլն:

¹ Կրկնավոր բարդությունների տեսակները հայ լեզվաբանության մեջ միասնական մոտեցմամբ չեն առանձնացվել ոչ միայն բարդությունների համատեքստում (այս մասին կարելի է տեսնել Առաքելյան **Վ. Դ., Խաչատրյան Ա. Հ., Էլոյան Ս. Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, հատ. I, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1979, էջ 260 (այսուհետև՝ Առաքելյան և այլք 1979)), այլև բառակազմությամբ ստացված կրկնավոր միավորների մեջ (**Մարգարյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՊՀ հրատ., 1990, էջ 55 (այսուհետև՝ Մարգարյան 1990), **Աղայան Է. Դ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1984, էջ 231):

1. Անհնչյունափոխ բաղադրիչների կապակցությամբ կրկնավոր հարադրություններ

Առհասարակ հարադրական բարդություններում կարևորը «բաղադրիչների իմաստային միասնությունն է, բառական մեկ ամբողջական, ընդհանրական իմաստ արտահայտելը»²: Այս տեսանկյունից կարևորում ենք քննել կրկնավորները, ասենք, ոչ թե բայական հարադրություններում, ինչպես *մէչ-մէչ անէլ*, այլ անվանական բարդությունների շարքում՝ աչքի առջև ունենալով մեկ ընդհանուր իմաստով և արմատի կրկնությամբ ձևավորված միավորները, որոնք առաջ են բերում բառաքերականական յուրահատկություններ:

Ըստ խոսքիմասային պատկանելության՝ կրկնավորները ձևավորվում են *գոյականներից՝ թիքսի-թիքսի, թիլ-թիլ, հատ-հատ, ածականներից՝ փիս-փիս, կարճ-կարճ, ուննգ-ուննգ, սէվ-սէվ, կուճի-կուճի, ճօխտ-ճօխտ, թվականներից՝ էրկու-էրկու, դերանուններից՝ հինչ-հինչ, բայանուններից՝ ճօկ-ճօկ, խանչէլ > «1. այրել, ուժեղ տաքացնել, 2. տանջել» խանչ-խանչ (անէլ, կսի) «կսկծից հեկեկալը»³, *մակբայերից՝ թայդի-թայդի, թիրսի-թիրսի*, «1. կտրտված, 2. բաժան-բաժան», *ծօռ-ծօռ, թարս-թարս, թաքուն-թաքուն, դաթ-դաթ, վեր-վեր, ուշ-ուշ, դիքէտ-դիքէտ, առաչ-առաչ, կապերից՝ վիրսի-վիրսի*, ձայնարկություններից՝ *քիշ-քիշ*: Բաղադրիչների գուտ խոսքիմասային պատկանելության բաժանումն այնքան ուշագրավ չէ, որքան իմաստով ու կազմության եղանակով պայմա-*

² Առաքելյան և այլք 1979, էջ 258:

³ Գրաբարում *խանչէլ* «բղավել, գոռալ», *խանչանալ* «ուռչել, փխր.՝ հպարտանալ»: Այս բառերը Գ. Ջահուկյանը նույն արմատի տակ է դնում «գոռալ, հպարտանալ, փքվել» (բրբ. *խայթել*) (**Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասողիկ» հրատ., Ե., 2010, էջ 316 (այսուհետև՝ շՄԲ)), իսկ *խանձալ-ը (խանջալ)* «պարծենալ, պանծալ» առանձին՝ որպես «խանձ» բառից առաջացած (ՇՄԲ, էջ 316)՝ ըստ էության հետևելով Հ. Աճառյանի տեսակետին (**Աճառյան Հ.**, *Հայերեն արմատական բառարան* (4 հատորով, 2-րդ հրատարակություն), Երևանի համալսարանի հրատ., Ե. (առաջին հրատարակությունը՝ 1926-1935, 7 հատորով), 1971-1979, հատ. II, էջ 331-332 (այսուհետև՝ շՄԲ)): Կանխավարկած ունենք՝ *խանչ-խանչ (անէլ, կսի)* բառի հիմքում *աղաչանք* բառն է (հմմտ. է բրբ. *ըղաչանք, խանչանք, խանչանք-խանչանք-դանչանք*):

նավորված կրկնավորների ձևաբանական փոփոխությունը⁴: Փաստորեն՝ կրկնավոր բաղադրություններից որոշները առանձնանում են ոչ միայն նրբիմաստներով, այլև քերականական համակարգում ձևոբերած խոսքիմասային արժեքով:

Ածական, գոյական > մակբայ կօղ «գող, ավազակ» > կօղ-կօղ «գողեգող»:

Գոյական > մակբայ՝ թառանչ > թառանչ-թառանչ (կան), վենդ > վենդ-վենդ, իրես > իրես-իրես (տինել, կան), քուչամ > քուչամ-քուչամ (ինգել, ման կյան), զօլ-զօլ (անել), ճակատ > ճակատ-ճակատ (ճակատ ճրկատի), շարան > շարան-շարան, շարք > շարք-շարք, ծով > ծով-ծով, հափուռ > հափուռ-հափուռ:

Կապ > մակբայ՝ մէչ > մէչ-մէչ (իրեվալ) «երբեմն», բայական հարադրության անվանական մաս՝ *մէչ > մէչ-մէչ անէլ* «բաժանել»:

Թվական > մակբայ՝ մին > մին-մին:

Ածական > մակբայ՝ սաղ > սաղ-սաղ:

Դերանուն > մակբայ՝ սաղ «բոլորը» > *սաղ-սաղ* «ընդամենը» (*Սաղ-սաղ* էդքան ա մընացալ), *քանի-քանի* (նան՝ ածական), *նիրան-նիրան*:

Բայանուն > մակբայ, բայական հարադրության անվանական մաս՝ վագ > վագ-վագ, ծէվ > ծէվ-ծէվ:

Քիչ չեն առանձին և բաղադրության համակազմում խոսքիմասային նշանակությունը պահպանող բարդությունները, որ իմաստաբանական տեսանկյունից երկու հիմքով են առկայանում՝ առանց հավելյալ նրբիմաստի և նրբիմաստով (գորացական)՝ *ածական, մակբայ > ածական-մակբայ՝ գւնն* «հպարտ» > *գւնն-գւնն*

⁴ «Բառակազմական եղանակ» եզրույթը այս դեպքում գործածվում է ընդհանրական առումով՝ առհասարակ բարդ բառեր կազմելու իմաստով (**Աբեղյան Մ.**, *Հայոց լեզվի տեսություն*, «Միտք» հրատ., Ե., 1965, էջ 167): Հետագայում «բառակազմագիտական» հասկացություններին անդրադարձել է Լ. Հովսեփյանը՝ առաջարկելով ստորակարգային հաջորդականություն՝ բառակազմության *տիպ*, որ ներառում է բառերի կազմության տարբեր *եղանակներ*, որոնք իրենց հերթին օգտվում են որոշակի *միջոցներից*, իսկ վերջիններիս կիրառման հետևանքով ստացվում են որոշակի *կառույցներ* (այս մասին կարելի է տեսնել **Հովսեփյան Լ. Ս.**, *Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը*, «Ասողիկ» հրատ., Ե., 2016, էջ 21):

«հպարտ», նրբիմաստով՝ *թսւ՛զսւ* «նոր» > *թսւ՛զսւ-թսւ՛զսւ* «շատ նոր», *բօլ* > *բօլ-բօլ* «առատորեն, առատ» և այլն:

Բառաձևերով հանդիպող կրկնավորները նույնպես շատ են: Բաղադրիչների նույնահունչ չլինելը, մասնիկավորմամբ պայմանավորված, կրկնավորների միավորման քերականական պայմանն է: Այս տիպի կառույցների՝ կրկնավորների համակարգում դասելը չի կարող առկախվել, ինչպես՝ *բախչան բախճին, տօնը տանը, պատը պատին* և այլն: Քերականական իմաստը և մասնիկները՝ ուղղական-տրական կապակցություն, ամբողջովին մթագնած չեն և հանդիսացել են կրկնավորներից մակբայներ ու բայական հարադրության անվանական բաղադրիչներ ստեղծելու կարևոր միջոց: Խոսքի մեջ առավել ցայտուն է սրանց արտահայտած ընդհանրական իմաստը՝ «հարևան, մոտ, կիպ»: Բաղադրիչների կամ նրանցից մեկի թեքված ձևերով կազմությունների՝ որպես բառային առանձին միավորի առավել ցայտուն օրինակներ են, հմմտ.՝ *ծէքը ծէքին* «կանուխ», *ծէքք ծէքքի, խօսկ խօսկի, քէթ քրթի, քամակ քրմակի, կօնդ* «ծույլ» բառից՝ *կօնդի-կօնդի (տալ, կսլ)* «հազիվ, ծանր քայլել»:

Բայական մասնիկներով ձևավորված կրկնավորներում, այդուհանդերձ, քերականական դերը մթագնած է՝ *կըրել* > *կըրի/է-կըրի/է (անէլ)* «շատ բաներ հաճախ կրել տանել», *խըլել* > *խըլէ-խըլէ (անէլ)* «հափշտակել», որոնցում, կարծում ենք, *ի*-ն հրամայական հարացույցի մնացուկ է:

2. Կրկնության ձևավորման իմաստաբանական միջոցները

Մաստկություն, գորացական երանգ արտահայտելու համար հաճախ բառերը կրկնվում են, հմմտ.՝ *անջախ* «հազիվ» > *անջախ-անջախ* «հազիվհազ, մեծ դժվարությամբ», *յէքա* «մեծ», *յէքա-յէքա* «շատ ու շատ, շատ մեծ», այդպես և՝ *դինջ-դինջ, դէհա-դէհա, դըլէ-դըլէ, դամլա-դամլա (դամլա-մամլա), դրոի-դրոի (անէլ)* «չարչարել», *յաման-յաման, տընգի-տընգի, ըռանգ-ըռանգ*:

Կան կրկնավոր բարդություններ, որոնց բաղադրիչը կրկնությունից դուրս գործածության նույն իմաստը չունի: Այդպիսիք առհասարակ բնորոշ են հենց Սյունիք-Արցախի բարբառային տարած-

քին: Այսպես՝ *hon* 1. «ուռենի, ուռենու կապ», 2. «ողնաշար» համա-
նունների իմաստներից ոչ մեկը առկա չէ *hon-hon* 1.«ճկված, ոլոր-
ված, 2. «առատ», 3. «ընդարմացած», *hon-hon* (անել) «կոպիտ» ձևով»
կրկնավորներից ոչ մեկում: Կարծում ենք՝ *hon-hon անել* (այլև՝ *hon
անել*) բայական հարադրության («դժվարությամբ մտցնել, կոպիտ
կերպով մի բան շարժել») իմաստը ձևավորվել է «ուռենու ճյուղը
ճկել» հասկացության *նմանությունը*, հմմտ.՝ *հիլօր-հիլօր* (անել)
«ոլոր(ել)»: Այս շարքում ենք ընդգրկել նաև Գորիսի բարբառում
գործառվող *ճըլուլ-ճըլուլ // ճօլօլ-ճօլօլ* բարդությունը, որ նշանա-
կում է «փունջ, փունջ-փունջ»: Չկարողացանք պարզել *ճըլ(ուլ) //
ճօլ(օլ)* հիմքի ծագումն ու իմաստը: *Ճըլ(ուլ)* «փունջ» իմաստով բառ
հայտնի չէ, իսկ *ճօլ-ճուլ-չուլ* «լաթ», *ճօլ* «փոս», *ճօլի* «անհաճո անձ-
նավորություն», *ճյուղ* և այլն իմաստներով բառի հետ, թվում է,
առնչություն չունի: Վստահ չենք նաև, որ այն, հնարավոր է, *ճիլ*
բառի իմաստներից է ձևավորված՝ «արմտիք, խոտի պինդ արմատ,
բարակ մանրաթելերից կազմված», *կօլտ-կօլտ* (*կօլտում* (անել
բառից) «ախորժակով, ազահաբար խմել», *թսւյլիլ-թսւյլիլ* (անել) և
այլն:

Բայանուն արմատներից ձևավորված շատ բառեր հարա-
դրության մեջ բոլորովին նոր իմաստ են առաջ բերել՝ *քաշ(ել) >
քաշ-քաշ* (անել) «1. քաշ տալ, 2. զգվտովել, 3. ձգձգել», *վիճի* (հավա-
նաբար՝ *վեճ* բառից կամ *բնաձայնությունից*)՝ *վիճի-վիճի* (անել)
«արագ-արագ շատ խոսել», *ճաք-ճաք* (ինել) «շատ լացել», *պերսին-
պերսին* «հատուկ, հատ առ հատ»:

Նոր իմաստներով է ձևավորվել *հա* «անընդհատ» մակբայով
և տարբեր արմատներով կրկնավորների երկու տեսակ:

Առաջիններում *հա*-ն կցվում է կրկնվող բաղադրիչների
սկզբնամասում, և կրկնվող բաղադրիչները կազմությամբ բարդ են՝
հնայոն-հնայոն (*հա-բույն*)՝ *հնայոն-հնայոն* (*ինգել*) «դեսուդեն
ընկնել», *հակալ-հակալ* (*հա-կալ* (կալել «վերցնել, բռնել»)) «մեկի
հետևից ընկնելով հալածել, քշել», *հակու-հակու* (կարծում ենք
կազմված է *հա* և *գիլ* «զլոր», բրբ. *կուլ* բառի վերջնահնչունի անկ-

մամբ, հմմտ.՝ < *հակուլ-հակուլ*՝ «երերալով գնալ» (*հակու տալ* «կա-
ղել»):

Երկրորդներում *հա*-ն⁵ ընկնում է կրկնվող բաղադրիչների
արանքում, ինչպես՝ *վրբ հա վրբ* «անընդհատ», *ջան հա ջան* «շատ
լավ», (ինել) «շատ եփվել», *կան հա կան* «ձգձգվել», *դէ հա դէ* և այլն:
Կրկնավորներում ունեցած իմաստային ու կապական դերից
կարելի է ենթադրել, որ *հա*-ն հին հայերենի *յար* «կից, նման, հար-
մար» հիմքի (*ar-) նախահայերենյան հիմնական իմաստով
(«շարժվել, աճել») գործավող տարբերակն է՝ *ր*-ի անկումով,
հմմտ.՝ հայ. *արար* || հուն. *ἄραρε* «արել է, կատարել է»: Ձևիմաս-
տային յուրահատուկ զարգացմամբ նախ դարձել է մակբայ՝ հա
«անընդհատ», ապա՝ կրկնավորներ կազմելու յուրահատուկ միջոց:

Սովորական անհնչյունափոխ բաղադրիչներով ձևավորված
կրկնավորների համեմատությամբ՝ որոշ բարդություններում
առաջնային չէ գորացական երանգը, նույն հասկացության սաստ-
կականության արտահայտմանը փոխարինում է բոլորովին նոր
իմաստ ոճական միջոցներով՝ *համեմատությամբ*, ինչպես՝ *կուլ-
կուլ* «գայլի պես ագահաբար ուտել», *բուջի* // *բիջի* «գեռուն, բզեզ»,
բայց **բուջի-բուջի** «դանդաղ, կամաց-կամաց», իմա՝ *բուջի-բուջի
անել* «միջատի պես դանդաղ-դանդաղ մի բան կառուցել», *ժանգ-
ժանգ (անել, ինել)* «թնձկալ, լալ», *համարանությամբ՝ գիլաի-գիլաի*
«հատ-հատ» իմաստի նմանությամբ՝ «1. մեկ առ մեկ անել,
2. առանձնացնել»: *խուրում* «խոտի խորձ», այստեղից՝ *խուրում
անել* «1. հնձած խոտից խորմներ պատրաստել» *խուրում-խուրում*
(անել) «ագահաբար ուտել» (նաև *խուրում անել*-ի փոխաբերական
իմաստը): *դրոի* համանուններից ունենք «1. առույգ», 2. «հում»
իմաստները, նրանով կազմված կրկնավորը՝ *դրոի-դրոի* (անել,
ածել), նշանակում է «չարչարել», որ, կարծում ենք «առույգ» իմաս-
տից լծորդված նոր բառ է: Քանակապես շատ են բնաձայնական
(*նմանաձայնությամբ*) ծագմամբ բաղադրիչներով կրկնավորները,
ինչպես՝ *ցայիլ-ցայիլ* || *գայիլ-գայիլ* (անել) «շաղակրատել»-ը բարդու-
թյան կազմում նոր հասկացությամբ՝ «շան պես հաչել» > «շատա-

⁵ Առաքելյան և այլք 1979, էջ 263:

խոսել», *թիթի-թիթի* (այլև՝ *թըթը-թիթի անել*) «մրսել, սրսթարթալ», *ծուկ-ծուկ* (անել), «գաղտագողի նայել, հետապնդել, ճի-ճի «ձպուռի հանած ձայնը», բայց՝ *ճիճի* «շատախոս», այստեղից՝ *ճի-ճի անել* «շատախոսել», *ճըպ-ճըպ* «աչքերի ձպացնելը», այստեղից՝ *ճըպ-ճըպ* «տեսողությունից թույլ, մթության մեջ կուրացող»:

Բառի իրենով բարդվելը, լինելով բառակազմական ակտիվ եղանակներից մեկը, օժտված է նաև բառապահպանման հնարավորություններով: Շատ արմատներ կամ բառային տարբերակներ պատմական շրջանում տարբեր պատճառներով դուրս են մնացել բառապաշարից և պահպանվել են բարդության կազմում, դրանից դուրս՝ առանձին գործածությունը բացակայում է: Այսպես՝ *թըփըր-թըփըր* բառի ձևավորման շուրջ երկու կարծիք կա՝ 1. *թըփըր-թըփըր* (այլև՝ *թըփըր-թէփոռին անել, թըփոռէփին անել*) «թպրտալ» բառի հիմքում, թվում է, *փետուր*, բարբառում՝ *թէփուր* բառն է: 2. Առավել հավանական ենք համարում *թիռ* արմատի կրկնությանը ձևավորված լինելը: Հ. Աճառյանը վկայում է «թռչկոտել» իմաստով *թըռպըռտալ* բայը «թիռ» բառահոդվածում⁶: Արտաքնապես նման (հնարավոր՝ *թըռ-փըր* > *թըփըր*) բառ Սյունիք-Արցախին ծանոթ չէ, սակայն *թըփըր-թէփոռին ինել* բարդությունը արտահայտում է նաև «ցավից, մորթվելուց թպրտալ» իմաստը: Եթե այս վարկածը ճիշտ է, ապա հնարավոր է, որ (*թպուրտ* >) *թպրտալ* բառը բարբառային տարբերակից է առաջացել (*պատկերավորությամբ* ձևավորված կազմություն, հմմտ.՝ *թփոտալ*⁷):

Թուփ անել «հավաքել» հարադրության *թուփ* արմատից է *թուփ-թուփ* (անել) «կամաց-կամաց հավաքել, հավաքել» կրկնավորը⁸: Հետաքրքրական է, որ հ.-ե. **tyō-* (*-rho*) «ուռչել, խոնել, կուտակել» և այլ հասկացություններից հայերենում «թուփ» երկրորդական իմաստն է տարածված: Այնինչ *թուփ* արմատով հարադրա-

⁶ ՀԱԲ II, էջ 184:

⁷ **Մալխասեանց Ս.**, *Հայերեն բացատրական բառարան*, Հայկական ՍՍՌ Պետական հրատ., հատ. I-IV, (1944 հատ. I-III, 1945 հատ. IV), հատ. II, Ե., 1944, էջ 132:

⁸ Առաջին տպավորությամբ «թուփ» բառանվան պատկերավորությամբ ձևավորված կազմություն է «թուփի պես հավաք»:

կան բայի և կրկնավորի արտահայտած իմաստներից պարզ է դառնում, որ միայն Սյունիք-Արցախում է հանդիպում բնիմաստը: Հնարավոր հարցերը չեզոքացնելու նպատակով ավելորդ չենք համարում *թուփ*-ը գուգահեռել թյուրք. *top-la-mak* «հավաքել» բառին (ենթադրվում է *top* «1. կլոր առարկա, գունդ, 2. ամբողջություն» բառից առաջացած լինելը⁹): Վերջինիս համար բերվում է *tol* (*-lp* ածանցով¹⁰ > *tod* (to-(i)l))¹¹ հիմքը «լցնել, լրացնել»: Այս ամենից բարբառախումբն ունի *թօփ* «գնդակ, թնդանոթ» և այլ իմաստներով բառը, որ չպետք է նույնացնել *թուփ* (*անէլ*) «հավաքել» բառին¹², որի անվանական նշանակությունից է բարբառային տարածքի *թուփ*-ը՝ «համայնք, գերդաստան, ընտանիք»: Ինչպես հնչյունական, այնպես էլ իմաստային առումով հանդիպադրված բառերը ձևիմաստային տարբեր զարգացումներ¹³ են ունեցել, և ինչպես Հ. Աճառյանն է նկատում՝ թյուրքական ձևերը «գործ չունին մեզ հետ»¹⁴:

Հնդեվրոպական բնիմաստը պահպանվել է նաև *թօլ* արմատում, որից բարբառախումբում առկա է *թօլ-թօլ* (*անէլ, ինէլ*): Ըստ էության՝ այն հայերենի *թող* «թողնել, թույլ տալ, ներել» արմատի բարբառային տարբերակն է (հմմտ.՝ *թօղ անէլ, թօղ-թօղ անէլ, թօղ ինէլ* և այլն, սրանց էլ հմմտ.՝ *թոյլ* > *թնլ անէլ* «թողնել») որ ուղիղ

⁹ **Eyuboğlu İ.**, Türk dilinin etimoloji sözlüğü, ikinci, II bs., (I bs, 1988), Sosyal yayınlar, İstanbul, 1988, s. 164-165.

¹⁰ www.nisanyansozluk.com (kelime: top).

¹¹ **Севортян Э. В.**, Этимологический словарь тюркских языков (6 книга, 1974-2003): Обще тюркские и межтюркские основы на буквы «В», «Г» и «Д», АН СССР, Ин-т языкознания, «Наука», Москва, 1980, с. 258.

¹² Ա. Մարգարյանը *թուփ անէլ, թօփ անէլ* բառերը դնում է փոխառությունների ցանկում, սակայն չի նշում փոխատու լեզուն (**Մարգարյան Ա.**, *Գործիքի բարբառը*, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1975, էջ 516 (այսուհետև՝ Մարգարյան 1975)), իսկ *թօլ անէլ, թօլ-թօլ անէլ* բառերը՝ բարբառայինների մասում (Մարգարյան 1975, էջ 293): Անշուշտ, Ա. Մարգարյանի նպատակը չի եղել որոշելու դրանց ծագումը, բայց դժվար չէր նաև *թուփ* // *թօփ*-ի աղբյուրը նշել թյուրքերենը, ինչպես նշել է *թօփ*-ի («գնդակ») համար: Իրավացիորեն նկատել է դրանց տարբերությունը:

¹³ Թյուրքական համանուններն ու ձևիմաստային տարբեր կազմությունները կարելի է տեսնել՝ Bəy Hadi, *Arin sözlüyü*, Təbriz, 2010, cild I, s. 6725-6728.

¹⁴ ՀԱԲ II, էջ 211:

կրում է հ.-ե (*tel- < *tolu-¹⁵) «տանել, կրել, փոխադրել, համբերել»¹⁶ ընդհանրական և հիմնական իմաստները:

Բարդությունից դուրս ինքնուրույն գործածություն չունեցող արմատներով է ձևավորվել նաև թօռ-թօռ «1. փուշ, ուռած, 2. թարմ»: Գ. Ջահուկյանը թօռ բառի վկայությունը բերում է Սյունիք-Արցախի բարբառային տարածքից՝ որպես հ.-ե. *ter-, *teru- «թույլ, քնքուշ» հիմքից մնացուկ¹⁷: Այս հիմքից են հայերենի թուշ, թուռ, թուրծ բառերը¹⁸:

Լօք-լօք անել (լօք տալ¹⁹) բառի արմատը Հ. Աճառյանը գուգահեռում է հ.-ե. «*lok- ցատկել» հիմքի²⁰: Լօք-լօք հարադրությամբ գործածվում է կապակցության մեջ «1. ցատկոտել, 2. թռչկոտել, 3. սպառնալ»:

Լամփա // լօփա «1. փոքր գերան, 2. առաստաղը կապող գերանները միացնող փայտի ձողեր, որոնց վրա փոփում է հարդ կամ եղեգ: Այդ ձողերը սովորաբար պատրաստում են կեղևահան եղած, կողքերը տաշած ձողերից (ծօղ), որպեսզի շուտ չորդնեն, իսկ հետագայում՝ տախտակներից»: Կարծում ենք՝ այն առնչակցություն ունի հ.-ե. *leubh- (*leup-, *leub-) «կեղևահան անել, հանել, մաշկել, վնասել» արմատի հետ՝ *leubh-a-: Ցեղակից լեզուներից գուգահեռներն են՝ հին իսլ. -leypa «կողով, զամբյուղ, փայտեղեն շինվածք», լատ. liber «բուսաթել, տրցակ», ալբ. labë «կեղև, կոճղակճեպ», հին իռլ. luib «խոտ» և այլն²¹: Թերևս հայերենի ժառանգած իմաստների փոխաբերումից է լօփա-լօփա (տրխտրկնի) «լայն, հաստ», լօփա-լօփա (խօսալ) «մեծ-մեծ խոսել»:

Անհայտ ծագմամբ են կամ բառաքննական այլ մոտեցում են պահանջում զիլբա-զիլբա (անել) «մաս-մաս, պատառ-պատառ»,

¹⁵ ՀՄԲ, էջ 270:

¹⁶ Հմմտ. Pokorny J., Indogermanisches etymologisches Wörterbuch, München: Francke Verlag, Bern, 1 bend, 1959, f. 1060-1061 (այսուհետև՝ Pokorny 1959).

¹⁷ ՀԲՆ, էջ 290:

¹⁸ Աղայան 1974, էջ 71-74:

¹⁹ «1. Մեկի կամ մի բանի վրայով լայն քայլով անցնել, ցատկել, 2. ցատկել»:

²⁰ Աճառյան, ՀԼՊ I, էջ 120:

²¹ Pokorny 1959, f. 690-691.

մուհ-մուհ «ապերախտ, դժգոհ», *հրրէթ-հրրէթ (անէլ)* «աչքի ընկնել տալ», *խունդրուզ-խունդրուզ անէլ* «շատ կամ հաճախ տոճկի տալ»:

2. Հնչյունափոխված բաղադրիչներով կրկնավոր բարդություններ

Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարում առավելապես շատ են հնչյունափոխ կրկնավոր բարդությունները, ինչպես՝ *մարթ-մուրթ, ձէն-ձուն, կուճի-մուճի, ազիզ-պիզիզ, ալլախ-մալլախ, յարա-մարա, ժրիւրը-մրիւրը* և այլն: Սրանք իրար են կապակցվում հնչյունափոխական մի շարք ձևերով, ինչպես՝

Կրկնավոր անհնչյունափոխ ձևերին զուգահեռ՝ երկրորդ բաղադրիչի հնչյունի փոփոխությամբ, հմմտ.՝ *սո՛ւրո՛ւն- սո՛ւրո՛ւն > սո՛ւրո՛ւն - մո՛ւրո՛ւն, պա՛ւրա՛կ-պա՛ւրա՛կ > պա՛ւրա՛կ-մա՛ւրա՛կ, մանդրր-մանդրր > մանդրր-մունդրր, հարայ-հարայ > հարայ-հուրայ* և այլն:

Համեմատած կրկնավոր անհնչյունափոխ բարդությունների՝ հնչյունափոխ կրկնավորները առավելապես արտահայտում են ոչ թե զորացական իմաստ, այլ վերաբերմունք առարկայի կամ երևույթի նկատմամբ, մատնանշում են առարկաների և երևույթների ընդհանրությունը, բազմակիությունը, ամբողջությունը, մոտավորությունը, այլն՝ արհամարհական, նվազական, փաղաքշական²² և այլ²³ իմաստներ՝

²² Մարգարյան 1990, էջ 81:

²³ Այստեղ չենք ընդգրկել այն բառերը, որոնցում երկրորդ բաղադրիչը, հնարավոր է, այլ բառով կամ իմաստով է մեկնաբանվում. դժվար է որոշվում՝ նույն ծագմամբ բառերի հարադրությամբ են ձևավորվել որպես անվանական բարդություններ, թե՞ նույն բառի հնչյունափոխ տարբերակներն են, ինչպես՝ *այագ-բայագ* (անէլ), որտեղ, կարծում ենք, *բ*-ն *բէ* ժխտական մասնիկն է, հմմտ.՝ *խաբար-բէխաբար, նամուս-բէնամուս*: Այս տիպի կազմությունները իսկապես խնդրահարույց են և այլ քննություն են ենթադրում, հմմտ.՝ *ազիզ-բիզիզ* «սիրելի», *հավ-ճիվ, հիլօր-պիլօր* «ծուռումուռ», հմմտ.՝ *հիլօր-հիլօր* (կարելի է ենթադրել, որ երկրորդ բաղադրիչը *պիլօր* «կլոր», *պիլօրէլ* «կլորացնել, շրջել» բառն է), *կըլտի-պըլտի, կըծի-պէծի > կըծըպէծի* (հիմնականում մի շեշտով է գործածվում՝ *կըծըպէծի՛ն*, իսկ

1. Երկրորդ բաղադրիչի բաղաձայնի վերածումը *ւ*-ի՝ *պանման, տուննը-մուննը, խօտ-մօտ, ծառ-մառ*:

2. Երկրորդ բաղադրիչի բաղաձայնի վերածումը *բ*-ի՝ *սիլի-բիլի, գիզի-բիզի, դրոնի-բրոնի*:

3. Երկրորդ բաղադրիչի բաղաձայնի վերածումը *փ*-ի՝ *սուսփուս, սուսիկ-փուսիկ, լոթի-փոթի*:

4. Երկրորդ բաղադրիչի բաղաձայնի վերածումը *ջ*-ի՝ *մուլի-շուլի* (նաև՝ *շուլի-մուլի*), *դավի-շավի*:

5. Երկրորդ բաղադրիչի առաջին բաղաձայնը դառնում է *վ*՝ *տիժի-վիժի, թըռը-վըռի*:

6. Երկրորդ բաղադրիչի բաղաձայնի վերածումը *ս*-ի՝ *մատաղ-սատաղ (անէլ)* «փաղաքուշ», *կոկլիկ-սոկլիկ, պարապ-սարապ*:

7. Երկրորդ բաղադրիչի առաջին երկու հնչյունների փոփոխությամբ՝ *ճիլի-մօլի* «չկողմնորոշված», այստեղից՝ *ճիլի-մօլի (ճիլիմօլի) անէլ* «կասկածել, չկողմնորոշվել», *դըժի-բիժի (դըժալ, դըժդըժալ* «գոռգոռալ» բառից), *հաջի-բուջի* (անէլ) «նոր-նոր քայլել, անվստահ քայլել, 2. փխբ. կասկածանքով կամ վախվորած մտենալ», *հայ-բույ (քիցել), ժրխըռ-մէխըռ «մոլախոտ», լրկուտ-մակուտ*²⁴:

8. Երկրորդ բաղադրիչի փակ վանկի ձայնավորի *ու*-ի վերածում՝ *ճար-ճուր, մարթ-մուրթ, դըլդի-դուլդի*:

9. Առաջին բաղադրիչի նախաշեշտ ձայնավորի փոփոխությամբ՝ *դըլի-դալի (դալին* «խիտ բառից»), *ըլըվ-ալալ, դալի-դօլի* (այլև՝ *դալի-դօլու*):

10. Առաջին բաղադրիչի հնչյունի փոփոխությամբ՝ *քըս-փըս (քըսըփըս անէլ), քիսի-փիսի*, կամ անկմամբ՝ *ակաս-պակաս* և այլն:

Երկրորդ բաղադրիչը ինքնուրույն գործածություն ունի՝ *պէծ* «կրակից արձակված փայլ, վառվող փոքր մոխիր», *կէսատ-պըռատ* և այլն:

²⁴ Մրանցից որոշները ունեն հնչյունական այլ տարբերակներ:

Կան փոխառություններ, որոնց բաղադրիչների նույնական կամ տարբեր լինելը վիճահարույց է՝ *փըլան-փըստան, մահրում-մադրուն, հայիլ-մայիլ*:

Հնչյունափոխ կրկնավորները չեն սահմանափակվում նշված ձևերով, դրանք երբեմն զանազան տարբերակներ են ունենում ոչ միայն բարբառային տարածքում, այլև խոսվածքներում, ենթախոսվածքներում:

3. Կրկնավոր բարդությունների ձևավորման այլ եղանակներ

Հայերենում տարածված է կրկնավորների մի տեսակ, որտեղ բարդության առաջին բաղադրիչի կամ նրա սկզբնամասի վերջին բաղաձայն հնչյունը փոխվում, դառնում է *ս, փ* կամ *սյ*, ինչպես՝ *կաս-կարմիր, լեփ-լեցուն, նոփ-նոր, շիփ-շիտակ, ճեփ-ճերմակ* և այլն: Կրկնավորների կազմության այս միջոցը գրեթե բացակայում է բարբառախմբում, եղածներն էլ, կարծում ենք, այլ տարբերակներից են ներթափանցել, ինչպես՝ *լափ-լսիվ*, կամ դրանց համաբանությամբ են ստեղծվել՝ *տափ-տոշկա, թսնի-թսննուց* և այլն: Բարբառային տարածքում նաև չեն հանդիպում գրաբարում տարածված նախդրավոր կրկնավորները: Դրանք վերածվել են համադրական իսկական բարդությունների՝ *տարի-տարի // տարէստարի < տարի ըստ տարի, տուն-տուն // տընըստուն, տընըտուն > տուն ըստ տուն // տուն ի տուն* և այլն: Հետաքրքրական է, որ կրկնավոր որոշ բարդություններում նախդիրի բացակայությամբ հանդերձ առկա են նախդիրների արտահայտած *ժամանակի, տեղի, չափի, մասի* նրբիմաստները, հմմտ.՝ *թել առ թել > թիլ-թիլ*, օրինակ՝ «Էտ ջեմբերը թիլ-թիլ հըվըքիլավ էմ, սարքալ» (*թել առ թել*), *երես առ երես*, «Իրէս-իրէս խուսացալ-պըրծալ էնք» (*երես առ երես*), *խաղ առ խաղ > խաղ-խաղ*՝ «Կօվը մորթալ էմ, խաղ-խաղ բաժին ըրալ» (ըստ ոսկրի մասերի), *քիչ առ քիչ > քիչ-քիչ*, սրա համաբանությամբ՝ *խըրէզ-խըրէզ*՝ «Վեր սաղ դո՞ւզ ինի, էս տօնը նօրից *խըրէզ-խըրէզ* սըրքելու էմ» (*փոքր առ փոքր, քիչ առ քիչ, կամաց-կամաց*), այդպես և՝ *ծէլ-ծէլ // ծիլ-ծիլ, կաթ-կաթ, մին-մին, կէնդ-կէնդ, կապէկ-կապէկ* և այլն: Ի նախդիր արտահայտած իմաստով կրկնավորների հիմ-


նական մասը համադրական ձևերի է վերածվել *ը*-ի կապակցմամբ՝ *ի > ը*, հմմտ.՝ *ծայր ի ծայր > ծէրը-ծէրին* հըսցընէլ, *քեզ ի քեզ > քեզ-քեզ > քեզըքեզ*, *վեր ի վեր > յեր-յեր > յերըյեր*, *պատ ի պատ > պատ-պատ > պատըպատ* (*կսն*): Բարբառային տարածքում *հալ* բայանունը առանձին գործածություն է գտնում հարադրության մեջ՝ *հսն կյսն* «1. հալվել, 2. շատ եփվել», *հսն-հսն ինէլ* «շատ հալվել, եփվել», այլև առանձին՝ «*Հսնը* սըքըսալ ա, հէսա սէլ ա ընէլու»: Արդեն իսկական բարդության վերածված *հըլվըհալ* բառը՝ «հալոցք», կարծում ենք, նույն արմատով՝ *հալ-հալ*, և *ու (>վ)* շաղկապով բարդություն է, չնայած Ա. Մարգարյանը զետեղում է նախդրավոր բարդությունների մեջ²⁵:

Կան բարդություններ, որոնք կազմված են նույն բառի կըրկնությամբ և երկրորդ բաղադրիչի ածանցական՝ *գումփ-գումփալի* «դղրդունով» (*գըմփգըմփալի*), և բարդ կազմությամբ՝ *կէշ-կիշսնտն* «տգեղ»: Կարծում ենք՝ սրանք կրկնավորների շարքում են գորացական իմաստ արտահայտելու հիմքով:

Ավարտ

Սյունիք-Արցախի բարբառային տարածքի բառապաշարը հարուստ է կրկնավոր հարադրություններով, որոնց քննությունը կարևոր է ոչ միայն բարբառային բառապաշարի մասին ընդհանուր պատկերում ձևավորելու, այլև բառապաշարի զարգացման միտումները ուղենշելու համար: Կրկնավոր բարդությունները առանձին աշխատանքով չեն քննվել: Ըստ մեր կողմից քննության առնված բառամիավորների՝ կրկնավոր բարդությունների *քանակական և տեսակարար* կշիռը հետևյալն է (շուրջ 160 բառի շրջանակում)՝ գծապատկեր 1:

²⁵Մարգարյան 1975, էջ 258:



160 բառ

■ Հնչյունափոխ

■ Անհնչյունափոխ

■ Այլ միջոցներով ձևավորված կազմություններ

РЕЗЮМЕ
СПОСОБЫ ОБРАЗОВАНИЯ СЛОЖНЫХ СЛОВ С
ПОВТОРЯЮЩИМИСЯ КОМПОНЕНТАМИ НА ДИАЛЕКТНОМ
ПРОСТРАНСТВЕ СЮНИК-АРЦАХ

Кумунц Мгер

Словообразование является одним из первичных способов обогащения лексики диалекта Сюник-Арцах. В диалекте выделяются повторяющиеся сочетания, которые в основном бывают с чередующимися звуками и без чередования. Количество повторяющихся сочетаний связанных нечередующимися компонентами больше, чем с чередующимися (черед. 44%, нечеред. 52%, сочетания по другим методам 4%). Для формирования сложных слов с повторяющимися компонентами важное значение имеет семантический признак. Около $\frac{1}{4}$ повторяющихся сочетаний приобрели новый смысл, который не вытекает из значения компонентов новое значение приобрели сложные слова с повторяющимися компонентами с непрерывным наречием ха (հա), и различными корнями. Много корни и лексических вариантов с течением времени по разным причинам вытеснились из лексики и сохранились лишь в составе сложных слов с повторяющимися компонентам, а вне этих сочетаний самостоятельно не применяются: *тыпыр-тыпыр, туп-туп, тол-тол, тор-тор, лок-лок, лона-лона* (թրվրր-թրվրր, թվււ-թվււ, թօլ-թօլ, թօռ-թօռ, լօր-լօր, լօւի-լօւի). В некоторых сложных словах индоевропейского происхождения они сохранили значения протоармянского языка.

Ключевые слова: Лексика Сюникско-Арцахского диалектного ареала, повторяющихся сочетаний, семантический признак, слова индоевропейского происхождения.

SUMMARY
THE WAYS OF FORMATION OF REDUBLICATIVES IN
THE SYUNIK-ARTSAKH AREA
Kumunts Mher

One of the means of enriching the vocabulary of the Syunik-Artsakh dialect area is the word formation method. Among them, in the dialect area, the reduplicatives stand out, which are mostly with or without sound interchanges. Regarding components without sound interchanges the reduplicatives are more in number than the components with sound interchanges (with sound interchanges: 44%, without sound interchanges: 52%, formations by other means: 4%). The semantic feature is important for the formation of the reduplicatives. About $\frac{1}{4}$ of the reduplicatives has acquired a new meaning that does not derive from the meaning of the components. New meanings have been formed with the adverb *ha* (*hu*) "constantly" and the reduplicatives having different roots. Many roots or word variants have been left out of the vocabulary for various reasons in the historical period and have been preserved in reduplicatives, they have no independent use without them: *”typyr-typyr, top-top, tol-tol, tor'-tor', loq-loq, lop'a-lop'a (թըփըը-թըփըը, թուփ-թուփ, թօլ-թօլ, թօռ-թօռ, լօք-լօք, լօփա-լօփա) etc”*. Proto-Armenian meanings have been preserved even in some complexities of Indo-European origin.

Key words: Vocabulary of the Syunik-Artsakh dialect area, repeated combinations, semantic feature, words of Indo-European origin.

ԲԱՌԱՆՎԱՆՈՂԱԿԱՆ ԵՎ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔԻՐ
ՈՐՈՇ ՁԵՎԵՐ ԱՐՑԱԽԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Բառնապան Ջեմմա

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ
ավագ գիտաշխատող
Բ.Գ.Թ., դոցենտ
barnasyanjemma@mail.ru

Ճանաչված բարբառագետ Ա.Ղարիբյանն իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ հետաքրքիր դիտարկում է անում՝ նշելով, որ Ղարաբաղի տարածքում գործառում են երկու բարբառներ՝ հյուսիսային՝ Ղարաբաղի և հարավային՝ Հաղրութի: Դրանք աստիճանաբար միախառնվել են, և գերակշռություն ստացել է Ղարաբաղի բարբառը, որը «կլանել» է Հաղրութի բարբառի մեծ մասը՝ հաղորդելով մնացող մասին իր հիմնական գծերից շատերը: Դրա հետևանքով ստացվել է այժմյան Հաղրութի բարբառը, որ շատ գծերով նման է Ղարաբաղի բարբառին, բայց պահպանում է նաև իր սեփական առանձնահատկությունները: Ի դեպ՝ լեզվաբանը փաստում է, որ Հաղրութում Ղարաբաղի բարբառով խոսելը համարվում է քաղաքավարի ձև¹:

Ակադ. Գևորգ Ջահուկյանն իր «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ հայերենի բարբառների Արևելյան խմբակցության – Ում ճյուղի մեջ է խմբավորել Ղարաբաղի բարբառն իր ենթաբարբառներով ու խոսվածքներով՝ ըստ իր ընդունած բազմահատկանիշ դասակարգման: Այդ աշխատանքում Արցախի տարածքի խոսվածքները խմբավորվել են՝ որպես Ղարաբաղ-Շամախի կամ *ձայր հյուսիսարևելյան միջբարբառախումբ*: Այդ շարքում են ներկայացված Ղարաբաղի և Հաղրութի բարբառները²:

¹ Տե՛ս Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 232:

² Տե՛ս Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 135:

Հաղորութի բարբառին է նվիրված բանագետ Ա. Պողոսյանի ուսումնասիրությունը³:

Հաղորութի բարբառի համառոտ նկարագիրը բերվում է նաև Ա.Գրիգորյանի «Հայ բարբառագիտության դասընթաց»-ում: Ըստ Գրիգորյանի՝ Հաղորութի բարբառով են խոսում նաև Մարտունու շրջանի, ինչպես նաև Շուշիի ու Մարդակերտի շրջանների մի քանի գյուղեր: Ա. Գրիգորյանը նշում է, որ թեև Հաղորութի բարբառը կրել է Ղարաբաղի բարբառի ուժեղ ազդեցությունը, բայց և այնպես մնացել է ինքնատիպ⁴: Այդ իրողությունն է փաստում նաև Արցախի խոսվածքներին նվիրված աշխատության հեղինակ Կ. Դավթյանը: Իր ուսումնասիրության մեջ Արցախի բարբառային ամբողջական պատկերը ներկայացնելով՝ Կարո Դավթյանը նշում է, որ Հաղորութի բարբառը հյուսիսից հարում է Ղարաբաղի բարբառին, իսկ հարավից՝ Մեղրու և Ղարադաղի բարբառներին: Շատ են փաստերը, որ Ղարաբաղի և Հաղորութի բարբառները վաղ անցյալից ունեցել են փոխադարձ ազդեցություններ և ըստ Կ. Դավթյանի՝ գերակշռում է հյուսիսից հարավ ազդեցությունը՝ Ղարաբաղի բարբառի գերակայությամբ⁵: Իր ուսումնասիրության մեջ Արցախի այդ երկու խոսվածքների հնչյունական ու ձևաբանական շատ հատկանիշների նույնականությունը ներկայացնելով հանդերձ՝ հեղինակն ընդգծում է առկա որոշ էական տարբերություններ:

Քննության առնենք Արցախի խոսվածքներում գործառող բառանվանական և ձևաբանական (դերանվանական) որոշ հետաքրքիր իրողություններ՝ ներկայացնելով բարբառագիտական, ազգագրական մենագրությունների և ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի իբարբառագիտության բաժնում կուտակված խոսվածքային միավորների գրառումների մատուցած նյութերը:ր

Հաղորութի բարբառի ամբողջական ուսումնասիրության հեղինակ Ա. Պողոսյանը հակված է պատմական Սյունիքի տարածքում գործառող խոսվածքները դիտարկել որպես միջբարբառ՝ Ղա-

³ Տե՛ս Ա. Պողոսյան, Հաղորութի բարբառը, Ե., 1965:

⁴ Տե՛ս Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, էջ 474:

⁵ Տե՛ս Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966, էջ 234:

րաբաղի բարբառի լեզվական իրողությունների գերազանցությամբ⁶: Հաղործի բարբառը անկատար դերբայը կազմում է *ս-ով*, այսինքն՝ պատկանում է հայ բարբառների Ս ճյուղին (ըստ ձևաբանական դասակարգման): Նկատելի է, որ Հաղործի գյուղերի խոսվածքներում նույնպես որոշակի տարբերություններ կան: Ըստ մեր ձեռքի տակ եղած նյութերի՝ ներկայացնենք Հաղործի և Ղարաբաղի խոսվածքներում նկատելի նմանություններն ու տարբերությունները դերանվանական համակարգում:

* Հայտնի է, որ գրաբարյան *մեք*-ը հետգրաբարյան հայերենում *ն-ի* հավելումով դարձել է *մենք*: Գրաբարյան ձևից սերող *մուք*-ը գործառում է Հաղործի խոսվածքում, մինչ Ղարաբաղի բարբառում՝ *մունք*:

* Որոշյալ դերանվան մի եզակի օրինակ կա Ղարաբաղի բարբառում՝ *լօխ*: Գործառում է նաև *լօխձունքը* բառաձևը, որն ունի *բոլորը՝ առանց բացառության* նրբիմաստը:

* Փոխադարձ դերանուններից հետաքրքիր է Ղարաբաղի բարբառում գործառող *տուրուր տալ* արտահայտությունը՝ *ընդ+իրար+տալ* բաղադրությամբ, ուր *ընդ* նախդիրը անձանաչելիորեն «մաշվել է»: Նույն իրողությունն առկա է նաև բարբառների Արևմտյան խմբակցության Քեսաբի բարբառում, ուր *վիճել, բախվել, իրար մեջ անցնել* իմաստով գործառում է *ղիրուօր իյնիլ* կայուն բանականացությունը:

* Հաղործի բարբառին բնորոշ է բացառական, գործիական, ներգոյական հոլովների պարզ և վերլուծական ձևերի առկայություն, ինչպես՝ *հուրանա* (ունից), *ուրուրանա* (իրարից):

* Հայերենի բարբառներում գործառող դերանունների ուսումնասիրությունը փաստում է, որ գրաբարյան *ն*^օ հարցական դերանունը արդի հայ բարբառներում գործառում է *ն*^օ *վ* և օրինաչափորեն հնչունափոխված՝ *վօ*^օ *վ*, *վէ*^օ *վ* և նմանատիպ ձևերով: Իսկ Մշո և Բայազետի բարբառները կորցրել են նաև *ն*^օ *վ*-ը և ունեն միայն *վօ*^օ *ր*: Միայն Ղարաբաղի և Հաղործի բարբառներում է, որ կենսունակ են 2 ձևերն էլ՝ *հու*^օ (*ն*^օ) և *հու*^օ *վ* (*ն*^օ *վ*), ինչպես՝

⁶ Տե՛ս Ա. Պողոսյան, Հաղործի բարբառը, Ե., 1965, էջ 8:

Հու՞ քինաց (ո՞վ գնաց), հու՞ վա՞յեկալ (ո՞վ է եկել):

Բարբառագիտական ապագա ատլասի նյութերի հավաքման ծրագրի վերջում բերված է Հովհաննես Թումանյանի «Մուտասանը» հեքիաթը, որը պետք է թարգմանել գրառվող խոսվածքով՝ պահպանելով գիտական տառադարձության կանոնները: Տվյալ դեպքում հետաքրքիր տարբերություններ և նմանություններ են ի հայտ գալիս Արցախի՝ վերը նշված երկու հիմնական՝ Ղարաբաղի և Հաղրուփի բարբառներով թումանյանական հեքիաթի թարգմանությունները համեմատելիս:

Մեր ուեցած նյութերից ընտրել ենք Հաղրուփի Մեծ Թաղեր (Թաղար) և Արցախի Հարությունագումեր գյուղերի խոսվածքներով Թումանյանի «Մուտասանը» հեքիաթի թարգմանությունը:

1. Հաղրուփի Մեծ Թաղեր գյուղի խոսվածքով:

Սօտ ասօղը կամ Սօտա՛ սին

Ինիսա, չինիս մի թաքավեր: Էս թաքավերը ուրան յերգիրըմը հայտնիս ա.

<Հու հա՛նց սօտ ասե՛, վեր յըս ասիմ՝ սօտա, իմ թաքավերությանս կէսը կըտամ ուրան>:

Մասս ա մի չօբան: Ըսէս ա.

-Թաքավեր ա՛ պրած կենա, իմ հօր մի քյումբուլ ա իլալ, վեր ստըղաս մըտըկէս իլալ, յերգինքյըմը աստիսերը խըռնըս:

- Կըպըտահե՛, - ջօղաբ տասսա թաքավերը: -Իմ պապէյին չիբուխ ա իլալ, մի ճօնըր պիրանէնէն ա իլալ տինիս, մի ճօնըրն էլ մըկնէս, իրէվան նի կըցընէս:

Սօտ ասօղը կըլօխը քուրէլավ տո՞ւս ա կյաս:

Կյաս ա մի դարգի: Ըսէսա.

- Նէրօղուցյուն, թաքավեր, յըս ճէլի բիդի յըկած ինի, յէտացալ ըմ:

Յըրկէ շատ թօռ յըկավ, կըծիկըրակերը տըրըքտըրուքտըրցէն,

յերգինքը ճըղվից քըրցածըմ իլալ կըրկատիմ:

-Հա,լավըս ըրալ,-ըսէսա թաքավերը, -ամա լավ չըս կըրկատալ: Էս ուռթանա մի խըրէգյ թօռ յըկավ:

Էս էլ ա տո՞ւս կյաս:

Նիյ ա մընէս մի քյասիբ շինացէ, կօտը կուռնըտակէն:

-Տյու հինչը ս ուզիս, ա՛յ մարթ,- հըրցընէս ա թաքավէրը:

-Ինձ մի կօտ վըսկէյըս պարտք, յըկալըմ տանիմ:

-Մի կօտ վըսկէ,՞ - գարմանաս ա թաքավէրը:-Սօտըս ըսէս, յըս քըզ վըսկէ չըմ պարտք:

- Թա վէր սօտ ըմ ըսէս, թաքավէրուցյանըդ կէսը սօ:

-Չէ ,չէ , դուզ ըս ըսէս,- խօսքը փուխէս ա թաքավէրը:

-Դուզը՞մ ըսէս՝ մի կօտ վը՛սկէն սօ:

2. Արցախի Հարությունագուներ գյուղի խոսվածքով.

ՍՈՒՏԱՍԻՓԸ

Ընում ա, չընում մին թաքավէր: Էս թաքավէրըս ուրան՝ յերգիիրումը այան ա անում. <Հուվըը հէնց սօտ ասէ, վար յէս ասէմ՝ սօտ ա, իմ թաքավըրութունէս կէսը կըտամ նըրա (ընդուր)>:

Մին չօբան ա կյամ: Ասում ա.

-Թաքավէրը ա՛ պրած կէնա, իմ հաբ մին դիգանակ օնար, վօր ըստեղաս մէկնըմ ար, յիրգիինքիումը ասթխէրը խառնում:

-Կըպըտահէ,-ջօղաբ տամ ա թաքավէրը: - Իմ պապէլ էլ մին չուբուխ օնար, մին ճօնդը տընում ար պըրբանումը, մին ճօնդը մէկնում, իրքնական նի կըցընում:

Սօտասիգը կըլօխը քուրէլավ տոշս ա կյամ:

Մին դաբղի յա կյամ : Ասում ա.

-Ներօդութուն, թաքավէր, յէս կանուխ պըտի կի, յըտացէ: Էրէգ՝ շատ թօտ յէկու, կըծծըկնէն տըրըքէցին, յերգիինքը ճըղօրտեց: Քիինացալ ի կըրկատէմ:

-Հա, լիավ ըս ըրալ,- թաքավէրն ա ասում,-ամմա լիավ չիր կըրկատալ. Էս քըշըհանա մըխըրէ թօտ վէր տառավ:

Իսէլ ա տոշս կյամ:

Մաժ ողջ ա նի մըննում մին քյասիբ շինացէ՝ կըսալաքը կըռնըտակէն:

-Տու՞ հինչ ըս օգում, ա՛յ մարթ,- հըրցընում ա թաքավէրը:

- Ինձ մին կըսալաք վէսկի յըս տըլացուկ, յէկալըմ տանէմ:

-Մին կրսալաք վէսկի՞,- ըրմանում ա թաքավէրը:- Սօտ ըս ասում,
յէս քէզ վէսկի չըմ տալացուկ:

- Թա վար սօտ ըմ ասում, թաքավըրութունիտ կէսը սօ:

-Չէ չէ, դօրթ ըս ասըմ,-խօսքը փօխում ա թաքավէրը:

-Ղօրթ ըմ ասում՝ մին կրսալաք վէ՛սկին սօ:

Խորապէս ճանաչելով հարազատ ժողովրդի կյանքն ու կեն-
ցաղը, դարերի հոլովոյթում ձևավորված արժեքային համակարգը,
հոգեբանությունը՝ Թումանյանն իր «Սուտասանը» կարճ, սրամիտ
առարկություններով խոսքուզրույցի վրա կառուցված հեքիաթում
ներկայացրել է ժողովրդի խոսքին հասուկ լեզվաոճական հնարք-
ներ, և դրանք շատ դեպքերում անթարգմանելի են՝ հատկաբանու-
թյան (իդիոմ) արժեքով: Ուստի և այդ հեքիաթը հայերենի որևէ
բարբառով ներկայացնելիս (թարգմանելիս) ի հայտ են գալիս այդ
տարածքի խոսվածքներում գործառող քերականական ձևեր ու
միջոցներ, հետաքրքիր բառանվանումներ, իմաստային նրբերանգ-
ներ արտահայտելու համար պատմական շփումների ընթացքում
տարբեր ժողովուրդների բառամթերքից փոխառյալ ձևեր, այլ խոս-
քով՝ լեզվական շատ իրողություններ:

РЕЗЮМЕ
НЕКОТОРЫЕ ИНТЕРЕСНЫЕ ЛЕКСИЧЕСКИЕ И
МОРФОЛОГИЧЕСКИЕ ФОРМЫ В
ГОВОРАХ АРЦАХА
Барнасян Джемма

Известный диалектолог А. Гарибян делает интересное наблюдение в своей работе «Армянская диалектология», отмечая, что на территории Карабаха используются два диалекта: северный – карабахский и южный - гадрутский. Они постепенно смешались, и доминирующим стал диалект Карабаха, который «поглотил» большую часть гадрутского диалекта, передав оставшейся части многие из своих основных черт. В результате был получен нынешний гадрутский диалект, который во многом похож на карабахский диалект, но также сохраняет свои собственные особенности. В нашем исследовании мы рассмотрели некоторые интересные лексические и морфо-

логические (местоименные) факты в двух разных диалектах, функционирующих в Арцахе, представив материалы, преподнесенные в записях единиц разговорной речи, накопленных в диалектических, этнографических монограммах и в Отделе диалектологии Института языка НАН РА.

SUMMARY
SOME INTERESTING LEXICAL AND MORPHOLOGICAL
FORMS IN THE DIALECTS OF ARTSAKH.

Jemma Barnasyan

The well-known dialectologist A. Gharibyan makes an interesting observation in his work "Armenian Dialectology", noting that two dialects are used in the territory of Karabakh: Northern Karabakh and Southern Hadrut. They gradually mixed, and the dialect of Karabakh became dominant, which "absorbed" most of the Hadrut dialect, handing over many of its main features to the remainder. As a result, the current Hadrut dialect was obtained, which is similar to the Karabakh dialect in many ways, but also preserves its own characteristics. In our study, we examined some interesting lexical and morphological (pronominal) facts in two different dialects functioning in Artsakh, presenting the materials stored in the records of colloquial speech units accumulated in dialectical, ethnographic monograms and in the Department of Dialectology of the Institute of Language of the National Academy of Sciences of the Republic of Armenia.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այթունյան Էդիտա - Ժամանակի ամրակայման ձևերի իրացումը Ղարաբաղի բարբառում՝ ըստ ազգային և կրոնական ծիսակարգի.....	3
Արզումանյան Արմինե - Անձի հատկանիշների դրսևորումը Ղարաբաղի բարբառի կազմախոսական դարձվածներում...	15
Արզումանյան Հերմինե - Ղարաբաղի բարբառի գոյավիճակը անկախության շրջանում. արդի ինդիքները.....	29
Գևորգյան Գայանե - Նկատառումներ Արցախի բարբառային միավորների եղանակաժամանակային կառուցատիպերի ձևակազմական և գործառական առանձնահատկությունների վերաբերյալ.....	37
Գրիգորյան Մուսաննա - Իրավական հասկացությունների կիրառությունները հայերենի մի շարք բարբառներում.....	46
Խաչատրյան Հասմիկ - Կոզենի բարբառի առանձնահատկությունները.....	59
Կատվայան Վիկտոր, Մկրտումյան Անահիտ, Խառատյան Մելանյա, Նինա Մահակյան - Շամախիի բարբառի մասին.....	90
Հայրապետյան Թամար - Ղարաբաղի բարբառը Կ. Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան) ֆելիետոններում.....	103
Հովհաննիսյան Լավրենտի - Արցախ տեղանվան շուրջ.....	122
Katherine Hodgson - The dialect of the Armenian village of Karabagly in Dagestan.....	125
Մինասյան Շողեր, Հայրապետյան Լիանա - Ղարաբաղի բարբառի համեմատություն դարձվածային միավորները.....	137
Սարգսյան Արմեն - Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության համառոտ պատմություն.....	157
Սարգսյան Արմեն Շ. - Լոռու շամուսյան ենթախոսվածքի առանձնահատկությունները և կապը Ղարաբաղի բարբառի հետ	208
Վանյան Լուսինե - Ղարաբաղի պատումի հնչերանգի որոշ առանձնահատկություններ.....	223

Վարդանյան Արտակ - Արցախ-Սյունիքի բարբառի խոսվածքները Նախիջևանի տարածքում.....	236
Քումունց Մհեր - Գորիսի բարբառը հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման համատեքստում.....	253
Քումունց Մհեր - Մեհտիշենի բարբառը.....	270
Քումունց Մհեր - Կրկնավոր բարդությունների կազմման եղանակները Սյունիք-Արցախի բարբառային տարածքում.....	288
Բեռնասյան Ջեմա - Բառանվանողական և ձևաբանական հետաքրքիր որոշ ձևեր Արցախի խոսվածքներում.....	305

ՂԱՐԱԲԱՂ-ՇԱՄԱԽԻԻ ԿԱՄ ԾԱՅՐՀՅՈՒՄԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ
ՄԻՋԲԱՐԲԱՌԱԽՈՒՄԲ.
ԱՐԴԻ ՎԻՃԱԿ, ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
(Երևան, 2022 թ., հոկտեմբերի 20-21)

Ձևավորումը և էջադրումը՝
Ս. Խառատյանի

Կազմը՝ Ս. Արևշատյանի

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ